ԻՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՍԻՐԶՆԱՎՈՐ

Գրչի դեղատոմսերը

ԵՐԵՎԱՆ
«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ»
1986

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՐԱՖՖԻ

2-85

Աշխատասիրությամբ՝ ԱՐՄԵՆՈՒՀԻ ԵՐԶՆԿԱՑԻ ՍՐԱՊՅԱՆԻ

ԵՊՀ Գրադարան
SU0117340

Հովհաննես Երզնկացի
(Աշխատասիրությամբ Ա. Ե. Սրապյանի), Եր.: Սովետ. գրող, 1986, 312 էջ: «Հայ քնարերգություն» մատենաշար

Միջնադարի մեծ բանաստեղծ, գիտնական, հասարակական-քաղաքական և մշակութային գործիչ Հովհաննես Երզնկացին ապրել ու ստեղծագործել է 13-րդ դարում: Նրա գրական ժառանգությունը, մասնավորապես արձակը, գերազանցորեն անտիպ է: Չափածոն առաջին անգամ, ոչ ամբողջությամբ, ի մի է բերվել 1958 թ., հեղինակին նվիրված մենագրության մեջ: Սույն գրքում ընդգրկվել են առ այսօր հայտնի բոլոր քերթվածները՝ տպագրված, ինչպես նաև հնատիպ ու ձեռագրական նոր նյութերի հիման վրա հայտնաբերված մի շարք նոր հայրեններ, տաղեր, շարականներ, ներբողներ և գիտական երկեր:

Ե $\frac{4702080100}{705\ (01)\ 86}$ 68.86 «S»

167735

© «Սովետական գրող», կազմելու, առաջաբանի, ծանոթագրությունների, ձևավորման համար.

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՐԶՆԿԱՑԻ

Երախտաւորացն մերոց պարտս հատուցանեմք:
Հովհաննես Երզնկացի, ձեռ. № 2173, էջ 164 ա:

Պլուկ մականունով քաջահամբաւ, հայ գրական ու գիտական մտքի նշանաւոր ներկայացուցիչ Հովհաննես Երզնկացին ծնվել է Մեծ Հայքի Եկեղյաց գավառում, հավանաբար Երզնկայում: Քաղաքը պատմությանը ծանոթ է հապարամյակների իր հնությամբ՝ Երեզ, Երիզա կամ Եզնկա անվանումներով: Մաշտոցյան գիր ու գրականության ստեղծման առաջին իսկ օրերից, դեռևս Ագաթանգեղոսը, Կորյունն ու Խորենացին հիշատակում են այն որպես պաշտամունքային վայրերով հարուստ ու անվանի կենտրոն՝ ինչպես մինչ քրիստոնեությունը, այնպես էլ նրանից հետո: Հետագայում Երզնկան հաղորդակից է դառնում Արևելքի ու Արևմուտքի տնտեսական, քաղաքական և հոգևոր կացությանը ևս, հռչակվում որպես առաջնակարգ կրթական օջախ, որ իրեն էր ձգում բազում ուսումնատենչների թե՛ բուն Հայաստանից, թե՛ Կիլիկիայից: Տեղի մտավորականներն այլուր ծանուցվում էին՝ «Ի հռչակաւոր քաղաքէն Եզնկայ կոչեցեալ»: Սրանց մեջ առանձնապես փայլում էին Հովհաննես Պլուկ և Կոստանդին Երզնկացիները:

Առաքինի և իմաստուն անձինք երկրի և աշխարհի են լրումն պիտոյից և ոչ միայն տան միոյ.

Հ. Ե. 2173, 279 ա:

Հայ միջնադարի գրական ու գիտական մտքի բարձր մակարդակը հավասարապես նշանավորող անվանի մատենագիրը, որ մեծարվում և պատկերվում էր լուսապսակով, վերածնությանը հատուկ հանրագիտակ մտածող է: Նա սերում է դեռևս 5-րդ դարից հայտնի այն իշխանական տոհմից, որին պատկանում էին գավառի հոգևոր ու աշխարհիկ առաջնորդները՝ Սարգիս արքեպիսկոպոսն ու իր ժառանգները: Նրա ծննդյան թվականը ճիշտ հայտնի չէ: Ենթադրվում է, թե նա աշխարհ է եկել մոտ 1220—1230 թվականներին:

Հովհաննես Երզնկացու մանկությունն անցել է հայրենի երկրում, նախնական կրթությունն ստացել է Լուսավորչի լեռներում գտնվող ս. Մինասի անապատում, հետագայում իր իմացությունները խորացրել է ժամանակի ամենահռչակավոր գիտնական վարդապետի՝ Վարդան Արևելցու մոտ, 1268 թ. դարձել վարդապետ: 13-րդ դարի 70-ական թվականներին նա արդեն ճանաչված մատենագիր ու գործիչ էր: Նրա անունով պահպանված թվակիր երկերից ամենահինը Ներսես Պարթև կաթողիկոսի մասունքների հայտնության պատմությունն է, գրված 1272 թ.: Թերևս այս ժամանակ էին գրված Լուսավորչին և Ներսես Մեծին ձոնված շարականները ևս: 1280 թ. արդեն հրապարակում էր նրա «Սահման և կանոնը», ստեղծված Երզնկայի աշխատավորական շերտերի՝ առևտրականների ու արհեստավորների «Եղբայրության» համար, ապա նաև այլ խրատներ: Նույն

տարիներին նա զբաղված էր քերականության մեկնությամբ ևս, անձամբ ղեկավարում էր «Եղբայրության» անելիքները, կատարում վանական շինություններ, հիմնում գրադարաններ, ընդօրինակում ու կազմում ձեռագրեր, ստվարացնում իր մեծ ու հարուստ գրադարանը, շրջագայում բուն Հայաստանի ու Կիլիկիայի քաղաքներում և այլ վայրերում, կարդում ու գրում կրոնական ու աշխարհիկ գիտահայրենասիրական ճառեր ու քարոզներ: Երուսաղեմում նա ստեղծում է թեև ծավալով փոքր, բայց գեղարվեստական մեծ արժեք ներկայացնող իր Հորդորակը՝ Ստեփաննոս Կուռիկոսցի վարդապետի ցանկությամբ, Կիլիկիայում այցելում Լևոն Գ թագավորին, ինչպես նաև Հակոբ Կլայեցի կաթողիկոսին, վերջինիս խնդրանքով քերականություն ավանդում աշակերտներին, կատարում վանական պետական հանձնարարություններ, մասնակցում Հեթում և Թորոս թագաժառանգների ասպետության օծման հանդիսավոր տոնախմբությանը, իմաստաբանական գեղեցիկ ճառ ասում այդ առթիվ: Ինչպես այս, այնպես էլ Սիս, Դրապարկ, Անարզաբա, Հռոմկլա քաղաքներում և այլ վայրերում գրած ու կարդացած գիտական, աստվածաբանական ճառերով ու քարոզներով՝ ուղղված թե՛ տերերին՝ թագավորներին ու իշխաններին, թե՛ ժողովրդին, Երզնկացին հիմնականում արծարծում է երկրի կառավարման ու պահպանման հետ առնչվող խիստ անհրաժեշտ, գործնական հարցեր: 1283—84 թթ. նա գրում է իր նշանավոր տիեզերագիտական աշխատությունը՝ հապարտողյան չափածոն՝ Ապլոց իշխանի խնդրանքով, արձակը՝ Ումեկ իշխանի որդի Վախթանգի ու նշանավոր Դոփին թոռ Յոհան եպիսկոպոսի հորդորանքով. նույն թեմայով քարոզ է կարդում Տփխիսում, հատուկ խրատական թուղթ է հղում

Ռուբինյան գահակալ իշխաններին՝ երկրի պետականության պահպանմանը վերաբերող գործնական առաջարկներով: Չնայած տկարությանը, լարված հասարակական, քաղաքական, եկեղեցական գործունեությանն ու շրջագայություններին, այս նույն 1280—84 թթ. Երզնկացու գրիչը դառնում է կարմանալի բեղուն: Նա ստեղծում է պատմագիտական, գիտական ու գեղարվեստական արժեք ունեցող բազմաթիվ գործեր, շարունակում աշխատել քերականության վրա, որ ավարտում է 1291—93 թթ.: Սա գիտական ու բանասիրական մեծարժեք աշխատություն է, հանրագումարը մինչ այդ եղած նման գործերի, և քերականական գիտելիքների հիմնական ձեռնարկ, որից լայնորեն օգտվել են հետագա դարերում ևս: 1291 թ. մեծ մտածողը՝ դառնացած ու հալածական, թողնում է հայրենի վայրերը, երկու տարի «պանդըխտաբար, միջաբեկ և յուսահատ» շրջում Կիլիկիայի վանքերում և 1293 թ. կնքում իր մահկանացուն Ակների վանքում: Ժամանակ անց նրա աճյունը տեղափոխվում է Երզնկա, շիրիմը դառնում արբատեղի, իսկ ինքը հիշատակվում «հոչակաւոր», «գերիմաստ», «անյաղթ», «առաքելաշնորհ», «սուրբ և իմաստուն» ու այլ մեծարանքներով:

Որք ի գիտութիւն ճշմարտութեանն կան, ո՛չ մոլորին յուղիղ ճանապարհէն:

Հ. Ե. 2173, 339 բ:

Հովհաննես Երզնկացու անունով պահպանվել են թե՛ արձակ, թե՛ չափածո ստեղծագործություններ, որոնց թիվն անցնում է հարյուրից: Դրանք ժամանակի սոցիալ-տնտեսա-

կան, հասարակական, քաղաքական իրավիճակի, մատենագրության մեջ արտահայտված նոր երևույթների դրսևորումներ են, ունեն պատմաճանաչողական մեծ արժեք: Դրանց մեջ արծարծվում են գրական, քերականական, նկարչական, երաժշտական, ճարտարապետական, պատմական, ազգագրական, իրավագիտական, քաղաքագիտական, մանկավարժական, հոգեբանական, բնախոսական, բնագիտական, կազմախոսական, կենսաբանական, տիեզերագիտական, երկրաբանական, բուսաբանական, բժշկագիտական, դեղագործական ու սրանց հետ առնչվող բազմաբնույթ այլ հարցեր, փիլիսոփայական խորն ընդհանրացումներով, գեղարվեստական խոսքի մեծ վարպետությամբ ու համոզչականությամբ: Առատորեն օգտագործելով բազմաթիվ աղբյուրներ՝ Սողոմոնի, Հոմերոսի, Պլատոնի, Արիստոտելի, Թեոնի, Խորենացու, Դավիթ Անհաղթի, Եղիշեի, Նարեկացու, Շնորհալու, հույն և հայ այլ իմաստասերների, մարգարեների ու առաքյալների երկասիրությունները, նա խստապահանջությամբ նշում է դրանք, պաշտպանում կամ մերժում որոշ հայացքներ, նորովի վկայում իր խոսքի ճշմարտությունը և հիմնովին ծառայեցնում առաջադրված նպատակին: Իր գործերում Հովհաննես Երզնկացին բացահայտվում է որպես հայ փիլիսոփայության բնագիտական ուղղության «ամենախոշոր» ներկայացուցիչը: Նրա համոզմամբ աշխարհը նյութական է, զգալի ու ընկալելի: Նա իր մեջ ունի «անձայնական» ու «լուսեղէն» տարեր. նրանք ընթեռնելի, խոսուն ու խրատիչ են, ինչպես գրատախտակի վրա գրված տառերը: Տիեզերքն «անբարբառ» ու «անյօդական» լեզվով աղաղակում է՝ ծանոթացնում է ինքն իրեն, պատմում և ուսուցանում, որպես

վարդապետ և ուսուցիչ «անխոսական», որպես մանկանց համար «դպրոց ալֆավետաց» և լույսի ակունք, որպես դայակ ու դաստիարակ: Գոյության հիմքը գիտնականը համարում է շարժումը: Ամեն ինչ ժամանակի ծնունդ է, շարժական ու փոփոխելի, ունի սկիզբ և վախճան. սկիզբը գոյացումն է, վախճանը՝ «քակտումն մասանց», որ բացարձակ վախճան չէ, այլ տեսակի փոփոխություն և նոր տեսակի առաջացման սկիզբ: Նա որոշակիորեն արտահայտում է նաև նյութի պահպանման գաղափարը, արվեստի և գրականության աղբյուրը ևս, այլև խթանը, համարելով նյութական աշխարհը՝ բուսական, կենդանական ու անկենդան բնությունը, որ ավելի կատարյալ ու գեղեցիկ է, քան նրա վերապատկերումը: Արվեստը դեպի բնությունն ունեցած մարդու վերաբերմունքի՝ սիրո ու կարոտի արտահայտությունն է: Նա պետք է ունենա կարգավորող, ուսուցանող, բարու գաղափարին հանգեցնող տեսական ու գործնական նշանակություն, հասարակական միտքը բարոյակրթող, առաջ մղող ուժ, գեղարվեստական հաճույք պատճառելու կորություն: Էական է, որ Երզնկացին շեշտում է արվեստն ընկալելու հատուկ նախապայմանների անհրաժեշտությունը ևս, որովհետև այն պահանջում է հոգեբանորեն ու զգայականորեն (մարմնապես՝ բաց մտքով ու սրտով) պատրաստ լինել հաղորդակցվելու իրեն: Ըստ նրա, գեղեցիկը ո՛չ թե սոսկ արտաքին հատկություն է, այլ ներքին բարեմասնությունների արտահայտություն, հոգևոր ու մարմնավոր արժանիքների միասնություն: Այն անցողիկ է, պատմական ու սոցիալական կատեգորիա, և նույն արժեքը չունի հասարակության տարբեր կարգերի ու խավերի համար: Այսօր էլ մասնագետ-

ներին վարմանք են պատճառում Երվնկացու տիեզերագիտական և մանկավարժական իմացությունները ևս, որոնք արդիական են ու առանձին հետազոտության արժանի:

Խորհելն չարչարանաւք է և ստեղծանելն ինչ դատումն է խորհրդոց և մտածութեանց:

Հ. Ե. 2329, 38 ա:

Մեծ բանաստեղծը տաղերի, շարականների, ողբերի, մեղեդիների, քառյակների, ներբողների, գիտական չափածոյի հեղինակ է: Դրանց առանցքը հավերժության, բնության, աստծու, մարդու և ինքն իր հետ՝ հեղինակի խորհրդածությունները ու ապրումներն են, հիմքը աշխարհն է, կյանքն ու մարդը, խնդիրը՝ խաղաղության ու հայրենասիրության հաստատումը: Դրանք և՛ ողբ են, և՛ գանգատ, և՛ կյանքի կարոտ ու սեր, այն վայելելու հավերժ ու սրտառուչ կանչ և գեղեցիկ բնապատկեր: Դրանք դրամատիկական երկխոսություններ են անցավորի ու հավիտենականի՝ Ադամի ու Աստծու, մարդու և Աստվածամոր միջև, որոնց նյութը հեղինակի հիմնական ու անմոռաց երկրային ցավն է՝ ժողովրդի, երկրի ու հայրենիքի անվտանգությունն ապահովելու, ազգապահպան կորությունն ամրապնդելու մշտահոլով հոգսը: Գրիգոր Լուսավորչին և Ներսես Մեծին նվիրված քերթվածներում բանաստեղծը դիմում է և՛ Մորը (Աստվածածնին), և՛ Որդուն՝ ո՛չ թե հայ ժողովրդին հետագա՝ անդրաշխարհային հավերժություն շնորհելու աղերսով, այլ Հայոց աշխարհին խաղաղություն պարգևելու, ժողովրդին ներքին ու արտաքին բռնակալներից փրկելու, Հայկական իշխանությունը հաստատուն

պահելու թախանձանքով: Գրիգորին ձոնված տաղում հեղինակն այս ամենի վրա ավելացնում է նաև պանդխտության հետ կապված իր մորմոքը. ժողովուրդը գերեվարված ու ցրված է օտար ափերում, քակվում, ավերվում են Լուսավորչի հիմնած խորանները ու տաճարները, դառնում ամայի ու անբնակ. պակասում են հանճարամիտ ուսուցիչները, նրանց տեղն են գրավում անվարժ ղեկավարներ ու առաջնորդներ: Երվնկացու մտահոգությունն է վորավոր պահել գոնե եղածը՝ Կիլիկյան հայկական թագավորությունը, նրա պսակավոր արքային՝ Լևոն Գ-ին, ինչպես և հայ ժողովրդին, հայությունը:

Նույն բնույթն ունեն այդ երկու մեծերին նվիրված ծավալուն ներբող-պատմությունները ևս: Սրանց մեջ հեղինակը, Խորենացու հանգույն, ողբում է իր երկրի անմխիթար վիճակը, դիմելով նաև ողջ ժողովրդին՝ միանալու իրեն, նրա ինքնաճանաչությունն արթնացնելու, ազգային արժանապատվության գիտակցությունը բարձրացնելու, հայրենասիրության մղելու և ինքնապաշտպանության ոգին ուժեղացնելու նպատակով: Երկիրը, որ հատիկից հասկ ու շեղջ էր դարձել, մի որթատունկից արմատ գցել, բալմակի աճել ու ծովից ծով տարածվել, տխրել է ու տգեղացել, որովհետև վրկվել է սեփական ժառանգություն ստացած վայելուչ վայրերից, փառքից ու հաղթող թագավորներից, առաքինի վորավարներից, մարտի կոչող բալմահանճար ու քաջամարտիկ վորագլուխներից, իմաստուն առաջնորդներից, խրատատուներից, դարձել է օտարալեզու տիրողների՝ ապանող, գերող, մարմինն ու հոգին պատառող ու հերձող գազանների ասպատակության ու անիրավության ասպարեզ: Զավթիչներն ու նեղիչներն են վայելում նրա նյութական ու հոգևոր բա-

տիքները, արածում, կոխում, ապականում՝ որպես խոզ, վայրի կինճ ու սատանա:

Ի տարբերություն Խորենացու, բանաստեղծի Ողբին հաջորդում է ափոփանքի կոչը, ուրախության և հուսո նվագը: Հեղինակն ապրելու, հարատևելու և երջանկության հասնելու հպվատ է ներշնչում ժողովրդին: Նա մարտականության ու մաքառման է կոչում ողջ հայությանը՝ որպես դեռոք կգուշությամբ ու իմաստությամբ պահպանելու երկիրը, բնաշխարհն ու հայրենադիր օրենքները, հիշելու՝ ինչպիսի ծանր գնով, տառապանքներով ու արյամբ է տրվել այն իրեն ժառանգություն, իմանալու, որ միայն նախնի քաջերի հաստատակամությամբ ու հաղթանակի հավատով կարող է իր տերը լինել, ուստի և խրախուսում է հետևե՛լ, նմանվե՛լ նրանց, չենթարկվե՛լ հայրենին կորցնելու ո՛չ մի փորձության:

Լուսավորչի ներբողը Հովհաննես Երզնկացու բանաստեղծական արվեստի, երաժշտականության, գաղափարական ու գեղագիտական մտքի բարձրակետն է, նրա քանքարի գլուխգործոցը, ծնված բոլոր արվեստների ընձեռած հնարավորություններով, քնարականության, ողբի, ուրախության ու խրախույսի շաղախով: Ինչպես քերթողն է ցանկացել, այն գաղափարական ու տեսական մտքի դիտավորությամբ, արվեստի հմտությամբ ստեղծված գեղեցկահարմար հորինվածք է, անթառամ «բանեղէն» ու «պանծալի» պսակ՝ հյուսված հայ ժողովրդի համար, բանական տենչալի տաճար՝ կուռ ու անքակտելի շինվածքով անխախուտ ու հարատև լինելու վորությամբ: Թեև ոչ նույնչափ մարտական, բայց ողբի ու հուսադրության գրեթե նույն շունչն ունի Ներսես Մեծին նվիրված ներբողական պատմությունը.

Քակեցաւ ցանկն ամրութեան,
Եւ եղև դրախտ այս յապականութիւն,
Եւ առ ի չգոյէ իշխանութեան ցանկոյն.
Կթեն կսա անցաւորք ճանապարհաց՝
Որդիքն Իսմայէլի և ծնունդքն Հագարու,
Զմարմնական պտուղ... և կբարեաց մասունս...

Ապա Երվնկացին խոսում է Խորենացու Ողբի տողերով, սակայն շարունակում խրոխտ ու ըմբոստ ոգով և տիրոջն ուղղված «մեղադրանքի» խոսքերով. Մոլորված է հայ ժողովուրդը,

Մատնեալ ի ձեռս գայլոց յանխնայ վիրաւորողաց...
Եւ ո՛չ գտանէ հարապատ բժիշկ իւրոյ բեկմանն...
Եւ մեք գերեալք ի մէջ ամենայն ազգաց,
Լամք բարձր փառաց մերոց նուաստանալն
Զրկեալք ի յաղթող թագաւորացն,
Եւ ծառայք լեալ ազգաց օտարաց...
Եւ ըստ մարգարեական բանին աղաղակեցաք՝
Եւ ոչ ո՛ք էր, որ փրկէր.
Կարդացաք առ տէր՝
Եւ ո՛չ լուաւ մեզ՝ ի նեղութեան մերում։
Ո՛չ գտաւ մեզ անդորրութիւն,
Եւ ոչ թիկո՛ւնք օգնականութեան.
Ոչ պահպանութի՛ւն,
Եւ ոչ ձեռնտուութի՛ւն.
Ոչ պաշտպանութի՛ւն,
Եւ ոչ ակնկալութի՛ւն յուսոյ.
Ոչ փրկութի՛ւն յումեքէ,
Եւ ոչ սփոփա՞նս մխիթարութեան...
Ժառանգութիւն մեր դարձաւ յօտարութիւն,
Եւ բնակութիւն մեր՝ ի նժդեհութիւն...
Եկն ի վերայ պարանոցի մեր նեղութիւն.
Հալածական եղաք՝

Եւ ո՛չ գոյ մեկ հանգիստ:
Զեռնաձիգ եղեն ի մեկ որդիք օտարաց...
Ծառայք տիրեցին մեկ,
Եւ այն, որ փրկէր զմեկ ի ձեռաց նոցա՝
Զի՛ք ուրէք ի միջի...
Ցամենայն կողմանց յաճախին մարտ պատերազմի,
Եւ կօրապետ առաքինի յարդարող Քրիստոսի զինուորսն՝
Ո՛չ գոյ առաջադէմ մարտին...

Ապա դիմելով Ներսեսին, շարունակում է.

Զեռնտո՛ւ լեր և օգնեա՛, բազմահմուտ և ամենիմաստ նաւավար...
Այս է ժամանակ այցելութեան,
Եւ թափելոյ զգառինս քոյ ի գայլոց...

Հայոց նշանավոր կաթողիկոսի ու գործչի մեծագործությունների հիշատակումով և նրա պայծառ կերպարի վերակենդանացումով, Երզնկացին ոգեշնչում է ժողովրդին և հավատի մեծ ուժով հուսադրում՝ երկրին ապաքինություն, պատերազմներում հաղթություն, ցրված ու վարատված հայությանը վերադարձ ու ժողովումն և «պատուական գալիք», անվնասելի ապահովությամբ հավիտյան անսասան մնալու կարողություն[1]*:*

Տաղերգուի հոգևոր երկերի մտահղացումն իր հիմքում ունի մարդկային միտքն արթնացնող ու լուսավորող, ազգային արժանապատվություն սերմանող, հայրենասիրական ոգին կորացնող գաղափարներ ու փիլիսոփայական խոհեր, արտահայտված մեծ հուզականությամբ, և՛ քնարական, և՛ դրամատիկական շնչով, գեղեցիկ պատկերների, համեմա-

---

[1] Սոփերք Հայկականք Է, Վենետիկ, 1853, էջ 39—40, 53—54, 56, 57—59, 75: Տե՛ս նաև Աստուածաշունչ, Գիրք Սաղմոսաց ՀԹ, 13:

տություններեր, բնանկարներեր միջոցով, գործողություններեր, երկխոսություններեր, շարժուն խոսքի, կրկնակներեր ու բաղաձայնույթներեր օգտագործմամբ, երաժշտականության հասնող վարպետությամբ: Ջրօրհնեքին նվիրված տաղը, որ մինչև օրս երգվում է եկեղեցիներում, թվում է ալիք-ալիք վետվետացող ու խոխոջող ջրի թավալում՝ կրկնակի շնորհիվ:

Հովհաննես Երզնկացու աշխարհիկ քերթվածները լայն առումով դաստիարակչական, ուսուցողական բնույթ ունեն: 13-րդ դարի նշանավոր մտածողն ու քերթողը մեր գրականության մեջ հիմք դրեց խոհախրատական, իմաստաբանական բանաստեղծությանը. որի թեման մարդն էր, իր առօրյա, աշխարհային կյանքով, ապրումներով, խոհերով ու զգացումներով: Բանաստեղծության այս տեսակի հիմնական նպատակներից էր՝ ուղղել մարդու և հասարակության մեջ եղած արատները, ուսուցանել, կրթել սերունդը, բարձրացնել նրա բարոյական ու քաղաքական մակարդակը, զարգացնել միտքը: Խոհախրատական ստեղծագործություններն արտացոլում են ո՛չ միայն մարդու ներաշխարհը, նրան անհատապես հուզող երևույթներն ու ապրումները, այլև հասարակական, քաղաքական կյանքի, սոցիալ-տնտեսական հարաբերությունների շատ կարևոր կողմեր: Դրանց մեջ հեղինակը մեծ տեղ է հատկացնում մարդկանց վարք ու բարքի, սովորույթների բարեկրթմանը, մերժում չարիք ծնող բոլոր արատները, հաստատում բարին, ազնիվը, արդարը, ճշմարիտն ու գեղեցիկը, մարդկային բարոյական հատկանիշների գերագույն խտացումը տեսնում իմաստության մեջ: Թեթևաշունչ, աշխատավորության համար մատչելի լեզվով, կարճ տողերով, երկխոսություններով ու դրամատիկ շնչով հորինված, արագընթաց ու դյուրըմբռնելի նման խրատականներից մեկն

է Երզնկայի «Եղբայրության» ավագ Հակոբ Մանկտավագին ուղղված տաղը ևս, որտեղ կանոնադրվում են նաև հասարակության սոցիալական ու բարոյական աշխարհը կարգավորող օրենքներ՝ խաղաղասիրություն, ընկերասիրություն, փոխօգնություն, ինքնապաշտպանություն և այլն: Աշխարհիկ տաղերն առհասարակ հետամուտ են ընդհանրական շահերի արթնացման, որոնց նպատակն է բարոյակրթել, լուսավորել ապգը, բարձրացնել նրա մտավոր ու իմացական մակարդակը: Դրանք վերաբերում են հասարակության բոլո՛ր շերտերին, առա՛նց տարիքային ու սոցիալական խտրության:

Հովհաննես Երզնկացու քնարում ուրույն տեղ է գրավում «Այս ինչ կրակ էր վիս այրեց» սկսվածքով բանաստեղծությունը, որ հայ միջնադարից մեկ հասած գրավոր ու հեղինակային սիրերգության առաջին քերթվածն է, հագեցված նուրբ գաղափարական, ապգապահպան հայացքներով, արվեստով, դրամատիկականությամբ, երկխոսություններով, թեթևընթաց ու սահուն ոտքով, որ առանձնահատուկ է հեղինակին:

Իմաստասեր բանաստեղծի ստեղծագործության մեջ առանձնապես ուշագրավ ու արժեքավոր են հայրենները: 13-րդ դարում, երբ հայ քերթության մեջ խոշոր երևույթ էր դառնում խրատաուսուցողական բանաստեղծությունը (հետագայում գրեթե բոլոր տաղերգուների ամենասիրելի տեսակներից մեկը), միշտ նորին հետևող տաղերգուն ո՛չ միայն լայնորեն ընդարձակեց նրա սահմանները, այլև ստեղծեց քնարական մի նոր տեսակ՝ խրատափիլիսոփայական քառյակներ, որ հատուկ չափ ու բովանդակություն ստանալով՝ հասան կատարելության՝ իմաստաբանական ու քնարական հայրենների ձևով: Սրանք աշխարհի ու բնության գեղեցկու-

թյունների, կամ դրանցից ստացած տպավորությունների ուղղակի նկարագրությունը չեն, այլ դրանց մեջ մտասուլված գեղագետ մտածողի անմիջական խորհրդածությունները: Հայրենների մեջ ամենից ավելի է դրսևորվում Երկրնկացի մեծ գեղագետն ու քնարերգուն, որ բացում է իր ներաշխարհը, ուր ամեն բան չէ՛, որ անվերապահորեն ընդունվում է՝ անողոք ու անհաշտելի ներհակությունների, ընդդիմադիր ուժերի աշխարհում, հանդերձյալի, ապաշխարանքի, մեղքերի քավության, հոգու փրկության, հոգու և մարմնի հավերժական հակադրության ու վերին այլ ոլորտներում: Եթե սառը դատող իմաստասերն անկարելի է համարում մարմինը մեռցնել, որովհետև նրա բնությունն անհագ է տեսնելու, ճանաչելու իր ցանկությունների մեջ, ուրեմն և անհնար է փակել հինգ զգայարանները, միայն հոգու կամքը կատարել, և որպես միակ ճշմարտություն ընդունում է նրանց պահանջմունքները չափ ու կշռի մեջ պահե՛լը, ապա հայրենների քնարական «հերոսը», որ ինքն իր մեջ խորհող բանաստեղծն է, նույն ելակետն ունենալով հանդերձ, այդքա՛ն էլ հեշտ չի համարում այդ անելը.

Երկուսն ի մէկ տեղ բերած՝ վերթ ընկեր կասեն թէ պահէ...
Զերկուսս ընկեր ո՞նց պահեմ, մէկըս հող, մէկըս հոգի է:

Հայրենններում է հատկապես ընդգծվում Երկնկացու մեծ աշխարհասիրությունն ու արվեստի քնարականությունը: Փիլիսոփայորեն արված նրա բոլոր զգաստ հետևություններն այստեղ անէանում են, մնում են երկմտանք, կյանքի կարոտ, մահվան տագնապ, հոգու մեծ վիշտ ու տառապանք: Այս ամենին ավելանում է և այն արտաբեկ միտքը, թե ո՛չ անձնական կյանքը, ո՛չ էլ հասարակական դառն իրողությունները չե՛ն թեթևանում անդենի հույսով: Կյանքի ան-

ցողիկությունը և մահը մեծ կսկիծ են պատճառում, խախտում հոգեկան հանգիստը. կյանքն անսահման սիրելի ու փափագելի է, որը և ծնում է կարոտի ցա՛վ, հո՛ւյզ ու դառնությո՛ւն: Այս զաղափարը ծավալվելով ու խորանալով՝ դառնում է հայրենների բազմալար ու մշտահոլով նվագներից մեկը: Այն ո՛չ թե սրում է անդրաշխարհայինի, դրախտային կյանքի, հավիտենականության ձգտում, աշխարհնա ունայն համարելու հոգեբանություն, այլ կորցնելու վախ ու մորմոք, այն ավելի երկար վայելելու ցավագին փափագ: Հավերժականն ու անդրաշխարհայինն անլուծանելի անորոշություն են, անդենի առեղծվածն ու տիեզերական անսահմանության հեռուներն՝ անիմանալի, ապասելիքները՝ վուր: Ըստ էության, Երվնկացին բոլոր ճանապարհներով՝ հանգեցնում է մի ճշմարտության. սիրել կյանքը, աշխարհն ու աշխարհայինը՝ բանականությամբ, բարի գործերով ու մարդասիրությամբ:

Հայրենները մատենագրի ստեղծագործությանը բերում են մի նորություն ևս՝ պանդխտության լարը: Տարագրի ապրումներն ու վիճակը պատկերող այդ քառյակները հայ գրականության մեջ հայտնի առաջին հեղինակային քերթվածներն են, որ կրում են նաև քերթողի սեփական ճակատագրի կնիքը: Դրանք նա՛և կրոնաբարոյական, դավանաբանական-քաղաքական որոշ զաղափարների, սոցիալական հարաբերությունների մարմնավորումն ու փիլիսոփայական մեկնությունն են՝ համեմատությունների ու պատկերների միջոցով:

Հովհաննես Երվնկացին նորություն, բազմազանություն ու թարմություն մտցրեց տաղաչափական արվեստի մեջ ևս: Մինչ ինքը գերիշխող նույնահանգությունից ազատվելով, նա այն դարձրեց փոփոխական ու բազմազան, օգտագործեց

հանգավորման, այլև ապատ ու անհանգ բանաստեղծության բոլոր տեսակները՝ շարժուն, ծրագրային (կապված բովանդակության անցումների հետ), խառը. կիրարկեց Պատասխանի, Անվանակապ, Ծայրակապ, Ծայրոտն տաղաչափական ձևերը, խառն ու կանոնավոր չափերը, ստեղծեց երկատող. եռատող, քառատող, հնգատող ու ավելի մեծ տներով քերթվածներ: Նրա բանաստեղծությունների մեծ մասը ձայնագրվել են ու երգվել, որ արդյունք է լեզվի, ոճի ու բովանդակության երաժշտականության, այլև ալլիտերացիայի:

Երկնկացին մեծ ճարտասան է: Նա հատուկ ուշադրություն է դարձնում լեզվի մաքրության, պարզության ու գեղեցկության վրա: Նրա խոսքի մեջ չկա միատեսակություն. յուրաքանչյուր նյութ և գրեթե յուրաքանչյուր գործ ունի համապատասխան արտահայտության ձև, համապատասխան բառագանձ ու լեզու՝ մերթ գրական, մերթ՝ հրապարակախոսական, մերթ՝ գեղարվեստական. մերթ՝ գրաբար, մերթ՝ աշխարհաբար, հարմարեցված նաև լսող ու ընթերցող հասարակությանը, նպատակադրությանը: Բանաստեղծը հոգեբանի ու իմաստասերի բացառիկ խորաթափանցությամբ է զգում բառի ու բանի ներքունակության երանգաշատ ծալքերն ու արժեքը, ներգործության բազմաբնույթ ուժն ու խորությունը, ըստ ժամանակի ու տեղի համապատասխան ընտրություն կատարելու անհրաժեշտությունը, հասարակության տարբեր շերտերի համար, հոգեկան տարբեր վիճակների ժամանակ նրա օգտակարության չափն ու տեսակները: Նա շեշտում է նաև լեզուների, մասնավորապես մայրենիի ու բարբառների իմացության անհրաժեշտությունը, որովհետև դրանք պետք են թե՛ արձակ ստեղծագործության և թե՛ մասնավանդ տաղաչափության համար: Այս տեսանկյունից բնու-

թագրելով մի շարք լեզուներ՝ մեկական մակդիրներով, նա հայերենը համարում է ո՛չ միայն «համեղ», այլև «հարմար», որովհետև իր մեջ ունի մյուսներից շատերի առանձնաշնորհությունները ևս:

Երկնակացու արվեստին բնութագրական չեն երկարաբանությունները, ձգվող պատմողականությունն ու նկարագրությունները: Բանաստեղծի միտքն առավելապես հենվում է շարժման, գործողությունների, երկխոսությունների, պատկերավորության, մասնավորապես՝ համեմատությունների, այլաբերությունների վրա: Գեղարվեստական մտածողության ու խոսքարվեստի բարձր մակարդակով են ստեղծված նրա ո՛չ միայն չափածոն, այլև՝ արձակը: Գրաբար թե աշխարհաբար՝ այն գեղեցիկ է ու մշակված, ճոխ ու պարզ, հարուստ ու հասկանալի, կենդանի ու երաժշտական և մի՛շտ բանաստեղծական: Սրա ապացույցն է նրա գրեթե ողջ մատենագրությունը, ուր հեղինակն ինքն է բացում իր արվեստի գաղտնիքը. «Եւ արդ, կամիմ աստանօր կերաժշտակա՛նա՛ցն բերել նմանութիւն արուեստի. երբեմն կուրախակա՛նն հնչել նուագ և տրամադրե՛լ կլսողսն ի կուարճական խնդութիւն, և երբեմն կողբերգակա՛նն շարժել մատն՝ յաղե՛տս և յո՛ղբս արտասուաց ածել»:

Բանաստեղծի ողբի ու արտասուքի տողերը թվում են Խորենացու և Նարեկացու Ողբերի անմիջական արձագանքը: Զարմանալիորեն նրա գործերում չենք հանդիպում Նարեկացու անվանը, սակայն Մագիստրոսի օրինակով գրված նրա նուիրական Հայարտողյանում Նարեկացու հառաչա՛նքն է լսվում.

Թէպէտ անձուկ սրտիս նեղէր տագնապական,
Եւ ի խորոց սրտէ հնչէր ձայն հառաչման...

Նարեկացու ձայնն ու ներգործության ուժը զգացվում են։ Երզնկացու արձակում ևս, որ շատ հաճախ առոգանվում է չափածո: «Խրատ հասարակացը», որ ժողովրդական լայն շերտերի համար կանոնական օրենքներ հաստատող մի աշխատություն է, հեղինակը ներկայացնում է այսպիսի շնչով.

«Զկանոնական հրաման սրբոցս ծաղկաքաղ արարեալ՝ ի մի հաւաքեցաք, իբրև զծաղիկ բուրաստանաց՝ դեղ ցաւելի կենաց, և իբրև զհատ ցորենւոյ՝ սերմանել ի սիրտս ձեր, յաճեցումն բազմապատիկ պտղոց, և իբրև զգաւազան հաստատուն ի ձեռս ձեր՝ գտանել զհուն անցից հորձանահոս գետոց փորձանաց մեղաց, կամ խթան ընդոստուցիչ ի քնոյ երազական կենաց, զի թէ նաւավարն ի քուն՝ նաւն ծովածուփ, խաշնարածն ծոյլ՝ խաշինքն վնասակար խոտ ճարակեն, և թէ առաջնորդքն անհաստատ՝ կարգն ընդ նոսա սայթաքին, ապա եթէ խարիսխն անշարժ՝ շինուածն ոչ գահավէժ, հովիւն քաջ՝ խաշինքն ոչ գայլանակուր, դէտն զգոյշ՝ քաղաքն ի խաղաղութիւն, զօրավարն արի՝ զօրքն յաղթող, վարդապետքն իմաստուն՝ աշակերտքն ուղիղ. վասն որոյ աղաչեմ խոտորել ի չարէն և ընտրել զբարին, լինել աղ համեմիչ և լոյս լուսաւորիչ»[2]:

«Մատյանի» ոգին է, թերևս, թելադրել գրելու նաև «Աղաւթք ողբերգական, ի դիմաց համայնից բնութեանց անձնական կրից, անբաւ երախտեացն Աստուծոյ յիշումն և բազմապատիկ յանցանաց ապաշաւանաւք ստգտումն և ըստ նեռելոյ երկայնամտութեանն Աստուծոյ՝ յայտնապէս հրատարակումն, Յոհաննէս վարդապետի», ուր այնպես լսվում է

---

[2] Է. Մ. Բաղդասարյան, Հովհաննես Երզնկացին և նրա խրատական արձակը, Երևան, 1977, էջ 200:

Նարեկացու հնքը: Այն սկսվում է «Տէր ամենակալ, Աստուած հոգոց, արարիչ ամենայնի և դատաւոր արդար, որ ողորմութեամբ քո շինեցեր զաշխարհս ի սկզբանէ» տողերով:

Երզնկացու չափածոն քնարական խտացումն ու բանաստեղծական լրումն է նրա արձակում ծավալված հիմնական ու առանցքային գաղափարների, որ ամբողջացնում ու կատարյալ է դարձնում իմաստասեր քերթողի ստեղծագործությունը, աշխարհայեցությունն ու մարդկային նկարագիրը:

Հայագիտությունը բարձր է գնահատել Հովհաննես Երզնկացու դերն ու տեղը հայ մշակույթի պատմության մեջ, համարել իր ժամանակի նշանավոր սոփեստոսը, աստվածախոսն ու երգախոսը և վերջինը՝ հայ մատենագիրներից, որից հետո ո՛չ ոք իրեն հավասարվեց կամ մոտեցավ, նույնիսկ ո՛չ իր դարում հռչակվածներն ու իր ուսուցիչը՝ «Մեծ անուանեալ Վարդանն ևս» և իրենից առաջ էլ՝ քչերը (Գարեգին Սրվանձտյան): «Ի սմա դադարեալ տեսանեմք զոմ հայախօսութեան Խորենացւոյ և Եղիշէի», գրում է Միքայել Նալբանդյանը: Իր նման հանճարեղ և հմուտ «վայելչաբանմը» գտնելու համար, պետք է հասնել մինչև Մխիթար Գոշ, Ներսես Լամբրոնացի և Շնորհալի, այլև մինչև Հովհաննես Սարկավագ, եպրափակում է Ղևոնդ Ալիշանը: Սրանով Հովհաննես Երզնկացին ընդհուպ մոտենում է Նարեկացուն:

ԱՐՄԵՆՈՒՀԻ ԵՐԶՆԿԱՑԻ-ՍՐԱՊՅԱՆ



ՀԱՅՐԵՆՆԵՐ

Ա

Աւաղ կայն որ շատ դատել, մարդ չըկայ որ վէլմըն ճանչէ՝,
Հաշուէց թէ ջօհար ունի 'ւ առջև խոպին կու թափէ,
Խոպըն ջօհար ե՞րբ ճանչէ, կօրն ի բուն վաղբըն կու փորէ,
Կոխէ նա վքո ջօհարն, դընչովն այլ ըվքեվ խոցէ:

Բ

Օրհնեալ է աստուծոյ անունն, որ վբարեաց դրոներն է բացել,
Զաշխարհս գեղեցիկ ստեղծել 'ւ յերեք դիմաց բաժանել,
Զհրեշտակս ի յերկինս դրրել 'ւ Ադամայ վդրախտն է տընկել,
Զերկիրս գաւանաց տրւել 'ւ անասնոց տեղի վսա շինել:

Գ

Ի յերկնաւորաց դասուց Սադայել երեսն էր շրջել,
Ցերկնից ի յանդունդս անկել 'ւ լուսոյն խաւար մնացել,
ԶԱդամ ի դրախտէն հանել 'ւ անասնոց յերկիր վնա ձգել,
Ի ամեն Ադամայ որդիքս ենք օտար տեղիս բընակել:

Դ

Ճամփորդ քեզ յայնժամ ասեմ, որ վճամփի հատըն գիտենաս,
Ծընել ես 'ւ յաշխարհս եկել, տուր խապար, թէ ուստի՞ կու գաս,
Եկել ես օտար յերկիր, մէկ ցուցու, թէ ի՞նչ կու կենաս,
Մեռնիս դու 'ւ ի հող մըտնիս, մէկ ասա, թէ ո՞ւր կու գնաս:

Ե

Դու ըվքեզ ճամփորդ գիտես 'ւ ի ճամփէդ ի դուրս կու գընաս,
Սիրես մանկութեան անունն ու նըսեֆ մանկան չունենաս,
Ճամփաս է բարակ ու նեղ, դու խըփել ես վաչէիդ ու գնաս,
Քաղցր է մանկութեան անունն, դու լեղի 'ւ անհամ կու կենաս:

Զ

Եղբայր սիրելի 'ւ որդի, որ ի յայս հողըս կու կենաս,
Ցաշխարս ես ի բան եկել, վաչքըդ բաց թէ ո՞ւր կու գնաս.
Խրատ մի քեզ տալ կամիմ, վուգեմ օղ քան վոսկի խալաս,
Սիրես 'ւ ի յականջդ ածես, թէ դու քո վկեանքըդ կամենաս:

Է

Դաւիթ արքայի որդին Սողոմոն վայս մեկ կու ասէ՝
Զխրատն իմաստնոյն դու տուր, աւելի նա ըվքեվ սիրէ,
Թէ անմիտ 'ւ անգէտ մարդոյն խրատ տաս, նա ըվքեվ ատէ,
Ու թուր ու դանակ առնու, թէ կարէ նա վքեվ սպաննէ:

Ը

Գանգատ եմ ու խոց, եղբայրք, սիրտս ի վեր արիւն կու բերէ,
Ի մանկութենէ ի վեր վիս ուսման հոգսըն կու մաշէ,
Եկել եմ գերի անկել, ճար չկայ որ մէկ մի թաւիէ,
Դատիմ վերթ վամեն մըշակ, նա մարդ կայ, որ դեռ կու խոցէ:

Թ

Չորս բան առ խրատ յինէն, որ վամեն աշխարհս քեվ արժէ,
Զայլոց մեղք դու մի քընններ, վքոյն յերակ մըտօքդ անդիճէ,
Զաստուած մօտ ի քեվ դու տես ու վմահուն օրըն դու յիշե,
Զխըրատս ի սրտիդ տընկէ, սա յամեն չարէ վքեվ պահէ:

Ժ

Զքո մեղքն իսկի մի՛ մոռնար, որ խոնարհ վանձըդ քո պահէ,
Զայլոց մեղք դու մի՛ քընններ, որ աստուած ըվքեվ չդատէ,
Զաստուած թէ ի մօտ տեսնուս, մեղքն իսկի ըվքեվ չխաբէ,
Ով որ վօր մահուն յիշէ, վայս աշխարհս բընաւ չսիրէ:

ԺԱ

Դաւիթ մարգարեն 'ւ արքայն վսիրելեաց ըվսէրն է գովել,
Ընցգուն վայելուչ 'ւ աղուոր են եղբայրքն ի մէկ տեղ եկել,

Զինչ կԱհարոն ի գըլուխն, որ ծաղկանց իւղովն էր օծել,
Կամ ցօղն յԱհերմոն լերին 'ւ ի Սինայ քաղցրիկ նա ցօղել:

ԺԲ

Ձեր գալդ է բարի, եղբայրք, որ ի յայս տեղիքս էք եկել,
Ցաշխարհս ենք տըրտում ամենքս ու խոցով մեր սիրտս է լըցել,
Ձեր խօսքդ մեվ դեղ եղաւ, ձեր տեսովդ ենք մենք խընդացել,
Հավար երնեկ այս աւուրս, որ մէկ տեղ ենք մենք ժողովել:

ԺԳ

Թագաւոր 'ւ սուլտան 'ւ իշխանք, որ ի բարձր աթոռ էք նըստել,
Շատ ճորտ ու ծառայք ու կօրք կան ի ձեր առջևըդ կանգընել,
Ահեղ ու սաստիկ հրաման ու հանդէս էք դուք յօրինել,
Ուղորդ դատաստան արէք, վի ձեվ այլ ատեն կայ պահել:

ԺԴ

Հկօր թագաւորք 'ւ իշխանք, որ դարպաս էք դուք յօրինել,
Ձաւուշ ու պահնորդ դըրել, վձեր երեսդ ի մարդոյ պահել,
Գանգատ ու վըրկած մարդիկ անճարակ են առ ձեվ եկել,
Դըրէք միտ ու դատ արէք, վէդ աստուած են առ ձեվ եկել:

ԺԵ

Մարդն որ սիրելիք ունի 'ւ ի նոցա մէջէն բաժանի,
Հաշուեց թէ ի մահ կերթայ, 'ւ ի մարմնոյն շունչըն կու քաղի,

Զինչ ձուկն ի ջրէն հանած, նա այլ ո՞նց կենայ կենդանի,
Ի բարկ կըրակին դընեն խեղճ 'ւ ողորմ ինքըն խորովի:

ԺԶ

Այլ ողորմըն չէք տեսել, թէ ունի մարդ շատ սիրելի,
Ի ինքն ի նոցա մէջէն կարօտով ի բաց կու վատի,
Ցորժամ տօն օրեր լինի, կամ վատկի կամ բարկենդանի,
Ամենքն են դըրախտ ծաղկած, նա կտրած քան վճիւղ մի ծառի:

ԺԷ

Շաղղած ես ի չորս իրաց, այդցեղ շէնքդ ամուր չի լինի,
Օդըն հողոյն ի՞նչ նըման, հուրն ու ջուրն են խիստ ատելի,
Ի հակառակէ ստեղծած և եղած ես մարդ կենդանի,
Վերնայ օդն ու հուրն ու ջուրն, ու մարմինըդ դառնայ փոշի:

ԺԸ

Մարդն որ շատ անդէճ լինի, յաշխարհիս հոգըն կու մաշի,
Շաքարն իւր լեղի թըւի, և լեղին իւրըն խըմելի,
Հով ջուրըն կըրակ թըւի, և յահէն վերդ մոմ կու հալի,
Զդիւր կեանքըն դըժար հաշւի, 'ւ ի դըժարն ինքըն չհանկչի:

ԺԹ

Երնեկ այն մարդոյն ասեմ, որ յաշխարհս ի սուգ կու կենայ,
Զիւր մեղքն ի յիշումն ածէ, վօրն ի բուն նա նըստի ու լայ,
Արցունքըն սապոն լինի, սևութիւնըն սպիտականայ,
Թէ չէ օր հարսնեցըն գայ, նա հանդերձ հարսին չունենայ:

Ի

Զաղըն գէմ համեղ ասեն, տէր Քրիստոս որ վայս կու ասէ.
Զանհամն ինքն ի համ բերէ ու կնեխեալն անուշացնէ,
Էնց մարդն որ բանիկ ունի, կամ ուսմամբ կամ ի բնութենէ,.
Համեմ է հոգոց մարդկան, 'ւ կհիւանդ հոգիս բըժըշկէ:

ԻԱ

Զաղն անհամ ո՞վ է տեսել, թէ լինի նա պիտանացու,
Ոչ աղբ ի պարտէկ ձգել, 'ւ ոչ է քար ինքըն շինելոյ,
Նոյնպէս որ բանի տընտես լուկ խայթոց ունի վինչ մեղու,.
Պաշտօն յամենոց ուվէ, չասէ վանձն իւր մահկանացու:

ԻԲ

Լաւ մարդ ես նորա ասեմ, որ բանայ վբերանըն համով,
Ընցգուն լեվուն գին չունի, թէ լընու տուն մի ջօհարով,
Աստուած երբ վաշխարհս արար, վհողն ու ջուրն ու վօդըն՝
հրով,.
Մըթղալ մ' աւելի չարար, այլ կըշռեց վամենըն չափով:

ԻԳ

Լեվուն է գործիք բանի 'ւ արդարոյն վերդ խալաս ոսկի,
Զմարդոյն է մէկ փերթ արել և օձին է երկու ճըղի,
Էնց մարդն որ երկու խօսի՝ վմէկըն քաղցր ու մէկըն լեղի,.
Եղբայր է օձին եղել ու վնորա անէծքն ընդունի:

ԻԴ

Ծառի ճիւղն որ չոր լինի, ո՞վ մընայ թէ իսկի ծաղկի,
Սպիտակ մակն որ սև ներկեն, ո՞վ ասէ թէ իսկի թափի,
Բայց մարդ մեղաւոր ու սև ես գիտեմ որ կու սպիտակի,
Աստուած մէկ բանիկ կուպէ, որ «մեղայ» ասէ ու քաւի:

ԻԵ

Կաֆա մի ասել կամիմ, որ արժէ ջօհար մի բոլոր,
Մարմինդ է ի նաւ նըման, խելքըդ՝ ծով, թէ չունի ժըխոր,
Զմիտքդ նաւավար դու տես, որ բարձեր է գանձ շահաւոր,
Թէ յեկր ի ծովուդ հանես, նա առնէ ըվքեվ փառաւոր:

ԻԶ

Կանթեղին մըտիկ արա, ջուրն ու ձէթն ու հուրն ի լարան,
Կանթեղըն մըտաց նըման, ջուրն՝ ուսման, ձէթըն՝ գիտութեան,
Քանի միտք դու սուրբ ունիս ու ջանիւ ես սիրող ուսման,
Գիտուն է հոգիդ պայծառ, որ լոյս տալ քեվ ի մըթութեան:

ԻԷ

Հաւատն է անառ բերդիկ, ով առնէ վնա հայրենիք,
Թէպէտ թշնամիք ունի, որ բերեն շատ մրձեր ու նիգ,
Թուման մի հեծել կանգնին ու լինին յինքըն նետաձիգ,
Նա վայն մասխարայ դընէ ու թըքնու վինչ ի խամաճիք:

ԻԸ

Թէ դու ի սրտաց քընՆես, այս կենցաղս յերակ խաբող է,
Սակաւ մի խընդալ կու տայ, բայց յերակ ի լաց կու պահէ,
Այն մարդն որ աւտայ սորա, կամ աստէն իւր տուն կու շինէ,
Զաւտամ թէ նա խելք ունի, աւտա որ խիստ յիմար է:

ԻԹ

Կուկես որ հանգչիս, եղբայր, անդէնէն դարպաս դու շինէ,
Զհիմըն հաւատոյ դու դիր, որ ամուր 'ւ անշարժ կու պահէ,
Զինչ որ քեզ բաժին հասնի անդէնին դու պայն աղարկէ,
Ցորժամ ի քո տունն երթաս, նա բարով քան կնուռն ի լին է:

Լ

Զով որ կու սիրէ աստուած, նա սակաւ մի աստ կու տանջէ,
Փորձէ՝ թէ նա սէր ունի առ աստուած, չարին համբերէ,
Թէ կսէրն ի սրտէ ունի առ աստուած, նա խիստ յօժար է,
Տանջանքըն թըւի նըմայ թ'իւղով կանձըն կօծանէ:

ԼԱ

Ով իմ խըրատիս լըսէ, նա կանանց բարին ժառանգէ,
Ի անդէն պարկերես լինի 'ւ ումեքէ իսկի չամաչէ,
Ցորժամ յարութիւն լինի, փողն երկու ձայնիւ տի կոչէ,
Ով աստէն ճարտար կացել, նա կԵկայք ձայնըն տի լըսէ:

ԼԲ

Աշխարհս է ի ծով նըման, ով որ գայ՝ անթաց չմնայ,
Ցայս ծովս ես ի նաւ մըտայ, գընաց նաւս և ես չիմացայ,

Յեկեր մօտեցել եմ ես. վախեմ թէ քարի դիպենայ.
Քակտի իմ աղուոր շինուածս ու տախտակըս մէկմէկանայ:

ԼԳ

Զարևն ի յերկինս իմայ ու լուսոյն նատար դու արայ,
Որպես որ ճարակ չկայ ի նիւթոյն լոյսն որ հեռանայ,
Ցորտեղ որ արևն երթայ, լոյսն անճառ աղբիւր ցոլանայ,
Հուրն և ճառագայթն և նիւթն միացել ու երկու չէ նայ:
Այսպէս ի Քրիստոս ասա, դաւանումն է սերտ հաւատայ,
Եւ մի՛ լինիցիս թերի դու տըղայ տըխմար 'ւ անիմայ:

ԼԴ

Ըստեղծող է Քրիստոս և լոյս 'ւ աշխարհիս տէր անտարակոյս,
Հոգի ու մարմին ու միտք, որ եղև փրկիչ գերելոյս,
Թէ չէր միացեալ հողոյս ընդ բանին աստուած մեռելոյս,
Ապա վկապանն ո՞վ լուծէր, երբ չկայր մեկ ելնելու յոյս:

ԼԵ

Աստուած ի կուսէ ծընեալ, կոյսն ամբողջ և սուրբ մընացեալ,
Հինգ սքանչելիք անճառ, որ մարդկան անհաս երևեալ,
Ի մի ենթակայ եկեալ, հուրն աստուած և հողն եռացեալ,
Մարմինն և ստեղծողն երկնից՝ նոր խառնեալ և յոյժ միացեալ:

ԼԶ

Զաջն աշխարհաստեղծ եղեալ, ի խաչին թևըն տարածեալ,
Ոսկըր ջըլապատ և մորթ թանձր, աստուած ի փայտ բևեռեալ,

Կողն սըրահերձ եղեալ, ջուր 'ւ արիւնն ըմմեկ նորոգեալ,
Ի եօթն անգամ ձայն ածեալ, որ վեօթեան կենցաղս
յօրինեալ:

ԼԷ

Անեղն աստուած մարդ եղեալ, նմա պարտ էր վայս
ներգործել,
Արեամբն աստուծոյ ըմմեկ ի մեղաց փրկել ւ' ապատել,
Զմարդիկ մահու գրաւեալ, ի յերկինս ի կեանս հրաւիրել,
Հրեշտակացն ընկեր առնել, վնա օրհնել և փառաւորել:

ԼԸ

Մարդն որ յօտար տեղ երթայ, շատ մին խելք կու պիտի
նորա,
Ամեն մարդոյ ցած կենայ 'ւ ապա թ'իւր բանն լինենայ, '
Մըտիկ դու ծառին արա, թէ քանի հունար կայ ի նա,
Այն ճեւղն որ վպըտուղն ունի, քան վդարտակն ի ցած կու
կենայ:

ԼԹ

Ով որ օտարին վատ ասէ, նա ինքն այլ ղարիպ լինենայ,
Երթայ ի յօտար երկիր, վղարիպին ղատրըն գիտենայ,
Ղարիպն ի յօտար երկիր, թէ օսկի թաթաւ գայ նարայ,
Ի յիւր սիրելեացն ի վատ այն ոսկին մոխիր չաժենայ:

Խ

Հավար եղուկ իմ խելացս, որ հետ քոպիսոյն դատեցայ,
Ես ըվքեվ ինձ վարդ գիտցայ՝ փուշ չաժես, լուկ անխելացայ,

Ի՞նչ շահ է յետին խելացս, երբ վառջինն ես անգիտացայ,
Գոհ եմ աստուծոյ բարոյն, որ ի քո տեսոյդ խըլըսայ:

ԽԱ

Մէկ կայ որ հապար աժէ, հապար կայ որ մէկ մի չաժէ,
Այն մէկն որ հապարն աժէ, մօտ յանգէտին փող մի չաժէ:
Ինչ մարդ որ գիտուն մարդուն խոնարհի և նմա լըսէ,
Այս կեանքըս ինքըն ուրանայ 'ւ անդէնին բարին ժառանգէ[2]:

ԽԲ

Ծառ մին կայ հապար ճըղի, վինչ տեսայ նա մէկ տակ ունի,
Այնպէս է գիտուն մանուկն, որ յանգէտի մօտն է գերի,
Գիտունն է ի ծով նման, քանի շատ մտնու կրու տանի,
Ի անգէտն է ի տիկ նըման, թ'աւելի ածեն նա թափի:

ԽԳ

Է՛ մարդ, որ աւերդ ես հիմըն դըրել ու տուն կու շինես,
Երբ որ քարդ այլոց և փայտդ է այլոց, վայդ ո՞ւմ կու շինես,
Ջանա վտունն այնպէս շինել, որ հապար դեկան մըսըխես,
Ցորժամ դու ի տեղն երթաս, նա չասեն թէ յո՞ւր կու մըտես:

ԽԴ

Բանիկ մի ղալաթ արի, որ վօձու ձագըն սիրեցի,
Խիստ վստահութիւն արի, որ օձուն դուռն գնացի,
Օձուն մայրն ի դուրս երեկ, վիս խածեց, ես նըստայ լացի,
Արժան եմ ես էս նենգիս, օձուն ո՞վ եղեալ սիրելի:

ԽԵ

Արիք ի ծովափն իջնունք ու ձկներ բըռնենք վարըմով,
Առնունք և ի տուն տանինք, խորովենք վինքըն կրակով,
Ձըկնիկն ընդ իս էնց ասաց, թէ լցաւ սրտիկս արիւնով,
Երբ ես յարևէս ելայ, թող ցամքի վինչ գետ կայ ու ծով:

ԽԶ

Զայս որ ես հետ ինձ արի, չէր արեր այլ ադամորդի,
Որ շիշ մի հալած ոսկի ի գետինն ի վայր վաթեցի,
Հավար ձի վավան բերի, վավցուցի 'ւ այլ ոչ հասուցի,
Ի՞նչ շահ իմ յետին խելացն, երբ առջի անունն աւրեցի:

ԽԷ

Շատ թագաւորաց մեծաց 'ւ իմաստնոց արանց լըսեցի,
Թ'այնչափ չըկըշտանայ մարդն յաստնուորէս՝ մինչ որ մեռանի,
Տանին գերեզման դընեն և հողով իւր աչքըն լրցուի,
Ապա փոշիմանի 'ւ ասէ, թէ հերիք է 'ւ այլ չի պիտի:

ԽԸ

Իմ սիրտ վատին մի լսեր ու չարին տեղ իսկի մի տար,
Ցայս աստընուորիս վերայ վատն իսկի մարդոյ չի մնար,
Այն մարդն, որ յինքն վատ առնէ, հանդիպի վատի մի նա այլ,
Ու վինչ որ ունի ամալ գայ ի յոտքըն փաթթի նա այլ:

ԽԹ

Տեսա վիմ հոգոյս հոգին, որ մեռաւ ի հող թաղեցաւ,
Դարձեալ իմ սիրուս համար նա հարեաւ ու շատ դատեցաւ,
Ի սուր 'ւ ի կըտոր երեկ ու քարով նա քարկոծեցաւ,
Ի հուր 'ւ ի գեհեն մտավ, իմ հոգոյս հոգի ջահեցաւ:

Ծ

Երկուս ընդ իրար կուին, մէկ ի մէկ իսկի չի նմանին,
Մէկ էլ ի նոցա միջին էր մեռած 'ւ անկած ի տեղին,
Այնոք որ կկռիւն արին, շատ արիւն ի վայր թափեցին,
Ի ի յայն արենէ ցօղին շունչ տուաւ անգած մեռելին,
Ծեր մ' այլ բարեխօս բերին, որ եպագ կերես մեռելին,
Եւ յայն համբուրէ ծերին լոյս ծագեաց մթան գիշերին:

ԾԱ

Աւաղ մեկ հայիլ պիտի յայն արևն որ լոյս կու ծագէ,
Շատ կայ ի յարև նըման՝ ի պնչէն օձըն կու վապէ,
Գիտուն մարդն յարև նըման, խօսքն կէտ արև կու ծագէ,
Անգէտ մարդն օձու նըման, հանապազ ըզմարդ կու խոցէ:

ԾԲ

Բաւան ի յանտառ մորին թէպէտ բու, թէպէտ բաւայ է,
Ճոհարն ի ծովուն միջին թէպէտ քար, թէպէտ ճոհար է,
Խելօքն ի յանգէտն ի մօտ, միտք արա, թէ ի՞նչ նըման է.
Ճըրագն ի յառջև կուրին կու վառի՝ ինքըն չըգիտէ:

ԾԳ

Աշխարհս ի տոլապ նըման, որ ի վեր 'ւ ի վայր թաւալի,
Վերինն այլ ի վայր դառնայ, և վարինն ի վեր ոլորի,
Մըտիկ դու հիւսանն արա, որ թապութ 'ւ օրոցք շինէ նայ,
Մէկըն գայ և մէկն երթայ, նա իւր բան պակաս չի մընայ:

ԾԴ

Աշխարհս է ոչինչ նըման, շատ դատին դառնան փոշիման,
Հալալ ու հարամ անեն՝ հոս թողուն 'ւ ի հոն կու գընան,
Զան արա՛ գործէ բարի, որ յետոյ չլնիս փոշիման,
Թէ չէ Ադամայ դըրախտէն քեզ կանաչ տերև մի չի տան:

ԾԵ

Աշխարհս է կանաչ մարգեր, մենք ի մէջն ենք կաքու ձագեր,
Հրեշտակնին արծիւ դարձեր, կու տանին կմեզ մէկ մէկ ի վեր,
Մանկտիք, երբ ի հաց նըստիք, ձենեցէք աղքատք ձեզ ընկեր,
Մեռնիք 'ւ ի անդէն երթայք, կու նըստիք քանց մէկ մ'այլ ի վեր:

ԾԶ

Ելայ ժողուեցի վիմ մեղքն ու դըրի առջևս ու լացի[3],
Ցանդէնըն քարևան կերթար, շալկեցի 'ւ ի հետ գընացի,
Հրեշտակն այլ ի դէմս ելաւ, թ'Ո՞ւր կերթաս ողորմ ու լալի,
Այդ շալկիկդ որ դու ունիս՝ անդէնին քեզ տեղ չի ընկնի:

ԾԷ

Հոգին հողվըրդովն անցաւ ու կմարմինն ի հողն անիծեց,
Թէ՝ «Մեղքն ես ու դու արաք, յանդէնն իմ երեսն ամաչեց»:
Մարմինն ի հողուն ի դուրս մէկ խօսք կհոգին վըճարեց.
Թ՝ «Ես հող էի՝ հող դարձայ, քո ամալն է, ըվքեվ բռնեց»:

ԾԸ

Է՛ գերեվար մարդ ու տխմար, յէ՞ր չես երթար ի միտք ի վայր,
Կորուսիր վավատ հոգիդ 'ւ այդ հողեղէն մարմնոյդ համար,
Ի կեր 'ւ ի խում ես հետ մեղաց, ի ժուռ կու գաս վօրն անդադար,
Առնոյս ու տաս մարմնոյդ ի կեր, գիրացընես որդանց համար:

ԾԹ

Այս աստնուորիս բարիքն չէ իսկի մարդոյ մնացական,
Աշխարհս է քարւանսարայ, դասք մի գան ու դասք մի երթան:

Կ

Աւաղ հավար բերան թ' ինչ խելօք անխելացայ,
Քան վկաթն վիստակ էի, քան վգարնան ջուր պըղտորեցայ,
Շարած մարգրիտ էի, յանարժան տեղիք վաթեցայ,
Քան վասպապ ի ծալն էի, նա տըկուկ տըկուկ քակեցայ:

ԿԱ

Ցիմ շատ կիւնահին յահէն վիս երերն ու լացն է պատէր,
Ոչ ով չէ պատճառ եղեր, չեմ այլոց ձեռօք ես խափվեր,
Իմ սրտիս յօժար կամօք ի յամէն մեղքն եմ հանդիպեր,
Միոյն հակառակ կացեր, վօրինաց ցանկն եմ պատառեր:

ԿԲ

Աշխարհս է ի ծով նըման, ու մարդիքն ի ներս կու լողան,
Մարմինն է ի նաւ նըման, հոգին գանձ է անապական,
Մարդիկ վինչ գարնան ծաղիկ փթթին 'ւ այլվի չորանան,
Երանի հավար բերան արդարոցն յաւուրն յարութեան:

ԿԳ

Մէկ մարդ մի ճուհար ունէր 'ւ ի խելաց շահել չըկարաց,
Մինչ խելքն ի վերայ եկաւ, նա գընաց ճուհարն ի ձեռաց,
Գընաց նա ի վայր նստաւ, ողորմիկ ու շատ մի իլաց,
Նորա լացն այլ ի՞նչ շահ է, երբ գընաց ճոհարն ի ձեռաց:

ԿԴ

Կուվես որ ավիվ կենաս, որ ամեն մարդ վքեվ սիրէ[4],
Դու հողի նըման կացիր, որ ամեն մարդ վքեվ կոխէ.
Քանց վերկաթն այլ ի՞նչ ամուր, որ կըրակն վինքն կու հալէ,
Դու ջըրի նըման կացիր, որ կըրակըն ի քենէ վախէ:

ԿԵ

Դաւիթ մարգարէն կասէ թ' ապրեցոյ ի մարդոյ չարէ,
Մարդոյ չարըն հանց վատ է, որ վվայրիքն ի լեառն ածել է.

Զառիւծն վնճիլ դրած 'ւ ի չոպան կուտան թէ քաշէ,
Շատ է չոպանին վահլայն, առջև առիւծին կու քայլէ:

ԿԶ

Մըտիկ լեռներուն արա, խելօքին խըրատն հերիք է,
Ուր բարձր լեառ՝ հոն ձուն կա, ուր ցած է՝ ինչպէս կանաչ է:

ԿԷ

Զմարդն որ սիրելի առնես, նէ վասլըն դու վինքն փընտռէ,
Հետ ան մարդուն մի նըստիր՝ երբ ելնէ ըվքեվ վըրուցէ,
Ըվնետն մահու ձըգէ ու վաղեղըն դառնայ պահէ,
Զարիւնըդ վէտ ըվջուր վաթէ, դառնայ մէկ խօսօք վըճարէ:

ԿԸ

Ես այն հաւերոյդ էի, հանապազ ի ջուր կու կենի,
Ցամաք չիշխէի ելնի, յակնատէ կասկած կու քաշի,
Ցանկարծ էնց բանի դիպայ, որ իւրմէն ես խիստ կու վախի,
Ամեն հաւու յոտն անկաւ, ինձ ի յոտս՝ ու վիկս աւելի:

ԿԹ

Արդար դատաւորն Աստուած ի յերկնից ի վայր իջանէ,
Արդար դատաստան առնէ, մեղաւորն արդարոց ջոկէ,
Արդարոցն Եկայք ասէ, վմեղաւորն ի հուրն առաքէ,
Արդարքն ի ցնծալ առնուն, մեղաւորն նա ի՞նչ տի անէ:

Հ

Զանիրաւ մարդոյն իմա, վատ կացիր դու վամեն հեռի,
Թէ քեվ հայր է կամ եղբայր, կամ քեռի և քաջ սիրելի,
Հետ փըշին մի փաթաթվիլ՝ վինչ ի հետ ուռին դալարի,
Թէ չէ նա ի ձեռտ ելնէ՝ բևեռի խոց, և գան լինի:

ՀԱ

Զաշխարհս ես ի շուրջ եկի ու մեղաց տունն շինեցի,
Քարիկ մի վերայ քարի իմ հոգոյս համար չդրի,
Կապած է մակէ կարմունջ ու ներքևըն հուր կու վառի,
Արդարըն թըռչի 'ւ անցնի, մեղաւորն ի (նա) անկանի:

ՀԲ

Ով իմաստութիւն ունի, թող ի ուր խելացն չհաւանի,
Քան վՍողոմոն արքայն՝ ոչ եղել է, ոչ տի լինի,
Տաճար գեղեցիկ շինեաց ու ծեփեց վորմերն ոսկի,
Ակն ու մարգարիտ շարեց, թէ գայ մեր արքայն ծնանի:
Տեղ մի կա, դշխո մի կայր, ինքն դուստր էր կռապաշտի,
Հարաւու կողմէն երեկ, թէ տեսնում տաճարն բարի,
Սողոմոն ի դէմ գընաց, թէ՝ Դըշխո, քո գալդ ի բարի:
Ասաց՝ Թէ ինձ երկիր պագես, ապա քո կամքդ կատարի:
Ղամչին ի ձեռաց ձգեց, կըվացաւ թէ կառնու այլվի,
Զթագն ի գըլխէն առին, լոկ եղաւ նա այլակերպի:
Ելաց ու ասաց լալով, թէ Այս մեղքս որ ես գործեցի,

Զայս իմ շատ յիմաստութիւնըս՝ ես ի մէկ կընիկ ծախեցի,
Զասնաւորս գին արին, գին ասին երկու հատ գարի,
Ի Սողոմոնի վերայ, թէ չարժէ քան վհատն աւելի:

ՀԳ

Այ, խիստ անարժան եմ ես, որ բարեաց մէկ մաս մի չունիմ[5],
Խընդրեմ ի ձենջ, սիրելիք, որ ասէք մէկ Հայր մեր յերկինս:





ՏԱՂԵՐ

1. ՅՈՀԱՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՍԱՑԵԱԼ ՊԸԼԶՈՅՐ

Երկուսն ի մէկ տեղ բերած, վերթ ընկեր կասեն թէ պահէ,
Ու չորս բընութիւն օտար հետ իրաց կասեն թէ սակէ.
Հինգ դուռն է ի բաց թողած, վայդ ամուր կասեն թէ փակէ,
Ձիս հոգսն ի յայսոց միջին, վերթ կըրակ ըվմոմն կու հալէ:

Ձերկուսս ընկեր ո՞նց պահեմ, մէկըս՝ հող, մէկըս հոգի է.
Հոգիս թէ ի վեր քարշէ, հողըս ծանր ի վայր կու հակէ,
Վախեմ թէ հողոյս լըսեմ նա հոգոյս լոյսն պակասէ,
Ու հետ հոգոյն ո՞վ թըռչի, երբ նորա տունըն հեռի է:

Ձայս չորս յիրար ո՞նց սակեմ. ամեն մէկ յինքըն կու քաշէ,
Չոր հողըս խուշկիկ առնէ, ջուրըս վէջ կու ցըրտացնէ,
Քամին վիս յերերք ունի, կըրակին բոցըն կու վառէ.
Ընցգուն սիրելի չարկամ մէկտեղ ո՞վ իսկի տեսէլ է:

Հինգ դուռն է ի բաց թողած, թէ՝ Փակէ, որ գող չըմտնէ,
Այս բերդս է գանձով ի լի ու հապար չարկամ կու մըտնէ,
Չչարկամս ես ի յիս ունիմ, որ կդըուիս կամեն կու քակէ,
Զթագաւորս որ ի ներս նըստել, նա սա այլ գողըն կու խաբէ:

Խելօքին հարցուկս եղան, թէ կպատճառն ո՞վ իսկի գիտէ,
Աստուած է՞ր հոգի ստեղծել 'ւ ի հողոյ մարմին կապել է,
Կարծեմ վասն այնոր արար, թէ ի վեր քարշել կնա կարէ,
Կամ կհոգին ի մէջ մարմնոյն քան կխալաս ոսկի նա կուգէ:

2. ՏԱՂ ԵՐԶՆԿԱՑԻ ՅՈՎԱՆԻՍԻ ԱՍԱՑԵԱԼ

Այս ի՞նչ կրակ էր կիս այրեց,
Կամ ի՛նչ խավար, որ կիս պատեց,
Ես վէմ անխախտ էի՝ խախտեց,
Պօղպատ ամուր՝կէտ ջուր հալեց:

Եկաւ, անցաւ ու ճոխ քայլեց,
Ճոճաց ու կմէջքըն կոտրտեց,
Դարձաւ ի յետ խոլոր հայեց,
Անձըս տեսաւ ու կահընդեց:

Օրըն շաբաթ լոյս կիրակի.
Վերի վանացն ի վայր կուգի,
Բուրվառ ի ձեռս ու խունկըն իլի,
Սաղմոսարանն յանդս ունէի:

Հետ կուգայի, հետ կարդայի,
Թ'երթամ հասնիմ ճաշու ժամի,

Եկի առի հա՛նց կրակի,
Ոչ գրէի՛, ոչ կարդայի՛:

Մէկ մ'է հեծեր պօվ պէտաւի,
Եկաւ անցաւ քաջ մուհալի,
Աչեր ունէր թավրէվտանի,
Ընքվին ըվխելքըս կու տանի:

Խնձոր ձգեց մըտիկ չարի,
Մէկ մ' այլ ձգեց ցածցայ 'ւ առի.
— Սէն միւսիւրման, մոլլայ ղըվի[2],
Պէն Յովհաննէս քէշիշ օղլի,
Խնձորդ 'ի յիս ի՞նչ բան ունի:

— Եօրու, եօրու, կեաւուր օղլի[3],
Կեօթուր պիվտէն մուհալ սօվի,
Սէն Յովհաննէս, քէշիշ օղլի,
Պէն միւսիւրման մօլլա ղըվի,
Ջիրար սիրենք խօշ կու լինի:

— Յովաննէսին մայրն է, տըղայ.
Հագեր վալայ վըրան ճուպայ,
Վերի վաներացն ի շուրջ կուգայ,
Ու խունկ ու մոմ կու խոստանայ:

— Հաբեղաներ, ասէք մեղայ,
Սարկաւագներ՝ տէր ողորմեայ,
Մի՞թէ իւր խելքն 'ի վերան գայ,
Թ' իմ Յովանէսն ի տուն դառնայ:

Մէկ մի չասաց թէ՝ տէր մեղայ,
Ամենն ալլահ ու շէյտուլայ,
Յետոյ վայս ճուղապն ասացին,
— Այլ Յովաննէսին ճար չըկա՛յ:

— Ծո՛յ Յովաննէս, ծո՛յ իմ տըղայ,
Դարձիր ի տունն, ասա մեղա՛յ,
Հոն քո տէրտէրըդ կու ճորայ,
Թ' Աշան ընկեր է հետ նորայ:

— Հայ իմ մարիկ, ես քեզ ծառայ,
Թէ իմ տէրտէրըն վիս ճորայ,
Նա ես վԱշան ցըցնեմ նորայ,
Քան վիս ու այլ խեւ կու լինայ:

— Ծո՛յ Յովաննէս, ծոյ ի'մ տըղայ,
Դարձիր ի տունն, ասա մեղայ,
Դու մէկիկ ես, այլ ճար չըկայ,
Այլ լինալու ճարակ չըկայ:

— Հայ իմ մարիկ, ես քեզ ծառայ,
Զկաթդ որ կերայ, հալալ արայ,
Զխելքըս առին ու խեւ եղայ,
Ցիսմէ ի քեզ այլ ճար չըկայ:

— Ծո՛յ Յովաննէս, ծո՛յ իմ տըղայ,
Դարձիր ի տունն, ասա մեղայ,
Քեզի բերեմ հայու դըստրիկ,
Ըկքեզ օրհնել տամ քահանայ:

— Հայ իմ մարիկ, ես քեզ ծառայ[4],
Գէմ Աշային նըման չըկայ,
Աշան է թուխ, ունքն է կամար,
Քաֆիր եմ թէ վինքն ուրանամ:

— Ծո՛յ Յովաննէս, ծոյ ի՛մ տըղայ,
Դարձիր ի տունն, ասա մեղայ,
Աշան տաճիկ է անօրէն,
Այն քո հաւտուն հետ կու ջանայ:

— Հայ իմ մարիկ մի՛ տըխմարնար,
Չըկայ նըման գէմ Աշային,
Լեվուն պիւլպիւլ, ձայնն ղումրի
Մեջքըն բարակ վէտ ֆռանկի:

Աշան նըստեր էր փէնճէրէն,
Ափն երեսին էր, խիստ կուլար,
Թ'այսօր ծեծեց իմ հայր ղատին,
Թ'է՞ր կու սիրես հայուն որդին.
Տես թէ կելնէ մէկ մի կուգա՞յ,
Ականջըն խուլ Յովաննէսին:

Խեւ Յովաննէսն, երբ վայն լըսեց,
Բըռնեց վճամբան ի Եվընկին.
Ու գլխիբաց, գըտակն ափին,
Գնաց կանգնեց յառջև խանին:

Բարև երետ թագաւորին,
Նոքա շուտով վբարևն առին.

Բռնեց կպօվ ձիուն ագին,
Կաֆա ասաց ամէն ձարին:

Աշան կանգներ ի վերայ բերդին,
Մըտիկ կանէր Յովհաննէսին,
Քովն է կանգներ դեղին հագնողն,
Ինքն ըվկանանչն ու կծիրանին:

— Ծո՛յ Յովաննէս, մըտիկ արա,
Թ՝ ի վերայ բերդին ի՞նչ կու խաղա,
Դեղինուորին ես եմ ծառայ,
Կանաչուորին վանունն ասա:

Թէ չէ լինիմ շահին բավայ,
Թուչիմ նըստիմ թևին վերայ,
Պապուս անունն ասեն մօլլայ,
Աղբօրս ասէն քաղքի շահնայ:

Եւ վիմ անունն ասեն Աշայ,
Մեկալ քըրոչըս Զուլութայ,
Իմ մօրս անունն ասեն Ֆաթմայ,
Ու հօրս ասեն ղատի մօլլայ:

— Խեւ Յովաննէսն է քո ծառայ,
Շուտով տէրտիս տէրման արայ,
Թէ չէ խեւցայ, լեռներն ընկայ,
Զետ մոմ ի տեղըս հալեցայ:

— Ծո՛յ, Յովաննէս, մըկկիթ մըտնուլ պիտիս,
Մատնիկդ ի վեր կալնուլ պիտիս,
Հետ մօլլանուն շուրջ գալ պիտիս,
Ապա ծոցուս տէր կու լինիս:

— Աշա՛, սէրդ ինձ հարամ լինայ,
Թէ այդ բաներդ հանց կու լինայ,
Աշա՛, գտնուս օրդ ի մահուն,
Զինչ ջանացիր հետ իմ հաւտուն:

Ութը կանոն սաղմոս ուսայ,
Զան ալ ի քո սիրուտ մոռցայ,
Օր մի չասի, թէ Տէր՝ մեղայ,
Ամէնն՝ ալլահ ու շեյտուլահ:

— Ծո՛յ Յովաննէս, փոքր ի պօյաց,
Փոքր ի պօյաց, ծանր ի խելաց,
Չես ուրանար վքո աստուած,
Ու չես լսէր դու մեկ խոսաց:

Գնա, շինէ եկեղեցի,
Որ գամ մտնեմ դուռ կոշկնովս,
Պսակ դնեն ու վմեվ օրհնեն,
Թող քոյ սրտի կամքն լինայ:

3. ՅՈՀԱՆՆՈՒ ՄԵԾԻ ՄԱԿԱՆՈՒՆ ՊԸԼՈՒՋ, ԱՍԱՑԵԱԼ Ի ԽՆԴՐՈՅ ՅԱԿՈԲԱՅ ՄԱՆԿՏԱՒԱԳԻ ԵՋԸՆԳԱՑՈՅ[5]

— Յակոբ, վարթի՛ր ի քնոյ մեղաց,
Սրտի մըտօք վականջըդ բաց,
Լըսէ, թէ ի՛նչ կասէ աստուած,
Իսրայէլի 'ւ ամէն ազգաց:

Յաշխարհս եկել ես դու ի բան,
Է՞ր կու դնես հոգուդ դու գան,
Վաղիւն քեզ խնդիր կու գան,
Յակոբ, վարթի՛ր ի քնոյ մեղաց:

Աշխարհս չէ քեզ մընալոյ,
Է՞ր պարապիս դու ի լալոյ,
Երազ արա քեզ գնալոյ,
Յակոբ, վարթի՛ր ի քնոյ մեղաց:

Աշխարհս ծով է անիհուն,
Է՞ր կու լինիս անհոգ ի քուն,
Մեղայ ասա և կաց արթուն.
Յակոբ, վարթի՛ր ի քնոյ մեղաց:

Շատ գործեցիր դու մեղք ու չար,
Այդ քո չարեացդ արա վըճար,
Մեղայ ասայ սըրտովդ յօժար.
Յակոբ, վարթի՛ր ի քնոյ մեղաց:

Այդ որ վերսուն տարիդ լըցեր,
Այլ մի՛ կենար մեղացդ ընկեր,

Մեղայ ասա տիւ և գիշեր.
Յակոբ, կարթի՛ր ի քնոյ մեղաց:

Մընաս ի մէջ մեղացդ ի քուն,
Թմրիս երկայն գիշերն ի բուն,
Չգիտես կյագուրդ որպէս ըկշուն.
Յակոբ, կարթի՛ր ի քնոյ մեղաց:

Հայեաց յանշէջ հուրն և անանց,
Ցիշեա կքո մեղքն ու լաց,
Դառն արտասուօք աչերդ թաց.
Յակոբ, կարթի՛ր ի քնոյ մեղաց:

— Տէր իմ գըթած և բարերար[6],
Անոխակալ 'ւ անյիշաչար,
Ի քէն հայցեմ սըրտիւս յօժար,
Թո՛ղ ինձ կմեղս իմ շատ ու չար:

Ոչխարս ի քո հօտէդ մոլար,
Գին քո արեան եմ, չեմ օտար,
Լեր դու ինձ դեղ և մըխիթար,
Մերժեա յինէն կմութն ու խաւար:

Ես այս մոլարս, որ խաբեցայ,
'Ի ի գուբ մեղաց ընկըղմեցայ,
Ի յանցաւորս անհոգացայ,
Բընաւ կանանցըն մոռացայ:

Սատանայէ ես խաբեցայ,
Նիւթ գեհենին պատրաստեցայ,

Ես եղկելիս այս չիմացայ,
Յանանց կենացըն կըրկեցայ:

Աստուած հըկօր, երկայնամիտ,
Անոխակալ և ճըշմարիտ,
Ես քո անսուտ սուրբ հրամանիդ
Հաւատացի անեղ բանիդ:

Տէ՛ր, առաքեա՛ կքո սուրբ հոգիդ,
Եւ կմոլորեալ ծառայս քո գիտ,
Զոր ստեղծեալ ծածկագիտիդ
'Ի ետուր ինձ գանձ և մարգարիտ:

Յունան ի փոր կիտին գոչէր,
Պետրոս ըկքեկ յօգըն կոչէր,
Եւ մաքսաւորն աղաղակէր,
Աստուա՜ծ, քաղեա՛ կմեղս իմ, ասէր:

Յոյժ ողորմած ըկքեկ գիտէր,
Վասն այն հայցել համարձակէր,
Արդ, մի՛ անտես առնէր կիս, տէ՛ր,
Զի դու միայն ես մարդասէր:

Գիտեմ դու հայր իմ ես գթած,
Տէր և աստուած իմ ողորմած,
Ես քո ծառայ, արեամբ գնած.
Զարթո՛ կիս, տէ՛ր, ի քնոյ մեղաց:

Հաց կու խընդրեմ, դու քար մի՛ տայլ,
Զուկն կուկեմ, ինձ օձ մի՛ տալ,

Չկան փոխան կարիճ մի՛ տալ.
Զարթո՛ վիս, տէ՛ր, ի քնոյ մեղաց:

Ճըրագ մարմնոյս է իմ խաւար,
Աչքըն հոգոյս դարձեալ է չար,
Տեսն աղքատաց ինձ գայ դըժար.
Զարթո՛ վիս, տէ՛ր, ի քնոյ մեղաց:

Ողորմութեան չեմ լեալ վգոյշ,
Ոչ եմ արկել ես փող ի գուշ,
Ոչ եմ քաղել վմեղացն փուշ.
Զարթո՛ վիս, տէ՛ր, ի քնոյ մեղաց:

Աղօթից ծոյլ եմ, չեմ ըստէպ,
Ժամատեղաց չեմ լեալ հանդէպ,
Վաղն դժոխքն է ինձ ի դէպ.
Զարթո՛ վիս, տէ՛ր, ի քնոյ մեղաց:

Պահոց պահող չեմ, այլ կերող,
Որբոց, այրեաց եմ ես վըրկող,
Ընդ խնդացողս եմ ես լացող.
Զարթո՛ վիս, տէ՛ր, ի քնոյ մեղաց:

Ցաչերս ունիմ հապար գերան,
Ամէն գերան քան վհեծան,
Այլոց կասեմ թէ՝ վշիւղդ հան.
Զարթո՛ վիս, տէ՛ր, ի քնոյ մեղաց:

Հիւրոց չեմ լեալ ասպնջական,
Ոչ եմ տուեալ տեղի յիմ տան,

Ոչ աղքատաց ածել սեղան.
Զարթո՛ վիս, տէ՛ր, ի քնոյ մեղաց:

Քաղցելոց չեմ լցեալ ապուր,
Ոչ արբուցեալ ծարաւեաց ջուր,
Ոչ ընկալեալ յիմ տանն հիւր.
Զարթո՛ վիս, տէ՛ր, ի քնոյ մեղաց:

Մերկոց հանդերձ չեմ հագուցել,
Ոչ հիւանդաց տես գնացել,
Ոչ բանտարգել մխիթարել.
Զարթո՛ վիս, տէ՛ր, ի քնոյ մեղաց:

Քանքարթագոյց եմ անարժան,
Ծառայ եմ չար և անպիտան,
Համարեաց վմինս ընդ մէտասանսն.
Զարթո՛ վիս, տէ՛ր, ի քնոյ մեղաց:

Քան վհինգ կուսանքն եմ յիմարած,
Լապտերս անցած, իւղս է հատած,
'Ի առագաստին դուռն փակած.
Զարթո՛ վիս, տէ՛ր, ի քնոյ մեղաց:

Ոչխար էի ի քում փարախ,
'Ի եմ վտարած ես փախ ի փախ,
Խնդրեա՛ և գիտ, և լէր ուրախ.
Զարթո՛ վիս, տէ՛ր, ի քնոյ մեղաց:

Դրամ կնոջն եմ կորուսեալ.
Վառեա ճրագ և ածա եղ,
Խնդրեա ստէպ, վի եմ կորեալ.
Զարթո՛ վիս, տէ՛ր, ի քնոյ մեղաց:

Քան կանառակն եմ վտարեալ,
Յօտար երկիր խոպ արածեալ,
Զկեանս հոգոյս եմ կորուսեալ.
Զարթո՛ կիս, տէ՛ր, ի քնոյ մեղաց:

Քան կմաքսաւորն եմ գլուխ ի կոր,
Զքեզ աղաչեմ, սուրբ թագաւոր,
Աստուա՜ծ, քաւեա՛, եմ մեղաւոր.
Զարթո՛ կիս, տէ՛ր, ի քնոյ մեղաց:

Զքանանացոյն ունիմ կերեր,
Իսկի չառնու սիրտըս համբեր,
Զքեզ աղաչեմ կտիւ և կգիշեր.
Զարթո՛ կիս, տէ՛ր, ի քնոյ մեղաց:

Դուստր հոգոյս իմ չարաչար,
Կայ և տանջի մոլեգնաբար,
Ինձ ողորմեա՛, տէր բարերար.
Զարթո՛ կիս, տէ՛ր, ի քնոյ մեղաց:

Շուն եմ առ դուրս քո քաղցած,
Չեմ ի խնդիր կհաց մանկանց,
Կամ և սպասեմ քո փշրանաց.
Զարթո՛ կիս, տէ՛ր, ի քնոյ մեղաց:

Գիտեմ կի հուր է ինձ եկել,
Երիս նկան եմ ի հայցել,
Զըդուռն քո դէմ ինձ մի՛ փակել.
Զարթո՛ կիս, տէ՛ր, ի քնոյ մեղաց:

Դարձեալ ասեմ թէ՝ Հայր մեղա՛յ,
Չեմ աղերսել, թ'որդի կոչեա,
Այլ կիս վարձկան մի համարեա՛.
Զարթո՛ կիս, տէ՛ր, ի քնոյ մեղաց:

Զգեցո կգեստն իմ կառաջին,
Զենուլ տուր կեկն պարարին,
Կոչեա ի տուն կէրէց որդին.
Զարթո՛ կիս, տէ՛ր, ի քնոյ մեղաց:

Տնտես չէի հաւատարիմ,
Զինչըս քո, տէր, ետ ի ձեռս իմ,
Տալ կհամարն ոչ ունիցիմ.
Զարթո՛ կիս, տէ՛ր, ի քնոյ մեղաց:

Գործել կգործս իմ ոչ կարեմ,
Մուրալ յայլոց դուռն ամաչեմ,
Անկեալ կքեկ, տէ՛ր, աղաչեմ՝
Զարթո՛ կիս, տէ՛ր, ի քնոյ մեղաց:

Ըկսրբութիւնն ետու ես շանց,
Զմարգարիտն արկի խոզաց,
Ընկալ կիս, տէ՛ր իմ ողորմած.
Զարթո՛ կիս, տէ՛ր, ի քնոյ մեղաց:

Դէմս յԵրիքով եմ ես իջած,
'Ի անկալ ի ձեռս աւազակաց,
Զիս խոցեցին, թողին ի բաց.
Զարթո՛ կիս, տէ՛ր, ի քնոյ մեղաց:

Մեծ քահանայն ետես 'ւ անցաւ,
Եւ Ղեւտացին յիս չհայեցաւ,
Սամարացին յիս գթացաւ,
Եւ անկելոյս ողորմեցաւ:

Լուաց վվէրս իմ և պատեաց,
Ձէթ և գինի ըսպեղանեաց,
Գրաստով ի պանդոկին էած,
Երկու իրօք վիս դարմանեաց:

Ասաց, թէ՝ Ո՛վ պանդոկապան,
Առ ընդ դորա երկու դեկան,
Ըսպեղանեա և տուր դարման,
Միթէ վարթչի ի քնոյ մեղաց:

Այգէգործին երետ պատուէր,
Թէ՝ Զթըվենիդ վայդ հատ ի վեր,
Ասաց, թէ՝ Տո՛ւր այս ամ համբեր,
Միթէ լիցի դա պտղաբեր:

Կամ առաջի քո ամօթով,
Գործել եմ չար շատ և յոլով,
Հայցեմ ի քէն աղերսելով.
Զարթո՛ վիս, տէ՛ր, ի քնոյ մեղաց:

Եմ անպտուղ, քան վթվենին,
Հրաման մի՛ տալ այգէգործին,
Որ հատանէ վիս յարմատին.
Միթէ բերող լինիմ պտղին:

Էանց աւուրքս իմ քան կբոյս,
Մեղօք խոցեալ եմ յաչերոյս,
Բառնամ բողոք որպէս վայրոս[7].
Միթէ կարեմ հայել ի լոյս:

Ուղիղ ճամփէն եմ մոլորած,
Եւ յանիհուն ծովս եմ անկած,
Ի վիհ մեղացս եմ գլորած.
Զարթո՛ վիս, տէ՛ր, ի քնոյ մեղաց:

Հասի՛ր, դարձո՛ կմոլորեալս,
Խնդրեա՛ և գի՛տ ըկկորուսեալս,
Օգնեա՛, կանգնեա՛ ըկգլորեալս.
Զարթո՛ վիս, տէ՛ր, ի քնոյ մեղաց:

Ցոյց ճանապարհ ինձ, տէր կենաց,
Զողորմութեան քո կդուռն բաց
Ինձ 'ւ ամենայն մեղաւորաց.
Զարթո՛ վիս, տէ՛ր, ի քնոյ մեղաց:

Ամենեցուն տէր ես հաստատ,
'Ի յամէն կարեաց ես դու ի վատ,
Զիս ի մեղաց արա ապատ.
Զարթո՛ վիս, տէ՛ր, ի քնոյ մեղաց:

Արժանացո կքեզ, տէր օրհնեալ,
Ընդ հրեշտակաց դասըն գովել,
Փառք ի բարձունս վեր առաքել,
Զերրորդութիւնդ փառաբանել:

4. ՆՈՐԻՆ ՅՈՀԱՆՆԻՍԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԵՋՆԿԱՑԻՈՅ ԱՍԱՑԵԱԼ Ի ԽՐԱՏ ԱՇԽԱՐՀԱԿԱՆԱՑ[8]

Օրհնեալ է աստուծոյ անունն ու միշտ կենդանոյն,
Որ երետ խելք ու միտք և իմաստ մարդոյն,
Որ քննէ ու պատմէ կբան անճառելոյն,
Յաստուծոյ գոհանայ ստեղծուածն ի հողոյն:

Յաստընուորս ենք կարօտ յերկնից ի բարոյն,
Ու ծածկեալ ենք մեղօք, վինչ լոյսն ի յամպոյն.
Մեք բուսաք վերթ ծաղիկ յերեսն ի հողոյն,
Ծարաւած ենք բանի վինչ տունկն ի ջրրոյն:

Մեք նըման ենք նաւին ի մէջն ի ծովուն,
Անդադար ենք կենօք, վինչ նաւն ի քամուն,
Ի դրախտէն ենք ելած ու յանմահ պըտղոյն,
Կու մաշինք յաշխարհիս ի հոգն ի մահուն:

Ես տկար Յովհաննէս հոգով տառապել,
Կարօտած եմ բանի, որ չեմ լիացել,
Յաշխարհիս եմ կացել, մեղօք ցընորել,
Ու գանձէն հոգևոր աղքատ մընացել:

Աղաչեմ վարարիչն, որ վիս ըստեղծել,
Ու վհոգիս, ու վմարմինս մըտօք յօրինել,

Որ տայ բան ինձ խօսել ու վեպ խրատել,
Զաստուծոյ անճառէն բանիւ ձեվ պատմել։

Արեգակն որ ստեղծուած, լուսով նա լցել,
Բայց տըկար աչք մարդոյ յինք չիշխէ նայել։
Զաստուծոյ անճառէն ո՞վ իշխէ խօսել,
Երբ ամէն մարդոյ միտք մեղօք պաշարել։

Բայց կամիմ ես խօսել բանիկ մի քանի,
Լըսեցէ՛ք, իմ եղբարք 'ւ որդիք սիրելի.
Տղայոց միտք վերթ մոմ կակուղ կու լինի,
Մատէնհար դիր վուսումն, որ շուտով նըստի։

Զերթ վուռիկ է մատղաշ, որ հեշտ ոլորի,
Հայելի է պայծառ, որ ժանգ նա չունի,
Զերթ վոսկի է խալաս, որ այպ չերևի,
Զերթ ջոհար ակն է լալ, որ լոյս կու ցաթի։

Թէ կամիս, որ կրթես վմանուկն ի բարի,
Դու լըկամ դիր բերնին, որ շատ չխօսի,
Ցամօթոյն, յերկեղէն, յահէն թէ լինի,
Զգայարանքն իւր պահէ, որ վայր չվաթի։

Որք մանկունք էք, տղայք, ուսման ցանկացող,
Եղերուք աստուծոյ ու մարդկան սիրող,
Ցուսացէք դուք յաստուած, որ բարեացն է տուող,
Ու հնավանդ լիք մարդկան՝ ուսման փափագող։

Թէ տղայ էք մտօք, կաթինըն սիրող,
Ես լինիմ ձեվ ծնող՝ կաթն արբուցանող,
Թէ իմաստուն էք մտօք՝ հվոր ու կարող,
Հաստատուն կերակրով լինիմ ձեվ պատուող:

Թէ ոսկոյ ու արծաթոյ գանձի ցանկացող,
Ձեվ ճոհար տամ անգին, թէ մարդ կայ գնող:
Աշխարհիս մեծութիւնն ու գանձն է խաբող,
Բայց հոգոյն բանն ու խօսքն յերկինքն է հանող:

Յաշխարհիս եմ տեսել չորս իրք սիրելի,
Որ ամեն մարդոյ միտք իրեն հաւանի.
Որ ունի գեղեցիկ պատկեր ցանկալի,
Կամ իշխան է մեծ և տէր նա գանձի,

Որ հոգովն է մաքուր, սուրբ, առաքինի,
Կամ մտօքն իմաստուն, բնութեամբն է բարի:
Պատկերին փառքն ամեն նըման է ծաղկի,
Թէ հողմ յինք շնչէ, նա շուտ թառամի:

Հարըստին գանձն ամեն վերթ ջուր հեղեղի,.
Որ հոսէ պահ մի գայ ու շուտ ցամաքի.
Որ գիտուն է ու սուրբ՝ յաստուած նըմանի,
Որ միայն է անմահ ու անեղանելի:

Ձիմաստունն ո՞վ կարէ գովել լեզուով,
Կամ ըվխօսքըն խելաց գընել ջոհարով:
Ով գիտուն է ու սուրբ՝ ճրագ է լուսով,
Որք վրկած են անդից՝ տանջին խաւարով:

Թէ նման ես լուսնին, աղուոր սուրաթով,
Ու անխել ես մըտօք ու պիղծ դու գործով,
Դու պատկեր ես բըռէ, նախշած դեղերով,
Որ թէ ջուրըն թանայ ջնջի նա փութով:

Թէ յպգէ ես դու մեծ ու իշխան պատուով,
Կամ ունիս գանձ առատ ու տուն լի ոսկով.
Ու չունիս խելք ու միտք, անճար դու հոգով,
Անասուն ես անբան, կամ ոսկի դու կով:

Իմաստուն մարդն ու սուրբ կամար է ամպէ,
Որ յիւր քաղցր անձրևէն յերկիր նա ցօղէ,
Իմաստուն մարդն ու սուրբ աղբիւր ջրոյ է,
Որ ծարաւ յինք դիմէ վնա արբուցանէ:

Իմաստուն մարդն ու սուրբ յանմահ տնկոյն է,
Ով յիւր շուքըն դիմէ, պտղոյն ճաշակէ,
Իմաստուն մարդն ու սուրբ բժիշկ հըմուտ է,
Որ ըվհիւանդն մեղօք նա ողջացնէ:

Իմաստուն մարդն ու սուրբ յերկնից լուսոյն է,
Որ անգէտ յինք դիմէ, ջահ ըվնայ վառէ.
Բայց գիտուն ճշմարիտ վայն մարդն ճանաչէ,
Որ ուղիղ հաւատով վաստուած դաւանէ:

Ամենայն բան դժար գիտելն ի լըման.
Ձաստուծոյ ո՞վ կարէ խօսել բանական.
Անըսկիվբն է աստուած և անհասական,
Անճառ, անպատում և անթարգմանական,

Անըսպառ, անվախճան և անեկրական,
Միայնակ է և մի յէիցս աննըման,
Բնութիւն բարձրագոյն է՛ և անսահման.
Էութիւն գերապանց և անճառական,

Անորակ և անձեւ և անտեսական,
Երրեակ է անշփոթ, մի՝ անպատական.
Այս կարի բարձրագոյն մըտացս եղական,
Թէ վիա՞րդ մի ու երեք պաստուած հաւատան:

Մինն հայր է անծին և սկիզբն ոչ ունի,
Մինն բան և ծընունդ, և հօրն է որդի,
Մինն ելումն և բխումն աստուծոյ հոգի,
Որ ընդ հօր և որդոյ աստուած դաւանի:

Միայնակ հայրն է հայր, վի հայր նա չունի,
Բանն որդի և ծընունդ, վի ոչ ոք որդի,
Ճշմարիտ սուրբ հոգին հոգի նա կոչի,
Ի հօրէ իսկ բխեալ՝ յորդոյ երևի:

Դէմք երեք և անձինք յատուկ ճանաչի,
Մի՛ բնութիւն աստուած և տէր դաւանի.
Ոչ որդին կամ հոգին կըսեր երևի,
Ոչ փոքր, ոչ նուազ, ոչ եղանելի:

Օրինակ կամ նըշան այսոր թէ ուզես,
Դու ունիս միտք ու բան, ու խօսք թէ գիտես.
Միտքդ հայր, բանդ որդի, վխօսքըդ հոգի տես,
Ու աստուծոյ պատկերէդ վաստուած ճանաչես:

Թէ չունի մարդն միտք, անմիտ դու կոչես,
Թէ չունի բան ու խօսք՝ մունջ ըվնայ գիտես.
Ով հոգի յինք չունի, մեռած է, թաղես,
Ու այդ երեք անուանէդ վմարդըն ճանաչես:

Որ վաստուած արարիչ բանիւ դավանես,
Դու վիա՞րդ առանց բան վաստուա՛ծ ճանաչես,
Որ հոգով կենդանի վմարդըն տեսանես,
Դու վիա՞րդ անհոգի վաստըուած պատըմես:

Թէ կամիս այլ նշան դու յայտնի ուվել,
Եւ վաստուածն աշխարհիս այնով ճանաչել,
Դու երեք արեգակն հաշվէ ծագել,
Ու երեքին լոյսն ամեն յիրար խառնել:

Նոյնպէս Հայր, և Որդի, և Հոգին բխեալ,
Որ անձամբ և դիմօք միայն բաժանեալ,
Զօրութիւն և բնութիւն և գործ միացեալ,
Մի աստուած և երեք անձինք որոշեալ:

Զարեգակըն երեք չկարեն խառնել,
Կամ վլուսոյն միութիւն ի բաց վատանել.
Աստ վանձանց յատկութիւն չիշխեն շփոթել,
Ոչ բնութեամբ վմիութիւնն ի վատ բաժանել:

Ճշմարիտ է այս բանս, ուղիղ, հաւատայ,
Ու վմտացըդ խաւարն ի բաց փարատեայ,
Մի՛ լինիր դու տըղայ, տխմար 'ւ անիմայ,
Թէ աստուած հայր 'ւ որդի ինչ ցեղ լինէնայ:

Կամ որդին հօր և բան վիա՞րդ մարմնանայ,
Կամ յարգանդ սուրբ կուսին տղայ գոյանայ.
Թէ աստուած է անմահ, վիա՞րդ մահանայ,
Կամ հրէիցըն ձեռօք ի խաչ վերանայ:

Ըվպատճառն այս բանիս մտօք դու քննեայ,
Զաստուծոյ բանն ու վգործն հոգով ճանաչեայ,
Ով կարէ իմանալ, թող միշտ գոհանայ,
Ում անհաս և անճառ՝ ուսմամբ լիանայ:

Արարիչն երբ ստեղծեց վԱդամն ի հողէն,
Գեղեցիկ յօրինեց ըվկինն ի կողէն,
Ցիւր պատկերըն պատուեց փառօք լուսեղէն,
Կերպարան իւր արար վմարդըն նիւթեղէն:

Ի դրախտին եդ պատուով անկեալն ի յէէն,
Պատուիրան ետ պահել ի միոյ ծառէն.
Ցամենայն պըտղոյ դու կեր. բայց մի՛ ի մէկէն,
Թէ չէ մահ քեվ տիրէ յահեղ հրամանէն:

Նախաստեղծըն պատրեալ խաբմամբ ի յօձէն,
Զրկեցաւ ի դրախտէն յանմահի վայրէն.
Ողորմելին այն կորոյս վփառքըն լուսեղէ՛ն,
Ու մահու մատնեցաւ յիւր արարողէն:

Բարկացաւ արարիչն, որ վնա ստեղծեաց,
Փըշաբեր դառնութեամբ վերկիրս անիծեաց.
Քըրտամբք կերակըրիլ ըվհաց հրամայեաց,
Զստեղծուածըն ի հողոյ ի հող նա մատնեաց:

Զգեղեցիկ կինն, որ ի կողէն յօրինեաց,
Տըրտմութեամբ և ցաւօք ծնանիլ հրամայեաց,
Փոխանակ մի պըտղոյն, վոր և ճաշակեաց,
Ամենայն իւր ծընընդովքն վմահ ժառանգեաց:

Բանսարկուն սատանայ, որ վմարդըն խաբեաց,
Ի դրախտէն և յանմահ պտղոյն որոշեաց,
Զարարածըս մարդկան պաշտել հրապուրեաց,
Հեռանալ յարարչէն ի բաց բաժանեաց:

Ահա ա՛յս էր պատճառ բանին հայրական,
Իջանել ի յերկնից յարգանտ կուսական,
Ցիւրական աթոռոյն էր անպատական,
Եւ ի ծոց սուրբ կուսին մանուկ գոյական:

Ծնանի ի կուսէն սուրբ անապական,
Անարատ պահելով վկնիք կուսական,
Ի յերկրի մարդ լինի ծնընդեամբ մայրական,
Ի յերկինս է ընդ հօր անբաժանական:

Ի յերկուց կատարեալ բնութեանց բանական,
Միացեալ նոր խառնումն և անճառական,
Անորիշ և անքակ և անբացական,
Անխառն, անշփոթ և անեղական:

Ծնանի տղայաբար մանուկ կուսածին,
Զի և մեզ շնորհեսցէ ծնունդ հոգէծին.
Առաջին մայրն եբեր ծընունդ ցաւագին,
Մարիամ սրբուհին վՅիսուս միածին:

Ի յերկրի շըրջեցաւ բանըն հայրածին,
Զի բարձցէ կփուշ մեղաց մեր պատուհասին.
Մըկրտէր Յովհաննէս ըվտէրն ի ջըրին,
Զի ջրով մաքրեսցին մեղքն ադամային:

Ի խաչին բևեռին բաղուկք արարչին
Զի կմեկ դարձուսցէ յիւր սէրն առաջին.
Մեռանի անմահն մարմնով ի խաչին,
Զի և մեկ շնորհեսցէ կիւր անմահութիւն:

Ի յերկրի թաղեցաւ տէրըն արարածոց,
Զի մարմինքն օրհնեսցին յերկրի թաղելոց,
Աւերեալ կործանեաց կդուռըն դժոխոց,
Արձակեաց կհոգիսն անդ արգիլելոց:

Երեքօրեայ յարեաւ տէրն ի մեռելոց,
Ցարութեան յոյս տալով մեր ննջեցելոց,
Ի յերկինս համբարձաւ յոյսն արարածոց,
Զի և մեք բարձրասցուք յերկինս ի խորոց:

Միւս անգամ է գալոց, կերկիր դատելոց,
Փառօք հօր և մարմնովն՝ որով էառ խոց,
Դատաստան առնելոց հոգոց և մարմնոց,
Ըստ հաւատոց, գործոց համար ուկելոց:

Ով հաւատ գեղեցիկ և գործ գովելի,
Ցամենյան արարծս ձեվ ի՞նչ նմանի.
Ով ունի գեղեցիկ ճուհար և ոսկի՞.
Քան կամէն է հարուստ, ով ըկձեվ ունի:

Ով ուզէ որ յերկրէս յերկինք ելանի,
Թող բեռն թեթևցընէ և թեթև թըռչի.
Ով կամի որ վաստուած աչօք տեսանի,
Հանապազ ձեր լուսոյն ինքն հետևի:

Ով յանգէտ ու ի խաւար մեղաց փախըչի,
Նա ըզձեզ ջահ վառէ յիւր լոյս ցընծալի,
Ով ի ծով աշխարհիս նաւիլ յօժարի,
Թող ձենով նաւ զուգէ որ յեզր ելանի:

Գեղեցիկ ես հաւատ, զինչ ըզծառ ծաղկած,
Ամենայն գործ բարի պըտուղ քո բերած,
Դու աղբիւր ես հաւատ, ի յորդոյ բխած,
Ամենայն գործ բարի ի քէն բաժանած:

Դու մայր ես հաւատ յաշխարհ վկայած,
Ամենայն գործ բարի որդին քո ծընած.
Զինչ յաշխարհըս դաշինք ու ուխտ կայ դրած,
Ամենին կապն ամուր հաւատն է դըրած:

Ամենայն իրք, որ ինքն աչօք չէ տեսած,
Հաւատով հեռաւորն ի ձեռն է եկած.
Ցաստուծոյ սուրբքն ամէն հաւատն են գոված,
Ցաշխարհէս հաւատով յերկինքն են ելած:

Փառավոր ես հաւատ առ քեզ պաղատիմ,
Քո ուժովդ ի մեղաց ելնել յօժարիմ,
Զոր ապրիմ յաշխարհիս ես քենով պատուիմ,
Երբ մեռնիմ՝ ինձ պաշար ըզքեզ կու տանիմ:

Ի դժոխոցն ի յահէն քէնով ապատիմ,
Եւ ի սէրն աստուծոյ քենով հասանիմ,
Թէ տառապեալ էմ 'ւ աղքատ, գանձ ըկքեկ ունիմ,
Թէ հարուստ եմ 'ւ ուժով՝ քէնով խըրատիմ:

Թէ տխմար եմ 'ւ անգէտ ի քեկ կու նայիմ.
Իմաստուն ու գիտուն՝ քէնով թէ լինիմ,
Ցամենայն ատէն ի յոյս ըկքեկ ունիմ,
Եւ ի չար պատահմանց քէնով ես փըրկիմ:

Սիրելիք և եղբարք, որ յաշխարհի էք,
Կամ կարդայք կամ լսէք ըկբանս և ասէք,
ԶՑովհաննէս տառապեալս յաղօթս հիշեցէք,
Թողութիւն յանցանաց իմոց հայցեցէք:

Զհաւատոյ բանըս վայս դուք միշտ յիշեցէք,
Զձեր հոգիդ ու վմարմինըդ սուրբ պահեցէք,
Զանցաւոր կեանքըս վայս, բնաւ մի՛ սիրէք,
Ցաստուծոյ օրինացն բնաւ վձեկ մի վատէք:

Ճշմարիտ հաւատով վաստուած սիրեցէք.
Զբարերար պարգևացըն միշտ գոհացէք,
Զհայր և վորդին և վսուրբ հոգին գովեցէք,
Օրհնութեամբ, գոհութեամբ բարէբանեցէք:

5. ՏԱՂ ՈԳԷՇԱՀ ԽԻՍՏ ԳԵՂԵՑԻԿ Ի ՅՕԳՈՒՏ ԵՒ Ի ԽՐԱՏ ԻՄԱՍՏՆՈՑ ԵՒ ԿԱՏԱՐԵԼՈՑ

Յամենայն մեղաց ի վատ, ասէ, դու կացիր,
Եւ յօրէնս աստուածայինըս միշտ մերձեցիր.
Թէ ծեր ես՝ համբերէ, թէ տղայ՝ նա ուսիր,
Թէ երիտասարդ դու ժիր՝ յաղօթըս կացիր:

Ուրախ լէր հանապազ, յորժամ վշտանաս,
Գոհացիր դու վաստուծոյ, երբ աղքատանաս,
Փառաւորեա միշտ վարարիչն, երբ հարըստանաս,
Մեղաց պատճառ ըվքեվ ասա՝ երբ առանձնանաս:

Հայրապէտք և մարգարէք, որ արդարացան,
Առաքեալք և մարտիրոսքն, որք հաճոյացան,
Կուսանք և ճգնաւորք, որ միշտ ճգնեցան,
Նոքա այսու բարի գործովք յերկինս վերացան:

Այլ և վբերանդ լըկամէ և շատ մի՛ խօսիր,
Զրաբան և հերձուածող բանիւ մի՛ լինիր,
Զստախօսն և վերդմնավանցըն մի՛ ընդունիր,
Ի այսպիսի չարեաց ի վատ, ասէ, դու կացիր.

Նըմանապէս վաչքըդ և վականջըդ քո ամրացո.
Զաստուծոյ երկիւղն դիր դուռըն բերանոյ,
Զձեռքըդ համբարձ ի գիշերի յաղօթս աստուծոյ,
Ոտիցըդ տուր միշտ ընթանալ ի տուն հաւատոյ:

Իմաստունն անուն Սիրաք տայ ականջիդ վարդ,
Թէ երեք են, վոր ատէ աստուած 'ւ ամէն մարդ,
Զհարուստ մարդն ստախօս, վաղքատըն հըպարտ,
Զալևոր ծերըն պոռնիկ և որ սիրէ վվարդ:

Ստութիւնըն պարոնին անվայելուչ է,
Աղքատին հըպարտութիւն գործ սատանի է,
Ծերին պոռնըկութիւնն յոյժ աղտեղի է,
Որ վհնացեալ, փըտեալ մարմինըն մեղօք մաշէ:

Իմաստունքն և ռաբունիքն, որ խըրատեն վմեվ,
Թէ հալալ կինն Ադամայ վընաս գործեց մեվ,
Ցօտարէն վի՞նչ շահիցիս, որ հրով այրէ վքեվ,
Հոգոյ և ապրանացըն կողոպտէ վքեվ:

Եթէ վգինին և ըվմէջլիսն յերակ սիրես դու,
Եւ ի մեծ ամանէ ըմպել կամիս դու,
Եւ յօտար կընոջ պատկեր յարատ նայիս դու,
Բայց յետոյ վըղջանալով ասես վայ և թու:

Ասէ տէր յԱւետարանըն Մաթէոսի,
Թէ՝ որ հայի ի կին օտար՝ շնացաւ ի սրտի,
Եւ առնէ վչար ցանկացողն որդի գեհենի,
Պարտական յայնմ ատենի մեծ դատաստանի:

Վարդապետէ մեծ առաքեալ՝ անունըն Պօղոս,
Ասէ, սիրէ վքո հալալ կին և մի վօտար բով,
Օտարըն չէ առողջ մարմին, այլ խոց է և քոս,
Որ իսկի չառողջանայ մեղացն բորբոս:

Մեղքն յառաջ քաղցր է 'ւ անուշ, յետոյ դառնանայ,
Յորժամ գայ մահու հրաւէրն և կկեանքըն բառնայ,
Երանի, որ կայն ահեղ օրըն չի՛ մօռնայ,
Հերիք ասէ մեղացն և շուտով դառնայ:

Յորժամ քեզ տեղ մի ցաւի, այլվի շուտ լաւնայ,
Դու կայն ցաւն յիշատակէ, որ միտքըդ չի մընայ,
Դըժոխաց ցաւն է դըժար, որ այլ չի՛ լաւնայ.
Զայն ցաւն կենէհար միտքըդ չի մոռնայ:

Լացէք կիս ամէն յաշխարհս 'ւ ինձ ասացէք, վա՜յ,
Ի յանդունդս՝ դըժոխոց ընկըղմեցայ, վա՜յ,
Վառեալ ի սէր անցաւորիս կըրկին այրեցայ,
Զի թողի կըբանս բարիս 'ւ ի չարն ընթացայ:

Վրիժուց սուրն է շարժել յանձինս ի վերայ,
Ի մեղաց եմ փոշիման և ասեմ մեղայ,
Դըժոխոց ահն է պատեալ և յոյժ սարսեցայ,
Որ օրիկ մի չասացի, թէ՝ Տէր քեզ մեղայ:

Լաւագոյն բան մի ասաց մեծըն Սողոմոն,
Եւ նորին բանին ըղձայր ծերըն Սիմէոն,
Լաւ է բանջար խաղաղութեան, քան կմիս մըռտիկոն,
Եւ քան կնեխեալ փըտեալ մարմինն՝ խունկ ու կինամոն:

Այլ և ոսկերքդ որ ի մարմինդ, մարմնոցըն սիւնք է,
Աշխարհիս խաղաղութիւն բնակչացըն բերդ է,
Եւ երկիր, որ կնա չունի, բնաւ աւերակ է,
Զինչ քաղաք առանց պարըսպի, հեծելի կոխ է:

Խաղաղութիւնն է յոյժ բարի, թէ մարդ կնա սիրէ,
'Ի իր անունն է քաղցրութիւն, ով որ ճանաչէ,
Եւ որ կմիտքն և կհոգին ի յաստուած կապէ,
Նա կհաւատքն ու կբարի գործքն անտի ճանաչէ:

Այս եղբայրս որ կբանս ուկեց և ես յանձն առի,
Ի պատճառ եղբայրութեան սիրով գրեցի,
Խընդրատս կոր գընդրեցի բանք են պիտանի,
Այս յինէն ձեվ յիշելիք և սերմընն բարի:

6. ՅՈՎՀԱՆՆՈՒ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԵՋԸՆԿԱՑՈՅ, ՄԱԿԱՆՈՒՆ ՊԼՈՒՋ ԿՈՉԵՑԵԱԼ, ԱՍԱՑԵԱԼ ԲԱՆ ՇԱՀԱՎԷՏ ԵՒ ՕԳՏԱԿԱՐ

Ադամայ որդիք ամէն ու ծնունդ ի հողէն,
Եկէք տամ ձեվ խրատ աստուծոյ բանէն,
Գիտեմ որ ամէն մարդ չկարէ ուսնիլ ի գրէն,
Վասն այնոր կայս գրեցի, որ լսէք յինէն:

Երբ աստուած կԱդամ ստեղծեաց ու կկինն ի կողէն,
Ի սլատկեր աստուածութեան արար լուսեղէն,
Ի դրախտին փառօք եդիր տնկեալ յանմահէն,
Պատուիրան եդ ի նմա պահել յանճառէն:

Ցամենայն պտղոյ դու կեր, բայց մի՛ ի մէկէն,
Թէ չէ շուտ մահու մեռնիս 'ւ ելնես ի դրախտէն.
Թէ պահես կիմ պատուիրանն, որ առեր յինէն,
Ի դրախտէն փոխեմ յերկինս՝ ի դասս լուսեղէն:

Զայս լուեալ սատանայի՝ անկեալն ի փառաց,
Նախանձեալ ընդ Ադամայ, ընդ տէրն աշխարհաց,
Գործակից կօձն էր առեալ՝ յամէն գաւանաց,
Ընդ Եւայի նենգաւ խօսել կուսումն մեղաց:

— Թէ ուտէք դուք յայն պտղոյն, որ ի մէջ դրախտին,
Աստուածք դուք լինենայք նըման արարչին,
Ողորմելի կինն այն գերի լսել պիղծ օձին,
Ի ծառոյ պտղոյն կերեալ՝ մերկացել մարմին:

Ադամայ էր վայն տեսել ու կնոջն ողորմել,
Ի պտղոյն առեալ կերել, ի լուսոյն մերկացել,
Ըկթկենոյն վտերևն առել՝ վմարմինն ծածկել,
Ցամօթոյն փախուստ առեալ, յաստուծոյ թագել:

Ադամայ ստեղծողն եկեալ յիւր պատկերն ի տես,
Ադամայ էր ձայն տըւեալ՝ Ադամ դու ո՞ւր ես:
— Տէ՛ր, վքո ձայնըդ լուայ, սասանեցայ ես,
Քանվի մերկ եմ 'ւ ամօթով, փախեալ թագեայ ես:

— Աւաղ ըվքեվ, Ադամ, դու է՞ր խաբեցար,
Զպատուիրանն չպահեցիր պըտղոյն դու կերար,
Արի՛-ե՛լ ի դրախտէդ, մեղօք դու մեռար,
Այդ չէ տեղ մեռելոյ, այտի դու անկար:

Ադամայ ղալատ խօսելն ու լացն էառ վիս,
Զպատճառն յԵւայ հանելն, ափսոս ու վայ վիս,
— Կինըս այս որ ետուր ինձ, սա՛ խաբեաց վիս.
Անմահական փառաց դրախտէն սա՛ կողոպտեաց վիս:

Ողորմելի կինն այն գերի յօձէն խաբեցաւ
Եւ մեղաց թոյնքըն մահու յԵւայ թափեցաւ:
Աստուծոյ պատկերն Ադամ խղճաց և կերաւ,
Իւր ամէն բոլոր ծընդեամբըն մահու մեռաւ:

Քաղցր և բարերարն աստուած, որ կնոսա ստեղծեաց,
Զկենաց դուռն ու կմահուն վերկուսըն յայտնեաց,
Զանձնիշխան կամքն Ադամայ պըտղովըն փորձեաց,
Զպատուիրանն չպահեցին, նա դատապարտեաց:

Ընդ Ադամայ դարձեալ ասէ.— Ադա՛մ, դու հող իր,
Զպատուիրանըն չպահեցիր, ի հող դու դարձիր.
Չկեցար փառօք ի դրախտն, յաշխարհ դու անկիր,
Քրտամբք և վաստակօք գործէ դու վերկիր:

Փոխանակ տընկոցս անմահ, փուշ բուսանի քեզ,
'Ի ի լուսեղէն դրախտիս տեղի՝ խաւար տիրէ քեզ.
Անցաւ 'ւ անհոգ էիր՝ հոգօք մաշէ կքեզ,
Մինչև գայ օրըն մահու՝ գերեզմանէ կքեզ:

Ահա եղբայրք իմ սիրելիք, ողորմեցէք ձեզ,
Ադամ հայրն ձեր մեղաւ ու կպարտքն եթող ձեզ,
Այն մէկ մարդն որ մեղաւ՝ դատապարտեաց կձեզ,
Ու հետ այն մէկին հետին մահն գերեաց կձեզ:

ՅԱդամայ ի բնութենէն մէկ մի պիտէր մեզ,
Որ յԵւայի պարտուց մեղացն ինքն ապատէր կմեզ.
Զպատուիրանն որ նա չպահեաց, պահէր ու ասէր մեզ,
Որ և կայն մեք պահեաք, ի դրախտըն տանէր կմեզ:

Եկին շատ նահապետք արդար ու ընտրած,
Աբրահամ հայրն արդարոց, որ սիրէր վաստուած,
Մովսէս օրինադիրն, որ խօսէր յաստուած,
Մարգարէքն աստուածուսոյց ի հոգոյն ընտրած:

Բայց կի մարդ ին հողեղէն ու ծնեալ ի մարդոյ,
Չկարացին մարդկան օգնել ու ազատել ի մահոյ,
Ոչ կմեղաց գիրքն ջնջել կհոգոյ և կմարմնոյ,
'Ի ոչ կմահու գերի անկեալքս դարձնել ի հողոյ:

Յայս մեծ հիւանդութիւնս բժիշկ մեկ պիտէր,
Որ իսկի ցաւ մի մահու յիւր անձն չտիրէր,
Որ մեղաց հոտ ի մարմինն իսկի չլինէր,
Միթէ նա մեր մեծ ցաւոյս դեղիկ մի կակմէր:

Այլ ո՞վ է մեծ բժիշկ և տէր կօրաւոր,
Քան թէ նա, որ կմեկ ստեղծեաց և է՛ թագաւոր,
Այն որ կմեր մարմինս արար հոգի բանաւոր,
Նոյն ինքն ի մեկ գթաց սիրովն երկնաւոր:

Հայրն ամենակալ, որ ծնող է բանին,
Առաքեաց կորդին յաշխարհ՝ կիւր միածնին.
Հոգին սուրբ համագոյ հօր և ծնողին,
Գործակից լինէր որդոյ՝ առնուլ կմարմին:

Ծնաւ տէրն Քրիստոս ի սրբոյ կուսէն,
Ցանարատ և յանապական մաքուր ծնողէն,
Հուրն, որ վառեցաւ յԱդամայ կողէն,
Ի ջրոյն կենաց շիջաւ, որ ծնաւ ի կուսէն:

Ծնընդեամբն ի կուսէն ծնաւ 'ւ օրհնեաց զմեզ.
Ի Բեթղէհէմ իջեալ յայրին յԵդեմ դարձոյց զմեզ,
Ի մսուր բազմեալ բանին՝ զդրախտն եբաց մեզ,
Ի Յորդանան գետ մկրտեալ՝ նոր ծնունդ շնորհեաց մեզ:

Անմահ աստուածութեամբըն զմահն կոխեաց,
Անմեղ և սուրբ մարմնովն զմեղքըն քաւեաց.
Անարատ ձեռօքն ի խաչն զգիրն ջնջեաց,
Թաղմամբ և յարութեամբ յերկինըս կոչեաց:

Ըզմեղօք հիւանդն Ադամ դարձոյց ի ցաւոց,
Զմահու գերի անկեալն եհան ի դժոխոց.
Պատուիրան մի նոր եդիր Ադամայ որդոց,
Թէ՝ զմիմեանըս սիրեցէք և զտէրս հոգւոց:

Ահայ եղբարք իմ սիրելիք ու որդիք հոգևոր,
Խրատս որ գրեցի, բանք են մըտաւոր,
Թէ՝ սիրեցէք զաստուած ու զտէրն, զհայրն երկնաւոր,
Զպատուիրանն իմ պահեցէք, զլուսըն փառաւոր:

Թէ տղայ ես, թէ մանուկ Քրիստոսի ծառայ,
Թէ ծեր ես կատարեալ, կամ մարդ քահանայ,
Թէ առողջ ես, թէ հիւանդ, որդի Ադամայ,
Թէ արդար կամ մեղաւոր՝ դու քեզ պէտ արայ:

Մի՛ սիրէր զաշխարհըս դու և զկեանքս անցաւոր,
Ու զինչ յաշխարհիս թուի քեզ լաւ ու աղուոր,
Զմարմինդ հողեղէն ցաւօք անցաւոր,
Մի՛ առնէր տէր քո հոգոյդ, որ է թագաւոր:

Արարիչն վքեվ ստեղծեաց վերթ տունկ ի դրախտին,
Վասըն այն վքեվ արար, որ գործես դու բարի,
Քեվ աչք երետ տեսող, միտք իմանալի,
Երկու ականջ քեվ յօրինեաց, վերթ դուռն քաղքի:

Փակէ՛ վքո դրռներդ ու բաց դու խելօք,
Որ չմտնէ չարն ու խաբէ վհոգիդ քո մեղօք,
Բաց իմաստութեամբ ու բարի գործօք,
Ու լից աղուոր գանձովք և սուրբ խրատօք:

Մի՛ հայիր աչօք յարատ, որ չնենգէ վքեվ,
Մի՛ լսեր չար խրատ ինչ, որ և խայթէ վքեվ,
Ձեռօք մի՛ վոք հարկաներ, որ տէրն չդատէ վքեվ,
Սրտով մի՛ չար խորհիր, թէ չէ այրէ վքեվ:

Մի՛ լեվուովըդ խօսիր դու չար, թէ չէ դու կորար,
Թէ վմեղրս քո խոստովանիս, դու արդարացար.
Աղօթքն խօսք է ընդ աստուած, անտի մի՛ հեղգար,
Վաստակէ ձեռօքդ ու տուր ու առ մէկին հավար:

Այս եղբայրս, որ վայս ուվեց, ու ես գրեցի,
Ի վերայ ճամփու էր նա, ու ես շտապով ի,
Բայց վայս որ գրեցի բանիկ մի քանի,
Այս յինէն ձեվ յիշելիք ու սերմն բարի:

Ես յոյս յաստուած ունիմ ու տէրն ամենի,
Որ ի ձեր սիրտըդ մըտէ ու պտղաբերի,
Սուրբ հոգոյն շնորհաց անձրևն ի ձեվ իջանի,
Ձեր հոգի, մարմին ու միտք պտղովըն լցուի:

Աստուծոյ շատ գոհութիւն ի ձեվնէ լինի,
Ու ի նմանէ ողորմութիւն ձեվ միշտ պարգևի:

7. ՏԱՂ ԶՐՕՐՀՆԷՔԻՆ

Այսօր ձայնը՝ հայրական,
Յերկնից իջեալ հաճոյական,
Սիրեցելոյ որդւոյն վկայ.
Ա՛յ յորդորէ՛, գետ յորդորէ՛,
Գետ Յորդանան.
Աւետաւոր ձայնիւ երգէր
Մեծ Կարապետն Յովհաննէս:

Այսօր սուրբ հոգին իջեալ
Աղաւնակերպ և նիւթեղէն,
Հրեղէն լեկուօք յայտնեալ ի քեզ
Սուրբ Յորդանան.
Ա՛յ յորդորէ՛, գետ յորդորէ՛,
Գետ Յորդանան.
Աւետաւոր ձայնիւ երգէր
Մեծ Կարապետն Յովհաննէս:

Այսօր ցընծացաւ Զաքարիաս
Քահանայիւք, և վուարճացան
Եկեղեցիք հեթանոսաց,

Ա՛յ յորդորէ՛, գետ յորդորէ՛,
Գետ Յորդանան.
Աւետաւոր ձայնիւ երգէր
Մեծ Կարապետն Յովհաննէս:

Այսօր Կարապետն Յովհաննէս,
Խայտայր, ցնծայր, տեսանելով
Զաստուածորդին իջմամբ ի ջուրն,
Ա՛յ յորդորէ՛, գետ յորդորէ՛,
Գետ Յորդանան.
Աւետաւոր ձայնիւ երգէր
Մեծ Կարապետն Յովհաննէս:

8. ԱՅԼ ՄԵՂԵԴԻՔ ԵՒ ՏԱՂԵՐ ՀՈԳՈՅՆ ՍՐԲՈՅ ՅՈՀԱՆԷՍ ՊԼՈՒԶԷ

Նըւագեմք հոգոյն նըւագս վայելուչս,
Վայելուչ բանիւ վարարչութեանն ասեմք,
Ասեմք ըկգըրգալ հոգոյն ի վերայ ջուրց գոլով,
Գոլով ներգործեալ վարարածոցըս հիւթ:
Հիւթիւ իւր կակմէր ընդ փառակից որդւոյն,
Որդւոյն միածնի իշխանաբար գործեալ:
Գործեալ կատարէր, հոգին առնէր ուրախ,
Ուրախ եղեալ հայր որդւովն իւր յարարածս:
Ցարարածոցս նիւթ առեալ, կԱդամ ստեղծեալ,
Նորոգեալ փըչեաց ի նմա հոգի սուրբ:
Սուրբ դրախտին եդեալ, գործել, նըմա բաբունեալ,
Բաբունին բարի օրինադրէր բանիւ,
Բանիւ հրամայէր մի՛ ճաշակել որթոյն,
Որթոյն գիտութեան, վի մի՛ մահուամբ լիցիս յամօթ:
Ցամօթ նա եղեալ, մերկացեալ ի փըչմանէն,
Փըչմանէն վրկեալ և խայտառակ եղեալ:

Յորդորակ

Ցանկարծ ձայնեալ տէրն, թէ Ադամ ո՞ւր ես.
Ո՞ւր ես կողոպտեալդ և մերկացեալդ հանդերձից:
Հանդերձ ըզգեցեալն հանեալ, եդեալ դրախտին արտաքս:
Արտաքսեալ զԱդամ ի չարէն միշտ նիւթեալ:
Նիւթեալ բանսարկուին, ըստ կամաց իւր նըւաճեալ,
Նըւաճեալ չարին ստրուկ կամաց իւրոց:
Իւր կամօքն անկեալ, յիւրմէ բարձեալ հոգի սուրբ,
Սուրբ սէրըն գըթացեալ առ մարգարէսըն միշտ երևեալ:
Էրևեալ հոգին վապագայիցն ապդեալ,
Ապդեալ և խնդրեալ վինքեանս տաճար նորոգեալ:
Նորոգեալ զբաղումս առնէր իւր օթևան,
Աւթևան կապմեալ իսրայէլեանցըն միշտ բաբունեալ:
Բաբունի հոգին դարձեալ կամէր զմեզ ժառանգել,
Ժառանգ զմեզ գործել, իւր էակցին հաղորդ առնել:
Առեալ իւր տաճար նախ զանարատ ըզկոյսն նոր,
Նորոգումն այսօր նախաստեղծին ծնընդոցս,
Ծնընդոցս Ադամայ հոգին տըւեալ այսօր:
Այսօր սուրբ հոգին զմարդիք ըզցեալ ռահիւք,
Ռահիւք զմեզ յերկինս հայցեմք ուղղել այսօր,
Այսօր զմեզ յերկինս հոգով ածցես յաւէտ,
Ցաւէտ միշտ երգել ըզփառս անձանց երից,
Երից և միոյ փառք յաւիտեանս, ամէն:

Ֆ. ՏԱՂ ԱԴԱՄԱՅ, ՊԼՈՒՋ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՍԱՑԵԱԼ Է

Մեր տէրն ի դրախտն երեկ,
Ադամայ ձայնեց թէ՝ Ո՞ւր ես:
Ադամ թպենոյն ի դուրս
Զայս ասաց, թէ՝ Մերկիկ եմ ես:
Իմ տէ՛ր, ի քեզնէ կուկեմ,
Որ կԵվայ ու կօձն անիծես,
Նոքայ խափեցին ըզիս
Քո լուսոյն, որ մերկացայ ես,
Պտղոյն ինձ ուտել տվին
Եւ քէնէ արին սևերես:
Ողորմա՛ծ, ողորմա՛ծ ես, մարդասէր,
Մի՛ անտես առներ դու մեզ, տէ՛ր:

Իմ տէ՛ր, այն հողէն եմ ես,
Քո ձեռօքըդ կիս ստեղծեալ ես,
Սատանան ցաւեցոյց կիս,
Կու խնդրեմ կցաւս փարատես.
Քան ըզջուր ճապաղեցայ[ես],
Կաղաչեմ որ կիս ժողովես,
Ժողովես ու շիշան լնուս,
Քո աջովըդ մատնահարես:
Ողորմա՛ծ, ողորմա՛ծ ես, մարդասէր,
Մի՛ անտես առներ դու մեզ, տէ՛ր:

Իմ տէ՛ր, կորուսեալ եմ ես,
Ակն ունիմ, որ կիս գտանես,
Անմեղ ի աշխարհս եկայ,

Եւ մեղօք կերթամ սևերես,
Անվերծ վտանգի դիպայ,
Քէն հայցեմ, որ վիս խալըսես,
Աստէնս ի մեղաց փրկես
'Ի անտէնին հրոյն ապատես:
Ողորմա՜ծ, ողորմա՜ծ ես, մարդասէր,
Մի՛ անտես առներ դու մեզ, տէ՛ր:

Սատանայ տեսաւ զԱդամ
Ի դրախտին դուռն կանգնած,
Զերկու ձեռքն իրար ի վարկ
Եւ բարկ-բարկ ինքն ծիծաղեաց:
Ադամ զայս պատասխանեաց.
— Զի՞նչ տեսար քո բարքդ անիծած,
Թէպէտ ի դրախտէն հանիր,
Զի՛ թողու մեր տէրն ի ձեռաց:
Ողորմա՜ծ, ողորմա՜ծ ես, մարդասէր,
Մի՛ անտես առներ դու մեզ, տէ՛ր:

Սատանայ տեսաւ զՄովսէս,
Արգելեաց ու շատ մի ի լաց.
— Իմ աստուածախօս Մովսէս
Մեր տէրն է՞ր է մեզ խռոված,
Երբ մեք աշակերտ էաք
Աստուծոյ, Ադամ չէր ըստեղծած,
ԶԱդամ ի հողոյ ըստեղծեաց,
Մեք ի մեր փառացն եմք զրկած:
Ողորմա՜ծ, ողորմա՜ծ ես, մարդասէր,
Մի՛ անտես առներ դու մեզ, տէ՛ր:

Ի յերկնաւորաց դասուց
Սադայէլ կերեսն էր շրջեր,
Ի յերկնից անդունդս իջեր
'Ի ի լուսոյն խաւար մնացեր,
ԶԱդամ ի դրախտէն հաներ
'Ի յանասնոց երկիրն է ձըգեր.
Ամենքս ենք օտար, եղբայր,
Անասնոց երկիր բնակեր:
Ողորմա՛ծ, ողորմա՛ծ ես, մարդասէր,
Մի՛ անտես առներ դու մեզ, տէ՛ր:

Օրհնեալ է աստուծոյ անունն,
Որ փակած դռվին է բացեր,
Զաշխարհս գեղեցիկ ստեղծեր,
Եւ երեք դիմաց բաժաներ.
Զհրեշտակս ի յերկինս դասեր,
Ադամայ դրախտն է տուեր,
Զերկիր անասնոց տուեր.
Անբանից տեղիք կսա շիներ:
Ողորմա՛ծ, ողորմա՛ծ ես, մարդասէր,
Մի՛ անտես առներ դու մեզ, տէ՛ր:

10. ՏԱՂ ԱԴԱՄԱՅ ԱՍԱՑԵԱԼ Ի ՊԼՈՒՋ ՎԱՐԴԱՊԵՏԷ[10]

Ադամ նստել դուռըն ի դրախտին,
Լայր և ձայնէր ողորմագին,
Աղիողորմ՝ ի դէմ դրախտին,
Կու հառաչէր արտասուագին:

— Ա՛յ սերովբէք, ա՛յ քերովբէք,
Այդ որ ի դրախտըն մտանէք,
Ձաստուածութիւն աղաչեցէք,
Ձայս մեղաւորս հաշտեցուցէք:

Երեկ էի ի մէջ դրախտին,
Լուսով ծածկեալ աստուածային,
Անդ թագաւոր էի յադին,
Նըման հրկոր թագաւորին:

Վասն Եւայի իմ կողակցին,
Որ ղալտեցաւ խաբմամբ օձին,
Ես այլ նորայ հաւանեցայ,
Արտաքսեցայ դրախտէն ադին:

Ձիմ գեղեցիկ վարդերքն առին,
Ձիս անողորմ մերկացուցին,
Վասըն միոյ պատուիրանին,
Անմահական ծառոյ պտղին:

Հօսկայ մերկ եմ ես հիմայ,
Եւայ նըստել ու խիստ կուլայ:
Է՞ր չի ասել, թէ՝ Տէր, մեղայ,
Դու ես ստեղծել ինձ, ողորմեա՛.

Այս մէկ տարպայս ես ղալտեցայ,
Բանիւ կնոջըն խաբեցայ,
Երբ խայտառակ տեսայ կԵւայ,
Փառացըն մերկ՝ վէտ սատանայ,

Ես ի յիւր գութըն վառեցայ,
Ցանմահ պտղոյն առեալ կերայ,
Ասցի, թէ իմ ստեղծողըն գայ,
Մերկ տեսանէ կիս կէտ կԵւայ,

Նա հայրական սիրով գթայ
Եւ ողորմի ինձ և նորայ:
Երբ ոտնաձայն տեառն լուայ,
Գալոյ ի դրախտն և ափշեցայ:

Տերև թզենոյն կինև սփածայ,
Ի մէջ ծառոց անկեալ թագեայ:
Տէրն ձայնեաց.— Ադամ, ո՞ւր ես:
Ես ձայն տուի, թէ՝ Մերկ եմ ես:

Տէր, ըզքո ձայնըդ լուայ ես,
Զահի հարայ ամօթերես:
— Ամ ո՞վ ասաց ձեզ, թէ մերկ էք,
Կամ ո՞վ խաբեաց զձեզ, պատմեցէ՛ք:

— Է՞ր չի ընկնիլ յոտքն ի նորայ,
Լալով ասցել, թէ՝ Տէր մեղայ,
Քանց թէ պատճառ դըրի կԵւայ,
Ցանանց բարեացըն թափեցայ:

Ի կողէս կին ստեղծեր կԵւայ,
Պըտղոյն երետ ինձ և կերայ.
Վերջին բանըն էր, որ լուայ,
Որ խօսեցաւ տէրն ընդ Եւայ:

— Պատուէր տըւի, թէ մի՛ ուտէք,
Այնկի կերաք՝ դրախտէն ելէք.
Ես ձեվ անանց դրախտն եդի,
Դուք վանցաւորըն սիրեցիք,

Ես քեվ կենաց պըտուղ տվի,
Դու ըվմահուն ճաշակեցիր,
Ես վքեվ լուսով վարդարեցի,
Դու ըվխաւարըն սիրեցիր:

Եւայ պատասխան ետ նըմա.
— Օձըն խաբեաց վիս, և կերայ:
Տէրն անիծեց վօձն և վԵւայ,
Ես այլ ի մէջն գերեցայ:

Տէրըն հրամեց մեվ, թէ՝ Ելէք,
Թէ հող էիք, ի հող դարձէք:
Ես աղաչեմ վձեվ, սերովբէք,
Գանգատ ունիմ, ի՛նձ լսեցէք:

Երբ ի յադին դրախտըն մտնէք,
Ցանմահ պըտղոյն ճիւղ մի առէք,
Բերէք յաչացս ի վրայ դրէք,
Զխաւարեալ աչս ողջացուցէք:

Երբ ի դըրախտըն մըտանէք,
Ըվդրախտին դուռըն մի՛ փակէք,
Զիս ի դիմաց կանգնեցուցէք,
Պահ մի հայիմ կարճ, դարձուցէք:

Ա՜հ, կու յիշեմ ըվձեվ ծաղկունք,
Անուշահամ աղբերակունք.
Ա՜հ, կու յիշեմ ըվձեվ թրոչունք
Քաղցրաբարբառ, և անասունք,

Որք ըվդրախտըն վայելէք,
Ձեր թագաւորն եկայք լացէք,
Որք ի դրախտն աստուածատունկ
Ցերկրէ ընտրեալք ավգի ավգունք:

11. ՏԱՂ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՊԼՈՒՋ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՍԱՑԵԱԼ[1]

Անդ, ի մէջ դրախտին, երեք անձինք կային,
Ադամ և Եւայ և պատուիրանըն տեառն.
Օձըն խրամատեաց ըվցանկ այգոյն կենաց,
Արտաքսեաց վԱդամ ի լուսեղէն դրախտէն:

Ստունգանել կընոջըն խաբողին բանիւ,
Մերձեցան ի ծառն, վոր հրամայեաց չուտել:
Ճաշակմամբ պըտղոյն, որով ըվմահ գործեաց,
Կերան և ծանեան նոքա, վի մերկ էին:

Կարեցին տերևս ի թվենոյ ծառոյն,
Ծածկոյթ արարին ամօթալից մարմնոյն.
Ոտնաձայն եղև տեառն աստուծոյ գալոյն,
Լըւեալ Ադամայ և փախուցեալ թագեաւ:

12. ՄԵՂԵԴԻ ՊԸԼԶՈՅ ԱՍԱՑԵԱԼ Ի ԾՆԸՆԴԷ ԽՈՍՐՈՎԱՅԻՆ[12]

Յանեղական լոյսն անժամանակեայ,
Լոյսն անվայրափակ,
Ի քե՛զ պարագըրի, Մարիա՛մ.
Աւետի՛ս. աւետի՛ս, աւետի՛ս քե՛զ, Տիրամայր:

Ո՛վ նոր խառնումն սքանչելի,
Անեղ ընդ եղումն,
Կուսութիւն և ծնունդ ի քե՛զ ը՛ներգործի, Մարիա՛մ.
Ուրա՛խ լեր, ուրա՛խ լեր. ուրա՛խ լեր, կո՛յս Տիրամայր:

Հաւր Բանին մայր յերկրի,
Կոյս սուրբ՝ տըւողին մեզ հայր՝ յերկինս,
Խոսուն խորան ի քեզ բնակողին, Մարիա՛մ.
Երանի՛, երանի՛, երանի՛ քե՛զ, Տիրամայր:

Այսաւր մեծ վարմանք հրաշից,
Տէրն որդի ծառայի ծնեալ,
Ծառայն որդի ստեղծողին, Մարիա՛մ.
Մա՛յր լուսոյ, մա՛յր լուսոյ, մա՛յր լուսոյ, կո՛յս Տիրամայր:

Նոր պըտուղ բնութեանս քաղցրահամ,
Արմատ նորոյ աշխարհի,
Մահու մա՛ւրը բըժիշկ կենաց, մա՛յր մաքուր, Մարիա՛մ.
Աննըմա՛ն, աննըմա՛ն, աննըմա՛ն, կո՛յս Տիրամայր:

Ի քէն ցընծութիւն մարդկան,
Երկանցն Եւայի լուծիչ,
Ադամայ ապատիչ, Դրախտին բացող դըրան, Մարիա՛մ.
Ցընծացէ՛ք, ցընծացէ՛ք, ցընծացէ՛ք, որդի՛ք Ադամայ:

Սէրովբէ հողանիւթ, հրածին ամպ,
Երկի՞նք՝ արեգականն արդար,
Մայր արքային մեծ, լե՛ր մեզ բարեխաւս, Մարիա՛մ.
Աւրհնեա՛լ մայր, աւրհնեա՛լ մայր, աւրհնեա՛լ մայր, կո՛յս
Տիրամայր:

Ի քէն ծընեալ ծեր մանկանն,
Ընդ Հաւրէ 'ւ Հոգւոյն սըրբոյ,
Փա՛ռք և պատի՛ւ յաւիտեա՞նս յաւիտե՞նից.
Աւրհնեցէ՛ք, աւրհնեցէ՛ք, աւրհնեցէ՛ք, Որդի՛ք Ադամայ:

13. ՑՈՐԴՈՐԱԿ ՆՈՐԻՆ Ի ՆՄԱՆԷ

Գովեստ բերկրանաց հըրճուողական հընչմամբ,
Քե՛կ, կոյս տիրամայր, քաղցրաձայնեալ երգեմք:

Ո՛վ կուսից պարծանք, մայր հայրածին որդւոյ,
Անծին ծնողին բանին ծընող մարմնով:

Վերին քրոբէից հուպ մաքրական վարուք,
Աթոռ անեղին, անտեսանելի լուսոյն:

Եդեմ շնչական անմահ տընգոյն տեղի,
Վայր դալարաբեր հօր ծոցածին ծաղկոյն:

Աղքանչելի հրաշիւք ծառ երկնուղէշ ծաղկեալ,
Անմահ խընձորոյն, անուշահոտ պըտղոյն:

Տեղի յօրինման դու մարգարտին լուսոյ,
Ոսկի մաքրափայլ ի հողանիւթ վարմէս:

Ի յերկրածընաց հարսն ի յերկինս ելեր,
Մայր կաթնմատոյց հօր միածին բանին:

Սուրբ կոյս Մարիամ, մօրն Եւայի բըժիշկ,
Նախնոյն Ադամայ ապատարար ծնունդ:

Ով ցողոյն կենաց, հօրէն լուսոյ իջեալ,
Ամպ անձրևածին, ծարաւելոց յարբումն:

Ի իւծեալ բնութենէս աստըղ լուսոյ ծագեալ,
Խորին գիշերոյ քաղցրանըշոյլ փայլմամբ:

Ռաբունոյն վերնոյ բնաւից արարողին,
Խորան բանաւոր և լուսակիր տաճար:

Բարունակ բերող կուրախարար ողկոյզն,
Որով կմայլեցաք յանմահական բաժակն:

Կենաց տապանակ աստուածագիծ տախտակ,
Լեառն արձանունակ աշխարհալիր վիմին:

Ոսկեղէն սափոր մանանային կենաց,
Գաւազան ծաղկեալ ի յարմատոյն յԵսայ,

Ցերկրային սեռից գերապանցեալ յերկնից,
Ի վերին կօրացն օրհնաբանեալ միշտ կոյս:

Սուրբ հոգւոյն հրրոյ աստուածընկալ բուրվառ,
Տուփ անուշ խընկոց տիեզերաց բուրեալ:

Նորահրրաշ շուշան, վերաբուսեալ ի փրշոյ,
Քաղցրահամ ճաշակ, բուրումն անուշահոտ:

Մայր կենարարին հաճոյական ամաց
Հայցմամբ պաղատեա առ ծընեալըն ի քէն

Արեամբ փրրկելոց քո միածնի հօտիս,
Լեր միշտ բարեխօս, որ ողորմածին ծընօղ:

Րամել ըկցըրեալսն և վարատեալս մեղօք,
Զոր ժողովեաց բակկատարած խաչիւն:

Ի քահանայից պետականէն վերնոյ,
Մեր հայրապետին հաստատութիւն հայցեա:

Արքային անմահ արքայուհի և մայր,
Զմեր թագաւորն միշտ յաղթող արա:

Միշտ վեկեղեցիս հայաստանեայց ազգիս,
Անբիծ և ուղիղ դաւանութեամբ պահեա:

Էրրակի լուսոյն աստուածութեան միում,
Գոհութիւն և փառք յաւիտեանս ամէն:

14. ՅՈՀԱՆԻՍԻ ՊԼՈՒԶ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՍԱՑԵԱԼ. ՈՂԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՆ

Աստուածածին սրբուհին,
Ամէնօրհնեալ տիրուհին,
Կայր առ խաչին Յիսուսի
Եւ արտասուէր տրտմալի:

Գոչէր ձայնիւ ողբալի,
Զբանսն, որ ասէր սոսկալի,
Շարժէր վամէն մըսեղի,
Յողբ և ի կոծըս բանի:

— Յիսուս որդի անձկալի,
Իմ միածին բաղձալի,
Ընդէ՞ր կաս մերկ ի խաչի,
Եւ բևեռեալ ի փայտի:

Սիրտըս խոցեալ կըսկըծի,
Աղիք ծնօղիս գալարի,
Զքեզ տեսնեմ ծարավի
Արբեալ քացախ և լեղի:

Եղուկ է մօրըս կուսի,
Զինչ որ կամիմ չկատարի,
Ո՞վ տայր ինձ ջուր յամանի,
Արբուցանել վիմ որդի:

Ո՛վ հոլոնեալ քահանայք,
Եւ չարագործ պաշտօնեայք,
Պիղատոսի չար կինուորք,
Դառըն հրէից սպասաւորք:

Ընդ ո՞ր մեղաց արարիք,
Զայս փոխարէն հատուցիք,
Զկողըն տիգաւ խոցեցիք,
Զբևեռսն ի ձեռսըն հարիք:

ՑԵգիպտոսէ վաՀեվ փըրկեաց,
Զծովըն Կարմիր պատառեաց,
Ըվփարաւոն ընկըղմեաց,
Զձեվ ի նմանէ ապատեաց:

Զեվ հաց յերկնից պարգևեաց,
Մանանայիւ կերակրեաց,
Զուր ի վիմէն ձեվ բըխեաց,
Երկոտասան վըտակաց:

Զի՞նչ գործեցիք անօրէն,
Զար՝ ընդ բարւոյ փոխարէն,
Փարիսեցիք և դըպիրք,
Եւ քահանայք չար և լիրբք:

Ո՛վ Սիմէոն ծերունի,
Ահա բան քո կատարի,
Սիրտըս սըրով խոցոտի,
Աղիք ծնօղիս գալարի:

Աչացըս լոյս իմ որդի,
Մեծ մխիթար իմ սըրտի,
Կուսի կաթամբ սընուցի,
Եւ մօր գըթով գըգուեցի:

Թագաւորել յուսայի,
Ըստ աւետեացն, որ առի,
Արդ տեսանեմ ի խաչի,
Եւ մօրըս աղիքն խորովի:

Թող արեգակն խաւարի,
Եւ լոյս լուսնի նուապի,
Երկիր հիմամբք սասանի,
Վէմք ի վիմաց պատառի:

Ողորմեցէ՛ք գերելոյս,
Աշխարեցէ՛ք վեղկելիս,
Անմխիթար ծընօղիս,
Խաչեալ իմ աստուած որդիս:

Ինձ ողորմեաց մօրս որդի,
Խոսեաց ընդ իս քաղցրալի,
Ես ի՞նչ լինիմ յաշխարհի,
Սիրտըս խոցեալ տագնապի:

Պատասխանեալ Յիսուսի
Աստուածամօրն և կուսի,
Անապական ծընօղի,
Մաքուր և սուրբ տաճարի:

— Դու իմ խորան սրբութեան,
Դու իմ տաճար բնակութեան,
Դու առագաստ մաքրութեան,
Անճառ բանիս մարդկութեան:

Դու մի՛ տըրտմիր, բերկրալի,
Զքեզ ո՛չ թողից յաշխարհի,
Արդ Յոհաննէս քեզ որդի,
Իմ աշակերտ սիրելի:

Վասն այնորիկ ես իջի,
Որ մեծ խորհուրդ կատարի,
Մահուամբ խաչիս սակալի,
Ցանցանք նախնոյն քաւեսցի:

Ով որ խաչիս հետևի,
Պաշտել ըկսա յօժարի,
Ցիմ գալստեան երկրորդի,
Նա ընդ աջմէ իմ դասի:

Փառաց լիցի արժանի,
Եւ արդարոցն երամի,
Փառաւորել կիս ընդ հօր,
Եւ ընդ հոգոյն ճըշմարտի:

15. ՏԱՂ Ի ՅՈՀԱՆՆԷՍ ՊԼՈՒՋ ՎԱՐԴԱՊԵՏԷ[13]

Առաջնաճաշակ պըտղոյն
Մահուան առաջին մարդոյն,
Եղեր անիծից լուծիչ,
Մայր Մանուէլի սուրբ կոյս:

Բանն, որ ի հորէ էր լոյս,
Ի քէն ծագեցաւ մեկ յոյս,
Ցարգանդէ կոչեաց Յիսուս,
Մայր Մանուէլի սուրբ կոյս:

Գանձ անապական սուրբ կոյս,
Կենաց ապաւէն և յոյս,
Սըրովբէ հողեղէն և լոյս,
Մայր Մանուէլի սուրբ կոյս:

Դուռն արևելեան դըրախտին
Ծագօղ միածին բանին,
Ով դու վեհագոյն երկին,
Մայր Մանուէլի սուրբ կոյս:

Երգէր Գաբրիէլ ձայնիւ,
Աւետիս տալով հրաշիւ,
Կոյս, դու յըղասցիս շընորհիւ,
Մայր Մանուէլի սուրբ կոյս:

Զծընեալն ի հօրէ անճառ,
Շընորհօք սուրբ հոգոյն ծընար,

Եղեր միածնին տաճար,
Մայր Մանուէլի սուրբ կոյս։

Է-ն արարչակիցըն հօր,
Ի քէն մարմնացաւ այսօր,
Ցընծա՛ Հերմոն և Թաբոր,
Մայր Մանուէլի սուրբ կոյս։

Ընտրեալ շառաւիղ լուսոյ,
Հարսըն փեսային սրբոյ,
Պարծանք համայնից կուսոյ,
Մայր Մանուէլի սուրբ կոյս։

Թագ արքայական կալմեալ,
Նախնոյն Ադամայ շնորհեալ,
Դու փառք Եւայի բերեալ.
Մայր Մանուէլի սուրբ կոյս։

Ժառանգ աւետեաց ուխտին,
Հօրն Աբրահամու վարմին,
Ի քեզ կատարեալ հոգին.
Մայր Մանուէլի սուրբ կոյս։

Ի սըրովբէախումբ սեռից,
Միշտ երգաբանեալ ձայնից,
Քեզ փառըս յամենայն գոյից,
Մայր Մանուէլի սուրբ կոյս։

Լոյսն որ ի հօրէ անմայր,
Ի քէն մարմնացաւ անհայր,
Որ կմեղս Ադամայ բառնայր,
Մայր Մանուէլի սուրբ կոյս:

Խորհուրդն որ ծածկեալ յապգաց,
Է-ն աստուած ի քեզ յայտնեաց,
Շընորհօք սուրբ հոգւոյն փառաց.
Մայր Մանուէլի սուրբ կոյս:

Ծառ դու կենսառիթ պըտղոյն,
Տընկեալ ի բընութիւն մարդոյն,
Կեանք մահացելոյ նախնոյն.
Մայր Մանուէլի սուրբ կոյս:

Կոյս անհամեմատ գըտեալ,
Կուսից վեհագոյն եղեալ,
Հարսըն երկնաւորին կոչեալ,
Մայր Մանուէլի սուրբ կոյս:

Հուրըն աստուած ի քեզ վառեալ
Արգանդ քո մաքուր բուրվառ,
Հոտն անմահութեան բուրեալ,
Մայր Մանուէլի սուրբ կոյս:

Զայն Ամովսածնին գոչէր,
Նա վքեզ կոյս և մայր ասէր,
Ամպ թեթևագին ճառէր,
Մայր Մանուէլի սուրբ կոյս:

Ղամպար համասփիւռ լուսոյ,
Վառեալ ի հոգւոյն սրբոյ,
Հերքիչ մահաբեր մրթոյ,
Մայր Մանուէլի սուրբ կոյս:

Ճառագայթ փառացըն հօր,
Ի քէն ծընանի այսօր,
Շընորհօք սուրբ հոգոյն և հօր.
Մայր Մանուէլի սուրբ կոյս:

Մաքուր և անբիծ ծընող,
Միածին որդոյն մարմնով,
Նախնոյն յանցանաց բարձող.
Մայր Մանուէլի սուրբ կոյս:

Յոյս և ապաւէն ծընար,
Զորդին միածին անհայր,
Որ և ի հօրէ անմայր.
Մայր Մանուէլի սուրբ կոյս:

Նոր դըրախտ ի յերկրի տընկեալ,
Ծաղկօք վանական փայլեալ,
Վարդն ուրախաբար վառեալ,
Մայր Մանուէլի սուրբ կոյս:

Շնորհօք սուրբ հոգոյն ծընար,
Զորդին, որ յառաջ անմայր,
Ի քէն եղանի անհայր,
Մայր Մանուէլի սուրբ կոյս:

Ո՛վ դու հողեղէն Սրրովբէ,
Մաքուր և անբիծ յերկրէ,
Հրրեշտակ մարմնաւոր յերկնէ.
Մայր Մանուէլի սուրբ կոյս:

Զքնաղ կուսութեամբ ծընար,
Որ կխորս անդընդոց բանայր,
Զերկինս է պարկեալ կամար.
Մայր Մանուէլի սուրբ կոյս:

Պատեալ խանձարրօք կօծեալըն,
Մըսուր յանբանից եդեալ,
Հովւացըն ի այրին տեսեալ,
Մայր Մանուէլի սուրբ կոյս:

Զանիւ պաղատիմք առ քեզ,
Սուրբ կոյս անարատ և հեզ,
Դու փառաւորեա կմեզ.
Մայր Մանուէլի սուրբ կոյս:

Ռահ երկնագընաց շաւղին,
Ցանկալի կըւարթնոց գընդին,
Ճըրագ մարգարէից դասին.
Մայր Մանուէլի սուրբ կոյս:

Սիրով սիրելի որդին,
Ի քէն ծընանի յայրին,
Հովիւքըն փառըս տային.
Մայր Մանուէլի սուրբ կոյս:

Վառեալ մշտափայլ լուսով,
Երկնագնաց եղեալ մարմնով,

Մաքուր 'ւ անարատ հոգով,
Մայր Մանուէլի սուրբ կոյս:

Տեսլեամբ հըրաշափառ աստղին,
Եկեալ թագաւորքն յայրին,
Ընծայս մատուցեալ տղային.
Մայր Մանուէլի սուրբ կոյս:

Ռամեալ գնդին հրէական,
Հերովդէս տըւեալ հրաման,
Անմեղ մանկանց կոտորման,
Մայր Մանուէլի սուրբ կոյս:

Ցընծասցուք և մեք հոգւով,
Ընդ ծընունդ փըրկչին մարմնով,
Օրհնեմք հրեշտակացն երգով.
Մայր Մանուէլի սուրբ կոյս:

'Ի իւսեալ պաղատիմք առ քեզ,
Դու լեր բարեխօս ընդ մեզ,
Զի մեք վերասցուք առ քեզ.
Մայր Մանուէլի սուրբ կոյս:

Փառաց թագաւորն երկնից.
Անտեսըն ի սերովբէից,
Ըվքեզ վերադասեաց վեհից.
Մայր Մանուէլի սուրբ կոյս:

Քեզ, ո՛վ տիրածին սուրբ կոյս,
Երկըրպագեսցուք մեզ յոյս.
Փառաւորեսցուք զՅիսուս.
Մայր Մանուէլի սուրբ կոյս:

16. ՇԱՐԱԿԱՆ ԵՕԹՆ ԽՈՏԱՃԱՐԱԿԱՑՆ[14]

Ցաւուրս վերջին ժամանակի,
Շինեաց իւր տուն վեկեղեցի,
Հօրըն գըթած երկնաւորի,
Իմաստութիւն բան և որդի,
Ետ վմարմին իւր ի վէնլի,
Զգինի արեանըն խառնելի.
Սըմին հրաշից ներգործողի,
Տո՛ւք օրհնութիւն յամենայնի:

Որ և վծառայս իւր առաքեաց,
Ի խառնելիսն հրաւիրեաց,
Զքաղցեալս ի հաց մարմնոյն կոչեաց,
Զգինի արեանն ետ ծարաւեաց,
Ցայս կողմանէս ապըստամբեաց
Ապգ հիւսիսոյ Հայաստանեաց,
Այն, որ վհրաշս վայս ներգործեաց,
Մեվ նորագոյն յոյս հաստատեաց:

Հաւատարիմ և իմաստուն,
Գրիգորիոս անուն արթուն,
Նըման խաչի մահուամբ որդւոյն,
Զարչարանօք իւր սուրբ մարմնոյն,
Զապգս հայոց կոչեաց ի նոյն,
Զգանս և վհարուածս ետ խըստագոյն.
Միայն բանին հօր իմաստուն,
Տո՛ւք օրհնութիւն վօրք հրաբուն:

Աւծեալ մերոյ հայրապետին,
Գրիգորիոս Լուսաւորչին,
Ղևոնդիէ պատրիարգին,
Ի Կեսարիայ Հայք առաջին,
Մեկ մարգարիտ բերին անգին,
Զնշխար սրբոյ Կարապետին.
Այսմ հրաշից ներգործողին,
Տո՛ւք օրհնութիւն ապգ հողածին:

Նըման աւուրըն փրկական,
Ի գալ փըրկչին ի Յորդանան,
Նոյն արուսեակն արեգական,
Ծագել յաշխարհս Հայաստան:
Դրունք դըժոխոց խորտակեցան,
Որ յԻննակնեայ տեղիսն կան,
Հոյլքն դիւաց հալածեցան,
Հրեշտակք ընդ մեկ դասակցեցան:

Ի ձեռն առեալ Լուսաւորչին,
Զնշխար սըրբոյ Կարապետին,
Շուրջ պարըսպեալ կկողմն աշխարհին,
Շնորհօք աջոյն կբանն օծողին,
Աստ թշնամիք մի՛ կօրասցին,
Մի՛ հերձուածոց աղանդք բուսցին:
Յերկնից գայր ձայն աստուծային,
Թէ հայցուածք քո կատարեսցին:

Սուրբք երջանիկ երկնահանդէս,
Ճըգնող Անտոն և Կրօնիդէս,
Ի հողանիւթ ծընեալ կարմէս,
Գերապանցեալք ի բնութենէս,
Զձե՛կ պարգևեաց սուրբ Ղևոնդէս,
Մեկ երկնային հրեշտակք յերկրէս,
Ի վշտալի մարմնոյ ախտէս,
Փարատեցէ՛ք ի խոցմանէս:

Ի միջերկրէ տանէն յունաց,
Հայոց տըւեալ պարգևք փառաց,
Վարժիչ կարգաց կրօնաւորաց,
Հարք միանձանց ճըգնաւորաց,
Ծաղիկք բուսոյ բանաւորաց,
Բըժըշկական դեղք հիւանդաց,
Ի դիւական այսոց չարաց,
Զմեկ փըրկեցէ՛ք ի փորձանաց:

Էին լուսոյ հօր միածնի,
Ճըշմարտութեանըդ քարոզի,
Պարթևապետանըն Գրիգորի,
Դարգևեցաւ գանձ կենդանի,
Նոյն և նշխարքն հոգելի,
Աթանագնեայ սուրբ վըկայի,
Որով մարմնոյս վէրք ողջասցի,
Ցանցանք հոգոց մեր քաւեսցի:

Եօթնաստեղեան երկնից կամարք,
Աստուածութեանդ կամարարք,
Ճրգնողք մարմնով խոտաճարակք,
Մաքուրք հոգւով լուսոյ տաճարք,
Եկեղեցոյ բարձր աշտարակք,
Տանըս հայոց ամուր պատուարք,
Զձեզ աղաչեմք ճրգնօղք սուրբ հարք,
Լինիլ անձանց մեր բարերարք:

Րամեալ վօրացըն պարսկական,
Մարտիւ ընդ վօրըս Հայաստան,
Դուք մաղթեցէ՛ք աղերս հայցման,
Աղաչելով վաստուածըն բան,
Վասն Յոհաննու ձայնիւ գոչման,
Կարապետին սըրբոյ հայցման,
Պահել վերկիրս այս անսասան,
Զտեղի արեանըդ ձեր հեղման:

Գոչեմք առ ձեզ, սուրբ նահատակք,
Հողանիւթեայ մարմնով հրեշտակք,
Մարտիրոսք սուրբք և վըկայք,
Որք սրոյ մահուամբ կատարեցայք:
Յորդոր տօնիս ձեր յիշատակ,
Արեան սըրբոյ հեղման վըտակ,
Առ տէր լիցի սուրբ պատարագ,
Պահել ըզմեզ միշտ անվըտանգ:

17. ՅՈՎՀԱՆՆՈՒ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՍԱՑԵԱԼ ՈՏԱՆԱՒՈՐ ՁԱՓՈՎ, ՄԱԿԱՆՈՒՆ ՊԼՈՒՋ[15]

Բանըն յղացեալ յարգանդ կուսին իննամսական,
Ըստ աւրինի որդւոց մարդկան հասարական,
Իսկ ի կուսէն առանց սերման անապական,
Ո՛չ մարդկաւրէն, այլ կաւրութեամբ աստուածական:

Յորովայնի կուսին մարմին առ նիւթական,
Բայց ի հաւրէ ոչ մեկնեցաւ Աստուածըն բան,
Մարմին հոգւով միաւորեալ միտք բանական,
Զի բոլորովն աստուածասցին որդիք մարդկան:

Նա մայր միայն ունի յերկրի իւր ստեղծական,
Զի մեք կալցուք հայր ի յերկինս անեղական,
Նա կոչեցաւ որդի մարդոյ տընտեսական,
Զի մեք կԱստուած հայր կոչեսցուք մեկ շնորհական:

Թըլփատեցաւ նա ութաւրեայ ըստ ուխտին երդման,
Թըլփատութիւն տալ հոգևոր մեկ մաքրական,
Եկն ի տաճարն քառասնաւրեայ աւուրց լրման,
Ըստ աւրինացն Մովսիսի, որ գրեցան:

Պատարագաւք ընծայեցաւ տէր յանդիման,
Հաւր ի բարձունս ընծայելով կբնութիւն մարդկան,
Ի յԵգիպտոս Յովսէփ առնէր փախըստական,
Զկռապաշտութիւն առնել անտի հալածական:

Մանուկն աճէր և վաւրանայր ըստ կարգին աճման,
Իմաստութեամբ լի և շնորհաւք աստուածական,
Զոր աւրինակ նիւթ վգալի արեգական,
Որ սակաւ-սակաւ ծագէ վլոյսըն իւրական:

Նոյն ըստ հասակ մարմնոյն գոլով ըվգայական,
Զաստուածային վփառսըն փայլէր ըվփրկական,
Որ կերակրաւք յանձն առ սնունդ տղայական,
Նույն պարգևեաց մեվ կերակուր հոգէական:

Զամս երեսուն ծածկեալ ըվփառսըն հայրական,
Գալ մկըրտիլ ի Յովհաննէ ի Յորդանան,
Ինքն քաղցեաւ և ժուժկալեց համբերական,
Զանժամ ճաշակըն բժըշկեց վանժուժական:

Նոյն և փորձի ի փորձողէն անյաղթական,
Զի վնախահայրն յաղթաւղ ցուցցէ և վաւրական,
Ինքն էր Աստուած համայն և մարդ ճշմարտական,
Որ ի քաղցնուվն ոչ ճաշակէր անժուժական:

Եւ ճաշակէր առանց քաղցի իշխանական,
Զի կամաւոր ցուցցէ վկիրսըն փրկական,
Թէպէտ քաղցեաւ որպէս վմարդ կերակրական,
Բայց ըվքաղցուն ժամն անցուցեալ աստուածական:

Յերևելիսըդ մի՛ կացցես գայթակղական,
Այլ համբարձցիս յիմանալի գերունական,
Վաստակեցաւ յուղղի գնալովն աշխատական,
Այլ ի վերայ ծովուն քայլէր թեթևական:

Ծարաւեցաւ այն, որ ծովուն եդեալ սահման,
Այլ և նովաւ ետ մեզ ըմպուրն կենդանական,
Գահավիժել լինէր յապգէն ի հրեական,
Իսկ ի նոցունց միջոյ թռուցեալ յաւդ վերնական:

Ընընջեաց քնով ըստ աւրինի որդւոց մարդկան,
Այլ արթնութեամբ սաստել հողմոցն տալով հրաման,
Տգիտացաւ նման մարդոյ անգիտական,
Առյապա տրաւղ բնութեանս է գիտութեան:

Տրտմեցաւ կրիւք բնութեանս ադամական,
Զի վտրտմութիւն մեր դարձուսցէ յուրախական,
Այլ վերստին տալ մեզ ըմպրախտն անմահական,
Ուր ճոխանայր Ադամըն հին անդ փափկական:

Ի սիրելուն արտասուելով առ գերեզման,
Աստուածաբար կոչեաց վմեռեալն չորեքաւրեան,
Արտասուելովն եցոյց առ մեզ գութ սիրական,
Զնջել վարտաւսըր յերեսաց մեր ամենայն:

Ապտակեցաւ ի ծառայէն ձեռաց ստեղծման,
Ծառայ առնել ըվբանսարկուն՝ մեզ ե՛դ հրաման,
Թուք ընկալաւ ի բերանոց պղծոց մարդկան,
Եւ փչեաց ի դէմըս մեր վհոգին աստուածական:

Բևեռեցաւ ի յանիծից փայտըն մահուան,
Գնելով ըվմեզ ի յանիծիցն աւրինական,
Մեռաւ բնութեամբ մահկանացու մարմնով մարդկան,
Մեռուց վմեր մահըն մահուամբն անմահական:

Թաղեցաւ երեքաւրեայ ի գերեզման,
Իսկ միութեամբ բանին մնալով անապական,
Էջ ի դժոխս մերով հոգւովքս բանական,
Որ ընդ բանին էր միացեալ անպատական:

Երեքաւրեայ իսկ յարուցեալ ըստ բանին խոստման,
Ըպյարութիւն տալով մեզ յոյս անապական,
Համբարձաւ առ հայր ի փառս իւր սեփհական,
Զմեզ ընդ իւր փառաւորեալ անպուգական:

Նոյն հայրենի փառաւք գալոց է ի
. . . . . .

18. ՏԱՂ ՈԳԷՇԱՀ ԸՍՏ ԱՆՈՒԱՆ ԵՐԳՈՂԻՆ, Ի ՅՈՀԱՆՆԷՍ ՊԸԼՈՒՋԷ ԱՍԱՑԵԱԼ[16]

Իմաստութիւն հաւր տէր Յիսուս,
տո՛ւր ինձ խաւսել բան պիտանի,
Իմում անթիւրս մեղանաց
շնորհեա՛ բուժումն և սպեղանի:

Յաստուածական քո գրթութեանցդ
մասին արա վիս արժանի,
Յահագնակի մեղաց ծովէս
վիս ապրեցո՛յ, տէ՛ր իմ բարի:

Ոչ վոք գիտեմ ինձ համեմատ,
յապգրս մարդկան մինչև ի մի,

Որպէս ասէ մեծըն Դաւիթ՝
վի չհաւասարն ումեք յերկրի:

Հիացման մեծ և արժանի,
թէ տէրդ իմ ինձ ողորմեսցի,
Հովիւըդ քաջ խոնարհեսցի,
համբոյր հոգոյս ի քէն տացի:

Արդ, թէ քընեսս, տէ՛ր, ըստ կարգի,
վիմումս անթիւ գործ վպրալի.
Անշիջանուտ հրով տոչորիմ,
անկաշառ քում դատաստանի:

Նախնին Ադամ՝ մարդն առաջի,
յորժամ մեղաւ հաւրդ առաջի,
Նորոգեցեր դարձեալ, կըրկին,
ծնընդեամբ որդոյ քո՛ միածնի:

Նոյնպէս և ինձ ողորմեսցիս,
թէպէտ և չեմ իսկ արժանի,
Նոր աւապան յարմարեսցես,
վարտօսր աչացս ըստ պատշաճի:

Էլի ելին վոր գոչեցեր,
գերեալ բնութեանս վասն դարձի,
Է անաւգուտ թըշւառս անձին,
թէ տէրդ իմ ո՛չ ողորմեսցի:

Սրովբէագունդ ջոկք աթոռոցդ,
քեզ ի մաղթանս առկայասցի.
Սիրովդ քո, տէ՛ր իմ Յիսուս,
սիրտ իմ ճըմլեալ խոցոտեսցի:

Վարուց սըրբոց ցանկանայի,
յորժամ մանուկ տիաւք էի,
Վայոց եղէ այժմ արժանի,
վի ծուլութեամբ վկեանս անցուցի:

Ահայ, ի չափ կատարածի
իմում կենացս եկեալ հասի,
Անիւս ի գուբ ընկըրկեսցի,
լար արծաթոյս խորտակեսցի:

Ռամից վերնոց նըմանէի,
յաշխարհայնոցս ապատ կայի,
Ռահէտ ի ստոր վիս կացուցի,
ռախճանք հոգոյս ո՛չ գործեցի:

Դարձեալ առ ձեզ բանս այս ասի՝
մանկունք սուրբ մօրըն Սիովնի,
Դիք հաւասար դուք ի մըտի,
դառնալ ի սէր հաւրըն մեծի:

Աշխարհըս ծով է վպրալի,
անհուն խորաւք վարմանալի,
Առնու ի խոր յանկարծակի,
որ վհաւատոյն ղեկն ոչ ունի:

Պետրոս, որ վէմ էր գովելի,
կարհուրեցաւ ծովով կգալի,
Պէտք են մեծի պատրաստութեան,
որ գծովածուփ կենցաղս ունի:

Երկնաթըռիչ թևաւք յարմար,
լերուք նըման Եղիայի,
Երջանկացեալ սուրբ աղաւթիւք,
արիացիք ասպարիզի:

Տարսոնացի մեծըն Պօղոս,
խաչեալ ասաց վինքն աշխարհի.
Տեսող մըտաց բանս է յայտնի,
հարց, որ ունիս քեզ՝ թէ պիտի:

Էիցս էակ տեառն ամենի,
եկեալ մարմին էառ յերկրի,
Երևեցոյց յայտ յանդիման,
թէ չար իշխան է աշխարհի:

Այլ և Դաւիթն աստուածահայր,
կեդար ասաց վկեանս աշխարհի,
Ասաց վայոց վինքն արժանի,
թէպէտ իշխէր Իսրայէլի:

Սոյնպէս և մեծըն Սողովմոն,
թէպէտ սիրեաց վկեանս աշխարհի,
Ունայնութիւն ասաց վաշխարհս,
ունայնութեանցըն կըրկնակի:

Արդ Յովհաննէսս՝ տարտամս հոգով,
ապուշ մընտաւք կբանս ասացի,
Աշխարհածուփ երերանաւք
տարակուսեալ կամ ի յերկրի:

Ցամաքեցաւ սիրտս ի հիւթոյ՝
սիրոյ անմահ հաւրընն բանի,
Ցուպ ի ձեռինն ոչ ունելով
միշտ գթելով բավմադիմի:

Երանութեանցն աստուածային
ինեակ մասին իսկ ոչ հասի.
Երկրաքարշեալ մընտաւք ի ստոր՝
պօրէնն անբան կեռնոց կացի:

Այժմ աղաչեմ հեծեծանաւք,
վեկեղեցւոյն մանկունդ ի մի,
Առնել յիշման վիս արժանի,
որք յանդիպիք այսըմ տաղի:

Ալեաց իմոց հառաչանաց,
թըշաառս անձին, վոր գըրեցի,
Ըսէ, մախթեմ, սըրտի մընտաւք,
ձև առձայնել տէրն ողորմի:

19. ՏԱՂ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ ՀԱՅՈՑ, ՅՈՀԱՆՆԷՍ ՊԼՈՒՋ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՍԱՑԵԱԼ[17]

Գրիգորիոս բաղմաչարչար սրբոյն
վելն ի վիրապէն այսաւր տաւնեմք, եղբարք,
Բախճան ցընծութեան Հայաստանեայցս եղեն
կուսանք երջանիկ յարևմըտից ծագեալ:
Ի տեղի կատարման արեան սըրբոյն հեղման,
խորանք երկնայինք նըկարեցան յերկրի:
Գոյն կարմիր ներկեալ և ոսկեղէն խարիսխ
ի սեանց հրոյ և ամպոյ լուսոյ կամար կապեալ:
Որո՜վ ծաղկեցաւ հողանիւթեա երկիր,
երկնագոյն ներկեալ կապոյտ երանգ դաշտիւք:
Բոպէից մասանց յերկրէ ի վեր բուսեալ,
սեղանք սըրբութեան աստղանըման անթիւ:
Ի մէջ խորանացն աղբիւր ջըրոյ բըղխեալ,
գետորէն հոսեալ, ծովանըման ծըփեալ:
Ո՜րք անցանէին երա՜մք այծից սևոց,
գառինք լուսակիկն քրիստոսապգեաց ներկեալք:
Սուրբ աւազանին ջըրով խաչակից որդւոյ,
հաւատովք ի հայր հոգւովն սուրբ մաքրեալք:
Լուսաւորիչ հոգւոց Հայր Գրիգորիոս,
ի մեկ հայեսցիս՝ վիրաւք խոցեալքս ի մահ:
Ողբամ արտասուաւք բանաւոր քո հաւատքս,
վըրկեալք ի հովուաց և այցելու տերանց:
Ի՛ իւծեալ մաշեցան հաւատոյ մանգունք,
գերեալ ցըրուեցան յաւտարապինս ապգաց:

Սրբութեան խորանքըն հիմնարկեալք ի քէն,
աւեր, ամայի կան՝ խաւարեալ անբնակ:
Արեամբ գնեալ գառինքն Քրիստոսի հաւտին,
սնացեալ մեղաւք դարձան յերամս այծեաց:
Ի՛ հովիւքըն հաւտից գա՛յլըք եղեն հաւատին,
վարատեն վխաշինսն չարչարանաւք ստացեալ:
Ուխտք աւրինաց և կանոնաց սահման,
խրամատեալ քակտին աւրինադրեալքն ի քէն:
Բաբունական իմաստից հանճար
նուաւեալ պակասին յանբարէսէր բարուց:
Ի կարգըս երկնայնոցըն վիճակեալ դասիւ,
անվարժք յիմաստից այսաւր տիրեն հաւտից:
Չունիմք այցելու կամ բարէխաւս գըթած,
որ վելս երջանիկ տեսանողին պատմէ:
Հայրըդ բաւմագութ հաւրն երկնաւոր պատկեր,
առ քեզ պաղատիմք, բարէխաւսեա՛յ առ տէր,
Անկեալ և ցըրուեալ քո վիճակեալ խաշանցս,
դարձ առնել գերեացն և քաւութիւն մեղաց:
Ցաթոռ տիրական քո ըվնըստեալն այսաւր,
հայցեայ առ Քրիստոս՝ մեզ լուսատու շնորհել,
Որդւոցս Արամա վպսակաւորն արքայ,
ի հոգւոյն խնդրեսցես՝ միշտ վաւրաւոր պահել:
Ցընծացեալք այսաւր և բերկրեալ քո տաւնիւս,
տացուք գոհութիւն Երրորդութեանն և փառս:

20. ՎԱՐԴԱՊԵՏԱՑ Է ԲԱՆՍ[18]

Հայտնիչ իրաց ծածուկ բանին,
Քարոզ կենաց աստուածային,
Ուսուցանող մարդկան սեռին,
Եդեալ հովիւ տանս Արամին:
Լուսաւորիչ Հայոց ազգին,
Գահոյք կալմեալ հաւրն անէղին,
Հանգիստ բանին սուրբ միածնին,
Բնակեալ է քեզ սուրբ հոգին,
Տեղիք շինեալ է իւրային,
Զաւրք երկնայինքն ի քեզ հանգչին,
Եւ աղաւթ[իւք] քեզ խաւսակցին:
Դու մարգարիտ ես մեծագին,
Եւ լուսատու գիշերային.
Դու կարկէհան ես լուսագին,
Տպավիոն դեղ հիւանդին.
Դու Արուսեակ առաւոտին:
Դու նախընթաց ես Քրիստոսին,
Եւ քարոզող նորին բանին:
Դու ամպ լըցեալ ցաւղցաւղագին,
Ցաւղեալ ի մեզ զցաւղդ երկնային:

21. Ի ՍՈՒՐԲ ԿՈՅՍՆ ՀՌԻՓՍԻՄԷ[19]

Հանճարեղ շնորհալիդ ընտրեալ է,
Ցարքայից հրկօրաց կարմէ է,
Մեզ պարգև ի տանէն Լատինէ,
Հրեշտակ հրաշագեղ Հռիփսիմէ:

Ռահահորդ ուղևոր երկընթաց,
Օրինաց երկնայնոց խորագգաց,

Ուրացեալ վանձն և վփառս հայրենեաց
Հրեշտակ հրաշագեղ Հռիփսիմէ:

Իմաստուն սուրբ կուսան գերյարգո,
Հրով Բանին ի յերկիր արկելոյ,
Վառեցեր ըվլապտեր հաւատոյ,
Հրեշտակ հրաշագեղ Հռիփսիմէ:

Փեսային Քրիստոսի մարմնացեալ,
Անապակ կուսութեամբ հարսնացեալ,
Ցառագաստ անմատոյց բաղմեցեալ,
Հրեշտակ հրաշագեղ Հռիփսիմէ:

Սիրասնունդ սիրամարգ սըխրալի,
Նըրբափայլ ոսկէթել տարփալի,
Եռապսակ իւղագլուխ ցանկալի,
Հրեշտակ հրաշագեղ Հռիփսիմէ:

Իսկաճեմ աղաւնի օդապար,
Նոր նոյեան տապանն է քոյդ դադար,
Օձասպան արագիլ դու արդար,
Հրեշտաոկ հրաշագեղ Հռիփսիմէ:

Մըտաւոր մարտիրոս մրցական,
Էական Բանին Հօր կօրութեան,
Լիակոխ քաջութեամբ ըկհընձան,
Հրեշտակ հրաշագեղ Հռիփսիմէ:

Է գունեղ թաթաւեալ ի բոսոր,
Սաղարթուն կարմրորակ իբր խընձոր,
Հարսն ավնիւ դու արեամբ քօղաւոր,
Հրեշտակ հրաշագեղ Հռիփսիմէ:

22. ՏԱՂ ՎԱՐԴԱՎԱՌԻՆ ԱՋՆԻԻ ԵՒ ԱՆՈՒՇ ԱՍԱ[20]

Այսաւր ցընծայ լեառըն Թաբաւր,
Եւ կուարճանայ մեծըն Հերմոն,
Քանզի լոյսըն աստուածային
Այսաւր ծագեաց յայն սուրբ լերինն:
Ա՛յ ցընծա՛յ, ցընծա՛յ, ցընծա՛յ,
Լեառըն Թաբաւր և կուարճանայ:

Այսաւր Թաբաւր լեառն ուռճացեալ,
Լուսատեսիլ ծաղկովք լցեալ,
Քան զկՀիսուս մարնով փայլեալ,
Եւ զԱդամայ փառսըն ցուցեալ:
Ա՛յ ցընծա՛յ, ցընծա՛յ, ցընծա՛յ,
Ադամ և Եւայ և կուարճանայ:

Այսաւր շողէր շուշան հովտին,
Եւ շողշողէր դէմ արևին,
Քանզի ջուրըն աստուածային
Իջեալ ցողէր յայն ծաղկընին:
Ա՛յ ցընծա՛յ, ցընծա՛յ, ցընծա՛յ,
Ծաղկունքն ամէն և կուարճանայ:

Այսաւր վարդըն անուշահոտ
Բուրեաց ըզհոտս աստուածային
Փըթթեալ զհասակըն երեսնամին,
Ի յայտնեաց զծածուկ լոյսն ի մարմնին:
Ա՛յ ցընծա՛յ, ցընծա՛յ, ցընծա՛յ,
Վարդերդ ամէն և կուարճանայ:

Այսաւր մե՛ծ վարդըն վառեալ,
Կարմիր, սպիտակ լուսով փայլեալ,
Կանաչ գեղով գունաւորեալ,
'Ի ապա վդեղին լոյսն իւր ցուցեալ.
Ա՛յ ցընծա՛յ, ցընծա՛յ, ցընծա՛յ,
Վարդըն վառեալ ու կուարճանայ:

Այսաւր լուսին ընդ արեգականն,
Եւ աստեղաց պարքն ամենայն,
Տեսին ըվտէրն արփիական,
Ցիւրեանց լուսոյն նըւաղեցան.
Ա՛յ ցընծա՛յ, ցընծա՛յ, ցընծա՛յ,
Աստղունքդ ամէն և կուարճանայ:

Այսաւր Պետրոս, Յակովբ 'ւ Յոհան,
Ընդ Քրիստոսի լեառն ելան,
Լըսեցին կՃայնըն հայրական,
Դա՛յ է որդի իմ սիրական:
Ա՛յ ցընծա՛յ, ցընծա՛յ, ցընծա՛յ,
Սուրբ առաքեալքն և կուարճանայ:

Այսաւր Մովսէս մեծ մարգարէն,
Կենդանացեալ գերեվմանէն,
Եկն ի Թաբաւրն մօտ ի Հօրէն,
'Ի ունէր վտախտակըն քարեղէն.
Ա՛յ ցընծա՛յ, ցընծա՛յ, ցընծա՛յ,
Մեծըն Մովսէս և կուարճանայ:

Այսաւր եկեալ մեծըն Եղիայ,
Զոր իջանէր ի Քորեբայ,
Դաւանէր 'ւ երկրրպագէր,
'Ի Աստուած ասէր ըվմեսիայ,
Ա՛յ ցընծա՛յ, ցընծա՛յ, ցընծա՛յ,
Սուրբն Եղիայ և վուարճանայ:

Այսաւր Մովսէս ընդ Եղիայի,
Խօսին վելիցն ընդ Քրիստոսի.
Տէ՛ր, փութով ի խաչն արեկ,
Զի դու փրրկիչ ես աշխարհի:
Ա՛յ ցընծա՛յ, ցընծա՛յ, ցընծա՛յ,
Սուրբ մարգարէքն ու վուարճանայ:

Այսաւր Մովսէս լալով ասէր,
Հոգիքըն ամէն քեզ կու մընան,
Զի դո՛ւ գա՛ս և չարչարիս,
Եւ ապատես վհոգիս նոցա:
Ա՛յ ցընծա՛յ, ցընծա՛յ, ցընծա՛յ,
Հոգիքն ամէն և վուարճանայ:

Այսաւր վէմ հաստատէր,
Տաղաւարաց հիմն արկանէր,
Բայց Յիսո՛ւս խորան շինէր,
Իւր սիրելեացն տեղ պատրաստէր:
Ա՛յ ցընծա՛յ, ցընծա՛յ, ցընծա՛յ,
Սուրբըն Պետրոս և վուարճանայ:

Այսաւր հոգին ամպ երևեալ,
Իւր էակցին հովանացեալ,
Ճառագայթիւք ըվփըրկիչն յայտնեալ,
Ցառաքելոց գունդըն հանգեալ:
Ա՛յ ցընծա՛յ, ցընծա՛յ, ցընծա՛յ,
Սուրբ առաքեալքն և վուարճանայ:

Այսաւր Հայր յամպոյն ձայնեալ,
Եւ միածընին իւր վըկայեալ,
Դա՛ է որդի իմ մարմնացեալ,
Հոգովս ի դմա եմ հաճեցեալ:
Ա՛յ ցընծա՛յ, ցընծա՛յ, ցընծա՛յ,
Երկինք 'ւ երկիր և վուարճանայ:



ԿԱՆՈՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ, ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՍԱՑԵԱԼ[1]

Այսօր կուարճացեալ ցընծայ եկեղեցի[2],
Դրախտ աստեւածային ծաղկեալ,
Յորմէ տըւաւ մեզ տունկն անմահութեան տէր Գրիգորիոս,
Եւ պըտղովն իւրով ելից ըստիեվերս ամենայն:

Բարունակ ողկուզաբեր ճըշմարիտ որթոյն,
Մըշակեալ հայրական աստուծային աջովն,
Յորմէ բըխեաց բաժակն ուրախարար տըրտմեցելոյ ավինս,
Որով արբեալ ըկմայլեցաք յուրախութիւն հոգևոր:

Գարնանաբեր հընչումն հարաւային հողմոյն,
Ճառագայթեալ հրով աստուածային հոգւոյն,

Որով հալեցաւ սառըն կռապաշտութեան հիւսիսաբնակ
ապանց,
Եւ եղեն ծաղկեալք աստուածային գիտութեամբն:

Դրախտ նորապուարճ տընկեալ յաշխարհիս Հայոց,
Բաղմաջան քրտամբք տէր Գրիգորիոս,
Արբեալ ի վտակաց հոսման քարոզի ճըշմարիտ բանին,
Ծաղկաւէտ լըցեալ հրաշագեղ տընկօք:

Երկնային լոյս ծագեալ ի յերկրի ցուցար,
Պայծառացեալ փայլմամբ ի յարփւոյն կենաց,
Որով հերքեցաւ խաւար թանձրամած Հայաստանեայց
ազգին,
Եւ տեսին ըվլոյս շնորհաց սուրբ հոգւոյն:

Զօրաց հրեղինաց անմարմնական դասուց
Պարակցեալ ցընծան ընդ հողանիւթ բնութեանս,
Որ ընծայեաց տեառն Աստուծոյ վտէր Գրիգորիոս,
Որով նըւիրին ի փառս ուղղափառ հաւատոյ մանկունք:

Էական բարւոյն կերպարան բարեաց,
Հովուապետ բարի, տէր Գրիգորիոս,
Քաղցրաձայն հընչմամբ դարձուցիչ մոլորեալ հօտին,
Ժողովեալ ի հօտ ճըշմարիտ հովուին:

Ընտրեալ յԱստուծոյ քահանայապետ անբիծ,
Քարոզ ճըշմարիտ Աստուծոյ բանին,
Ընծայեցեր տեառն Աստուծոյ նոր ժողովուրդ մաքրեալ,
Հրաւիրեալ ի փառս վերնոյն Սիովնի:

Թագ պարծանաց Արշակունեաց կապմեալ,
Առաքելական վարուք, տէր Գրիգորիոս,
Յորինեցար բաղմագոյն ակամբք հանդիսից
նահատակութեան,-
Վայելուչ պըսակ հիւսեալ սուրբ եկեղեցւոյ:

Ժառանգորդ եղեր հայրենի սեփհական հօտին,
Վիճակեալ Թադէոսի սուրբ առաքելոյն,
Պարգևական վաւակ կենդանի նըշխարաց նորին,
Շառաւիղ շնորհաց աղօթիւք հայցեալ:

Ի փշաբեր արմատոյ վարդ կարմրերփեան ծաղկեալ,
Առաքելաշնորհ տէր Գրիգորիոս,
Անուշահոտ բուրմամբ լըցեր ըվՀայաստան աշխարհս,
Յայտնելով ի մեզ ըվհոտ գիտութեան:

Լուսապայծառ ծաղիկ ի յերկրի ցուցար,
Բըժիշկ հոգւոց մերոց, տէր Գրիգորիոս,
Քաղցրաճաշակ արմաւենի ի տանն Աստուծոյ տընկեալ,
Պարարտացեալ պըտղով հաւատոյ մանկամբք:

Խոստովանող Քրիստոսի ճըշմարիտ վըկայ,
Բաղմաչարչար նահատակ, տէր Գրիգորիոս,
Զպակասութիւն չարչարանաց տեառն ի մարմնի քում
կրեցեր,-
Որով ցընծայ եկեղեցի ի փառս որդւոց Սիովնի:

Ծնող հոգևոր աստուածանման սիրով,
Գորովագութ հայր պարծանաց, տէր Գրիգորիոս,

Զարչարանօք մարմնոյդ մաքրեցեր ըմմեկ ի յաղտոյ մեղաց,
Եւ ծընար որդիս լուսափայլ բանիւդ:

Կերպարան փառաց միածնի որդւոյն,
Մարտիրոս յաղթող, տէր Գրիգորիոս,
Բևեռս երկաթիս ընկալան երկնագնաց թաթք ոտից քո սուրբ,
Զի բևեռեսցես ըմմեկ յերկիւղն Աստուծոյ:

Հայաստանեայց հայր՝ հաւատոյ հեղինակ ընտրեալ,
Ճրգնողական վարուք տէր Գրիգորիոս,
Ի կոճեղս ոլորեալ հոսեալ յարենէ սրունք սրբասնեալ մարմնոյդ,
Հաստատելով ըմմեկ ի վէմ հաւատոյ:

Զայնիւ մաղթանօք ըմյիշատակըս քո տօնեմք,
Լուսաւորիչ հոգւոց մերոց, հայր Գրիգորիոս,
Կապիճս երկաթիս ծանունս և դառնակըսկիծս կախաղանաւ ընկալեալ,
Գետնամածեալ ծընրադրութեամբ ծունկք մարմնոյ քո սուրբ:

Ղեկօք հաւատոյ ընդ ծով աշխարհիս անցեր,
Վըշտակիր մարմնով տէր Գրիգորիոս,
Տանջեալ ջարդեցան աստուածակիր բարձք անդամոց քոց սուրբ,
Զի պլուծեալ անդամք հոգւոյս հաստատեսցես վերըստին:

Ճըշմարիտ հոգւոյն հանճարով լըցեալ,
Աղբերաբար շնորհիւ, տէր Գրիգորիոս,

Ստորագլուխ եղեր ջրաչարչար պարպատմամբ և ուռուցմամբ
ճըգնեալ,
Զի լուսացես ըվմեվ ի յաղտից մեղաց:

Մաքրողական աղ համեմիչ Հայաստանեայց եղեր,
Արիաբար հըսկող, հայր Գրիգորիոս,
Աստուածային օրինացըն բեռնաբարձ ողմամբ կրեցեր
ըվծանրութիւն աղին,
Որով բարձեր ի մէնջ վբեռինըս մեղաց:

Ցեռեալ ընդ ոսկւոյ ակամբք պատուական,
Մարգարտաշար հիւսեմք վչարչարանաց քոց թիւ, տէր
Գրիգորիոս,
Գելարանօք, անուօք և առասանօք չարահնար տանջեալ,
Դանդանաւանդս և գելս աստուածաբան բերանոյդ:

Նահատակ բարի՝ Քրիստոսի ընտրեալ,
Արքային վինուոր, տէր Գրիգորիոս,
Ստորագլուխ կախմամբ դառնահոտ շընչմանն արիաբար
տարար,
Զի ուղղեսցես ըվգնացս ոտից մեր յերկինս:

Շառաւիղ լուսավարդ ճանապարհին կենաց,
Երկրին աւետեաց հետևող, տէր Գրիգորիոս,
Մոխրաշունչ եղեր՝ քացախ ընկալեալ հոգիաշունչ
ոընգամբք,
Պարգևելով ուրախութեան մեվ օծումն:

Ոսկիաձոյլ գերագոյն պատուական գլուխոյն,
Համանմանեալ հոգւով, հայր Գրիգորիոս,
Կրուփեալ հարուածովք եդեալ ի մամուլս աստուածապարդ գլուխ քո,
Որով բարձրացան գլուխք կորացեալ մեղօք:

Ընաշխարհիկ պարծանք հողեղէն բնութեանս,
Զարչարանօք ժուժկալեալ, տէր Գրիգորիոս,
Տատասկաւ տանջեալ, քերանօք քերեալ և կապարաւ հալեալ,
Խանձողեցան նըշխարք քո սուրբ ոսկերացդ:

Պարակից հոգեղինաց երկնային վօրացն,
Սըրբափայլ վգեստիւք, տէր Գրիգորիոս,
Ի խոր վիրապին իջեր ի տըղմին ի մէջ դառնաշունչ օձիցն,
Զի փըրկեսցես ըզմեզ ի չար վիշապէն:

Զերմեռանդն աղօթիւք և հոգևոր սիրով,
Վաստակեալ յուսով, տէր Գրիգորիոս,
Զանկեալքս ի յերկնից ի խորս անդնդոց զվիրաւորեալքս մեղօք,
Վերաբերեա ընդ քեզ յերկնային խորանսն:

Ռետին քաղցրութեան մեզ ի վերուստ շնորհեալ,
Երիւք հնգօք ամօք ի վիրապին ճըգնեալ,
Աստուածային տեսլեամբն ելեալ բըժըշկեր ըզհարուածեալսն ի դիւաբախ սաստիցն,
Եւ լուսափայլ բանիւ բըղխմամբ հաստատեցեր ի հաւատս:

Սոսկալի տեսլեանն ի վերուստ յայտնեալ,
Մարգարէահրաշ հոգւով տեսանող եղեր,
Բացման խորանին վերնական յարկին և երկնային լուսոյն,
Խառնելով մարդկան ընդ հրաբուխ կօրացն:

Վարդագոյն արեամբ վկայիցըն տեառն,
Մաքրեցաւ երկիրս ի յաղտոյ մեղաց,
Որ և հիմնեցաւ խորան խորհրդոյ տաճար տէրունի շինեալ,
Ցորմէ բղխեաց աղբիւր քաւութեան մերոյ:

Տանըն Աստուծոյ տեսանող բարի,
Արժանացեալ շնորհիւ, տէր Գրիգորիոս,
Կործանիչ բագնեաց, քակտիչ մեհենաց կօրութեամբ խաչին,
Քահանայապետ ընտրեալ աստուածային յայտնութեամբն:

Ռաբունւոյն հրամանաւն ի վերուստ կոչեալ
Ցառաքելական յաթոռ, տէր Գրիգորիոս,
Ցորդառատ բանիւ հոգևոր ծնընդեամբ լուսաւորեցեր
ըվՀայաստան աշխարհս,
Ընդ ամենայն տեղիս շինեալ խորան փառացն Աստուծոյ:

Ցանկալի սրովբէից անմարմնական վարուք,
Մաքրափայլ մարմնով, տէր Գրիգորիոս,
Ցանապատի բնակեցար, հանգոյն Ցովհաննու և Եղիայի
ճըգնեալ.
Օրէնսդիր աստուածային պատգամաց նըման մեծին
Մովսէսի:

Ի իւծելոցս մեղօք տառապեալ որդեացս,
Աստուածագութ ծընող, հայր Գրիգորիոս,
Հայցմամբ աղօթիւք առ հայրն երկնաւոր խընդրեա
Կատարել զընթացքս մեր ուղղափառութեամբ:

Փըրկաւէտ մահուան կենարար բանին,
Կենդանի վըկայ, տէր Գրիգորիոս,
Առ ծընեալն ի հօրէ որդին միածին լոյսըն ճշմարիտ, հայցեա՛
Լուսաւորել վանձինքս մեր աստուածային գիտութեամբն:

Քնար քաղցրախօս աստուածային հոգւոյն,
Յօրինեալ մարմնով և մասամբք հոգւոյդ,
Առ բըղխեալն ի հօրէ փառակից որդւոյ սուրբ հոգին
մաղթեա,
Զի մաքրեսցէ ըզմեզ ի մեղաց մերոց:

ՆՈՐԻՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՍԱՑԵԱԼ Ի ԼԵԱՌՆ ՍԵՊՈՒՀՈՅ[3]

Լերինք ամենայն այսօր ցընծացէ՛ք
Ընդ մեծապայծառ փառսըն Սեպուհոյ գերեվանց լերինն,
Քանզի ի նմա բնակեցաւ սուրբըն Գրիգորիոս,
Սիւն լուսոյ Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ,
Որով ցընծայ ի փառս վերնոյն Սիովնի:

Որ առաւել խորին խորհրդով խընդայ,
Քան զԱրարատեանըն բարձըր Մասիս,
Քանզի ի նմա հանգաւ սուրբըն Գրիգորիոս,
Տապանն ապրեցուցիչ ի հոսանաց մեղաց Հայաստան
ազանց,
Որով փըրկիմըք միշտ ի ջուրց հոսանաց:

Գեղանիծ լուսով բերկրեալ վուարճանայ
Լեառըն Սեպուհոյ հանգոյն Սինայի,
Յորում եկաց կամարն ամպեղէն սուրբն Գրիգորիոս,
Գերահրաշ լուսով վարդարեալ՝ նըման Մովսէսի,
Որով փայլին երեսք շնորհօք սուրբ հոգւոյն:

Զօրօք հրեղինաց պարփակեալ պահի
Լեառն հանգըստեան սրբոյն Գրիգորի, տեսլեամբ
Կարմեղայ,
Զորըս պարսպեն կառքըն կենդանի մաքրափայլ աղօթք
Սուրբ Լուսաւորչին հօրըն հոգևոր,
Զոր առ տէր ունիմըք միշտ բարեխօս:

Համանմանեալ ամովսածնին Եսայեայ
Կայծակնամաքուր սուրբ մարգարէին, տէր Գրիգորիոս,
Վեցթևեան սրովբէից կիսիչ կենդանեաց
Եղև տեսանող հոգւով կենդանին,
Զանդընդախոր ըվձորն երկնից կամար յօրինեաց:

Շնորհաբաշխ աջովն Յիսուսի պատուեցաւ
Լեառն Սեպուհոյ ի տիպ Սանիրայ և Ահերմոնի,
Յորմէ բըղխեաց աղբիւրըն լուսոյ
Զուրըս բարեհամս և վըտակս յորդախաղաց հոսանօք,
Որով ցընծայ երկիրս ի բերս արմըտեաց:

Ծնընդեամբ սուրբ կուսին յայրըն Բեթղեհէմ,
Յորդորեցան դըստերքն Եւայի լինել կուսութեամբ ի մայր
Քրիստոսի,

Ցորում ծագեաց խորհուրդըն պայծառ յերկնանման լերինն
Ի յայրն Մանեայ մաքրական վարուք,
Որով սրբիմբք միշտ ի յաղտոյ մեղաց:

Խորհուրդ խաչելոյն գերահրաշ տեղւոյն Գողգոթայ
Ծածկապէս ի սմին լերին տեսանի,
Զէնն արքայական սպանմանըն գործի,
Կենաց արքային ի կենաց գործիս նըւիրեալ,
Որով փրրկեսցէ ըմմեկ յաւիտենից մահուանէ:

Զխորհուրդ Սեպուհոյ սեպհական փառաց
Հոգւովն սրբով մարգարէին ծանուցեալ,
Զոր և հարցանէր վխորանն Աստուծոյ
Եւ ըվլեառըն տեառն, թէ ով բընակիցէ,
Զոր և տեսաք առ սուրբըն Գրիգոր կատարեալ:

Անբիծըն վարուք, արդարըն հոգւով,
Բանիւ ճըշմարիտ և սուրբն սրտիւ, տէր Գրիգորիոս,
Որում ցանկացան վօրքըն սրովբէից բերանք հրեղէնք,
Յերկնից ի յերկիր խոնարհեալ ի տես մարմնով ճըգնողին,
Որ և պատիւ տեղւոյն անուամբըն կոչի:

Հովուին հըսկողի ճըշմարիտ և քաջ,
Հովուին պատկերի հովիւքն եղեն հետևողք,
Զոր ամփոփեցին վմարմինըն մաքուր մերձ ի յայրըն
Մանեայ,
Մեկ դեղ ախտից մաքրութեան,
Որով սրբիմք հոգւով ի թիւնից վիշապին:

ՄԵԾԻՆ ՆԵՐՍԻՍԻ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Այսօր կուարճացեալ տօնեն երկնայինքն,
Ընդ մարդկան պարակից եղեալ փրկութեան մերոյ,
Քանզի յայտնեցաւ մեզ հոգևոր գանձն լուսոյ,
Արևելեան արեգականն ճառագայթ, սուրբն Ներսէս,
Բարեխօսութեամբ սորա, տէ՛ր, պարգևեա՛
Զխաղաղութիւն Հայաստանեայց աշխարհի:

Այսօր վերստին նորոգեցաւ քահանայական գաւազանն,
Գեղեցկապէս ծաղկեալ պայծառութեամբ,
Քանզի շնորհեցաւ հովիւն քաջ բանաւոր հօտի
Յարմատոյ Լուսաւորչին բողբոջ բուսեալ սուրբն Ներսէս.
Բարեխօսութեամբ սորա, տէ՛ր, հաստատեա՛
Զիշխանութիւն հայրապետական աթոռոյ:

Այսօր մեծապէս փառօք ցնծա թագաւորական գաւազանն
Ընդ յաշտութեան սիրոյ սուրբ հայրապետին,
Քանզի էհաս յօգնութիւն օրինադրողն թագաւորաց՝
Մարտակից վինուորական դասուն սուրբն Ներսէս,
Բարեխօսութեամբ սորա, տէ՛ր, բարձրացո՛
Զիշխանութիւն թագաւորական աթոռոյ:

ԿԱՆՈՆ ՍՐԲՈՅՆ ՆԵՐՍԷՍԻ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Որ ըվլոյս անճառ շնորհաց
աստուածային քո գիտութեանդ
ծագեցեր յաշխարհ Հայաստանեայց,
գրթած հայր երկնաւոր, գրթա՛ ի մեղուցեալս:

Որ ընտրեցար յորովայնէ՝
վմաքրեալն հոգւով սուրբն Ներսէս,
ժառանգել ըվվիճակ հայրենի,
հովուել արդարութեամբ և իրաւամբք:

Որ օրինօք ճըշմարտութեանըն
վարդարեաց եկեղեցի,
կարգաւորեալ բարեպաշտութեամբ,
սորին աղաչանօք խնայեա՛ ի մեվ, Քրիստո՛ս:

Որ յերջանիկ ընտրեալ՝
սրբոց յայրապետացըն ժողովոյն,
գերագոյն փառօք պատուեցաւ սուրբն Ներսէս,
դաւանեալ Աստուած վհոգին ճըշմարիտ՝ ընդ հօր և որդւոյ:

Որ ըվծածկեալ խորհուրդ՝
ապագայից ժամանակաց,
յայտնեցեր սրբոյն Ներսէսի,
սորին աղաչանօք խնայեա՛ ի մեվ, Քրիստոս:

Որ ի վերայ պատուիրանաց՝
թագաւորին երկնաւորի,
ըվբաժակ մահու ընկալաւ ի թագաւորէն,
և փոխեցաւ ի յերկինս՝ ի լուսեղէն յառագաստն:

• • •

Որ ընտրեցար յԱստուծոյ
հովիւ բանաւոր հօտի, ո՜վ երանելի տէր սուրբ Ներսէս,
արժանաւոր օծման սուրբ հոգւոյն
աղաւնակերպ իջմամբ, որպէս Հորդանան,
վասըն ժողովրդեան քո խնդրեա՛ ի Քրիստոսէ ըկթողութիւն:

Որ յարմատոց բըխեալ բարեաց
ծաղիկ սուրբ հաւատոյ, ո՜վ երանելի տէր սուրբ Ներսէս,
լուսաւորեցեր իմաստութեամբ:
կեկեղեցիս Հայաստանեայց՝ ըստ սրբոյ հօր Լուսաւորչին,
վասըն ժողովրդեան քո խնդրեա՛ ի Քրիստոսէ ըկթողութիւն:

Որ յանդիմանելով ըկթագաւորն,
հանգոյն մեծին Յովհաննու, ով երանելի տէր սուրբ Ներսէս,
և ի վերայ պատուիրանաց
ըկբաժակ մահու արբեալ, ընդ անմահիցն դասս
վերակարգեցար,
Վասըն ժողովրդեան քո խնդրեա՛ ի Քրիստոսէ ըկթողութիւն:



ԵՐԳԵՐ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԵՐԶՆԿԱՑԻՈՅ ԱՍԱՑՈՒԱԾ ՆԵՐԲՈՂԱԿԱՆ ԳՈՎԵՍՏԻ Ի ՍՈՒՐԲ ԼՈՒՍԱՒՈՐԻՉՆ ՀԱՅՈՅ ԳՐԻԳՈՐԻՈՍ[1]

Յարակուարձ խնդութեամբ բերկրեալ ցնծա՛, եկեղեցի սուրբ,
Նորահրաշ և պայծառ երկին,
Աստուածակալմ լուսաւորօք կարդարեալ,
Քանզի ի քեզ ծագեալ իմանալի արեգակն կուարթարար,
Լուսինն գիշերայնոյ մխիթարիչ,
Զօրէնսն ստուերական լրմամբ լիացոյց,
Եւ կգումարս խմբից հրաբորբոք և հոգիահրաշ աստեղաց՝
Ի քոյդ բարձրայարկ և գմբեթաձև խորանի առկայացոյց՝
Կենդանաշարժ ընթացիւք,
Որ են՝ նահապետացն անձինք,
Մարգարէիցն հանդէսք,

Առաքելոցն դասք,
Մարտիրոսացն ժողովք,
Հայրապետացն հոյլք,
Ճգնաւորացն խումբք,
Եւ ամենայն աստուածապարդիցն լուսափայլութիւնք,
Ցորում ի քո՛յդ գերակայ կայանս ի վեր նկատեալ՝
բարձրահայեաց բանականացս,
Տեսանեմք ի մէջ բազմահոյլ հրեղինակերպն դասուց՝
յոքնական լուսով առլցեալ,
Զհանդիսահրաշ և վմեծ նահատակն արևելեան,
Զլուսերանգ և վվուարթարար աստղն աշխարհալուս՝
ԶԳրիգորիոս,
Գերականց փառօք փայլեալ յաւէտ՝ քան վբնաւս,
Զորոյ քաղցրահայեաց լուսով շուրջ փարիմք յօր հիշատակի
սրբոյն:
Ուրա՛խ լեր, դրախտ աստուածատունկ,
Բազմախիտ տնկովք տենչացեալ,
Եւ մշտափթիթ ծաղկօք ուռճացեալ.
Երկիր լուսոյ և վայր փափկութեան,
Եդեմական աղբերն բղխիչ լայնածաւալ ընթացիւք,
Քանզի ի քեզ ծառն կենաց տնկեալ՝ բարձող անմահական
պտղոյն,
Եւ որթն ճշմարիտ աճեցեալ՝ քաջաբեր ուռոցն բազմութեամբ,
Ցինքն ցուցեալ վգեղեցկատես և վվայելուչ ողկոյզն՝
Ուրախարար բաժակին բաշխիչ,
Ցորում և ի քոյդ բարելի բուրաստանի հայեցեալ,
Տեսանեմք վերևելի և վհամապայծառ ծաղիկն վքաջապուարճ:
Եւ վսաղարթալի տունկն պտղաւէտ,
Ցաղբերէն կենաց վհորդառատ վտակն,

Զճշմարիտ որթոյն քաղցրաճաշակ ողկոյկն՝
Զ Գրիգորիոս,
Լուսաւորիչն Հայոց,
Զհեղինակն հոգւոց,
Որոյ հիշատակաւն կուարճացեալ՝
Բերկրիմք յուրախութիւն հոգևոր:

Համագումար բազմութեամբ հանուր հաւատոյ մանկունք,
Ապատածին ծնունդք ապատ մօրն վերնոյն Սիոնի,
Սիրասնունդ կաւակք մաքուր ծննդեամբ յարգանդ հոգևոր,
Ակն ակնուական ընտրեալ յառաջահրաւէր կոչմամբ,
Գերագոյն անուան ժառանգորդ,
Օրհնութիւն նոր նուագեցէք նորոգողին կձեվ՝
Եւ նորահրաշ բարեաց պարգևողին,
Զի այսօր մայր ձեր եկեղեցի՝ իմաստութեամբ հօր շինեալ,
Եւ հանճարով հոգւոյն կանգնեալ,
Զխորհրդարար լցեալ շտեմարանս իւր բանայ,
Եւ զմթերս հոգևոր գանձուց իւրոց՝ ցուցանէ բարեսէր
որդւոցդ,
Զի տեսանելով զգեղեցկութիւն գանձուցն անկողոպտելի,
Անդ և սիրտք ձեր եղիցին անբաժանելի՝
Յորում տեսանեմք զհրագունակ և զմաքուր ոսկին,
Զհաւատն ուղղափառութեան,
Զընտրեալ և զփորձեալ արծաթն՝
Զպայծառ բանս տերունական,
Զերևելի և զպայծառ ակունսն,
Զսրբափայլ և զառաքինիապարդ անձինս սրբոցն,
Զծովածին մարգարիտն,
Եւ զամենայն յօրինուածս գեղեցկութեան իւրոյ,

Ցորում տեսանեմք և յայսմ ամենունակ գանձարանի,
Զոսկիափայլ անձն,
Զհաւատով պայծառացեալն,
Զսուրբ և վկուտ արծաթն,
Զյստակ բանին ճշմարիտ քարոզն,
Զբավմագունի ակն,
Զգերապանց առաքինութեամբ շքեղացեալն,
ԶԳրիգորիոս հայրն հաւատոյ,
Զվայելուչ պսակն Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ,
Որոյ տօնախմբութեամբ կարդարին անձինք հոգևոր որդւոց,
Եւ կբավմադիմի պէտս իւրեանց լցուցանեն կհայրենի
գանձիւքն:

Աստանօր բացէ՛ք կգանձարանս մտաց ձերոց՝
յընդունակութիւն աստուածային գանձուցն,
Մաքրեցէ՛ք կտախտակս սրտից կենդանագրել ի ձեվ կտիպ
պատուելի պատկերին,
Նկարել հոգի՛ս ձեր կգեղեցկապէս հասակն գովելի՝
Զհաւատոյ հեղինա՛կն,
Զյուսոյ յարաժամ և անշարժապէս գիտո՛ղն,
Զսիրոյ սրբապէս և կհաւատարիմ պաշտօնեա՛յն,
Զկատարեալ բարեացն գործօնեա՛յն,
Զճշմարիտ աստուածպաշտութեան յարացո՛յցն,
Զբարիոք հնազանդութեան օրինա՛կն,
Զժրապէս ժուժկալութեան ժողովե՛տղն,
Զողջախոհութեան և կպարկեշտութեան ապացո՛յցն,
Զհրաշագործ և կկարմանալի սքանչելեաց ներգործո՛ղն,
Զարիաբար և կանուանելի կօրավա՛րն,
Զքաջակօր և կյառաջադէմ կինուորն՝

Զ Գրիգորիոս.
Զամենայն առաքինութեանց պարունակն,
Զսրբութեամբ սնեալն,
Զառաքինութեամբ քաղաքավարեալն,
Զարդարութեամբ փայլեալն,
Որոյ այսօր յիշատակաւն վուարճանամք,
Եւ յասպարէզ նահատակութեանցն ճեպիմք,
Եւ հայրենի բարեաւն բարգաւաճիմք,
Եւ քաղցր և ախորժելի անուամբն վընթացս բանիս ուղղեմք, ասելով.
— Նահատակ բարի Գրիգորիոս.
Քանվի փութամք ելանել ի հանդէս քոյոյ մեծասքանչ ճգնութեանդ,
Ճեմեալ ի բուրաստանս բանաւոր և խօսուն քո ծաղկանց,
Գունագեղ և գովելի վարուցդ,
Մտանել յայգի բազմածաւալ և նորապուարճ ողկուվիցդ.
Դիմել ի դրախտս պայծառապարդ և պարարտաբեր պտղոցդ:
Զո՞ր արդեօք ժողովեցից անծորելի ծաղիկս ի ծոցս բանիս թաքուցանելով,
Կամ վո՞ր ողկոյվ ուրախարար կթեցից ի վմայլեցուցանել վայսքան բազմութեանս անձինս,
Որո՞վ պտղով պարծի բանիս շարժումն,
Կամ յո՞րս պշուցեալ նայի անձեռնարկելի բարձրութեամբ:
Զո՞րս պատմեցից, որ ի քեզ գեղեցիկ գովասանութեանցն արժանի,
Զյղութեա՞նն ամենասքանչ իրագործութիւնն,
Եթէ վծննդեանն պարգևական շնորհս,
Զսննդեա՞նն մաքուր սրբութիւնն,
Եթէ վուսմանցն շնորհալի մտավարժութիւնն,

Ջերկնանման առաքինութեանցն ընթա՞ցս,
Եթէ վխաչեցելոյն յաղագս մեր վհետևումն,
Ջանտանելի չարչարանացն վհանդէ՞ս,
Եթէ վխորութեան վիրապին խորհրդական ժուժկալութիւնն,
Ջաստուածային տեսչութեամբ վերաբերո՞ւմն,
Եթէ վսոսկալի տեսլեանն վարմացուցիչ հանգամանսն:
Էական բարոյն վերադիտող Գրիգորիոս,
Բավմագունի բարեացն՝ որ ի քէն մեվ ընձեռեցաւ,
Ջորպիսի՞ ընծայս,
Որո՞ւմ մեծամեծ և անվուգական իրի նուիրեսցուք՝
Բավմաբան վարդապետութեամբ լուսաւորեալքս,
Քահանայապետական հայցուածոց նուիրեալքս,
Արիական հսկողութեամբ հովուեալքս,
Ճգնաւորական աղօթիւք պարապեալքս,
Հանգստեան քո տեղւոյ և գերեվմանիդ գովելոյ
մխիթարեալքս:
Եւ այժմ՝
Ծանրաբեռն անձամբ առ հայրդ հանգստարար հաւաքեալ,
Ցորս և ես՝
Անչափելի պարգևացն՝ որ ի քէն, պարտականս,
Եւ անհամեմատ բարեացն բաշխման բաժանորդս,
Դուվնաքեայ, բանիւ ձեռնարկեմ փոխարինել վքաղցր
պարտուցն համարս,
Որ եղեր յոչէից լինելութեանն ըստ յուսոյ ծնողացն
միջնորդ,
Եւ պտղոյս անպիտանականի բարիոք գոլոյն պատճառ,
Բանական մասինն շարժման առիթ,
Եւ ի նույնն յարամնալոյ յորդորիչ,
Եւ այժմ ընկալ վբանիս պարտս ձեռնտուութեամբ, որ ի քէն,

Սրբագունի անձինդ պատուեալ պատկերի լինել նկարիչ,
Վեհագունիդ բնաւից բարուց ընտրութեան բանիւ քանդակիչ.
Գերագոյն գեղոյդ գերապանց փառաց գրով դրոշմիչ,
Երջանիկ գործոյ երկնաճեմ ոգւով եղեալ յօրինիչ,
Քաւիչ քարոզիդ քաղցրուսոյց բանիւ՝
Քոյին հոգևոր որդւոցս պատմիչ:
Բայց որո՞վք երանգօք ի դէմս բերից վփառապարդ քո տիպ տիրական,
Ո՞ր բան բաւ է վընտիր բարուց քոց յօրինուածս բարի ի կիր արկանել.
Զվեհագոյն վա՞րս,
Զվարմանալի գո՞րծս,
Զսոսկալի և վսրովբէանման մաքրութի՞ւնս,
Ցորմէ յաղթի տկար բանիս վօրութիւն,
Եւ փափագէ նուաստ ոգւոյս ցանկութիւն:
Ցաղթիլն յանյուսութիւն արկանէ,
Եւ փափագն համարձակագոյնս գործէ:
Անյուսութիւնն անկարելիս ցուցանէ վյօդուածս անդամոց բարեացն մասաց ի կիր արկանել.
Եւ համարձակութիւնն իմաստից կարօտի կատարեալ վարժից հիւսուածոց բանից:
Եւ ցանկամ լինել ինձ միտս մաքուրս,
Եւ բանս արագաշարժս և բավմաբուխս՝
Ըստ ծիծռանցն ճարտարութեանց:
Զեռն անաշխատ ի գործ,
Եւ վբավմութեան ջուրց նիւթ՝
Առ ի գրել վշնորհաշուք պատկեր վարմանահրաշ գործոյ՝
Սուրբ Լուսաւորչին մերոյ,
Ի յոգիս և ի միտս բավմութեան հաւատացելոցս:

Եւ արդ,
Զի կատարեալ ցանկայ սիրտ իմ մեծափափաք բաղձանօք՝
Նկարել վարփիագեղ պատկեր աստուածավարդ հօրն մերոյ՝
սրբոյ Լուսաւորչին Գրիգորի,
Ի կենդանի տախտակս սրտից որդիացեալ ժողովրդեան
նորա,
Ո՛չ ի գոյնս փայլունս նիւթականս,
Այլ կանմարմին նահատակութեանցն կհանդէս, և կսոսկալի
չարչարանսն,
Որով գեղեցկացաւ թագաւորական պատկեր մաքրափայլ
ոգւոյ նորա,
Հա՛յր երկնաւոր,
Ներկեա՛ վերանգս իմաստից բանեղէն դեղոց յառատաբուխ
շնորհացդ աղբերէ
Կապմել գեղեցկայարմար յօրինուածօք վայս պատկեր
ցանկալի,
Ախորժական գեղոյ սքանչելի:

Եւ վի յօժարիմ սիրով յօրինել պսակ պանծալի, մօրս մեր
սուրբ եկեղեցւոյ,
Ո՛չ ի նիւթական ականց և ի ծովածին մարգարտաց,
Այլ յամենապայծառ առաքինութեանց
Եւ յանմարմնական վարուց նահատակին Քրիստոսի՝
Սրբոյն Գրիգորի,
Գլո՛ւխ եկեղեցւոյ,
Որդի՛ և բա՛ն Աստուծոյ՝
Յիսուս.
Տո՛ւր ինձ հմտութիւն արուեստի,

Եւ մտաց տեսողական դիտաւորութիւն,
Յաջողակի ձեռին շարժութեամբ շարահարել կհիւսուածս
վարուց
Լուսափայլ ականց,
Խօսուն մարգարտաց՝
Ի կարդ գլխոյ սուրբ եկեղեցւոյ:

Եւ կի հանդերձեալ եմք շինել տաճար տենչալի,
Ո՛չ ի փայտից յղկելոց և ի քարանց քանդելոց,
Այլ ի կենդանի տնկոց՝
Աճեցելոց ի ջուր սուրբ պատարագին,
Եւ սնելոց ուղղափառ դաւանութեամբ,
Հոգեշնորհ և աստուածագութ հօրն մերոյ սրբոյն Գրիգորի,
Եւ ի բանական քարանց,
Որք իբրև կվէմս կենդանիս շինեալ էք տաճար հոգևոր՝
Ի գլուխ անկեանն հաստատեալք,
Եւ այժմ շինիք մաքրութեամբ
Ցընդունակութիւն քահանայապետին մերոյ,
Մանաւանդ Հոգւոյն սրբոյ,
Որում նա եղև տաճար ցանկալի,
Ամենիմաստ ճարտարապե՛տ հանճարոյ՝
Հոգի՛դ սուրբ Աստուծոյ,
Տո՛ւր շնորհ այսմ շինուածոյ նորածնունդ որդւոց Սիովնի,
Զորս ծնար սուրբ աւազանաւն,
Եւ միշտ նորոգես ի հնութեանց մեղաց,
Անխախո՛ւտ մնալ ամրութեամբ
Եւ յընդունելութիւն քեզ տաճարանալ,
Եւ յուրախական տօնի ի քէն կարդարեալ հօ՛րս
կուարճանալ:

Եւ արդ,
Զի մեծագո՛յն է առաջիկայ այս իրողութիւն,
Պարտ է մեզ նկատել հոգւոյ աչօք ի յոյսն վերին՝
Սիրով Քրիստոսի սուրբ նահատակին,
Եւ կմարմնոյ աչս մաքրել յստակ հայեցուածովք,
Եւ յարտասուս ցնդել,
Շարժումն ձեռաց՝ յաղօթս,
Եւ ականջաց՝ յունկնդրութիւն,
Եւ խնդրել իմաստութիւն հանճարոյ՝
Ի Հոգւոյն սրբոյ,
Կարող լինել սպասաւորել ահիւ և դողութեամբ
Ցաւուր յիշատակի,
Խոստովանողին Քրիստոսի,
Սրբոյն Գրիգորի,
Եւ գրել ի սիրտս մեծահանդէս այսմ ժողովոյս՝
Զյիշատակ անմարմնական վարուց նորա:
Եւ դո՛ւք պատրաստեցէք կՁեզ ի ժամուս յայսմիկ
Հաղորդ լինել մաքրութեամբ երկնային վարուցն՝
Ի շնորհաբաշխ աւուր տօնիս:

Եւ արդ,
Զորքս այս եղիցին մեզ գլուխ բանի,
Արժանի վարմացման և յիշատակի.
Ժամանակս այս և օրս բերկրալի տօնի,
Եւ տեղիս հանգստեան սրբոյն Գրիգորի,
Եւ դէմքն ամենագով և ներբողելի,
Եւ իրքն, որ ի տեղւոջ և ի ժամանակի գործի:

Ա. Ժամանակս, յորում հաւաքեալ. եմք որդիք Սիովնի,
Ի դրունս մօր մերոյ եկեղեցւոյ,
Եւ ծնունդքս բանի քարոզութեան սրբոյն Գրիգորի,
Առ հայրս մեր հոգևոր,
Որ և հոգևորս այս գարուն՝ ընդ գարնանային
կուարճութեանցն համեմատի,
Յորում երկնայինս այս խորան պայծառանայ,
Եւ իմանալի արեգակն կքաղցր լուսոյն ծագէ ի սմա
ճառագայթս,
Օրէնքն լուսատու համագաղափար լուսնին
քարոզութեամբ փայլէ,
Եւ պարք աստեղացեալ սրբոցն ի նորումս երկնի
մաքրապէս ծագեն,
Աղբիւրք վարդապետութեան յստակագոյնս բղխեն
Եւ գետօրէն մեկնութեամբ յամենեցուն լսելիս հոսին:

Բ. Եւ տեղիք ժողովոյս՝ աստուածաբնակ լեառն հանգստեան՝
Լուսաւորչին մերոյ սրբոյ,
Որ և լուսափայլ ճառագայթիւք աղօթից նորա
պայծառանայ,
Եւ ի հոգւոյ շնորհաց նորա հովանանայ:
Եւ այժմ՝ կօրութեամբ սիրոյ նորա՝
Բանական ծաղկօք լեառնս կարդարեալ գեղեցկանայ,
Զտերև յուսոյն արձակեալ,
Եւ կկանգնեալ ծաղիկս առաքինութեանն տարածեալ,
Եւ կկատարեալ բարեացն պտուղ Աստուծոյ նուիրեալ,
Եւ կայսոսիկ միջնորդութեամբ սուրբ Լուսաւորչին մերոյ
Հայցել բազմութեամբն ի միասին եղեալ,
Ըստ ծաղկի ումեմն բնութեան՝

Դէմք ի դիմաց պայծառացեալ
Եւ ամենեցուն յարեգակն կոյս ուղղեալ:

Գ. Իսկ դէմք ամենագով և ներբողելի՝
Երևելի և պայծառացեալ արեգակն Հայոց Գրիգորիոս,
Որ վխաւար կռապաշտութեանն փարատեաց,
Եւ վսառուցեալս մեղօք ջերմն ճառագայթիւք աղօթիցն
պտղաբերս գործեաց.
Ճշմարիտ որթոյն բարեբեր բարունակն,
Որ ուրախարար բաժակաւն վուարճացոյց վմեվ.
Գեղեցիկ և վուարթարար գարունն հոգւոց,
Որ յորդահոս վարդապետութեամբն հնչեաց ի մեվ
վշնորհս հոգւոյն.
Հովանաւոր դրախտն՝
Ի տօթոյ և ի կիվող ժամանակի.
Երևելի աստղն,
Որ մոլորելոցս ի ծովու կենցաղոյս առաջնորդեաց
լուսափայլ երևամբն,
Ընտիրն կերպիւ՝ լուսաւորեալ դիմօք,
Ըստ նմանութեան փառացն Մովսէսի:
Գովելի հասակն,
Որ իննթվեան բարձրութեամբ ինն դասուց վերնոցն
ցանկալի եղև.
Լուսերանգ շաւիղն,
Որով ճշմարիտ լուսոյն ճանապարհ ծանուցեալ եղև,
Շող կենդանի մեվ ի բարձանց իջեալ:
Քաղցր և բժշկարար դեղն,
Որ վցաւս և վխայթուածս թունից վիշապին բժշկեաց.
Սոսկալի տեսիլն և ցանկալի,

Որ և սրովբեական փառացն տեսող եղև.
Կարմրորակ և անուշահոտ վարդն,
Որ ի փշաբեր արմատոյ ծաղկեալ եղև,
Եւ անուշահոտ բուրմամբն ելից կՀայաստանեայց
աշխարհս:
Տենչալի տունկն դրախտի եկեղեցւոյ,
Որ քաղցր և ախորժ պտղովն իւրով կուարճացոյց կմեկ.
Ցօղն կուարթարար,
Որ շնորհօք հոգւոյն ցօղեալ՝
Զխամրեալս և կթառամեալս ի բուսոյ բարեաց
կուարթացոյց:
Այսոքիկ դէ՛մք են,
Ցաղագս որոյ անկարանայ բան յարժանաւորն խօսելոյ:

Դ. Իսկ իրք,
Որ ի ժամուս յայսմիկ գործի,
Զի հովիւքս բանաւոր հօտին Քրիստոսի՝
Ընդ հանգստաւէտ հովանեաւ մօրս ձեր սուրբ
եկեղեցւոյն ժողովեալ,
Հովուեն կձեզ ի վայրի դալարուոջ
Եւ ի ջուր հանգստեան կենդանի վարդապետութեանն:
Մշակքս երկրագործ,
Իբրև կեզինս հեզ և հանդարտ,
Ընդ քաղցր լծովն Քրիստոսի լծեն կձեզ,
Եւ կբանական անդաստանս հոգւոց և մտաց հերկեն՝
Զբանն կենաց սերմանելով ի ձեզ,
Եւ յուսով բարեացն պտղոյ սպասեն ուրախութեամբ:
Զկնորսք հոգևոր որսան կձեզ՝
Կարթիւ բանին,

Ի հոսանուտ կենացս ի հաւիտենականն,
Եւ ի տղմասէր վարուցս ի յերկնային
քաղաքավարութիւնն:
Պահապանքս դրախտին կենաց՝
Ցուցանեն ձեզ զծաղկոցսն աստուածային,
Զվարս աստուածայնոց արանց,
Եւ բուրեն ի ձեզ զհոտ գիտութեան անմահական փայտին:
Եւ դուք ժրացեալք,
Իբրև զմեղուս աստուածային հաւաքել,
Ժողովեցէք ի բջիջս մտաց ձերոց:

Եւ զի՞նչ պատճառ ժողովոյս բազմութեան.
Խնդութիւն և սէր տօնիս,
Որ է ուրախութիւն յիշատակաւ արթուն և զուարթուն
անուանն,
Քանզի տօն է հայրապետին մերոյ սրբոյն Գրիգորի,
Եւ առաքելաշնորհ և մարգարէապատիւ լուսաւորչին մերոյ,
Որ զարդարեալ ի հօրէ՝
Ի մարգարէական պատիւ մեծարեալ եղև.
Եւ որդիական սիրով առաքեալ յՈրդւոյ՝
Եւ առաքելական շնորհիւն լցեալ եղև.
Եւ ի հոգւոյն սրբոյ ընտրեալ՝
Ի հայրապետական աթոռ բարձրացեալ եղև:
Զերից ժամանակաց՝
Զառաջնոյ և զմիջնոյն և զվերջնոյ,
Պարգևս երրորդութեանն յինքն պարագրեաց:
Ըստ որում՝ և մարգարեիցն է համապատիւ,
Եւ առաքելոցն զուգահաւասար,
Եւ աստուածազգեաց հարցն սրբոց համանման:

Վասն որոյ Հա՛յր կոչեմք,
Զի ծնաւ կմեկ բանիւն ճշմարտութեան,
Եւ սնոյց անհամեմատ գթութեամբ առատութեան իւրոյ,
Եւ աճեցոյց ուղղափառ հաւատոյն դաւանութեամբ:
Վարդապե՛տ անուանեմք,
Զի ուսոյց վերկնաւոր բարեացն հանգամանսն:
Հովիւ՝ կի ժողովեաց ի հօտ ճշմարիտ հովուին
կհաւատացեալս սրբոյ Երրորդութեանն:
Մշակ՝ կի բազմավաստակ քրտամբք քակտեաց կկորդացեալ
անդաստանս մտաց մերոց,
Եւ սերմանեաց կսերմն աստուածպաշտութեան:
Մարտիրոս՝ կի մարտեաւ ընդ երևելի և աներևոյթ
թշնամւոյն:
Վկայ՝ կի վկայեաց բազում չարչարանօք միութեան
Երրորդութեանն և ճշմարիտ աստուածութեանն:
Նահատակ՝ կի ողջակիզեալ եղև կենդանի մարմնով:
Ցաղթող՝ կի ո՛չ կասեցաւ ի բազմահնար տանջանացն:
Ճգնաւոր՝ կի ի վերայ ամենայն հանդիսիցն կվարս
ճգնութեան յանձն էառ,
Որով առաւել բարձրանայ ազգն Հայոց:
Զի որպէս մի՛ է հայրն մեր, և կամենայն բարիս յանձն իւր
տպաւորեաց,
Այսպէս մի՛ է և միակրօն ազգն Հայոց,
Եւ ամենայն գերազանց պարգևօք մեծարեալ եղեն:

Վասն որոյ և մեք՝
Ի պատիւ բազմերախտի հօրն մերոյ,
Բանս ներբողականս յարմարեսցուք.

Գրիգորիոս՝ արփիական գեղ, արեգակնափայլ ջահ,
անշիջանելի լուսովն լցեալ:
Գրիգորիոս՝ բարունակ բարի, բուրաստան ծաղկեալ,
բուրվառ ոսկեղէն հաշտարար խնկօք:
Գրիգորիոս՝ գարուն ծաղկավէտ, գետ հորդահոս,
գեղեցկածաւալ բղխմամբ ընթացեալ:
Գրիգորիոս՝ դրախտ աստուածարդ, դիւրայարմար քնար,
դայեակ մանկութեան և դաստիարակ:
Գրիգորիոս՝ երկնաքաղաքացի այր, երևելի աստղ,
երկնաչու ընթացիւք լուսատու:
Գրիգորիոս՝ կօրութեամբ Էին կարդարեալ կքեկ
կանանական ծաղկօք անուշիւք:
Գրիգորիոս՝ էական բարւոյն էապէս պատկեր,
Էին ճշմարտի ճոխացեալ շնորհիւ:
Գրիգորիոս՝ ընտիր կերպիւ ընդ արփին սլացեալ՝
ընդ հանդէս յոքունց երևեալ:
Գրիգորիոս՝ թաւախիտ անդաստան, թագաւարդեալ փառօք,
թևածեալ յեթերայինն բարձր խորան:
Գրիգորիոս՝ ժրաբոյս ծաղիկ, ժիր մշակ երկոց,
ժողովարան հոքունց բարութեանց:
Գրիգորիոս՝ իմաստիւք վերին իսկապէս լցեալ,
ի ծովածփանս խաղաղ նաւահանգիստ:
Գրիգորիոս՝ լուսերանգ շաւիղ, լրմամբ լիացեալ,
լուսաւորիչ Հայաստանեայց կարմիս:
Գրիգորիոս՝ խոհական հանճար, խորհրդեամբ մաքրեալ,
խորհրդակից վեհին հանճարոյ:
Գրիգորիոս՝ ծով ծիծաղական, ծուղակ դրժողին,
ծառ բարձրուղէշ և պտղաւետեալ:

Գրիգորիոս՝ կտակագիր բարւոյ, կերպարն փափառաց
կենդանւոյն յաւէտ յարաժամ:
Գրիգորիոս՝ հեղինակ բարի, հերքիչ ցանկութեան,
հանճարով Հոգւոյն վօրացեալ:
Գրիգորիոս՝ ձայն ապդարար, ձայնեալ ի բարձանց,
ձևեալ հասակ անձինդ գովելի:
Գրիգորիոս՝ ղամբար ջահացեալ, ղեկօք հաւատոյ,
ղեկավարեալ ի ծով կենցաղոյս:
Գրիգորիոս՝ ճշմարիտ հովիւ, ճառագայթ փառաց,
ճանապարհ ի կեանս անմահիցն:
Գրիգորիոս՝ մայր եկեղեցւոյ, մաքուր սրբութեամբ,
մտօք սլացեալ ի դասս սրովբէից:
Գրիգորիոս՝ յոքնապան պարգևք յարփիադէպ լուսոյն՝
յապգս երկրածնաց:
Գրիգորիոս՝ նուիրեալ վեհին նորապուարճ փառօք,
նահատակ բաղմաչարչար:
Գրիգորիոս՝ շողէջ կենդանի, շար ոսկեման՝ ընդելուկեալ
մարգարտով,
շնորհապարդ պսակ սուրբ եկեղեցւոյ:
Գրիգորիոս՝ ոսկեձեմ աղբիւր ուղղեալ գեղեցկապարդ,
ուղղութեանց առաջնորդ:
Գրիգորիոս՝ չնաշխարհիկ պարծանք, չարչարիչ չարին
չարչարանօք մարմնոյդ:
Գրիգորիոս՝ պտղագործ երկիր, պարարտաբեր բուսովք,
պարգևօք Հոգւոյն պատուեալ:
Գրիգորիոս՝ ջերմեռանդն աղօթիւք ջնջիչ յանցանաց,
ջրովն կենդանի և աստուածունակ:
Գրիգորիոս՝ ռետին քաղցրութեան, ռահ լուսաձեմ,
ռահ գործեալ ի կեանս վերինս անմահից:

Գրիգորիոս՝ սոսկալի տեսիլ, սրովբէական փառօք,
սլացեալ յաստեացս առ երկին:
Գրիգորիոս՝ վարդ կարմրորակ, վառեալ հաւատով,
վիմարդեան մտօք հաստատուն:
Գրիգորիոս՝ տունկ տենչալի տէրունեան դրախտին,
տարփալի վերնական վեհիցն:
Գրիգորիոս՝ բաբունի բարի, բաբունեաց պարծանք,
բենական լուսով ցնծալի:
Գրիգորիոս՝ ցանկ հաւատոյ, ցնծութիւն՝ ապանց,
ցօղ կուարթարար բանական բուսոց:
Գրիգորիոս՝ ւ'իւծելոյս ոգւով, ւ'իւսողի ճառիս,
հիւթ բժշկարար ցաւոց:
Գրիգորիոս՝ փաղփիւնափայլ ծաղիկ, փունջ մանուշակաց,
փառապարդ լապտեր լուսընկալ:
Գրիգորիոս՝ քահանա անբիծ, քարոզ ճշմարիտ,
քնար աստուածախօս և քաղցրանուագ:

Գրիգորիոս՝ բազմերանեան վկայն,
Յերևելի արարածոցս գերաշխարհիկն,
Վերնոյն Երուսաղէմի գաւառականն,
Անմարմնոց դասուցն ազգայինն մաքրութեամբ:
Արդ, եթէ ախորժելի թուեսցի ումէք
Ընդ ներբողական գովեստի գլխոյն յապգէ և ի գաւառէ
պատմաբանել,
Ապա ուստի արժան է՝
Ի վերուստ անտի պարտիմք ցուցանել:

ՅԱբրահամէ մեծէ և Աստուծոյ սիրելւոյ սա սկզբնաւորեալ,
Ի նահապէտէ հնոյն՝ նահապետ նորոյս նուիրեալ,

Ցարդարոցն հօրէ արդարութեան ծնօղ ծանուցեալ,
Ցընտրեալ հնչմանն մտաց մաքրամիտ իմաստիւք փայլեալ,
Ի կենտուրական ծնունդսն բուրումն անուշից խնկոց
ծածկեալ,
Ընդ աւագանին որդիսն ի վարդ փայլման ոսկի միացեալ,
Ընդ վեցեսին որդիսն, որ ի Կենտուրայ,
Երկնաւոր խոստումն յարևելեան և ի հիւսիսական ազգսն
ժամանեալ,
Լոյս հոգւոց ի լուսոյ կողմանն աշխարհի ծագեալ:
Վասն վի շնորհ օրհնութեանց որդւոցն լուսոյ՝
Ցաստեղածին հօրէն ծածկեալ գայր ընդ նոսին,
Եւ իբր վադինաբուխ վգետն Եփրատես՝ ի ծործորս ծոցոյ
երկրի,
Եւ ընդ երակս խորոց՝ ի սահմանս Հայաստան աշխարհի,
Աղբիւրացեալ բղխէր:
Այսպէս և մերն Լուսաւորիչ.
Ի քաջաբուռն և ի վօրաւոր վարմէն Պարթևաց ծնեալ,
Ի Պահլաւական պետացն, որ յարքայանիստ շահաստանէն,
բարգաւաճանօք կոչեցեալ,
Ի թագավարդիցն Արշակունեաց՝ Արշակունի անուամբ
առձայնեալ,
Ի Սուրենական ցեղէն՝ իբր ի յամպոց մթացելոց, ցնծութեան
մեկ ցօղ անձրևեալ,
Եւ լուսածնունդ ծագումն փայլեալ,
Ի Անակայ հօրէ՝ իբր ի փշաբեր թփոյ հրաներկ թերթս
վարդից,
Ի հոտ անոյշ մեկ վերածաղկեալ,
Ցօձից թիւնալից խայթոցաւորաց՝ մեկ թիւրակէ բժիշկ
երևեալ,

Ի խնջիւնաց վարդատեսից՝ երփներանգ որակ ծիրանւոյ,
Ի վարդ կայսերական հանդերձից տուեալ,
Ի տիրասպան հարցն դաւողաց՝ կենդանարար հոգւոց
պարգևեալ,
Արմաւէնի քաղցրաբեր՝ արդարութեան պտղովք ի փշաբեր
անդւոյ վարսագեղ բուսեալ,
Ի ժանտահոտ և ի դառնաճաշակ ծովէ մարգարտոյ
յօրինուած,
Ի պէտս արքայական թագից ընծայեալ,
Ցապառաժուտ վիմաց, քարանց կարծրութեանց՝
Տպակիոն հրափայլ գունով գեղեցիկ գտեալ:
Եւ այսոքիկ վիա՞րդ և որպիսի՞ յեղանակաւ գործեցեալ,
Այլ յամենահնարն արուեստէ,
Հրաշիցն ներգործողէ,
Բնութեանցն ստեղծողէ և փոխադրողէ,
Որ ի քարանց որդիս Աբրահամու յարուցանէ,
Զծերութիւն՝ ի մանկութիւն, և կամլութիւն ի ծնունդս
շարժեալ՝ նորոգէ,
Ցանշնչական տնկոց խոյ կենդանի ի պէտս պատարագաց
պտղաբերեալ կախէ,
Որոյ իմաստութիւնն՝ անչափ,
Եւ զօրութիւնն՝ անբաւ,
Կամելն՝ գործ կատարեալ,
Եւ իմացումն մտաց՝ ստեղծումն աշխարհի:
Այլ երբեմն,
Ըստ արուեստական հանճարոյ վարի ի գործ սքանչելեացն
իւրոց,
Զի որպէս յերկրագործ մշակացն,
Որք խնամով տնկագործութեանն,

Զթթուաբեր և կդառնահամ տունկս նոնենեացն ի
քաղցրութիւն կամեցեալ փոխարկել,
Փայտս պևեսկի ծառոց, որպէս և ասի,
Ցարմատս թթուաբեր նոնենոյն վարեն,
Ցորմէ կօրութենէ հիւթոյ կբերս դառնութեանն ի
քաղցրութիւն հեղաշրջեալ փոխէ,
Եւ հալի և կորնչի դառնութեանն որակ,
Եւ թթուահամն ճաշակ,
Ի քաղցր և անոյշ և ախորժելի:

Եւ արդ,
Եթէ այսոցիկ բնաւորապէս գործեցեալ լինին,
Ապա վիա՞րդ ոչ կարմանալի իմն հրաշս սքանչելեաց
նորագործեսցէ՝
Որթոյն ճշմարտի քաջաբեր ուռոց մշակող՝
Ի տնկաւորել այս երկնահաս տնկոյն,
Ի դառնարմատ և ի թթուաբեր ծառոյ ծնողէ,
Ի հեռուստ դարուց և կանուխ ժամանակաց,
Զդիտաւորութիւն իրին իւրում ժամու պահելով:
Եւ տեղի յարմարական այսմ տնկոյ պտղաճեցուցեալ,
Առ ի շիրիմս գերեզմանոյ մերոյ աշխարհի և ապգի
Լուսաւորչին,
Մերձ առ դիրս հանգստեան դիպեցուցեալ,
Ցորմէ մահաբեր տունկն դառնահամ՝
Ցանմահութեան պտղոյ քաղցրութեան ճաշակ ժամանեալ:
Ի տիրանենգ կարմէ տիրական աթոռոյ ժառանգ կացուցեալ,
Ցաշխարհամարտն ապգէ աշխարհի փրկիչ կօրացեալ,
Ցառաքելական մասնէն առաքեալ Քրիստոսի ընտրեալ,

Յաստուածավառ լուսոյն ճրագ լուսոյ՝ արդարև մեծի տանս
աշխարհի, յօրինեալ,
Յաւէտ,
Որպէսզի լուսաւորեսցի աշխարհ գիտութեան բանիւ,
Եւ առաքինական վարուք սքանչելի,
Ջանվգամութեամբ և վանգիտութեամբ խաւարեալսն՝
Լուսաւորել իմաստութեան և գիտութեան լուսով,
Ի Փրկչէն և բարերարէ և յիմաստութեանն Հօրէ,
Հրաւիրակ երկնաւոր խրախճանութեանն առաքեալ,
Ի պատրաստական սեղանն և ի վուարճութեան գիներբուաց
խառնարանն
ՋՀայաստանեաց ազգս կոչելով:
Այս փշալից տունկն:
Այս քաղցրունակ պտղոյ պահապան և դիւրածախ ծեղն՝
Ատոք ցորենոյ բարձող,
Յետ տնկագործին այս բերկրանաց պտուղ կթելոյ
Եւ ցորենոյն հատի հասելոյ,
Տապարաւ բանին, հոսչաւ արդար դատաստանին կտրեալ
հատանի,
Եւ փոշէտեսակն յարդ ի հողմոյ հոսի,
Ջարմիւք և ազգօք ի սրոյ ջնջեալ
Եւ մնացեալ միայն մերն Լուսաւորիչ՝
Ի ծոց խնամոցն Աստուծոյ ծածկեալ,
Եւ յեկեղեցւոյ հնձանս ուրախարար ողկոյվ նուիրեալ:
Հացն հաստատութեան սրտից քաղցելոց յըշտեմարանս
արդիւնք ամբարեալ,
Զոր ակնարկութեամբն ի վերուստ առեալ նորին դայեկացն,
Ի Կեսարիա Կապադովկացոցն հասուցանէին ի մեծ
մայրաքաղաքն,

Յողն եկեղեցոյ դրախտի ի յամպ խնամոցն Աստուծոյ
բարձեալ,
Ի սրախողխող սպանմանէ վարմիցն վերծեալ,
Որպէս և տէրն Յիսուս,
Թեթև ամպօք ի Հերովդէի սրոյն ի յԵգիպտոս փախուցեալ:

Արդ, վայսպիսի ծնունդ սքանչելի,
Զիա՞րդ ըստ մարմնոյ ազգաբանութեան պատմեմք,
Որ ի վեր՝ քան զբնութիւն մարմնոյ երևեալ եղև
յարմարութիւն կարգացն՝
Աշխարհական վարուց վեհագոյնն,
Գաւառի գերադրուատ գովութիւնն,
Արշակունեաց թագաւորացն պարծանաց թագն,
Առաքելոյն Թադէոսի պարգևական վաւակն,
Կենդանի նշխարաց նորին օրհնութեան շառաւիղն,
Վիճակեալ աշխարհի նորա՝ ընտրեալ հոգաբարձուն,
Արևելեան ծնունդն և արեգակնափայլ ծագումն,
Սնեալն սրբութեամբ յաշխարհն Գամրաց,
Եւ վարժեալ քրիստոնեական հաւատոյն իմաստութեամբ,
Եւ յարբունս հասեալ աստուածպաշտութեանն
հանճարասիրութեամբ,
Որոյ կեանք վարուցն կենդանի
Եւ հոգևոր օրէնք տուեալ աշխարհի:
Ո՛չ դրոշմեալ գիր ի տախտակի՝
Իբր ի քարեղէն պնակիտն Մովսէսի,
Եւ ո՛չ գրաւորական պատուիրանաց ճառք՝
Տպեցեալ դեղօք ի քարտիսի,
Այլ մարդ հրեշտակակրօն ի մաքուր մարմնի՝
Եղեալ յընդհանուր բնութեանս ստեղծուածի,

Ի վարժ ուսման համանգամայն երկրածնաց մարդկային սեռի։
Եւ որպէս յամենայնում,
Նոյնպէս և յամուսնութեանն աստուածագիր օրէնս,
Ցորմէ ո՛չ հրաժարեաց՝ իբր ի խոտան և յարհամարհելի իրէ,
Եւ ոչ անկեալ՝
Իբր ընդ հարկաւոր և անլուծանելի կապոյ,
Այլ միայն կի նորին օրինաց ցուցցէ զպատճառ և զչափ և զկատարումն.
Եւ պատճառ՝
Զի ի սակս որդեծնութեանն և զօրհնութեանն Աստուծոյ լնլով զհրաման,
Զի ո՛չ էր պարտ,
Եթէ երկինք զգալի լուսաւորօք պանծասցի առ ի ցոյցս մարմնոյ վայելչականաց,
Իսկ արեգականափայլ հայրն՝ զծնունդս լուսոյ ծածկեալ,
Ո՛չ փայլեսցէ ի կամարս նորոյ երկնի,
Եկեղեցւոյ ասեմ զհոգևոր ջահսն բերողի։
Եւ յետ զամուսնութեանն լնլոյ զպարտս և զչափ սահմանի,
Այնուհետև զկուսական կրօնիցն յանձին բերէր զլուսաւոր մաքրութիւն,
Որպէսզի մի՛ զրկեսցի ի նմանէ ամուսնութեանն կարգ՝
Ո՛չ ունելով զողջախոհութեանն օրինակ,
Եւ մի՛ գերակատար կուսութեանն պատիւ անգործ և անգիտելի մնասցէ
Ցամուսնութեանն կարգէ և կենաց։
Այլ և յետ զայսոսիկ տալոյ զտարացոյցս,
Այնուհետև փութայր լինել հայր արդարութեանն գործոց։

Եւ է օրինակ արդարութեանն այս,
Ոչ ումէք պարտական գտանելն՝ ըստ առաքելական
խրատուն,
Սակս որոյ՝ լցեալն հոգւոյն ճառագայթիւք,
Իբր լրմամբ լուսոյ նիւթ արեգական,
Յարևմտից յարևելս հասանէ,
Իբր դարձ արեգական ի միջօրեայն կողմանէ,
Ի սայլն կոյս առնելով վընթացս:

Այսպէս և նա,
Ցաւգս և յաւինս հիւսիսաբնակ աշխարհին դիմեալ,
Զի արեգակնապէս վանպտղութեան սառն հալեսցէ,
Զխաւարամած թանձրութիւնն քայքայեսցէ,
Զլուսոյ և վտունջեան մասունս աճեցուսցէ:
Ցաղագս որոյ գա մեծ արքայն Հայոց Տրդատ,
Զի վնենգութեամբ խաբէութեան իւրոյ հօրն վպարտսն
վճարեսցէ՝
Միամտութեամբ ծառայելովն,
Եւ վառաքելական վիճակեալ աշխարհ և ապգ վհօրն
ժառանգեսցէ՝
Չարչարանօք և արեամբ ստացեալ,
Զոր ընձեռեալ յանձնեաց նմա կարկառմամբ ձեռին ի
գերեվմանէն,
Եւ արքայական ատենիւ վպակասութիւն չարչարանաց
տեառն ի մարմնի իւրում կրեսցէ,
Վասն մարմնոյ Քրիստոսի,
Որ է եկեղեցի Հայաստանեայց:
Ցաղագս որոյ հարկաւոր է յիշել և վտեղի չարչարանաց
սրբոյն,

Որով վտեալ մաքրեցաւ ի բովս փորձանաց՝
Այս լուսափայլ ոսկւոյ մաքրութիւն:
Եւ թուեալ վխորհրդական թիւք չարչարանացն,
Զոր և կրեաց քրիստոսանման գթով վասն մեր,
Զի ի չարաչար կրից վմեկ ապատեսցէ,
Եւ չարչարանօք իւրոյ մարմնոյն սրբոյ,
Զխոցուածս մեղաց մեր բժշկեսցէ՝
Տեառն նմանեալ հաւատարիմ ծառայն տիրասէր,
Եւ ճշմարիտ հովիւն Քրիստոսի.
Հովիւն հսկող և արիական,
Զի վվատուցեալ անդամքս և հատեալ՝
Յօդեալ ի գլուխն մեր կապեսցէ,
Եւ վաստուածաբարբառ ձայնիւն ցուցեալ՝
Եթէ ա՛յլ ոչխարք են իմ,
Որ ո՛չ են յայսմ գաւթի,
Զնոսին յաստուածային հօտն խառնեսցէ:
Յաղագս որոյ ո՛չ էր կար թաքչել քաղաքի կենդանւոյն Աստուծոյ,
Ի վերայ հաւատոյն լերին կացելոյ,
Եւ ո՛չ աստուածային փչմամբն վառեալ բավմալոյս ճրագին՝
Դնել ընդ գրուանաւ ծածկութի:
Ծանուցեալ լինէր թագաւորին
Զճշմարտութեան նորա հաւատոյն:
Յատեան դատաստանի ածեալ լինէր անապատականն ատենի,
Հարց ու փորձ բանից արարեալ ահարկու և վարհուրելի դիմօք,
Ահս գոռոզաբար և սպառնալիս սաստիկ և լի բարկութեամբ բերեալ յարքայէ:

Արիական պնդութիւն և առաքինաբար պատասխանիս՝
Լի իմաստութեամբ և հանճարով սրբոյն,
Զոր համառօտ բանի վմիջոցաւն վանց արարից,
Եւ միայն վխորհրդական կիրս չարչարանացն
Եւ վբարեացն մեվ ամբարող տանջանս պատմեցից բանիւ:
Վասնվի թագաւորն սաստիկ լցեալ բարկութեամբ,
Հրամայէր կապել վձեռսն յետս,
Եւ հարկանել գայլ ի բերանն,
Եւ կախել շառաշեղս աղի ի վերայ ողանն,
Եւ տալ գելոցս կրծիցն,
Եւ արկանել առասանս ի կապս գելարանաց կրծիցն,
Եւ վերամբարձ կախել ի բարձրաւանդակ տանիս ապարանից
որմոյն մեքենայիւք:

Եւ կայր այնպէս վեօթն օր:

Եւ արդ,
Զմտաւ ածել վանիրաւն ատենի և վանիմաստն
ատենականաց վգործն անուղղեայ,
Զարհուրեալ դողամ,
Եւ ո՛չ առանց արտասուաց բերեմ վեղեալ ողբոց արժանի:

Ո՜վ արքայ մեծապօր,
Զիա՞րդ որ բազմութեան վօրաց և աշխարհաց և ազգաց
տիրես,
Այդչափ անիմաստաբար և անվգայութեամբ վարիս,
Այլ ոչ վոք յիշխանաց և յաթոռակցաց ունիս
վգաստացուցիչ:
Եւ ընդէ՞ր այդքան կարծրացեալ սրտիւ նմանեալք քարանց,

Զի ի քաղցր ցօղոյ վարդապետութեանն բանի ի բարբառս բերանոյն,
Իբր յամպոց երկնից իջելոյ,
Ո՛չ կակղացաւ պնդութիւն սրտից ձեր:
Զիա՞րդ, ո՛վ արքայ, աւապաբար ծանրանաս,
Հակես ի վայր և ընդդիմանաս այնմ,
Որ վքեվ աստղ երկնաւոր թեթևաթռիչ ընթացիւք ի բարձունս է հանելոց:
Իսկ դուք տանջանս չար,
Փոխանակ բարւոյ և հանգստեան ձեվ շնորհողի,
Հատուցանէք:
Զվերամբարձ ձեռնն երկնահաս,
Զսրբարան օդոյ մշտատարած կարկառմամբ յաղօթս,
Զհաշտութեանն ձեր ընծայամատոյց,
Զշնորհաբաշխն ձեր աստուածագործ իւղովն,
Զմերկութեան ձերոյ վգեցուցանող աջ,
Եւ մաքրող մատունս,
Զիա՞րդ կապէք ի գործս ձեռաց ձերոց կապեալք,
Եւ ի շարժմանէ բարեաց կարկամեալք:
Եւ որպէ՞ս գայլ ի բերան և դանդանաւանդս ի կվակի դնէք,
Ի կենդանաբուխ բանին աղբերաբար բղխող,
Որոյ շարժումն շնորհալի շրթանցն,
Իբր վլար վկարմիր ներկեալ գեղեցկախօսութեամբ,
Յորմէ շինելոց էք տաճար Աստուծոյ՝
Ըստ լարոյն հարմարութեան միացեալք,
Եւ արեանն Քրիստոսի խորհրդով գեղեցիկ կարմրութեամբ ներկեալք և մածեալք,
Որ սիրովն Քրիստոսի շարայարէ՝
Որպէս լարով,

Եւ հաւատոյն ներկուածով գեղեցկացուցանէ՝
Իբր կարմրով,
Որ մեղր և կաթն էր կաթուած բանի՝
Լեկուին շարժողի,
Տղայոցն ի Քրիստոս կաթն սննդարար,
Եւ հաստատելոցն ի հաւատս՝ մեղր քաղցրաճաշակ:
Ո՞չ պատկառէք կամ վարհուրիք դանդանաւանդ դնել ի կպակի,
Ի գործիսն աստուծուսոյց բանի,
Որ ցանկալի էր քան վոսկի,
Եւ քան վակունս պատուականս բաղումս,
Որ իբրև վանօթ ստաշխից էր խնկոց անուշից,
Ըստ իմաստնոյն գովեստից.
Աննենգ վարդապետութեանն ուսուցիչ,
Որ հաւատարիմ բանիւն իմաստուն առնէր վձեվ՝
Զմանկամիտ և վանիմաստ բաղմամեայ տղայսդ,
Որ լուսով պատուիրանին վառէր վճրագս նսեմացեալ ձեր մտացդ,
Որ վողջախոհութեանն լուսատեսիլ շուշան սերմանէր շրթամբք ի սրտից,
Զեր խոպանացեալ անդաստան,
Եւ վմուռս կաթեցուցանէր ի մեռելութիւն մարմնասէր և ախտակիր ձեր բարուց:
Շառաշեղս աղի ծանրաբեռնեալ դնէք ի վերայ ողին՝
Աստուածային օրինացն բեռին բարձողի,
Անհամեալքդ յաստուածպաշտութեանն աղէ:
Եւ գելարանօք և անրօք չարահնար պնդէք վսիրտն՝
Սուրբ և սրբարար հոգւոյն օթարան:
Երկրաքարշքդ և անասնամիտ,

Զիա՞րդ վերկնաւոր մարդոյն՝
Ի բարի սրտէ վբարիս բղխողին,
Որ ի ջերմութիւն սրտին բնաւորականի խառնեալ ունէր,
Զհուր սիրոյ յերկիր սերմանողին,
Որ և ի սիրտս ձեր սառուցեալ կամէր բորբոքել:
Արդ, յայդքան չարեաց ձեվ ապատարար,
Եւ անթիւ բարեաց բերող ձեվ աղբերաբար,
Այդպէս բաղմահնար չարչարանօք տանջէք անխնայաբար:
Այլ դուք ո՛չ գիտէք վինչ գործէք,
Որպէս և ոչ խուժանն Հրէից՝
ԶԱստուածն բան և վտէր Ցիսուս Քրիստոս հանել ի խաչ ճեպողաց:
Եւ որպէս տէրն որդիաբար առ հայր աղաչէր.
Հա՛յր, թող սոցա,
Զի ո՛չ գիտեն վինչ գործեն,
Եւ սա՛ հայրաբար գթով ի վերայ մեղուցեալ որդւոյն աղերսէր,
Եւ փոխանակ չարեացն՝
Զերկնաւոր բարին հայցէր,
Ընդ կապանաց ձեռինն բարեգործակ խնդրէր պաղատելով,
Զի արձակեսցին կապեալ և կարկամեալ ձեռք Հայաստանեայցն ապգի.
Կաղմողք կռոց և վոհարարք դիւաց և խնկամատոյցք անշունչ պատկերաց՝
Ուսիցն առ Աստուած վերամբառնալ:
Դանդանաւանդս ընկալաւ աստուածաբար բերան նորա,
Զի մեք անասնացեալ բարուք և անիմաստ մտօք,
Իբրև վձիս և վջորիս,
Որոց պարտ էր ի սանձս և ի դանդանաւանդս ճմլել վկվակս,

Եւ կխստերախ և կապերասան բարսն առ բանատուն և
ստեղծիչն դարձուցանել:
Արդ, կմերն արժանեաց կիրս յինքն կրելով՝
Բարեգութ հայրն կչարահատոյցն որդեաց,
Զի կմեկ յանասնական ախտասիրութենէն և ի
վայրենաբարու օտարութենէն
Յիմաստութիւնն երկնաւոր ընդ հնականդութեամբ Հօրն և
արարչին դարձուսցէ:
Գելարանօք և անրօք ճնշեալ ճմլեցան կուրծք և սիրտ նորա,
Որ սուրբն էր սրտիւ և աստուածայինն տեսութեան
արժանաւոր,
Զի սրբեսցէ կսիրտս մեր ի խղճէ չարեաց,
Եւ անօթս երկնաւոր գանձուցն արասցէ:
Բեռինս ծանրութեան աղի ի վերայ ողին դժուարակիրս և
կսկծելիս բարձեալ բերէր.
Ա՛յն որ աղ համեմիչ լինելոց էր Հայաստանեայց,
Աղիւն ստուգութեան և ճշմարտութեան համեմելոց
Զանմահութիւն և վնեխութիւն գործոցն ի ճաշակս անուշից
փոխարկեսցէ:

Եւ արդ, այսպէս,
Ամենայն կիրք չարչարանաց նորա Խորհրդաւորք են,
Եւ մեկ փրկականք և ապատարարք,
Եւ առիթք բարեաց:
Բայց կամենայնն յիշել՝
Երկարութիւն լինի ճառից,
Մանաւանդ կի ի սուրբ հարցն պատմութիւնս և ներբողական
ճառսն գեղեցկապէս յիշատակեալ է:
Այլ մերս դիտաւորութիւն յաղագս սրբութեան լերինս է,

Որ տեղի եղև երեսնամեայ ճգնութեան սրբոյն,
Եւ դիր հանգստեան գերեզմանի սուրբ մարմնոյն,
Վասն որոյ և ի սոյն դարձուցից լբանս:

Բաղում լերինք, ըստ կանոնական պատճառաց,
Հռչակելի անուամբ յաշխարհի մեծարեալ պատուին,
Զի նախ՝ յետ համաշխարհական ջուրցն հեղեղին,
Պատուեցաւ լեառն Այրարատեան բարձրակառոյցն Մասիս,
Տեղի հանգստեան եղեալ տապանին,
Որ ունէր վխորհուրդ եկեղեցւոյ,
Եւ եղև վերստին ծնող մարդկութեանս:

Աբրահամ ի լերինն Ամուրհացոց զԻսահակ Աստուծոյ
պատարագէր:

Լեառն Քորէբ հրաշալի տեսլեամբն պատուի,
Զոր ետես Մովսէս ի խորհուրդ կուսին
Զմորենին վառեալ, որ ո՛չ այրէր:
Լեառն Սինայ երևմամբն Աստուծոյ մեծարեցաւ,
Զի անդ տուան Մովսէսի տախտակքն աստուածագիծ,
Եւ այժմ տապանակն և որ ի նմա գանձեալ օրէնքն,
Ի նոյն լերին՝ ի ձեռն Երեմիայ մարգարէի պահեալ,
Կայ ի փապ վիմին,
Ցորում եդ Աստուած զՄովսէս ի տուէ ամպով ծածկել,
Եւ ի գիշերի՝ լուսով:
Պատուեցաւ յԱրաբովթ Մովաբու լեառն Նաբաւ,
Զի անդ ելեալ Մովսէսի,
Ցուցեալ նմա Աստուած զերկիրն Պարգևաց,
Եւ անդ վախճանեցաւ:
Մեծարեցաւ լեառն Սիոն,
Զի ընտրեաց զնա Աստուած տեղի,

Յորում եդ կանուն քաջութեան իւր ի նմա:
Զնոյն լեառն և Դաւիթ ամրացոյց,
Եւ Սողոմոն կտաճարն շինեաց հրաշապան յօրինուածովք:
Իմաստնացեալն յԱստուծոյ Սողոմոն,
Ի Գաբաւոնացւոց լեառնն հապար եկինս պատարագ
մատոյց Աստուծոյ,
Եւ խնդրեաց իմաստութիւնն,
Զոր էառ անհամեմատ մեծութեամբ:
Եղիա ի գլուխ Կարմեղոս լերինն աղօթէր,
Եւ հրով և ջրով տանջեալ խրատէր
Զյանցաւորս օրինացն Աստուծոյ:
Ի նոյն լերինն և Եղիսէոս՝ համանման վարդապետին իւրոյ
աղօթէր,
Առ որ իջեալ բանակք երկնաւոր զօրացն,
Եւ աղօթիւք մարգարէին բացան աչք պատանեկին,
Եւ տեսանէր զլեառն լցեալ կառօք և հեծելօք:
Եւ տէրն ի բարձրութիւն լերինն նստեալ,
Ուսուցանէր աշակերտացն զինն երանութիւնսն:
Պատուեցաւ լեառն Թաբոր,
Զի անդ յայտնեաց տէրն զփառս աստուածութեան իւրոյ,
Եւ զօրինակ հանդերձեալ կենացն,
Եւ զխորհուրդ եկեղեցւոյ անհամեմատ բարձրութեամբ:
Պատուեցաւ Գողգոթա անհամեմատ փառօք,
Զի անդ տէրն խաչիւ փառաւորեցաւ ի վերայ շիրմի
նախաստեղծ մարդոյն,
Եւ ապատեաց զծնունդս նորա:
Շնորհապարդեալ եղև լեառնն Զիթենեաց,
Զի անդ բաշխեաց զշնորհս քահանայութեան տէրն
աշակերտաց իւրոց:

Ի Սանիրա և յԱհերմոնէ ակունքն Յորդանանու բղխեն,
Յորում տէրն մկրտեցաւ,
Զնոյն մեզ ծնող տուեալ հոգևոր:
Եւ են բազումք,
Որ ըստ մարմնոյ և ըստ նիւթական հրաշից հռչակելի
անուամբ համբաւին.
Ոսկի անուանեալ լեառն յԻտալիա,
Լերինք երկու ի Սիկիլիա՝
Պարթենոս, յորում գետք երկու մեծամեծք բղխեն,
Եւ Ուռկանոս, որոյ միշտ կատարն հրով տոչորի:
Մեծն Լիբանան և Կարմեղոս՝ յԱսորիս,
Դիդիմոն՝ ի Փռիւգիա,
Տաւրոս՝ ի Սիւռիա,
Անտիտորոս՝ ի Կապադովկիա,
Ողոմպիոս՝ ի Կիպրոս:
Յառաջին Հայս Առգեոս իսկ ի մերումս աշխարհի,
Զի մի՛ նուազեսցուք իւիք,
Քան վազգ և վաշխարհ ի հռչակելեացն կոչմանէ:
Իսկ ի յաւուրս յետինս, ըստ մարգարէական ձայնին,
Յայտնեալ եղև լեառն Սեպուհ՝ ի միջոցս սահմանի երկուց
գաւառացն՝
Եկեղեաց և Դարանաղից, սեպհական փառօք,
Հանգոյն հանուրց խորհրդաւոր և մեծապատիւ լերանց,
Զոր և մեզ արժան է բանիւ բաղդատել,
Ճառիւ ներբողել,
Եւ վունակացեալն ի սմա ճշմարիտ ճոխութիւն արտայայտել:

Ուրա՛խ լեր, լեառն Սեպուհ, և խորին խորհրդով խնդա՛,
Քան զԱյրարատեանն և բարձրակառուցն Մասիս,

Զի անդ տապանն հանգաւ՝ կապմեալն ի Նոյէ փայտեղէն
նիւթով,
Իսկ ի քեզ՝ տապանն ապրեցուցիչ Գրիգորիոս,
Կապմեալ կամացն Հօր գթութեամբ,
Ցօրինեալ քրիստոսանման առաքինութեամբ,
Գեղեցկացեալ Հոգւոյն սրբոյ կօրութեամբ:
Այն տապան ի ջուրցն արկածից կմարմինս մարդկան
ապրեցուցանէր, և կապգս գապանաց,
Իսկ այս կենդանի տապան՝ ի հոսանաց մեղաց և
կռապաշտութենէ,
Զոգիս բանական Հայաստան ապանց կացուցանէր,
Լինէր սերմն ուղղափառութեան,
Որ է ճշմարիտ և բարիոք կենդանութիւն:
Ցայնմ տապանէ, իբր ի մօր արգանդէ,
Ծնեալ նահապետին Նոյի և պատարագ Աստուծոյ
մատուցանէր, ի ցամաքել ջրոյն,
Իսկ ի յայսմ տապանէ յորդաբուխ բան ի քաղցր քարոզէ
ծնեալ վերստին Հայաստան ազգ,
Եւ պատարագ Աստուծոյ կենդանւոյ և միայն ճշմարտին
մատուցանեն՝
Ցամաքեալք յախտից և մաքրեալք ի մեղաց:

Ուրա՛խ լեր, լեառն գերապանց՝ գերամբարձ տեղի,
Ամուրհացոց լերին նմանեալ՝ Աբրահամու կէնմանն տեղւոյ,
Ցորում զորդին իւր սիրելի պատարագէր ճշմարիտ սիրոյն,
Եւ զխոյն փոխանակ առնոյր սիրելւոյն,
Եւ զպարգևատուն առնէր աշխարհի:
Իսկ ի քե՛զ, հայրն հաւատոյ՝
Լուսաւորիչն հոգւոց սուրբն Գրիգորիոս,

Զծնունդս ոգւոյն կառաքինութեանց մասունս,
Եւ կժուժկալութիւն մարմնոյ հողանիւթ բնութեանն,
Եւ կմաքրութիւն մտացն՝ Աստուծոյ նուիրէր,
Եւ փոխանակ առնոյր ժողովուրդ մաքրեալ,
Եւ կրօնիւք ընտրեալ,
Եւ մշտնջենաւոր յարամնայութեամբ իբր պարտական
լինէր.
Հայցէր պահել անվրէպ վնոյն կնիք հաւատոյ՝
Ուղղափառ դաւանութեամբ յՈրդին միածին:

Ուրա՛խ լեր, լեառն սուրբ՝ սրբութեան կայան,
Սինէական շնորհիւն պատուեալ,
Այնմ, որ եղև տեղի տապանակին,
Որ պատուեալ ներքուստ և արտաքուստ ոսկւով.
Եւ ի նմա սափորն ոսկի և տախտակք կտակարանացն.
Յորոյ վերայ քերովբէքն փառաց հովանի ունէին:
Իսկ դու՝ առաւել վուարճացիր,
Որ եղէր տեղի ոսկիակապմ տապանակին՝
Զուտ և վուարթուն անձին սրբոյն Գրիգորի,
Որ պատեալ էր սրբութեամբ ի ներքուստ ոգւով,
Եւ արտաքուստ՝ մարմնով,
Եւ ի հինգ վգայութիւնս մարմնոյն,
Եւ նո՛յնքան վօրութիւն ոգւոյ,
Գրեալ էին անջնջելի աստուածային օրինացն պատգամք:
Եւ իբր սափոր ոսկի,
Լցեալ էր մանանայիւ աստուածային շնորհացն,
Եւ բուրվառ սրտին բուրէր վանուշութիւն խնկոց,
Որ և ի քեզ եղեալ՝ պահեցաւ նշխարք նուիրեալ
Սուրբ նահատակին,

Որով և պատուիս յապգաց և յապանց՝ եկեալ ի հեռուստ:
Զհող քո օրհնեալ՝ ի պէտս բժշկութեան ապգայնոցն,
Իբր ընծայս մատուցանեն:

Ուրա՛խ լեր, լեառն բարձրագոյն և գլուխ լերանց,
Զի որպէս մեծն Մովսէս ելեալ յԱրաբովթ Մովաբու՝ ի լեառն Նաբաւ,
Ցորում եցոյց նմա Աստուած վերկիրն պարգևաց,
Եւ անդ վախճանեալ պահեցաւ ի հրեշտակաց,
Նմանապէս և մերն Մովսէս՝
Նոր ժողովրդեանն առաջնորդ՝ քահանայապետն սուրբ Գրիգորիոս,
Ցորժամ անցոյց ընդ ծովն մեղաց,
Եւ հեղձուցիչ կռամոլութեանն,
Եւ բանակացոյց յերկոտասան առաքելական վտակսն՝
Զերծուցեալ ի հեթանոսական սնոտիասէր ուսմանցն,
Եւ իւրով չարչարանօքն ա՛ռ մեզ ժառանգութիւն ընդ սուրբս և երկիր պարգևաց յաշխարհն կենաց,
Եւ ինքն եալեալ ի քոյդ բարձրադիտակ բարձունս՝
Միշտ նկատէր մտօք վնոյն երկիր կենդանեաց,
Եւ աղօթէր ի ծերպս քարանձաւաց՝
Զպահպանութիւն իւրոյ ժողովրդեանն
Եւ վարժանաժառանգ լինելն յարկի արդարոցն:
Իսկ ինքն վախճանեալ՝
Հովիւն հսկող գտեալ ի հովուաց,
Եւ պահեալ ի հրեղէն վօրաց,
Եւ այժմ ի քէն բաշխէ մեզ դեղ ախտից մաքրութեան,
Եւ յոյս թողութեան մեղաց:

Ուրա՛խ լեր, լեառն Սեպուհ և ցնծա՛ բարձրացեալ փառօք,
Հանգոյն Սինայի,
Յորում անուն քաջութեան տեառն պատմի՝ ի Դաւթէ
ամրացեալ,
Եւ ի Սողոմոնէ հրաշապան տաճարաւն գեղեցկացեալ:
Իսկ դու՝ տեղի ժողովոյ հաւատացելոց բազմութեան՝
Քաջ անուամբ, որ ի քէն պատմի,
Յորում օրհորդն կարմանալի՝ սրբուհին Մանի,
Ի քոյդ քարայարկ այրի,
Երկնանման վարուք ի մարմնի,
Զանմարմնականացն ցուցանէր կհանդէս՝ միայնաւոր
ժուժկալութեամբ
Եւ քահանայական անբիծ մաքրափայլ աղօթիւք պարապէր՝
Զքոյդ լայնանիստ կայանս և կփոքրագոյն փապս քո վիմաց,
Յօրինէր խորան Խորհրդոյ և տաճար փառաց,
Անտանելւոյ բնութեանն չափաւոր բնութիւն,
Յորում մատուցեալ կանծախապէս պատարագն,
Խնդրէր իւրոյ ժողովրդեանս կՀօրն հաշտութիւն,
Եւ կՈրդւոյ գթութիւն,
Եւ կսուրբ Հոգւոյն՝ շնորհաբաշխութիւն,
Որ և ի սոյն տաճար լուսակիր դիմեալ՝ հաւատոյ մանկանց,
Նոյն յուսով հաստատեալ և հաւատով հայցեալ,
Գտանեն կնոյն պարգևս բարեաց՝ Հօրն միջնորդութեամբ:

Ուրա՛խ լեր, լեառն Սեպուհ՝ գովեստի տեղի,
Երգովք պանծալի,
Զի որպէս ի լեառն Գաբաւոնացւոց Սողոմոն արքայ
Ողջակէզ և պատարագս Աստուծոյ մատոյց,
Եւ խնդրեաց իմաստութիւն,

Որով և թագաւորութիւնն ուղղեսցէ,
Եւ կժողովուրդ տեառն հովուեսցէ,
Զոր էառ անհամեմատ մեծութեամբ,
Նոյն և ի քեզ՝ Արքայակերպն Գրիգորիոս,
Արքայութեան տեսողն և քարոզ,
Ի քեզ բարձրացեալ կբանական պատարագս,
Եւ կպտուղ շրթանց և մարմին մաքուր տեառն Աստուծոյ
ողջակիզեալ,
Եւ խնդրէր վերին իմաստութեանն ճշմարտին և
կատարելոյն լինել իմացող,
Ի հայրենի սեղանն բաժանման բանին՝
Ըստ աւետեաց խոստմանն,
Որ և եհաս անհամեմատ ճոխութեամբ,
Ելեալ ի հայելոյս և ժամանեալ ի դէմ յանդիմանն,
Եւ ի փոքրագունէս ի մեծ գիտութիւն,
Եւ այժմ հովուէ կժողովուրդ իւր՝
Ցիմաստս աստուածատուր քաղցրուսոյց
վարդապետութեամբն լուսաւորել:

Ուրա՛խ լեր, լեառն Սեպուհ,
Կատարեալ և բարերջանիկ Կարմեղոս լերինն համանման,
Ցորոյ գլուխ Եղիաս ելեալ աղօթէր,
Եւ հրով և երաժշտութեամբ տանջէր
Զյանցաւորս օրինացն Աստուծոյ,
Եւ ինքն Սարեփթացւոյ այրւոյն լիութիւն հացի և իւղոյ՝
Ի տանէն աղբերացուցանէր:
Իսկ ի քեզ՝
Հանգունատիպ Եղիայի մարգարէաշնորհ և առաքելապատիւ
հայրն մեր Գրիգորիոս,

Այն, որ հրով հոգւոյն վբանակս դիւացն հալածէր,
Եւ սաստիկ պատուհասիւ վյանցաւորս աստուածային
օրինացն խրատէր,
Եւ վօծումն աստուածային եղոյն և յերկնից իջեալ հացին՝
Ցեկեղեցիս Հայաստանեայց աղբերացուցանէր:
Եւ որպէս Եղիսէոս համանման վարդապետին իւրոյ
հրաշագործէր,
Եւ վբանակս երկնաւորացն առ ինքն իջեալ տեսանէր,
Որ և աղօթիւք բացեալ վաչս պատանեկին,
Եւ վլեառն հրեղէն՝ կառօք և հեծելօք լցեալ ցուցանէր,
Նմանապէս և սուրբն Գրիգորիոս՝ աղօթիւք շրջապատեաց
վքեվ,
Ո՛վ աստուածաբնակ լեառն,
Եւ վօրս անմարմին սրովբէից սրովբէն մարմնաւոր՝
Ի բարձրութենէն երկնից ի խորաձորս քո իջուցանէր,
Զոր առաքեաց Աստուած ի պատիւ նմա,
Գալ տեսանել վանտանելի ճգնութիւնն
Եւ պատմել հրաբուն վօրացն վտկար բնութեանն մարմնոյ՝
Զարիական ճգնութիւնն:
Տէրն ի լերինն ուսուցանէր վաշակերտսն,
Եւ ի լեառնն աղօթէր,
Եւ հաւատարիմ տեառն՝ վնոյն նմանութիւն յանձն իւր
ցուցանէր,
Յետ ամենայնի ի բարձրութիւն լերինն ելեալ,
Աղօթից և ճգնութեան պարապէր:

Ուրա՛խ լեր, լեառն գովեալ՝ գոհութեան տեղի,
Գողգոթայ մեծափառութեամբն փայլեալ, բարգաւաճեալ,

Յորում ելեալ տէրն բարձրանայր՝ յետ անօրէնութեանն
ամենայնի,
Խաչիւ կատարեալ կմերն փրկութիւն,
Եւ գոհանայր կՀօրէ,
Որ առաքեաց կմիածինն ի փրկութիւն,
Եւ Որդի սիրով կատարեց ի գագաթան տեղւոց Գողգոթայ:
Իսկ ի քեզ՝ պատուեալ լեառն և գովելի գագաթն,
Հայրն հրաշափառ ի Հօրէ կարդարեալ,
Եւ որդին հարակատ առաքեալ յՈրդւոյ,
Եւ հոգւով հանճարեղն ընտրեալ ի Հոգւոյ՝
Գրիգորիոս ամենագով վկայն,
Յետ կատարելոյ կամենայն չարչարանացն կհանդէս՝
Բակմաբան վարդապետութեամբն լուսաւորել կհիւսիսաբնակ
ազինս
Եւ հաստատելոյ յեկեղեցւոյ Հայաստանեայց,
Ելեալ ի քեզ՝ գոհանայր ի Հօրէ,
Օրհնելով կՈրդի և փառաւորել կամենասուրբ Հոգին,
Որ Նովաւ հրաշագործեաց կամենամեծս և կհրաշակերտս,
Եւ կանգնեաց կփրկական նշան խաչին ի նշանաւոր տեղիս,
Եւ ամրակուռ կինուք պարփակեաց կձորոց և կքարանց
բակմութիւն,
Որ և կէնն արքայական կսպանմանն գործի կենաց արքային
յօրինէր ի կենաց գործիս,
Եւ կայ այժմ ի պահեստի ի քեզ,
Ո՛վ բարեբախտ և ամենագով Սեպուհ՝ սրբութեան տեղի,
Եւ սրբասէր արանց սիրելի:

Ուրա՛խ լեր, լեառն Սեպուհ՝ շնորհընկալ և պարգևաշատ,
Բարեբաշխ լերինն Ձիթենեաց քատակեալ,

Զի որպէս անդ տէրն ի համբառնալն օրհնեաց վաշակերտսն,
Եւ ետ նոցա շնորհս քահանայապետութեան,
Եւ ինքն յիւր սեպհական փառսն վերացաւ,
Այսպէս և ի քեզ տիպն տիրական՝
Արժանապատիւ քահանայապետն Գրիգորիոս,
Իւրով ձեռօք յօրինեաց վփայտակերպ խորանն սուրբ՝
Ցանուն արեգականն արդարութեան արուսեկին
Եւ Կարապետին Յովհաննու,
Եւ ի նոյն տաճարի ետ վշնորհս քահանայապետութեան
որդւոյ իւրոյ Ռստակիսի,
Ցանձն առնլով նմա վբանաւոր հօտն,
Եւ ինքն միայն հրեշտակակրօն վարուց պարապէր:

Ուրա՛խ լեր, լեառն սուրբ՝ գեղապանծ լուսովն վուարճացեալ,
Եւ ցնծա՛ ի տիպ Սանիրա և Ահերմոնի,
Յորմէ ակունքն Յորդանանու բղխեն,
Յորում և տէրն մկրտեցաւ,
Եւ ետ մեզ վերստին ծնունդ և հոգևոր լուսաւորութիւն:
Իսկ ի քէն աղբերք երկու բղխեն՝
Ընդ այլ բազմաբուխ վտակս ջուրց.
Աղբիւրն լուսոյ և ջուրն բարեհամ:
Եւ որպէս ջուրն Սելովմայ՝
Ունելով մերկ յինքն վմաքուր մարմինն Եսայեայ սուրբ
մարգարէին,
Յորմէ լինէր բժշկութիւն ախտից,
Իսկ ի քէն բղխեալ աղբիւր ջրոյն,
Տարածեալ աղօթք սուրբ Լուսաւորչին շուրջանակի,
Եւ մերձ առ նմին հանգուցեալ ի բազմավաստակ
ճգնութեանցն,

Յորմէ վօրացեալ ջրոյն բնութիւնն՝
Շնորհեաց տեսութիւն կուրին,
Եւ այժմ Լուսոյ անուամբն վերաձայնի:
Եւ հանգոյն մեծին Մովսէսի,
Որ վդառնութիւն ջուրցն Մեռայի քաղցրացոյց խաչին
խորհրդով,
Ի նոյն նմանութիւն ի ձեռն սուրբ Լուսաւորչին՝ խաչակնիք
նշանաւ դրոշմեալ,
Միւս աղբերն յաղտաղտուկ բնութենէն բարեհամ և
ախորժելի փոխարկիւր,
Որ և նոյն անուամբն ձայնի:

Ուրա՛խ լեր, լեառն հրաշալի՝
Մարգարեական հոգւոյն ցանկալի,
Որ հայցեր վվայր քո ըղձալի.
Տէ՛ր, ո՞վ կացցէ ի խորանի քում,
Կամ ո՞ բնակեսցէ ի լեառն սուրբ քո:
Եւ առեալ հոգւոյն պատասխանի,
Որ և ի վերջին ժամանակիս տեսեալ եղև աչօք վգալի,
Յորում ելեալ սուրբն Գրիգորիոս՝ անբիծն վարուք,
Արդարն հոգւով,
Ճշմարտապատում և լուսափայլն բանիւ,
Աննենգն և սուրբն սրտիւ,
Որ ո՛չ հատոյց չար փոխանակ ընկերի իւրում.
Վասն որոյ ո՛չ նախատի ի մերձաւորաց,
Յամենայնի փառաւորեալն և երկիւղածաց տեառն
փառաւորչին,
Որ վարծաթ տեառն իւրոյ ո՛չ ծրարեալ թագոյց,
Այլ արկ ի սեղանաւորն:

Զայս և յոլովս քան զայս գործեալ,
Եւ անսասան ոտամբ ի քեզ կատարեալ,
Եւ քեզ մեզ տեղի ուխտից և խնդրուածոց պարգևեալ:

Ուրա՛խ լեր, այրդ լուսապայծառ՝
Քարայարկ և առաքինաբնակ տուն տենչալի,
Քան զթագաւորաբնակ ոսկեզօծ տաճարս զարմանալի,
Ի Բեդղեէմի խորհրդոյն ընտրեալ,
Յորում պարծանքն կուսից՝ մայրն մարմնացելոյ Բանին,
Ծնաւ մաքուր կուսութեամբ զանճառաբար ծնունդն Հօր,
Եւ հրաւիրեաց զդստերս Եւայի՝
Լինել կուսութեամբ ի մայր Քրիստոսի,
Զոր և տէրն աստուածային բանիւն ստուգեաց.
Որ արասցէ զկամս իմ՝
Նա՛ է մայր իմ, եղբայր և քոյր:
Ըստ որում և ի քեզ ծաղկեաց զխորհուրդն պայծառ,
Յայս յոյս հրաւիրեալն և վեհագոյն վիճակի հասեալն՝
Զտեալն մտօք,
Հեզն հոգւով,
Մաքուրն մարմնով՝ սուրբն Մանի,
Իբր զլոյս յարևմտից ցոլացեալ:
Բարձրագոյն բարեաց ցանկացողն, ընդ բազում լերամբք և ձորօք անցեալ,
Ի քեզ բարձրանայր,
Զքեզ յարկ ծածկութի և տուն հանգստեան իւր ընտրէր,
Եւ ինքն՝ զկամս Աստուծոյ հանգուցանելով,
Միշտ-զվերին հանգիստն դիտելով,
Եւ կատարմամբն՝ ի քեզ փոխէր հոգւով,
Առ որ ցանկացեալն էր:

Եւ կմարմինն պարկեշտ և պատկառելի՝
Ամփոփէր սուրբ քահանայապետն Գրիգորիոս,
Որ այժմ հաւատով դիմելոցս հանգիստ հայցէ հոգւոց և մարմնոց
Եւ յոյս թողութեան պարտաւորելոց:

Այլ, ո՜վ լեառն, ամենունակ բարութեամբ լցեալ,
Ճշմարիտ ճգնողին ճեմարան,
Հեկագոյն հօրն հանգստարան,
Երջանիկ անձինն օթևան,
Մաքուր ոտիցն կայարան,
Սուրբ ձեռինն տարածման տեղի,
Աշխատեալ վաստակաւորին աթոռ,
Երկնից դիտողին կառք,
Քրտնաջան մշակին անդաստան,
Առաքինութեան հասկիցն կալ,
Պարարտ ցորենոյն շտեմարան,
Պատուական ոսկւոյն ընդունակ,
Անգիւտ մարգարտին տեղի ծածկութի:
Վասն որոյ ի քե՛զ հաւաքին հաւատացելոց անձինք,
Լաւ համարեալ կմիօրեայ բնակելն ի քեզ,
Քան կհապարս յարկս թագաւորաց.
Ի խորաձորս քո՝ ձայնս աղօթից արձակեն,
Ի քարածերպս՝ քաւութիւն հանցանաց հայցեն,
Ցաղբիւրս՝ կաթիլս արտասուաց իջուցանեն,
Ի խորս անապատի խոստովանութեամբ դիմեն:
Եւ երանի՜ թէ ըստ արժանւոյն մատչէաք,
Կամ որպէս սիրեսն լինէաք,

Քանզի նախ պարտ էր ըստ ժողովրդեանն Իսրայէլի երեք
աւուրքք սրբիլ,
Եւ յամենայն մարմնական ախտից մաքրիլ,
Եւ ի կերակրոց անգամ անսուաղանալ,
Զի մի՛ կանպիտանութիւնս աւելորդացն ի քեզ բերէին,
Քանզի ո՛չ է պարտ կանուշահոտ քո վվայր
կպրացուցանել,
Զխնկանուէր քո քարինս աղտեղացուցանել,
Զանսուաղութեան տեղիդ արբեցութեամբ
ձանձրացուցանել,
Այլ նախ առ ստորոտով լերինդ մաքրիլ,
Եւ ապա ի քոյդ բարձրութիւն ելանել:
Բայց քանզի տկար է մարմնոյ բնութիւն,
Եւ սակաւ ոմանք են, որ իմանան հոգւով կպատիւ քո
գերագոյն,
Եւ բազումք այնք, որ մարմնով ըստ մարմնոյ խորհին.
Այլ սակայն գթած է հայրն մեր գորովագութ,
Եւ հայցէ ներումն ընդ սխալանաց,
Ընկա՛լ և դո՛ւ հիւրութեամբ
Եւ արձակեա՛ խաղաղութեամբ:

Ուրա՛խ լեր, գեղով գեղեցիկ երկիր ցանկալի՝
Դարանաղեաց գաւառ գովելի.
Լերամբք ծաղկաւէտ,
Ձորովք ջրաբուխ,
Եդեմական աղբերն Եփրատայ յորդառատ գետոյն ընդունակ,
Որ և ի քեզ հրաշս պատմի.
Կաթուածս ջրոյ յանձաւս քարի՝
Ի ժամանակս տօթաժամու ամառնային յեղանակին,

Յորում թանձրութիւնն ձեան բարձրայօն լերանցն սպառին,
Եւ սառնամանեաց պնդութիւն հալին:
Յայնմ ժամու կաթուածք ջրոյն դիվեալ ի վերայ միմեանց՝
քարացեալ պաղին,
Որ և յառաջին աւուրսն բակմօրեայ ճանապարհ՝
Ի պէտս թագաւորաց յաղագս առողջային և բժշկական
կօրութեանն տարեալ լինէր:
Եւ դարձեալ.
Յորժամ ամենայն ջրոց բնութիւն պնդեալ պաղի՝ ի
ձմեռնային յեղանակս,
Իսկ նա թուլացեալ ջերմանայ:
Այլև ի ծործորս քո լերանց՝ ի ներքոյ երկրի,
Աղբիւրս աղի դարանացեալ ունիս,
Եւ ի խորութենէն ի վեր ելեալ՝
Ի ջերմութենէ արեգական վխառնեալ ջուրսն առանց աղի
ծծէ հրոյն կօրութիւն,
Եւ յստակեալ պարկի աղն համեմիչ և անուշահոտ,
Որով և Դարան աղի կոչիս յայսմ ներգործութենէ,
Զոր ընծայես բակում գաւառաց:
Եւ ո՛չ այս միայն է քո գովութիւն կգալի
Եւ մարմնական իրի,
Եւ կամ սոքօք միայն կոչիս գովելի՝
Գաւառ և երկիր ցանկալի,
Այլ գովելի ես,
Զի գաւառ եղեր բնակութեան սրբոյն Գրիգորի,
Եւ երկիր ցանկալի,
Զի ցանկալին վերնոց ի քեզ շրջէր և ի քեզ եդեալ պահեցաւ,
Որ և յերիս տեղիս ի քեզ կապմեալ շինեցաւ շիրիմ
հանգստարանի,

Եւ սուրբ մարմնոյն նշխարաց տեղի,
Եւ տապան գերեզմանի:
Նա իսկ է փառքն քո պանծալի,
Բարձրագոյն լերանց քոց բարեբոյս ծաղկին,
Խորութեան ձորոց քոց աղբերաբուխ վտակն աղօթից,
Գեղեցկածաւալ գետն եդեմաբուխ,
Հոգևոր աղն՝ համեմիչ ոգւոց,
Ի տօթային և ի կիզող ժամու՝ բժշկական և զովացուցիչ ջուրն,
Ի դառն և ի կսկծաբեր ձմերունս՝ ջերմն և ճառագայթաւէտ հնչումն:
Ա՛յս է գեղեցկութիւնն քո գովելի
Եւ պսակն՝ որով զարդարիս,
Յոքունց գաւառաց գերագոյն գտեալ:

Ուրա՜խ լերուք, ազգք և ազինք Հայաստանեայց՝
Ի հսկայազօրն Հայկայ անուամբ հռչակեալք,
Որք ի մահաբեր և յանբերելի ցաւոց՝ հիւանդութեանց հոգւոց,
Ցարուեստական և քաջահմուտ բժշկի դեղոց ողջացայք,
Յանթառամ ծաղկանց կազմածոյ՝ քաղցրախօս խրատու վարդապետութեանցն փարատեցայք:
Որ քաւիչ քահանայապետին մաքուր մաղթանօք՝ ի մահու արգելայք:
Մովսէսաբար հայցմամբ աղօթիցն՝ ի մեղաց պարտեաց վերծայք:
Արեամբ և խնկով և Ահարոնիւ նորով՝ ընդ հօր հաշտեցայք,
Արեամբ չարչարանաց հեղման նահատակին Քրիստոսի՝ սրբոյն Գրիգորի,

Եւ գառինն Աստուծոյ մեղաց բարձողի,
Եւ խնկով աղօթիցն անուշահոտից,
Ծերունականաւ և ոսկեղէն բուրվառաւ և պարտաւորացն
ապատարարաւ:
Որք յամօթալի մերկութեանցն յարժանաւոր ձեռաց,
Փրկութեան հանդերձ վՔրիստոս վգեցայք,
Եւ վերստին երկնելով հոգւոց ծնողին՝
Նկար կերպարանի վՔրիստոս ընկալայք,
Ի վօրագլխէն հաւատոյ ի նահատակութիւն մարտի
սպառազինեցայք:

Ուրա՜խ լեր, եկեղեցի Հայաստանեայց,
Յամենիմաստ և հանճարեղ ճարտարապետէ նորոյ
Բեսէլիէլէ կազմեալ,
Յիմաստութեանն Հօր բանի հիմանն շինեալ,
Ի յամրութեան հաւատոյ վէմն կառուցեալ,
Վաստակօք և քրտամբք ճգնավգեաց հօրն հաւաքեալ,
Գերահրաշ բանի սրբոյն Գրիգորի լուսաւոր
վարդապետութեամբն ծնեալ,
Զօրագլխին հվօրի վինուորք յարդարեալք,
Ժրաջան մշակին տունկք արմատացեալք,
Զգայական գլխոյն անդամք յօրինեալ,
Բոլոր եկեղեցւոյ լրմամբ վարդարողին ձեռամբ՝
Ի հանդերձս ոսկեհուռս վարդարեալ և պաճուճեալ:

Ուրա՜խ լերուք, քահանայական գլուխք և պետք,
Եւ վերատեսուչք հօտին Քրիստոսի,
Որք վիճակի առաքելանման հօրն եղէք ժառանգորդ,

Եւ հոգևորական իշխանութեանցն աթոռոյ և իրաւանցն
վերադիտողք,
Ընտրեալ հօտին և գառանցն աւագանածին հովիւք
արածողք,
Աշխատաւոր և ժրաջան մշակին՝ կենդանի տնկոցն տածողք
և սննդագործողք,
Եւ ցանկոյ ամրութեանն պահապանք և խրամակարկատք,
Որք գեղեցկութեան հարսին եկեղեցւոյ էք վարդարիչ և
զգեցուցանողք,
Հրեշտակք հաշտութեան,
Քահանայապետք քաւութեան:

Եւ արդ,
Կամիմ աստանօր վերաժշտականացն բերել նմանութիւն
արուեստի,
Երբեմն զուրախականն հնչել նուագ,
Եւ տրամադրել զլսողսն ի զուարճական խնդութիւն,
Եւ երբեմն զողբերականն շարժել մատն,
Ցաղէտս և յողբս արտասուաց ածել,
Վասն որոյ և դարձեալ ասեմ.

Ողբա՛ աշխարհ և ազգ Հայաստանեայց,
Որ երբեմն համանման երկնի լուսապայծառ աստեղօք
լցեալ,
Այսօր նսեմացեալ կրկին խաւարաւ,
Մեղաց ասեմ և նեղչացն ամպովք ծածկեալ,
Որք յիմաստուն տնկագործէն իբրև զդրախտ փափկութեան
ծաղկավարդեցայք,
Այսօր իբր դաշտ ապականութեան տգեղացեալ՝

Տխրութեամբ կայք և անկարդեալ,
Զի սեպհական գաւառք հայրենի՝
Յօտարալեզու ազգաց տիրեցան,
Եւ գաւականք մեղաւորաց ի վիճակս արդարոց մտին,
Վասնզի արդարք կձեռս իւրեանց յանիրաւութեան գործս
ձգեցին:
Ի բազմամեայ և յերկար հիւանդութեանց առողջացայք,
Եւ այժմ ի դժնդակ հիւանդութեանց կայք ի տարակուսի՝
Անայցելու ի բժշկական դարմանաց:
Մինչդեռ թշնամիքն էաք՝
Հաշտեցաք ընդ Աստուծոյ քրիստոսանման
քահանայապետիւն,
Եւ այժմ սիրելիքս օտարացեալք՝
Ի գրկաց մօրն և գթութեանց հօրն բարերարի՝
Ըստ գրելոցն.
Օտա՛ր եղեն մեղաւորք ի մօրէ[2],
Զի խաբեցան յարգանդէ և խօսեցան սուտ:
Մինչդեռ յանցաւորքն էաք,
Ի մեղացն պարտեաց ազատեցաք՝ աստուածուսոյց
օրինադրին մաղթանօք,
Իսկ յապատութեանն պատուոյ ծառայք՝ վերստին ախտից
եղաք,
Եւ ընդ բիւր քանքարոյ պարտականութիւն դարձեալ
մատնեցաք:

Ողբացէ՛ք ի ծնողական գթոյ տարամերժեալ մանկունք,
Զի որբ մնացաք, և ո՛չ գոյ մեզ հայր,
Որ ծերունական առաքինութեանցն ալեօք ի գութ ածէ
վերկնաւոր հայրն,

Եւ կամ կանձն անպարտական ի մահ մատնէ՝ փոխանակ մահապարտ որդեաց,
Կամ կարիւնն իւր հեղու ի գին փրկութեան մերոյ,
Եւ կամ քրտամբք մարմնոյ լուանայ ի յախտիցն ներկեալ աղտոյ,
Եւ կամ կենմամբ կուարակին մեծի՝ արգելու կպատիժ մահու,
Եւ կամ խնկանուէր աղօթիւք քաւութիւն հայցէ՝ յանցանաց պարտեաց:

Ա՛կգ Հայաստանեայց,
Կրտսերագոյն մանուկ մերոյն Յակովբայ,
Եւ վերջածին ծնունդ յակգս և յակինս,
Որ ի լուսաւորիչ հօրէն ծաղկերանգ պատմուճանաւ կարդաւրեցայք,
Մինչ կի եղբարցն նախանձելի եղայք,
Այժմ կիա՞րդ գականաց չարաց կերակուր մատնեցայք,
Եւ պատմուճան կարդուն ձեր արիւնաներկ շաղախեալ եղև:
Եւ Յակովբ հայրն ծերունի չէ՛ ի միջի,
Որ կաղէտս ողբոցն յարմարէ՝ ասելով. Գական չար և անընդել:
Եւ գական չար, կոր և կամիս իմասցիս.
Եթէ կսպանողսն և կգերողսն մարմնոյ,
Եւ թէ կպատառողսն և կհերձուցանողսն հոգւոյ,
Զի երկոքումք կամք ի վտանգի:
Գրիգորիոս՝ երկնաւոր հօրն պատկեր և ծնողական գթոյն կերպարան,
Խօսեցաւ առ քո մեղուցեալ որդեակքս,
Որ կմաքուր և կանախտ ծննդեանն կգեստ մերկացաք,
Ասելով.

Որդեակք իմ, վորս դարձեալ վերստին երկնեմ,
Մինչև նկարեսցի Քրիստոս ի ձեվ,
Զի ո՛չ վոք ունիմք, որ գթով գորովոյ դարձեալ խրատեսցէ,
Եւ յապաշխարութեան երկունս ծնցի վերստին:
Ահա՛ ժամանակ մարտի է,
Գումար հանդիսի,
Եւ քո կավմեալ վինուորքս լքեալք և տարակուսեալք,
Զի ո՛չ գոյ մեվ վօրագլուխ քաջամարտիկ և բավմահանճար,
Որ գումարէ վվինուորսն ի մարտ ճակատուն:

Ողբա՛ եկեղեցի Հայաստանեայց՝ մայր բավմավաւակ,
Որ յանագան ժամու և ի տարաժամ հասակի
Ավգ մի ողջիւն հրաշիւք՝ հանգոյն Սառայի ծնար,
Եւ այժմ նմանեա՛ Հռաքելի
Եւ լա՛ց ի վերայ որդւոց քոց:
Հռաքել լայր վորդիս իւր՝ և ո՛չ կամէր մխիթարել,
Զի ո՛չ էին:
Եւ դո՛ւ լաց վմանկունս քո, վի ո՛չ են,
Որպէս և էինն:
Զի ի միոյ ծնօղէ բավմութիւն անթիւ վաւակաց ծնան,
Եւ այժմ ի բավմութեանց հարանց ո՛չ վոք ծնանին,
Եւ ծնելոցն ոչ ո՛ք դաստիարակէ վսնունդ օրինացն:
Ի հատէ հասկ վերաբուսար,
Եւ ի հասկէ շեղջ յօրինեցար,
Եւ ի միոյ շառաւիղէ տնկեալ որթ արմատացար,
Յոգնակի ուռովք աճեցեալ և տարածեալ՝
Լցեր վտիեվերս ի ծովէ մինչև ի ծով,
Եւ այժմ քակեցան քո ցանկք ամրութեան,

Եւ կթեն վքեվ անցաւորք ճանապարհաց՝ օտարք և
այլազգիք,
Զմարմնական բարեացն պտուղս:
Եւ վայգի քո բանաւոր ապականէ խով անտառի,
Եւ կինճ վայրենի արածի ի հոգևոր սերմանցն ծաղիկ,
Սատանայ և դևքն չարասէրք:
Ի միոյ հովուէ մեծ հօտ եղէր հովուապետին մեծի,
Եւ այժմ ի բազում հովուաց ցրուեալ ճապաղեցար՝
Մոլորականք և թափառեալք ի լերինս,
Գազանաբեկք և վիրաւորք ի գայլոց:
Ցարոտս վնասակարս և մահաբերս ճարակեալ,
Պակասեալք և անբնակ ի դալար վայրէ՝
Ի սուրբ գրոց վարդապետութենէ,
Ի հանգստարար ջրոյ անսնունդ,
Ի փարախոյ ժողովարանէ արտաքոյ,
Եւ ո՛չ գոյ քեզ հովիւ, որ կրկին գործեօք հովուէ,
Ունելով ի ձեռին ցուպ և գաւազան՝
Ցպով ընդ գազանսն մարտնչել,
Եւ գաւազանաւ վխաշինսն ուղղել:

Աստուածային խորան, եօթնաջահեան լուսոյն ընդունակ՝
Լուսավորիչ հօրն լուսածնունդ որդւովք.
Զիա՞րդ այժմ լուսատու ճրագունք քո նուազեալք
յիմաստութեանն ձիթոյ,
Զօրագլուխք մարտի քո անպէնք ի գիտութեանց օրինաց,
Բժիշկք կենաց քոց անհմուտք ի հանճարոյ,
Հովիւք հօտի քո հեշտասէրք և փառամօլք,
Մանկունք ուսման քո սրտմտողք և ընդդիմացեալք խրատու,
Եւ ո՛չ ախորժեն լսել վձայն թովչի ճարտարի,

Եւ ո՛չ ընդունին դեղ ի դեղատուէ իմաստնոյ[3].
Մանաւանդ թէ դեղատուք են կարօտ դեղոյ բժշկականի:
Եւ թէ ոք ուրեք կայն մատուցանէ՝ ատեն և թշնամանեն:

Եւ թէպէտ ըստ այսմ ամենայնի ողբոց ես արժանի,
Եւ կի կմարմնական ճոխութիւնս քո օտարք վտարեցին,
Եւ մանկունք ուխտի քո ի գերութիւն վարեցան,
Եւ կուարճալի կարդ քո կողոպտեցաւ,
Եւ անճառելի խորհուրդն գնոջ այսօր վաճառի,
Եւ երկնաւորն աշտիճան յերկրասիրացն յափշտակի,
Այլ ի մեծն և ի գլխաւորական բարիսն երանելի՛ ես,
Եւ յոյժ խնդալի,
Վասնզի ուղղափառ հաւատոյ լոյս ո՛չ նուաղեցաւ,
Ի բարի սերմանս ցորենոյն՝ որոմն ապականիչ ո՛չ
խառնեցաւ,
Զաղբիւր յստակ աւանդութեանցն քոց՝
Աղտաղտուկ ջուր օտարոտի ուսմանց ո՛չ պղտորեաց,
Ի ստուգութեան և ճշմարտութեան հացն քո կենդանական՝
Մեռելական խմոր և հերձուած քացախութեան չարութեանն
ո՛չ կանգեցաւ.
Յոսկի անբիծ հաւատոյն և յարծաթ լուսատեսիլ բանին՝
Պղինձ ժանտահոտ և կապար սնաթիւր ո՛չ գտաւ,
Եւ այսոքիկ խնդրուածովք մեծ նահատակին Քրիստոսի՝
Սրբոյն Գրիգորի,
Քե՛զ շնորհեցաւ,
Որ է գլուխ ամենայն բարեաց
Եւ հիմն կենաց յաւիտենականաց:

Վասն որոյ և դուք՝ քահանայապետք և գլուխք եկեղեցւոյ,
Ուրա՛խ լերուք ցնծութեամբ,

Եւ սոսկացէք երկիւղիւ և յոյժ դողութեամբ,
Զի որք գլուխ էք վերամբարձ և երկնահանգէտ,
Մի գուցէ կօրէն խոպից գետնաքարշ և մոխրաթաւալ լինիցիք,
Զերկրաւորս ևեթ խորհելով:
Եւ որք վիճակաց քաղաքաց և գաւառաց էք վերակացուք,
Մի՛ լինիցիք դէտք անկգոյշք՝ հեղգութեամբ և կամ ընդ քնով անկեալ,
Զի տեսանելով վեկեալ սուր պատուհասին Աստուծոյ
Եւ ո՛չ բողոքիցէք,
Եւ գտանիցիք արեան պարտականք մարդկան ի մահ մատնելոց:
Աթոռակալք արդար իրաւանց,
Մի՛ յուսայք յանիրաւութիւն և մի՛ ցանկայք յափշտակութեան:
Եւ որք վերկնաւորն ունիք մեծութիւն,
Մի՛ յօժարեսցին սիրտք ձեր մարմնական և ունայն մեծութեան:
Առաջնորդք երկնաւոր ճանապարհին,
Եւ արածողք Քրիստոսի հօտին, և մեծագին գառանց,
Զոր միածինն միայնոյ Հօր արեամբ և մահու ժառանգեաց,
Զհնգետասանամեայ չարչարանօք մեր Լուսաւորչին ստացեալ սեպհական ժողովուրդ,
Եւ ձեվ ձրի և անգին տուեալ ի ժառանգութիւն,
Մի՛ մոլորեցուցանէք ի լերինս և յանկոխ ճանապարհ,
Եւ մի՛ մատնէք գայլոց և գայլանաց,
Զոր հովիւն քաջ ի վերայ ուսոյ եբարձ և ի վեր տարաւ յերկինս,
Եւ ընդ անմոլարս խառնեաց թիւ:
Մի՛ լինիք նմանողք վարձկանացն ի մարմին սերմանողաց,
Եւ վհոգիս խաշանց բանաւորաց անտես առնողաց:

Մի՛ անխնամ, անգութ և անայցելու խոցելոցն վիրաւորաց լինիցիք,
Վասն որոյ Քրիստոս վխոցումն և վվէրս յանձն առնու:

Մի՛ վօրագլուխք անվարմաբարք և անագորոյնք՝ վփառացն անուն սիրելով,
Եւ վվորսն ի տագնապ տարակուսանաց մատնելով:

Նաւաստի՛ք եկեղեցւոյ նաւի,
Մի՛ ի կենցաղոյս ամբոխեալ ծովու տայք վնաւ եկեղեցւոյ յալեկոծութիւն,
Եւ ի խռովութիւն հողմոց,
Զի մի՛ ընկղմելով՝ վորս յանձն առէք հանել ի հեղձական ծովէ,
Կորուսանողք անձանց անմեղաց լինիցիք:

Որք աստուածային այգւոյն բանաւոր և երկնաւոր տնկոցն տնկագործ և պահապան կարգեցայք,
Եւ ի պտղոց այգւոյն ճաշակէք,
Եւ ակն ունիք դահեկանի վարձուն յամենաբարի տեառնէն,
Մի՛ տաք թոյլ գայանին
Ապականել վաստուածային այգին,
Զքաջաբեր ուռսն՝ յորթն ճշմարիտ արմատացեալ:
Մի՛ շարժէք վպատուար վգուշութեան պատուիրանացն Աստուծոյ,
Մի՛ կոխէք վկարգ կանոնաց աստուածահաստատ ուխտին հաւատոյ,
Մի՛ քակէք վցանկ ամրութեան հայրենադիր աւանդիցն,
Զի մի՛ հարցիք յօձէ չարութիւն և անբուժելի:

Բժիշկք բանաւորք և վերակացուք հոգւոց,
Որք կաստուածականն ունիք բժշկարան,
Մի՛ անգութ, անգորով առ խածեալսն ի կամակոր օձէն
Եւ ի բնական և յանբնական ցաւօք պաշարեալսն լինիցիք,
Մի՛ ողջացուցիչք չարեաց և ո՛չ փարատիչք ցաւոց:

Աստուածայինն Պաւղոս գրէ ձեզ և ամենայն հաւատացելոց խրատ
Եւ ասէ.
Յիշեցէ՛ք կառաջնորդս ձեր, որք խօսեցան ընդ ձեզ զբանն Աստուծոյ,
Եւ հայեցեալք յելս գնացից նոցա՝
Նմանո՛ղք եղերուք հաւատոցն:
Արդ, դուք յիշեցէք կառաջանորդն կենաց և փրկութեան ձերոյ,
Եւ կմտաւ ածէք կանտանելի չարչարանս աստուածագործ հօրն և հոգւոց լուսաւորչին,
Եւ ճգնաւոր նահատակին Քրիստոսի՝
Սրբոյն Գրիգորի,
Եւ մի՛ մոռանայք զկարմացուցիչն երկնաւոր զօրացն,
Զկիրս նորա հողանիւթ մարմնոյն:
Պատկառեցէ՛ք յայնպիսի սոսկալի նորա խստամբեր վարուցն,
Որ և այժմ կարեան քրտանցն և զցօղով սնուցեալ արտասուացն
Զսերմանեալ հաւատոցն անդաստանի պտուղ վայելէք:
Արդ, հայեցարո՛ւք յելս գնացից նորա,
Թէ որպէս եկաց յաշխարհի և կամ որպիսիք էին ելք գնացից նորա,
Զի ա՛յն է դուռն ոչխարաց հովուութեանն՝

Ընդ որ նա եմուտ:
Զարչարանօք ստացաւ իւր ժողովուրդ,
Քերանօք ոսկերաց մարմնոյն և կողիցն հոսման արեան,
Շինեաց վաղգս կայս եկեղեցի Աստուծոյ,
Որպէս և տէրն իւրով կողակայլակ արեամբն վաղգ և
կաշխարհ ամենայն:
Հրոյ տոչորմամբ խորովեցաւ ի վերայ իւրոց գեղեցիկ
գառանցն,
Անհնարին տանջանօք կայր ի կախաղանի,
Եւ աղօթէր վասն իւր հաւատացեալ հօտին:
Ի գուբ խաւարին և ի մէջ չարութեան օձից կայր վամս
երեքտասան,
Ցաղագս ի գուբ մեղացն և ի հարուածս օձին,
Եւ ի մէջ թիւնալի ախտից մեր ընկղմելոյն:

Ա՛յս է դուռն հոգևորական հովուութեանն.
Եւ որ ո՛չ մտանէ ընդ այս դուռն՝
Գող է և աւազակ:
Ա՛յս է օրինակ,
Որով սեպհական լինի ժառանգութիւնն,
Եւ ո՛չ ապգակցութիւն արեանն,
Որով տիրեն Քրիստոսի հօտին:
Ա՛յս են գինք գառանց Քրիստոսի,
Եւ ո՛չ բաղմութիւն արծաթոյ,
Զի խոտեսցին այնոքիկ,
Որք ընտրեալ են արծաթով:

Արդ, որ այսպէս եմուտ ընդ դուռն ոչխարաց,
Հայեցարուք և յելս գնացիցն և վարմացարուք,

Զի յետ ստանալոյն իւր ժողովուրդ,
Յետ ի քահանայապետականն բարձրանալոյ յաթոռ,
Հրաժարեալ յաշխարհէ՝ յանապատ վայրս և յանբնակս
հեռանայր,
Օտարանայր ի պատուոյ,
Փախստեան լինէր ի փառաց,
Աստուծոյ լինէր խօսակից,
Հրեշտակացն երգակցութեանց կցորդ,
Ընդ սրբասաց սրովբէսն սրբաբանող:

Արդ, նմանող եղերուք գթած հովուին,
Որպէս և նա՛ իւրում տեառն և Քրիստոսին,
Եւ կօրինակ ճգնող նահատակին՝ յանձինս ձեր ստացարուք:
Բերէ՛ք և ի ձերում հոգիսդ կհաւասարութիւն այնպիսի
հաւատոյ,
Զարչարեցարուք և դուք՝ ո՛չ ի բռնաւորաց,
Այլ ի կամաւոր բարուց:
Մի՛ ինչ խափան լիցի հովուելոյ վաստուածային հօտն՝
Ոչ սպառնալիք սրո՛յ,
Ոչ վի՛շտք մարմնոյ,
Ոչ արկա՛ծք փորձութեան,
Ոչ բերմունք ժամանակի:
Մանաւանդ կի ո՛չ գոյ այժմ չարչարանք բռնաւորաց,
Եւ ոչ պատերազմ հերձուածողաց,
Այլ փառք և պատիւ,
Զի հայրն հաւատոց կրեաց կչարչարանս և կվաստակս,
Եւ դուք վայելէք ի պտուղսն,
Եւ կարդարեալ շքեղացիք յաստուածային խորանն՝
Ի մէջ ժողովրդեանն յաստուածագործ քահանայութեան:

Այլ դո՛ւ, ո՞վ աստուածային և քահանայական գլուխ,
Վասնզի ընդ քեզ՝ իբրև ընդ ճշմարիտ կենդանւոյ խօսիմ,
Զաստուածային և զանմահական զգեցեալ զկեանս.
Ո՞վ քահանայապետ սուրբ՝
Վերնոյն և հրեշտակական քահանայութեանն կարգակից,
Յանմահ սեղանն մեր Յիսուս պատարագող,
Զառաքինութեանն քո պատարագ,
Որով և հայրն երկնաւոր զուարճանայ,
Ադամային բնութեանս ըստ պատկերի եղելոյ ճշմարիտ
կերպարանին ցուցող,
Անխառն և պարզ մաքրութեամբ:
Ամենայն սրբոցն ի բնութենէս ընտրելոց՝
Նկարագիր պատկերի գեղեցկութեան,
Բոլորիցն սքանչելի տեսութեամբ,
Ճոխութեան վարուց պայծառութեամբ,
Հրաշալի յերկուցն միաւորութեամբ,
Բարձրագոյն գործովք,
Եւ անհպելի նուաստ խորհրդովք,
Եւ հեզահոգի անբարկանալի բարուք,
Վշտակից սրտիւ,
Հեշտալուր և ախորժելի բանիւք,
Հրեշտակական դիմօք,
Ամենայն աշխարհի և ազգի,
Եւ հասակի և աստիճանի՝
Բարեգործական աղբիւր,
Կուսական կրօնից փեսաւէր փառաւոր,
Ամուսնութեան կարգաց խրատ ողջախոհութեան,
Յանապատական վարս թռուցիչ երկնահաս,
Քաղաքական վարուց օրինադիր ստուգութեան,

Պարկամիտ բարուց ուսուցիչ քաղցրաբան,
Տեսական իմաստից խորաքնին աստուածաբան,
Ճոխապատիւ իշխանաց սանձք արգելման,
Թշուառացեալ աղքատաց մխիթարիչ սփոփանաց,
Ծերունական ալեաց ցուպ հաստատուն,
Մանկական տիոց դաստիարակ վգաստութեան,
Աղքատութեամբ ցականելոց փարթամութիւն փառաց,
Ճոխութեամբ բարգաւաճից յաստուածայինսն ամբարող
գանձու,
Այրեաց վերակացու,
Որդւոց հայր հաւասարագութ,
Հիւանդաց բժիշկ՝ յերկոցունց ցաւոց,
Հոգեկանին և մարմնականին,
Առողջութեան պահապան՝ յուղղութեան հաւատոց
Եւ առաքինութեան գործոց,
Պահոց և աղօթից ժուժկալութեամբ՝ անմարմնոց և
անարեանց ակգակից,
Սաղմոսերգութեան հնչմամբ անշիջանելի,
Ըստ հրեղինացն հոգւոց,
Արթնական տքնութեամբ քաջապինդ և անպարտելի,
Ըստ հոգեղէն վուարթնոցն:

Ո՛վ աստուածամերձ և աստուածակգեաց անձն,
Հայեսցիս գթութեամբ և սիրով յակգս և յեկեղեցիս,
Զոր դու ընծայեցեր Աստուծոյ,
Որք քո ճգնութեամբդ տուան Աստուծոյ մրցանակ մարտի,
Եւ հաղթանակ նահատակութեան.
Եւ հայեսցես վերկնաւորն խաղաղութիւն,

Եւ ի փորձական կենցաղոյս ծովու վանդորրութիւն,
Եւ յընթացս բարեաց ճանապարհին վուղղութիւն:

Այլ, ո՞վ քաղցրութեանն և գթութեանն,
Եւ աստուածային բարերարութեանն երանական պատկեր,
Սուրբ հա՛յր հոգւոց.
Հայեա՛ց և յիս՝
Ցոր-որմելի և ի թշուառացեալս ոգւով,
Ի քո բարերարութենէ ողորմութեան գտողս,
Եւ անարժանութեամբ կորուսանողս,
Ի քահանայութեանն կարգ ամօթոյ վգեցող՝
Եւ ո՛չ արդարութեան գործոց,
Ի բանիս սպասաւորութիւն բազմաց քանքարաց ծածկողս,
Եւ ո՛չ շահեցող,
Ի գործ տնտեսութեանս ընչից տեառն իմոյ վատնողս՝
Անիրաւութեամբ,
Եւ ո՛չ հաւատարմութեամբ բաշխող:
Եւ վի մաշեցան ունայնութեամբ կեանք իմ,
Եւ ո՛չ կարացի գործել,
Եւ եթէ այդր եկից մուրացայց,
Ո՞վ ինձ ողորմեսցի՝ կամաւ ի բարեաց վրկելոյս:
Այլ միայն է իմ յոյս և տառապելոյս փրկութեան հնար,
Առ քո ողորմութիւնդ վստահութիւն,
Որով և վայս ընծայ բանեղէն պատարագաց՝
Հայրաբար գթով ընկալցիս:
Եթէ իցէ ինչ արժանի յեկեղեցի քո ընդունելոյ՝
Քո՛ են պարգևք,
Եւ ի քոյոցն քե՛զ ընծայեցաւ,
Եւ թէ ոչ՝

Թողութիւն և ընդ այլոց հոլովից սխալանանցն
Եւ այսմ համարձակութիւն եղիցի ի յօժարութենէ և ի
փափագմանէ բռնադատելոյս:
Այլ և կիմ սակաւ մնացեալ աւուրս կենաց
Արժանի արասցես յեկեղեցւոյ քո գործ սպասաւորական
ծառայութեան վճարել,
Զի և ես ողորմութիւն գտից և վարձ՝
Ընդ քո կենդանի տնկոցն մշակութեան վաստակոց,
Տեսանել զքեզ ընդ Քրիստոսին քում յանվուգական ի փառսն,
Զի որում չարչարանացն հաղորդեցար՝
Եւ յանճառելի փառսն ընդ նմին ճոխասցիս,
Զի և ե՛ս արժանի եղեց ընդ քո եկեղեցւոյ սրբակրօն
մանկունսն՝
Փառաւորել զամենասուրբ զԵրրորդութիւնն՝
ԶՀայր և զՈրդի և զամենասուրբ Հոգին,
Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից,
Ամէն:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՆՇԽԱՐԱՅ ՍՐԲՈՅՆ ՆԵՐՍԻՍԻ[1]

Յորդորական ձայնիւ ցնծութեան
Աւետիս բերկրանաց և բարեաց մատուցանեմք քեզ՝
Հայաստանեայց սուրբ եկեղեցի,
Զի յետ թանձրամած ամպոյն ծածկութեան՝
Քաղցրագոյն ծագեաց քեզ լոյս,
Յանմուտն արևուն անստուեր լուսոյն,
Եւ փարատեաց տխրատեսակ խաւար տրտմութեանն:
Վասն որոյ ձայնեմք ձայն ախորժելի.
Արի՛, որ ննջեսդ և կանգնեա՛ց ի մեռելոց,
Զի լուսատու եղև քեզ Քրիստոս:
Բա՛ց վաչսդ քո և տես զգեղեկցութիւն լուսոյն՝
Շուրջանակի զքև ծագելոյ:
Ժողովեա՛ զմանկունս քո գրկօք մայրենի՝
Ի գութ հայրական անդրէն դարձելոյ,
Զի այսօր,

Երիցս երջանիկ հայրն մեր հոգևոր՝
Բարեպարդ հարանց նորոգափայլ ծաղիկն և որդին լուսոյ
Սո՛ւրբն Ներսէս,
Հաշտ ակամբ և կամօք,
Եւ վուարթարար դիմօք՝ քե՛զ երևեցաւ:
Ուրախական նուագ ներբողեան՝
Հոգւոյ քնարիս մատամբք յօրինեալ,
Նուիրե՛մք քեզ, սո՛ւրբ եկեղեցի,
Զի յետ տրտմական քոց տառապանաց՝
Ուրախութեան հնչեաց քեզ հրաւէր.
Ամենակարող բազուկն հզօր,
Զեռն ետ քեզ և յարոյց՝
Ո՛չ իջանել յապականութիւն:
Լուա՛ւ քեզ տէր և ողորմեցա՛ւ,
Եւ զգայական սուգն տրտմութեան,
Զոր ունէիր զրկեալդ ի լուսաւորիչ հարցն բարեպարդութենէ,
Դարձո՛յց վերստին յուրախութիւն,
Զերծ ի քէն զքուրձն նախատանաց,
Եւ զերկիւղն մահու դառնագոյն մեղացն՝
Որ անգիտութեամբ,
Եւ զգեցոյց քեզ հանդերձ փառաց և ուրախութեան
պատմուճան:
Զի այսօր եկն առ քեզ հայրն գորովագութ,
Որ ծաղկերանգ պատմուճանաւ զարդարէր զքեզ,
Որդիական քո կոչմանդ զգօնութեան խրատն,
Նորապուարճ քո տնկոց ամրութեան ցանկն,
Հոգեհարուստ քո գանձուց անվանելի պարիսպն՝
Սուրբն Ներսէս,
Սահմանադիրն և կարգաւորիչ քո բարեպարդութեանդ,

Ուրախացուցիչ տեսլեամբ հայեցաւ քեզ:
Հրճուանք հոգևոր և երանաւէտ բարեաց լրութիւն,
Հայրապետական աթոռոյդ և աստուածապարգև շնորհիւ
աթոռակալիդ,
Անժամանակին Յիսուսի անսկիզբն քահանայապետութեանն
անուանակրի,
Առաքելական աշտիճանի փառաց փոխանորդի,
Արժանաժառանգ սուրբ լուսաւորչին Գրիգորի,
Վիճակեալ հօտին տեղապահ:
Զի նորաբողբոջ շառաւիղօք ծաղկեալ՝
Դալարեցաւ գաւառն գեղեցկութեան՝
Հեզ և խոնարհ քահանայութիւն
Սրբոյն Գրիգորի,
Եւ տուաւ գաւազանն ուղղութեան
Քրիստոսանման գթով դիտապետութիւն
Սուրբ հեղինակին:
Եւ ունիս զգաւազանն յուսոյ,
Որով յեցեալ մնաս ի հաստատութիւն,
Ակն կալեալ քո պայծառ բարձրութեան և լաւագոյն
փրկութեանն:
Զի այսօր սեփհական խնամածուն և հովիւն արթուն՝
Ի քեզ նայեցաւ,
Որ հովուէրն վհատ Քրիստոսի ի վայրի դալարուոջ՝
Քաղցրախօս վարդապետութեամբ գաւազանին ուղղիչն,
Ցասմնական ցպով սաստկութեան հանդիմանիչն,
Գեղեցիկ քահանայութեանն գաւազանաւ՝ տանն տէրունի
կարդարիչն:
Սուրբն Ներսէս՝
Սիւն լուսոյ և խարիսխն անշարժելի հաւատոյ,

Ամենառատ բարեաց ճոխութիւն
Եւ ամնագիւտ գանձուց փարթամութիւն շնորհեցաւ այսօր՝
Հայաստանեայց արքայական աթոռոյդ.
Զի յաջողակ աջոյն Յիսուսի եղև քեզ կօրութիւն.
Եւ կօրութեամբ բակկին բարձրելոյ թագաւորական փառաց
քոց բարձրութիւն.
Եւ ի տեառնէ տուաւ թագաժառանգ կարմիդ Արծրունեաց
յաղթութիւն:
Զի թէպէտ դասիւ վերջին՝ ըստ ժամանակի,
Այլ կօրութեամբ և պատուով առաջին՝ ըստ հաստատութեան
հաւատոյ.
Արշակունեաց թագին թագընկալ
Եւ Բագրատունեաց փառացն փոխանորդ,
Ծնունդ ազնուական տոհմին Արծրունեաց,
Ամենակալ արքային Յիսուսի անեղական և աննման
փառացն պատկեր.
Եւ կերպարան եղական[2]:
Այսօր ծագեց նշան անծերանալի պատուոյ,
Եւ մշտանորոգ ծաղկով պայծառութիւն՝
Արքայական վիճակեալ քո գաւականիդ:
Թագաւորաց ամենայարդար յօրինիչն օրինօք,
Եւ հայրն հոգակգեց սուրբն Ներսէս,
Հեկահայեաց դիմօք հայեցաւ ի ժամանակս քոյոյ
թագաւորութեանդ.
Ոչ յիշել կառաջին անհնականդութեանն կպարտիս,
Այլ ժամանեաց յօգնութիւն տկարացելոյ ակգիս,
Շնորհաբաշխ աջովն պահպանիչ,
Եւ նուիրական աղօթիւքն բակմադիմի հիւանդութեանցն
ապաքինիչ.

Հլու և հպատակ որդւոցդ օրինապահ՝
Քահանայական հայցմամբն կօրացուցիչ:

Նորոգեցարո՛ւք առ իս կղկիք,
Որք ի հեթանոսաց եկեղեցիք:
Բարձրն Եսայիաս ձեվ աւետարանէ,
Որք յաղտաղտուկ մեղացն և ի ժանտահոտ տղմասէր
վարուցն ի վեր ամբարձայք,
Եւ յԱստուած խարսխեալ ամրացայք՝
Յուսով գեղեցիկ աւետարանչացն,
Որսացեալք ուռկանաւ բանին,
Մանաւանդ հիւսիսաբնակ ազգ Հայաստանեայց,
Առաքելանման հօրն մերոյ,
Գրիգորի լուսաւորչին սրբոյ
Բազմալոյս բանին ծնունդք և որդիացեալք:
Զե՛կ այսօր աւետարանէ հրամաքուրն լեկու և սրովբէատես
մարգարէն
Նորոգիլ դարձեալ վերստին,
Զի կոր Պաւղոսն տնկեաց,
Ապողոս ջուր ետ և Աստուած աճեցոյց,
Դարձեալ թառամեցոյց հողմն հիւսիսոյ:
Տնկեաց կնորակուարճս կայս դրախտ՝ ի կենդանի տնկոց,
Գրիգորիոս մշակն աշխատասէր,
Ջուր ետուն յորդաբուխ վտակաւ բանին որդիքն համանման,
Աճեցոյց անկարօտն կերակրոյ և կերակրեալն ի բարեաց
պտղոյ
Ստեղծիչն բնութեանս:

Այլ դարձեալ թառամեցոյց պատուիրանացն
անհնապանդութիւն.
Քակեցաւ ցանկն ամրութեան,
Եւ եղև դրախտ այս յապականութիւն,
Եւ առ ի չգոյէ իշխանութեան ցանկոյն՝
Կթեն վսա անցաւորք ճանապարհաց՝
Որդիքն Իսմայէլի և ծնունդքն Հագարու,
Զմարմնական պտուղ,
Եւ բանսարկուին վբարեաց մասունս իւրովք իշխանօք:
Եհա՛ս ժամանակ գթալոյ և ողորմելոյ տեառն,
Յառնել յերկայնամտութենէ և յաթոռոյ փառաց իւրոց՝
Վայրանկելոցս և գերելոցս ի ձեռնտուութիւն,
Ո՛չ եօթանասնամեայ ըստ Հրէիցն,
Այլ վամս ութհարիւր քսան և չորս՝
Բառնալոյ թագաւորութեան ի տանէն Արշակունեաց,
Եւ դադարումն քահանայապետութեանն ի վարմից սրբոյն
Գրիգորի,
Ցորոյ վերայ ողբս առեալ Մովսէսի.

Ողբամ վքեզ Հայաստանեայց աշխարհ,
Զի բարձաւ թագաւոր և քահանայ,
Խորհրդական և ուսուցիչ.
Վրդովեցաւ խաղաղութիւն,
Ամրացաւ անկարգութիւն:
Ողբամ վքեզ Հայաստանեայց սուրբ եկեղեցի,
Ի քաջաց վրկեալ հովուէ և հովուակցէ.
Ոչ ևս տեսանեմ վքո բանաւոր հօտդ ի վայրի դալարուոջ,
Եւ ոչ ի փարախ հաւաքեալ՝
Զգուշանալով ի գայլուց,

Այլ ցրուեալ անապատացար ի գահաւիժութեանց[3],
Զոր և Դաւիթ ասէ.
Քակեցեր զցանկ նորա,
Եւ կթեն զնա անցաւորք ճանապարհաց[4]:

Յայսոսիկ դառնութեան աղետս նայեցեալ ամենագութն,
Եւ դարձաւ ի բարկութենէ սրտմտութեան իւրոյ,
Հայեցեալ յերկնից ետես և այց արար այգւոյս այսմիկ,
Զոր տնկեաց Աստուած Հայր աջովն իւրով Յիսուսիւ,
Ի ձեռն ժրաջան մշակին և գործասէր վաստակաւորին,
Բազմաչարչար նահատակին իւրոյ՝
Գրիգորի մերոյ լուսաւորչին:
Եւ զոր ի բարկութեան ժամուն և յանպտղաբերութեան,
Պատուեր ետ ամպոց իւրոց,
Զի մի տեղասցին ի սմա,
Այժմ ողորմութեամբ և գթութեամբ երևեցոյց մեզ ի
յորդառատ ջրոյ,
Կենդանի վականակիտ վտակն քաղցրահամ՝ զհայրապետն,
Զսուրբն Ներսէս՝ զպտուարթարար ցօղն բարեպաշտութեան
բուսոյն,
և զանպատմելի ցնծութիւնն եկեղեցւոյ սրբոյ,
սա այսօր Հայաստանեայց եկեղեցոյ եհաս յօգնութիւն:
Սուրբն Ներսէս՝ խոպանացեալ այգւոյն դարմանիչ,
գոսացեալ տնկոցն տածօղ,
թառամեալ ծաղկանց արբուցանօղ ցողոյ:
Սուրբն Ներսէս՝ գերեալ և նեղեալ ազգիս գերեդարձ,
մոլորեալ հօտիս խնդրօղ,
ծովածուփ նաւիս ղեկավար:

Սուրբն Ներսէս՝ նսեմացեալ կարմիս լուսատու,
հիւանդացեալ անդամոցս բժիշկ,
անայցելու ցեղիս խնամածու:
Սուրբն Ներսէս՝ հոգևոր շինուածոյս խարիսխ,
թիւրաշարժ կառացս ուղղիչ կառավար,
անպահապան քաղաքի եկեղեցւոյ կգուշացուցիչ դէտ:
Սուրբն Ներսէս՝ հովուաց տգիտաց խրատիչ,
անխրատ աշակերտաց վարդապետ քաղցրուսոյց,
ցրուեալ և վարատեալ անդամոց գովելի գլուխ:
Սուրբն Ներսէս՝ քահանայական գաւազանին յարադալար ծաղիկ,
արքայական ճոխութեանն կգօնացուցիչ բանիւ,
սանձ իշխանական կօրուն մարտակից և կօրավիգն:
Սուրբն Ներսէս՝ ամենագով նախնեացն սրբոյ գովելի կաւակն,
լուսաւորիչ հարցն հոգելից շնորհավարդ որդին,
յանձրևածին ամպոյն հայրենի արբուցանօղ ցօղն քաղցրութեան:
Սուրբն Ներսէս՝ արեգակնանման մեր Լուսաւորչին ճառագայթաւէտ նշոյլք լուսոյ,
առաքինասէր հովուին հսկողի սեփհական ժառանգն,
հայրենի բազմոստեան տնկոյն ծաղկաւէտ ճիռն օրհնութեան և քաղցրաբաժակ:
Սուրբն Ներսէս՝ Ցուսկանն սրբոյ յարաժամ յուսոյն և յորդառատ պաղատանացն պտուղ,
աղօթանման հայցմանն և խնդրուածոցն պարգև,
հրեշտակատես երևմանն աւետաւոր խոստումն:
Սուրբն Ներսէս՝ ըստ մարմնոյ ազնուականութեան ի քաջատոհմիկ ազգէն Պահլաւունի,

ըստ հոգւոյն բարեվարդութեան՝ գերաշխարհիկ և
երկնանման,
ըստ հասակին բարեձևութեան՝ շնորհաշուք և
կարմանալի,
Զորոյ այսօր անպատմելի ցնծութեամբ պատմեմ ձեզ
Զգիւտ գանձին ծածկելոյ յագարակի,
Եւ դուք վաճառելով վինչս անցաւորիս՝
Գնեցէք և վայս փարթամութիւն գանձու՝ արտասուալի
պաղատանօք:

Բայց քննելի է և արտասուագոչ ձայնիւ պատմել վայս, թէ վասն է՞ր անյայտացեալ գերեվման սրբոյն Ներսէսի վայս-քան ժամանակս ամաց, վի յայտնապէս ուսանիմք ի պատ-մութենէն, թէ ինքն թագաւորն և իշխանքն տարեալ թաղե-ցին ի Թիլն աւան ի մեծ եկեղեցւոջն, և կացեալ սիւն լուսոյ ի վերայ գերեվմանին վաւուրս քառասուն, և բազումք գտա-նէին վբժշկութիւն ի շնորհս գերեվմանի նորա: Եւ յայսմ պատճառի իմանամք ի պատմութենէ, քանվի Հերակլ արքայն յունաց՝ յետ ութսուն ամի թուականին Հայոց ելանէ ի պատերազմ ընդ Խոսրով արքայն Պարսից և սպանանէ վնա: Եւ յետ ութ ամի այսմ լինելոյ՝ Աբդուահիմ քեռորդին Մահմետի՝ ելանէ ութևտասն հազարաւ ի Հայս, խնդրել հարկս և կոտորել զվօրս քրիստոնէիցն, որ ի Տարաւն գա-ւառի: Եւ անցանէր ի Հարք և ի Բասեն, և Վիրք և ի Զա-ւախս և ի Վանանդ, և առեալ հարկս՝ դառնայ ի Տաճկաս-տան: Ի սոյն ամի քակին երեք մեծամեծ եկեղեցիքն, որ հիմնարկեալ էին ի սրբոյն Գրիգորէ: Եկեղեցին, որ Ցաշ-տից վանսն, և որ յանուն սուրբ Կարապետին, որ Ցիննակ-նեանսն, և Կաթողիկէն, որ ի Թիլն: Եւ ի փոփոխմանէ շի-նուածոյն եկեղեցոյն այլ և ի սրով սպառելոյ ծանօթից

սպասաւորացն՝ ի բաղում հինահարութեանց այլապգեացն,
անյայտացաւ գերեվման սրբոյն, որ և այժմ շնորհօքն Աստուծոյ յայտնեցաւ ի ժամանակս վերջին,
Ցորում էին ի ծննդենէն Քրիստոսի ամք հազար երկերիւր եւթանասուն և հինգ,
և ի սրբոյն Գրիգորէ իննհարեւր վաթսուն և ութ ամ,
և ի մահուանէ սրբոյն Ներսէսի՝ ութհարեւր եւթանասուն և երկու ամ.
և թուականին Հայոց,
որ յաւուրս Մովսէսի Հայոց կաթողիկոսի եդաւ ի պատճառս պատճենի մերոյ տումարիս՝
եւթնհարեւր քսան և մի,
ի հայրապետութեանն Հայոց տեառն Յակովբայ հոգեշնորհ վարդապետի,
ի թագաւորութեանն Հայոց Լևոնի,
որուոյ Հեթմոյ և թոռին քաջին Լևոնի,
որդւոյ Ստեփանեայ, որդւոյ Լևոնի,
որդւոյ Ռուբենի մեծի իշխանին,
որ էր ի վօրացն Բագրատունեաց,
յապգէ նորին և ի տանէ և ի տոհմէ Արծրունեաց,
որ և մեր պսակաւորն Լևոն վերկուցն ունի թագաժառանգ ապգաց վապգականութիւն[5],
ի յարքեպիսկոպոսութեան մայրաքաղաքին Եվնկայ
և գաւառիս Եկեղեաց տեառն Սարգսի,
յորում տունկ քաջապուարճ երևեալ ի վիճակիս յայս,
որ է տեղի չարչարանաց և նահատակութեան՝
Լուսաւորչին մերոյ սրբոյն Գրիգորի,
պատուեալ յԱստուծոյ,
մեծարեալ յապգաց և յապանց և ի թագաւորաց մեծաց,

բարենշան շառաւիղ մերում ժամանակիս
և սկիզբն նորոգման եկեղեցւոյ, պայծառութեան,
որ և շինեաց կհրաշագեղ խորանն Աստուծոյ՝
կգեղեցկայարմարն եկեղեցի,
որ յանուն փրկչին մերոյ և տեառն Յիսուսի.
բարեսէր և աստուածապարգև կաւակաւն Յովհաննիսիւ:
Վասն որոյ և այս նշան ակնկալութեան յուսոյ փրկութեան Հայաստանեայց
յաւուրս սոցա երևեցաւ,
զոր և պատմեմ ձեզ հաւատացեալ հօտիդ Քրիստոսի,
զյայտնութիւն նշխարաց սուրբ և երջանիկ հայրապետին Հայոց՝
տեառն Ներսէսի,
որ է որդի որդւոյ Յուսկանն,
որդւոյ Վրթանեսի,
որդւոյ մեծին Գրիգորի՝ Հայոց Լուսաւորչի:
Եւ է օրինակ երևմանն այսպէս:
Ի Թիլն աւան յեկեղեցւոջն, որ յանուն սուրբ հայրապետացն. էր անդ սարկաւագ մի ի գործ սպասաւորութեան վանիցն, հեզ և հանդարտ վարուք, Պատուական կոչեցեալ անուն. թէ ըստ պատահման և թէ ըստ յուսոյ ի ծնօղացն եղեալ. այլ ճշմարտապէս ըստ յուսոյ ի վերայ նորա կատարեցաւ. զի զայս մեծագոյն պատիւ ի տեառնէ ընկալաւ նմա, յայտնել զնշխարս փառաւորեալ սրբոյն Ներսէսի: Զոր և պատմեաց այսպէս զտեսիլն առաջին, զոր ետես յամսեանն յունուարի ի քսան և վեց. ի հինգշաբաթւոջ գիշեր:

— Տեսանէի, ասէ. այր մի ծերունի հանդերձ ծիրանի զգեցեալ. ի կերպարանս քահանայական ձևոյ, նստեալ ի ջորւոջ փառաւորապէս, և մտանէր ի դուռն վանիցն, և ասէ

ցիս.— Եղբա՛յր, ո՞ր է հանգուցեալ եկեղեցին, որ աստ կա:— Եւ կալեալ իմ կսանձս ջորւոյն, իջուցի կնա և առաջնորդեցի մինչև ի հանգուցեալ եկեղեցին: Եւ եկեալ ասէ.— Ա՛ստ է գերեզման սրբոյն Ներսէսի:— Եւ գաւազանաւն, զոր ի ձեռինն ունէր, նշանակէր զտեղին ի կողմն գլխոյն: Եւ ի հարկանել գաւազանին՝ լոյս հրախառն փայլատակէր ի տեղւոյն: Եւ ասէ.— Տեղիս, զոր ցուցի, ստուգապէ՛ս է գերեզման սրբոյն Ներսէսի, յորում կան նշխարք սուրբ ոսկերաց նորա: Ասասջիր առաջնորդի տեղւոյդ, և եկեալ հանջիք: Եւ չէ խորագոյն, այլ սակաւ հողով ծածկեալ: Եւ այս չորս անգամ ասացին ինձ գալ և ցուցանել զտեղիս, և ես պատճառէի զծերութիւն: Եւ ետուն զջորիս զայս, զի բարձցէ զծերութիւնս իմ, և ես եկեալ ցուցի: Եւ իբրև զարթեայ ի քնոյ, ի զարմացման եղեալ կայի ահիւ պակուցեալ, և պատմեցի զտեսիլն եղբարցն, որ ի վանսն և ասեն.— Աղօթեա՛, զի երկրորդեսցի տեսիլդ:— Եւ ի միում գիշերի, յորում ուրբաթ լուսանայր, տեսանէի երիտասարդ մի ի ձև զինուորի և հանդերձն ի գոյն ծիրանւոյ, այն ինչ բոլորեալ զծնոտին թխագոյն մորուացն շուրջանակի, և ասէ ցիս.— Հանի՞ք զնշխար սրբոյն Ներսիսի:— Եւ ասեմ՝ Ոչ, վասնզի չհաւատան ինձ: Եւ նորա, իբրև զնիք մատանւոյ ունելով ի ձեռինն, դրոշմէր ի վերայ տեղւոյն, և ասէ.— Ա՛ստ է գերեզմանն, յորում կան նշխարք սրբոյն Ներսիսի. փութապէս հանջիք զնա:— Եւ իմ զարթուցեալ պատմեցի զտեսիլն: Եւ ասեն եղբարքն.— Աղօթեա՛, զի երրորդ անգամ երևսցի քեզ տեսիլն, զի անհնարին է այդ, թէ կարասցուք գտնել զգերեզման սրբոյն:— Եւ ապա, ի միւս գիշերի երևեցաւ ինձ նոյն երիտասարդ և ասէ իբրև սաստիւ.— Ընդէ՞ր յապաղէք և ո՛չ հանէք զնշխարս սրբոյն Ներսիսի:— Եւ ես զարթուցեալ

պատմեցի և կնոյն տեսիլ: Եւ ասեն ցիս.— Մի անա՛մ այլ երևեսցի քեզ՝ և ճշմարիտ է բանդ:— Ապա, ի միւս գիշերի, յորում միաշաբաթ լուսանայր, երևեալ նոյն երիտասարդ, և ասէ.— Ընդէ՞ր ոչ փութայք հանել կփառաւորեալ նշխարս սրբոյն Ներսիսի, կի ահա այս երեք անգամ եկեալ ցուցի քեզ: Եւ հասեալ է ժամանակ յայտնելոյ սրբոյն, որ մինչև ցայսօր եկաց անյայտ և կոխան ոտից, վասն ապգին իւրոյ կոխան լինելոյ ի բակում ապգաց: Այլ այժմ փութասջիք հանել, կի կճնճղուկ, որքան ի ձեռին ունիս՝ կգուշացիր պահել, ապա թէ կերծեալ թռիցէ՝ դժուարին է ըմբռնել, որ է այս ինչ տեսութիւն բանին. Թէ անձն սուրբ, որ իբրև կճնճղուկ ապրեալ եղև յորոգայթից որսողին, հրեշտակակրօն վարուք ի մարմնի ապատ մնացեալ ի հոգեկան և ի մարմնական ախտից, և կայսքան ժամանակս անյայտ լեալ ի մարդկանէ: Այժմ, որ իւր իսկ կամք է յայտնել՝ հոգ տարջիք գտանել, ապա թէ անփոյթ առնէք՝ դարձեալ ծածկէ կինքն, և յայնժամ ոչի՛նչ կարասջիք առնել:

Եւ իմ յարուցեալ պատմեցի կվերջինս կայս տեսիլ, և հաւատարիմ եղև ամենեցուն, և ետուն փառս Աստուծոյ ի վերայ գթութեան շնորհաց նորա և ողորմութեան: Ապա, վաղվաղակի վարդապետն Ներսէս՝ առաջնորդ տեղւոյն, ի քաղաքն հասնէր առ մեծապիտիւ արքեպիսկոպոսն տէր Սարգիս, և պատմէր նմա կհանգամանս տեսլեանն և աւետիս տայր բարեաց և փրկութեան լինել նշան կերևումն սրբոյն Ներսիսի, որ յաւուրս նորա առաջնորդութեանն յայտնեցաւ: Եւ նա գոհանայր կԱստուծոյ՝ լցեալ մեծաւ խնդութեամբ, և ապա ասէ.

— Գնասջի՛ք կգիշերս կայս եղբայրական դասիւն հրամայեսցուք արասջիք, և ի վաղիւն բրեցէք կտեղին, մինչև երևես-

ցի կգերեկմանն, և ինձ ապդ արարէք, կի եկեալ հանցուք կուրախարար գանձն Հայաստանեայց:— Եւ նոքա գնացեալ, այնպէս արարին:

Եւ ի վաղիւն, որ էր մուտ փետրուարի ամսոյ, աստուածապատիւ արքեպիսկոպոսն տէր Սարգիս և բարեսէր իշխանն պարոն Յովհաննէս՝ որդի նորա, առին ընդ ինքեանս կպաշտօնեայս եկեղեցւոյն և ի պատուաւոր արանց քաղաքին, և այլ բազմամբոխ ժողովուրդ քաղաքին ելին կհետ նոցա իբրև կեղջերուս ծարաւի ի ջուր փափագեալ, կի վկայէր ի միտս ամենեցուն, թէ եհաս ժամանակ փրկութեան և ազատութեան Հայաստանեայց: Եւ իբրև եկին ի տեղին, անկեալ Երկրպագեցին գերեզմանին հրեշտականման մարմնոյն օթուրանի և յարկին սրբոյ ծածկողի կգանձն լուսոյ:

Իսկ կնշխարս սրբոյն հանեալ էին յառաջագոյն բնակիչք վանիցն՝ երկուցեալ ի բազմութենէ ամբոխին, գուցէ ոչ կարիցեն հանել պատրաստութեամբ: Եւ էր կազմեալ գերեզմանն ըստ երկայնութեանն չափ երից կանգնոյ, և լայնութեամբ իբր կանգուն մի ի կողմ ներքին, և խորութեամբ չորս աստիճանօք մարդաչափ մի, կազմեալ կրամած քարիւ: Եւ յարևմտից կողմ գերեզմանին էին նշխարք սրբոյն Ներսիսի բազմեալ յաթոռ, և այնպէս եդեալ ի գերեզման՝ յանդէպ արևելից, որ և նոյնպէս կային ամենայն յօրինուածք մաքուր ոսկերացն յիւրում տեղւոջն, և գլխոյն գերիվերոյ ամենայն անդամոցն, որպէս կենդանւոյ: Եւ էին առաջի նորա ի մեջ գերեզմանին այլ նշխարք, ոչ բովանդակ մարմին, այլ մասն ինչ եդեալ ի մեծամեց անդամոցն և սակաւ ինչ հողով ծածկեալ էին սուրբ նշխարքն և ապա ի վերոյ երեքկրկին կամարք կապեալ ի կրոյ և ի քարանց ի վերայ գերեզմանին: Եւ հրամայեալ եպիսկոպոսն սպասաւորաց եկե-

ղեցւոյն բերել վնշխարս սրբոյն մերձ ի գերեզմանն, կի անդ տեսցէ ինքն և բազմութիւն ժողովրդեանն: Եւ իբրև ետես վաստուածային հոգւով կենդանի նշխարս ոսկերեց սրբոյն հայրապետին մերոյ Ներսիսի և երկրորդ լուսաւորչին Հայոց, յարտասուս եղեալ սկսաւ լալ և ողբական ձայնիւ, իբրև ընդ կենդանւոյ խօսելով, գութ արկանէր սրբոյն և ասէ.

Ահա ժամանակ գթալոյ, սուրբդ Աստուծոյ,
Եթէ ողորմեսցիս քո անկեալ և տառապեալ ազգիս:
Ի բազում ալեաց ծփեալ և հողմակոծեալ կայ նաւ
եկեղեցւոյս.
Զեռնտո՛ւ լեր և օգնեա՛ բազմահմուտ և ամենիմաստ
նաւավարս:
Մոլորեալ է հօտ Քրիստոսի,
Եւ կարօտեալ ի կենաց կերակրոյն,
Գահավիժեալ և ցրուեալ,
Մատնեալ ի ձեռս գայլոց յանխնայ վիրաւորողաց:
Ա՛յս է ժամանակ այցելութեան,
Եւ թափելոյ զգառինս քո ի գայլոց:
Հիւանդացեալ է մարմին եկեղեցւոյ,
Եւ ո՛չ գտանէ հարազատ բժիշկ իւրոյ բեկմանն,
Եւ դեղ մահաբեր ցաւուն:
Ո՛չ է մասն, եթէ պատեսցի,
Եւ ո՛չ ի միում տեղւոջ, թէ սպեղանի դնիցի,
Այլ բոլորովի՛ն է ախտացեալ:
Հայեա՛ց բժիշկդ ցաւակցաբար,
Եւ հայցեա՛ ի մարդասէր բժշկէն բնութեանս ստեղծողէ.
Զի խոնարհեցուսցէ զունկն՝
Լսել տառապանօք ձայնի հեծութեան նեղելոցս:

Զայս, և որ սոցին նման է, մաղթէր առաջի սուրբ նշխարացն. և ապա հրաման տայր բազմութեան ամբոխին, քահանայից և ժողովրդոց՝ միջնորդութեամբ սպասաւորի ումեմն բանի, վնախնեա՛ցն խոստովանել վյանցանս և վանհնազանդութեան նոցա խնդրել վթողութիւն, յաղագս որոյ այսր ամենայն չարիք եկին ի վերայ մեր, և դնել ուխտ՝ առաջի կենդանի նշխարացն, ո՛չ գնալ ընդ նոյն ճանապարհ չարեաց և ոչ ապստամբ լինել աստուածային պատուիրանացն և օրէնսդրացն խրատու: Վասն որոյ ասեն.

Մե՛ղաք քեզ, հայր սուրբ և հոգւոց մերոց վերակացու,
Պատկեր հօրն երկնաւորի և կերպարան գթութեանց նորա:
Մեղա՛ք մեք և հարքն մեր, անօրինեցաք և յանցեաք:
Եթէ ճաշակեալ էաք պտուղ քաղցր պատուիրանացն քոց,
Ո՛չ էաք կարօտ մնացեալ ի լուսաւորիչ հարցն տեսչութենէ:
Ա՛րդ, մեք մեղա՛ք, հա՛յր սուրբ, և դու բարկացար:
Դու բարկացա՛ր, և մեք տառապեցա՛ք:
Մեք նեղացա՛ք, և դու գթացի՛ս:
Արդարութեամբ և յիրաւի տիրեցի՛ն մեզ ամենայն չարիք,
Զի կամակար մտօք յուղիղ ճանապարհէն թիւրեցաք:
Ցիրաւի ծածկեաց մեզ տրտմութիւնն խաւար,
Զի ի լոյս պատուիրանացն ո՛չ հետևեցաք:
Արդարապէ՛ս աղքատացաք,
Զի վցանկալին քան վոսկի,
Եւ քան վամենայն ականս պատուականս,
Զօրէնսն աստուածային յոգիս մեր ո՛չ գանձեցաք:
Վասն այնորիկ տիրեցին մեզ ցաւք մահաբերք,
Զի հոգիացուցիչ և կենդանի բանիւն Աստուծոյ ո՛չ կերակրեցաք:

Տիրեա՛ց մեկ քաղց կսկծելի և ծարաւ պապակման,
Զի Աստուծոյ բանին կերակուր ի քաղցր հարանցդ ո՛չ
ըմպեցաքէ
Նմանեցաք մեք հնոյ ժողովրդեանն՝ գերեալք ի Բաբելովն,
Որք և առ գետովն նստեալ լային՝ զՍիոն հիշելով,
Թէ յո՞ր վայելուչ վայրէ յո՞ր անկան տառապանս:
Եւ մեք գերեալք ի մէջ ամենայն ազգաց՝
Լա՛մք զբարձր փառաց մերոց նուաստանալն,
Զրկեալք ի յաղթող թագաւորացն,
Եւ ծառայք լեալ ազգաց օտարաց:
Ցանպտուղ ուռիսն կախեալ կան կտակարանք մեր,
Զի քաղցր պտուղ լուսաւորիչ վարմին սրբոյն Գրիգորի՝
Պակասեաց ի մէնջ:
Մոռացա՛ք մեք զխրատ խաղաղութեան հօրդ հոգևորի,
Մոռացար և զմեզ աջդ մեր յաջողակ:
Աջդ, որ պարիսպ հրեղէն էր զօրացն Հայոց,
Աջդ, որ բարձրացուցանէր զդրօշ թագաւորացն
Հայաստանեայց,
Աջդ, որ զօրացուցանէր զբազուկ սպարապետացն Հայոց
յասպարիսի,
Աջդ, որ Մովսիսաբար տարածմամբ պարտէր զկողմն
թշնամեացն,
Աջդ շնորհաբաշխ և պարգևաշատ,
Աջդ սնուցանող և դաստիարակ կաթնասուն մանկանց
Սիովնի:
Արդ, հա՛յր, հաշտեա՛ց հայրենի գթոյդ միջնորդութեամբ,
Թո՛ղ զպարտիս յանցաւոր որդեացս:

Հարկանէ՛ հայր զորդի, ցաւեցուցանէ,
Եւ ինքն ո՛չ մնայ առանց ցաւոց,
Այլ քան զխրատեալն գաւազանաւ զանհնազանդ որդի՝
Առաւել ևս զգայ ցաւոյն,
Վասն ծնողական գթոյն:
Եւ զի եկեալ կատարեցան ի վերայ մեր տեսիլքն ի քէն՝
Մարգարէական հոգւով,
Եւ կրեցաք զբերմունս դառնութեան ժամանակաց՝
Ի պատուհաս պատուիրազանցութեան մերոյ,
Եւ ըստ մարգարէական բանին աղաղակեցա՛ք,
Եւ ո՛չ ոք էր, որ փրկէր.
Կարդացա՛ք առ տէր՝
Եւ ո՛չ լուաւ մեզ ի նեղութեան մերում[6]:
Ո՛չ գտաւ մեզ անդորրութիւն,
Եւ ոչ թիկո՛ւնք օգնականութեան.
Ոչ պահպանութի՛ւն,
Եւ ոչ ձեռնտուութի՛ւն.
Ոչ պաշտպանութի՛ւն,
Եւ ոչ ակնկալութի՛ւն յուսոյ.
Ոչ փրկութի՛ւն յումեքէ,
Եւ ոչ սփոփա՛նս մխիթարութեան,
Այլ ամենայն դուռն փակեալ քրիստոնէից,
Ուրախութիւն և ցնծութիւն բարցեալ ի միջոյ,
Նեղութիւն և հեծութիւն և տագնապ՝
Ցամենայն տեղիս տարածեալ:
Եւ վասնզի ո՛րբ մնացաք՝
Եւ ո՛չ գոյր մեզ հայր, որ պաղատէր առ հայրն գթած,
Եւ հաշտեցուցանէր առ որդիքս տարագրեալ և մերժեալ.
Եւ ո՛չ միջնո՛րդ,

Որ տարածմամբ բակկի և մատամբք մաքրեցելովք
Հայցէ՛ր նման Մովսիսի:
Այլ ա՛յժմ, հա՛յր,
Հայցեա՛ կԵրեմիային մաղթանս,
Որ վասն հնոյ ժողովրդեանն.
Մատո՛ կմերս ձայն հառաչանաց առ բարձրեալն,
Որ ո՛չ երբէք մոռանայ:
Պատմեա՛ ի դիմաց մերոց և ասա.
Ցիշեա՛, տէր, որ ինչ անցք անցին ընդ մեզ,
Նայեա՛ և տես կնախատինս մեր:
Ժառանգութիւն մեր դարձաւ յօտարութիւն,
Եւ բնակութիւն մեր՝ ի նժդեհութիւն:
Ըկջուր մեր գնոյ արբաք,
Եւ կփայտ մեր առանց փոխանակի:
Եկն ի վերայ պարանոցի մեր նեղութիւն,
Հալածակա՛ն եղաք
Եւ ո՛չ գոյ մեզ հանգիստ:
Զեռնաձիգ եղեն ի մեզ որդիք օտարաց,
Հարքն մեր մեղան՝
Եւ ո՛չ են ուրէք ի միջի:
Եւ մեղք հարցն մերոց ընդ մեզ եղին:
Ծառայք տիրեցին մեզ,
Եւ ա՛յն, որ փրկէր կմեզ ի ձեռաց նոցա՝
Չի՛ք ուրէք ի միջի:

Եւ արդ, հա՛յր,
Եթէ կայս աղէտ տարակուսանաց
Ցիշեսցուսցե՛ս Հօրն գթածի և մարդասիրի,
Որ ո՛չ երբէք մոռանայ,

Գիտե՛մք. վի դարձցի՛ ի բարկութենէ սրտմտութեանն,
Որ ո՛չ է իւր բնական:
Եւ շարժի ի գութ քաղցրութեան և ողորմութեան,
Որ իւր է սեփհական:
Վասն որոյ, հա՛յր,
Մաղթեա՛ ընդ մեղուցելոցս,
Հայցեա՛ ընդ հիքացեալ թշուառականացս:
Գիտէ՛ Հայրն հասարակաց լսել մաղթանաց հօր,
Որ վասն որդւոյ անառակ կենօք վարեցելոյ,
Պատուէ՛ գալիք պատուական,
Որ վասն պարտաւոր որդւոց երաշխաւորէ,
Հայի՛ ի հայցուածս՝
Հայրենի գթով թախանձել:

Եւ այսպէս, որ յառաջագոյն տեսութեամբ ցուցա՛ւ արկածք պատուհասի
բարկութեան տեառն և բեկման մերոյ կօրութեանն,
ցուցցի՛ և այժմ յողորմութեան ժամու՝
հաշտութիւն տեառն բարի կամաց
և ձեռնտութիւն աջոյն հկօրի՝
հարուցանել կանկեալ ազգս
և մխիթարել կբաւմեայ տխրեալքս հոգւով:

Արդ, վայս և որ ինչ նման է սոցին բանք պաղատանաց՝ մարգարէական հոգւով խօսեցեալք, յիշատակեցան ի տեղւոջն, և ուխտադրութիւնք արտօսրագոչ հառաչանօք յամենայն ժողովրդենէն եղեն առաջի կենդանի նշխարացն: Ցայնժամ առեալ եպիսկոպոսին կսուրբ նշխարսն և մտանէր յեկեղեցւոջն, եդեալ ի սպիտակ և ի սուրբ կտաւս, և առան-

ձին դնէր յերկուս արկեղս և կնքէր իւրով մատանեաւ. և երկու մասն մեծ տայր ի սպասաւորս եկեղեցւոյն՝ ի համբոյր և ի տես ուխտականաց ժողովրդեանն, որ գային յամենայն կողմանց: Եւ այլն կայր յեկեղեցին, կնքեալ մատանեաւ և պահեալ զգուշութեամբ: Եւ ինքն՝ եպիսկոպոսն գնայր ի քաղաքն, և որ ընդ նմա բազմութիւն քաղաքին, մնալով տեսչութեանն Աստուծոյ՝ թէ վի՞նչ արասցէ: Եւ վասնզի հնչեա՛ց համբաւն յաշխարհ, և զուարճացա՛ն որ յամենայն տեղիս ազգ Հայաստանեայց, և դիմեալ գային բազմութիւնք հաւատացելոց յերկրպագութիւն և ի տեսութիւն սուրբ գերեզմանին, յայսմանէ ընդոստացեալ և զարմացեալ ազգն տաճկաց, և եմուտ խորհուրդ ի նոսա, եթէ յի՞նչ կամի աւարտիլ վախճան բանին, քանզի է գրեալ առ նոսա իւրեանց գրովն հրաշալի տեսիլ սրբոյն Ներսիսի, որ վասն հանդերձելոյ ժամանակացն, որ ինչ եղեալ է և որ լինելոցն, և տագնապէին խորհրդով՝ զսկիզբն իրին վախճան իւրեանց իշխանութեանն համարելով: Եւ բազումք ի նոցանէ ի նախանձ մտաբերեալ՝ խորհեցան ժողով լինել ի բնակչաց քաղաքին, գնալ գիշերի ի վանսն, յափշտակել զնշխարս սրբոյն, թերևս կարասցեն ծածկել զհամբաւն աշխարհալուր: Ազդ եղեալ այս եպիսկոպոսին, և գնաց քահանայական դասուք և պատուաւոր արամբք, և առեալ զսուրբ նշխարսն՝ բերեր ի քաղաքն մեծապէս փառօք և բերկրալից ցնծութեամբ, որում ընդառաջ ելեալ բազմութեան քաղաքին, լցեալք անպատում խնդութեամբ, տարեալ եդին ի մեծահրաշ և ի գեղեցկաշէն եկեղեցին: Իսկ պատուեալն ի տեառնէ արքեպիսկոպոսն տէր Սարգիս զաջն և զմիւս բազուկն տայր յօրինել իմաստուն ոսկեգործաց, և զմանր մասունս մատանցն առ միմեանս միաբանեալ՝ յարծաթոյ և յոսկւոյ պատեալ ման-

ռամասն յօրինուածով՝ տեղի երևման ի ցոյցս տեսլեան արարեալ պահպանիչ աջոյն և բակկին շնորհաբաշխ: Նոյնպէս և տայր յօրինել գլուխ արծաթեղէն յարմար մեծահասակ անձինն, պահարան գլխոյն նշխարաց, և ի բաց առնելով վդիրս երեսացն և վբերանոյն և յերիս տեղիս հանդէպ ճակատուն խաչաձև հատուածս արարեալ յարծաթոյն, յորում երևէին նշխարքն փառաւոր: Եւ վայլ բովանդակ նըշխարս սուրբ ոսկերացն լուանայր վհողն մածեալ անապակ և անուշահամ գինով յանուշահոտ ծաղկանց խառնելոց, և օծեալ խնկահոտ իւղով կապմեալ արուեստաւորապէս: Եւ պահէին վգուշութեամբ, մինչև շինեսցի եկեղեցին ի վերայ գերեզմանին, վի անդ եդեալ ի տեղւոջն գերեզման յօրինեսցեն գեղեցկապարդ կապմեալ և մեծածախ վարդիւք, և վանկողոպտելի գանձն, վոր շնորհեաց Աստուած գաւառին Եկեղեաց՝ անդէն ծածկեալ ունելով գերեզմանին: Իսկ վաջն առաքելաշնորհ եդեալ արքեպիսկոպոսն տէր Սարգիս յիրաշէն եկեղեցին, որ ի քաղաքն ի նորոգապէս շինեալն հրաշատես և վարմանալի փառօք և մեծածախ վարդուք երից թուով խորանաց. յանուն փրկչին մեր Յիսուսի վաւագ խորանն, և միւսն կաթուղիկէ, և մինն յանուն սրբոց առաքելոցն: Եւ եդեալ անդ վաջն սրբոյն Ներսիսի ի վարդ և ի պահպանութիւն սրբոյ տաճարին՝ մնալ մշտնջենաւոր կայիւք: Եւ վմիւս բաղուկ ձեռինն կապմեալ մատամբքն մաքուր, տարեալ ի հռչականուն և ի գեղեցկաշէն սուրբ ուխտն Տիրաշինին՝ անդէն մնալ վեկեղեցւոջն փառաւորապէս, վոր և յառաջն իսկ շինեալ էր: Որ և ընդ մեջ լինելով եդեմաբուխ գետոյն Եփրատայ բարեվարդ և վայելուչ վիճակին և ամենագով գաւառին Եկեղեաց, վոր իմաստաբար և մեծ յուսով՝ արարեալ խոհեմականն տէր Սարգիս, վի վերկոսեան բա-

զուկսն և զձեռն առատաձիր շնորհիւ լցեալ սրբոյն Ներսիսի, զերկրորդ մեր Լուսաւորչին. սահմանէր յերկուս կողմանս գետոյն, որպէս թէ տարածեալ ունելով զթևսն հովանի գաւառին և զբաղուկսն աղաչող բարեխօս առ բարձրեալն, և զձեռն առնուլ աննուազ բարեաց և բաշխեալ եկեղեցւոյ մանկանց՝ ի փարթամութիւն փառաց հայրենի գանձիւք, և տայ հաւաքել նիւթ շինուածոյ եկեղեցւոյն պատրաստութիւն քարանց:

Բայց զի աշխարհս Հայաստանեայց արեամբք և քրտամբք հոգևոր մշակացն Բարթուղոմէոսի և Թադէոսի առոգեալ պարարտացաւ. և երկնեալ ահիւն Աստուծոյ և պտղաբերեալ ծնաւ զմարդն երկնաւոր՝ զարժանաժառանգ զաւակն սրբոց առաքելոցն զվայելուչ պսակն պարթևեան ազգին զԳրիգորիոս, գերազանց գտեալն յամենայն ծնունդս որդւոց Ադամայ, որոյ համանմանեալ առաքելապատիւ հօրն որդիքն առաքինազարդ ժառանգեցին զաշխարհս զայս, փոխանակ հարցն՝ որդիքն փառաւոր առաքելականն ընթացեալ շաւղօք արեամբ և ճգամբք և քրտնաջան մշակութեամբ զաշխարհս զայս Աստուծոյ նուիրելով: Ցորում, մանաւանդ, քան զբնաւ աշխարհս գաւառս այս Եկեղեաց զճարտարապետսն հիմնարկութեան և շինութեան եկեղեցւոյ Հայաստանեայց յինքն ընկալեալ կենօք ի բարիօք կենաց պատճառ, և չարչարանօք յանմոռաց երախտեաց յիշատակ և մահուամբ դեղ բժշկական միշտ մահացելոց մարդկան: Ցորոց և զայժմուս գովելի տեսանեմք յետ առաջնոյ և մեծին զերկրորդ մեր լուսաւորիչս և հայրս առաքելանման յայսմ գաւառի, ի վերայ պատուիրանացն Աստուծոյ արբեալ զբաժակ մահու, և սմին իսկ պարգև եղեալ գերեզմանին հողոյ, զի հող երկրին զօրհնութեան պարգևս ընկալցի, պարգևական երկրին նմա-

նեալ, աշխարհ ժառանգութեան տուեալ սիրելոյն Աստուծոյ;
Աբրահամու և կաւակի նորա, և ասպնջական եղեալ մահուն,
կի անդ թաղեցաւ որդւովք իւրովք նահապետն մեծ յայրն
կրկնում յագարակի Եփրոնի:

Որդիքն իսրայելի
յելսն յԵգիպտոսէ կոսկերսն Յովսեփու ընդ իւրեանս
ունելով,
Եդին ի Սիկիմ, ի բաժնի ագարակին,
Զոր ստացաւ Յակոբ:
Եւ մեք ունիմք կնշխարն հոգւով կենդանի ոսկերաց
սրբոյն Ներսիսի,
Որ կենաց հացին էր մեր ցորենատու,
Եւ կայ այժմ ի բաժին ժառանգութեանն իւրոյ,
Յորոյ վերայ եդ կանձն իւր հովիւն քաջ և հօտասէր:

Գովելի է գլուխ Հովր լերինն,
Յորում վախճանեցաւ Ահարովն և անդ թաղեցաւ,
Եւ կգեցաւ կքահանայութիւն Եղիազար՝ որդի նորա:
Այլ գերապանց պատուոյ արժանացաւ գաւառս այս
ամենագով:
Զի որ առաւել փառօք պայծառացեալն էր,
Քան կօծումն շնորհի քահանայութեանն Ահարոնի,
Քրիստոսի քահանայապետին երկնից կգեցող կարգի,
Եւ ի Հոգւոյն աղաւնակերպ իջմամբ վկայեալ,
Աստ վախճանելով մեծին և արժանապէս ժառանգին՝
Հայրանմանն կգեցեալ քահանայական կգեստ,
Եւ կնոյն պարգևս քահանայական շնորհին,
Պայծառապէս կգեցեալ են եկեղեցիք Հայաստանեայց:

Թաղեցաւ Մովսէս ի Գայի՝ մերձ ի տունն Փեգովրայ,
Եւ ոչ ոք գիտաց զգերեզման նորա՝ մինչև ցայսօր:
Եւ սորա յայտնապէս մարմնոյն թաղեալ ի գերեզմանի,
Եւ ոչ ոք գիտէր մինչև յօրս յայս,
Որ նշանաւոր եղև ի գլուխս ամսոց,
Յորում յայտնեցաւ նշխարքն սուրբ՝
Նորոգութիւն յուսոյ ակնկալութեան Հայաստանեայց:

Յեսու զօրավարն Իսրայէլի թաղեցաւ առ սահմանօք
ժառանգութեան իւրոյ՝
Ի Թամնասաքար՝ ի լերինն Եփրեմի,
Իսկ մերս առաքինի զօրապետ զօրաց և զօրավարացն
Հայաստանեայց հանդիսացուցիչն,
Եւ աղօթիցն զինու մարտակիցն ի պատերազմունս,
Յորում վերայ վիճակի հանդիսանար ի կեանս,
Ի նոյն հանգաւ ի գերեզմանի,
Եւ ի նմին յայտնեցաւ ծածկեալ գանձն յագարակի:

Ունի Արեմաթեմ զՍամուէլ մեծն տեսանող,
Որ սուգ ունելով ի վերայ Սաւուղի ննջեաց:
Եւ ունի Եկեղեաց գաւառս զսուրբն Ներսէս,
Զմարգարէահրաշ հոգւով տեսանողն ապագայից,
Որ սուգ մեծ ունելով ի վերայ Արշակունեացն ազգի,
Ննջեաց խաղաղութեամբ,
Եւ այժմ զարթուցեալ մխիթարիչն զուարթարար
տրտմութեամբ՝
Թախծեալ եկեղեցւոյ Հայաստանեայց:

Դաւիթ պատուէր տայր որդւոյ իւրոյ Սողովմոնի՝
Զամենայն բարեաց և արդարութեան բանս,
Եւ ինքն ննջեաց ընդ հարս իւր,
Եւ թաղեցաւ ի քաղաքի Դաւթի:
Եւ մերս հայր պարծանաց և թագաւորական վարմի շառաւէղ,
Պատուէր տայր որդւոց իւրոց,
Զորս ծնաւ բանին վարդապետութեամբ,
Եւ ինքն ննջէր յիւր իսկ շինեալն և պայծառացեալ եկեղեցի,
Որ է քաղաք Աստուծոյ կենդանւոյն:

Մաքրեալն աստուածային կայծակամբք մարգարէն Եսայի,
Ի Մանասէէ սղոցեալ եղաւ մերձ ի Սելովամ,
Յորմէ ջուրն բժշկական ընկալեալ կօրութիւն:
Եւ Ներսէս՝ սուրբ Հոգւոյն Աստուծոյ հրով մաքրեալն,
Ի նորուն բարուց վուգակիր ի թագաւորէն,
Վասն յանդիմանութեան վբաժակ մահու արբեալ,
Եդաւ մարմին հողանիւթ ի հող երկրի,
Յորմէ վօրացեալ բնութիւն հողոյն,
Բժշկական ներգործութեամբ ապդէր՝
Առ յուսով և հաւատով դիմեալսն ի տեղի հանգստարանին,
Վասնվի մարմինք հոգւով մաքրեցելոցն,
Եւ անդէն ի հող դարձելոց մահուամբ,
Բարետոհմութիւն երկնային և պատիւ գերաշխարհիկ
ընձեռեն երկրի,
Եւ վտակս երկնաւէտ բարեաց աղբիւրացեալ ունին
յինքեանս:

Բայց վի՞նչ է ինձ վաստուածամերձիցն արանց Աստուծոյ
կենդանեաց,

Եւ նշխարօք ոսկերաց վաղգ և գաւառ հռչակագործաց
Առ միոյս այս ժողովել բանիւ,
Որ յայտնութեամբն եղև բերկրանաց պտուղ մերոյ
աշխարհիս,
Այլ այսքան յիշատակեալք իբր հիւրամեծար սեղանոյ
սուրբքն սրբոյս,
Եւ երջանիկքն հոգւով երիս երանեան հօրս և Հոգւոյն
սրբոյ օթևանի,
Հնոյն և նորոյ ժամանակի՝
Առաջնոյ և վերջին սրբոցն դասու ազգակից առաքինութեան.
Եւ քաղաքակից բարեաց և երանութեան:
Զի և այս աշխարհ,
Հանգոյն համայնից բարեբաստիկ գովութեամբ հռչակելոց
համապատիւ է,
Եւ յականաւոր առաքելոց վեհից վիճակեալ,
Եւ տեղի հանգստեան նոցա արժանացեալ,
Եւ առաքելանման հարց և լուսաւորիչ սրբոց կարգօք և
կրօնիւք պայծառացեալ,
Եւ վսերմն բանի ուղղափառ վարդապետութեան նոցա՝
Ի համբարս հոգւոց վգուշութեամբ կնքեալ և պահեալ,
Եւ անպատկառ վնոյն ուղիղ հաւատոյ խոստովանութիւն
մասնկունք ծնեալք՝
Ընդ հօրն պատրաստ են հատուցանել:

Եւ արդ մեք, որդիքս թշուառացեալ,
Եւ բարեվարդ խրատու հօրդ կարօտեալ,
Նեղեալ ի հոքնատանջ կրից մեր մեղացն,
Եւ անխնամ խրատիչ նեղչաց,
Անկանիմք առաջի քո կենդանի նշխարաց,

Եւ յոր յիշատակի քո մեծահանդէս տօնի,
Ի յուշ արկանեմք վանթուելի բարեաց քոց բաղդատութիւնս՝
Ո՛չ ընդ միում ումեք ի սրբոցն վուգաբանեալ,
Այլ վհամագումար գովեստ ավնուականացն դասու՝ յանձին ստացեալ,
Քահանայապետ բարի,
Միոյն և միայն ճշմարտի պատարագի,
Արժանապես մատուցող կենարարին մարմնոյ և արեան,
Որ առաւել խօսի, քան վՀաբելին,
Այլև իբրև վարդարն առաջին,
Անմեղդ նենգեալ
Եւ վանձն Աստուծոյ պատարագեալ,
Մեծի յուսոյն խարսխաւ հաստատեալ՝
Սիւնդ Հայաստանեայց,
Որովք Ենովսն հանդիսանայր:
Պատուողդ հիւրոց և օտարասէր,
Որովք Աբրահամ հայրն հաւատոց պայծառանայր,
Զի քո է բարեկարգութիւնս այս սահմանեալ
Ցաշխարհս և յայգս Հայաստանեայց:
Զաւակ խնդութեան յուսոյ բերկրանաց,
Եւ խոստումն աւետեաց, որպէս վԻսահակ,
Զի վուարթունն երկնաւոր կանխաւ աւետեաց
Բխումն շնորհաց,
Որ ի քէն մեվ աղբիւրաբար:

Առաջնորդ բարի մեր ճանապարհին,
Որպէս Մովսէս իսրայէլեան բանակին.
Այլև հրաշագործութեամբ ոչ նուավ՝
Քան վնորայն ժամանակի:

Նա յանապատին,
Իսկ դու յանբնակ կղկին.
Նա լորամարգի յօդոյ,
Իսկ դու շեղջս ձկանց ի ծովէ՝
Առանց գործիական արուեստի:
Եւ ջուր յապառաժուտ վայրի քաղցրահամ,
Եւ հուր ինքնածին ի պէտս ժամու:
Խնկարկու հաշտարար՝ ըստ Ահարոնի,
Եւ այնքան վեհապատիւ՝
Որքան վօրինակն ճշմարտութիւն:

Արեամբ կենարար գառինն երկնաւոր,
Եւ խնկով աղօթիցըդ ծերունական,
Մ'սքուր ոսկեղէն սրտիդ բուրվառաւ,
Եւ հրով ջերմութեան Հոգւոյն Աստուծոյ՝
Բերող ապատութիւն մեզ յանցաւորաց,
Լցեալ մարգարէական հոգւով՝ իբրև կԴաւիթ,
Եւ վդասս մարգարէիցն սրբոց:

Նախանձաւոր և վրէժխնդիր օրինացն՝
Իբր Հեղիաս,
Որ և ընդ բանին խօսել արագապէս՝
Լինէր գործոյն և իրին կատարելութիւն:
Կրկին հոգւոյ շնորհօք վարդարեալ,
Որպէս Եղիսէոս վվարդապետին,
Եւ դու՝
Զնախնոյն քո և վառաջին մեր Լուսավորչին:

Քարոզ ճշմարիտ,
Բարձրագոչ ձայնիւ պատմելով նորոյս Յակոբայ տան
Հայաստանեայց
Զմեղս և վանօրէնութիւն,
Եւ խրատեալ յուսումն սուրբ աւետեաց աւետարանին:

Վկայ՝ ընդ վկայիցն ճշմարտութեան,
Ի վերայ պատուիրանացն Աստուծոյ,
Եւ վերակացութեամբն,
Յոր հաւատացար ուսուցանել վճանապարհս օրինացն,
Ի բարեաց ատեցող, բարուց կենաց աւետարանիչդ,
Մահացու դեղօք մեռանէիր:
Այլ կրեցեալքն ամենայն վտանգաւորք,
Եւ չարչարականք աշխատասիրի վտանգաւորիդ,
Ի յերկինս բաւմապտուղք աճեցին:

Իսկ մեք ըստ արժանեացն, որ գործեցաք,
Անբերելի ցաւօք տանջեցաք:
Նա և արդէն իսկ չև ևս լցեալ,
Ըստ յոլովութեան յանցանացն և արկածք մեր պատուհասից,
Այլ նեղիմք հիւանդարար ցաւովք,
Եւ բժիշկ բարեկամի ոչ հանդիպիմք:

Անկեալ կամք ի յանարգութիւն՝
Եւ կարեկցաբար ձեռնտու յարուցանող ոչ գտանեմք:
Վարակեալ եմք մեղաց տոռամք,
Եւ որ լուծանէ յայնմանէ՝ աղօթիցն հայցմամբ,
Չի՛ք ուրեք ի միջի:

Թանձրացեալ է անգիտութեանն մէգ խաւարի,
Եւ որ ցրուէ կայն՝
Լուսափայլ բանին վարդապետութեամբ,
Ո՛չ դիւրաւ գտանի:

Որբացեալ եմք ի բարեկարդ հօրէ,
Եւ չի՛ք մեր հայր,
Որ գանձէ որդւոցս փարթամութիւն:

Անկատար եմք ի սնունդ հոգևոր,
Եւ որ արկանէ ի վերայ կգութ գորով տղայոց ի Քրիստոս՝
Ոչ ո՛ք դաստիարակ:

Ցանկութեամբ մարմնոյ ընդ երկիր քարշիմք սողաբար՝
Իբրև կերկրածինս ի կեռնոց,
Եւ որ կերկնաւոր բարեացն աւետիս մեկ հաւատարիմ առնէ՝
Զանձն տալով օրինակ,
Առ ոչ ոք վստահութիւն:

Ցամենայն կողմանց յաճախին մարտ պատերազմի,
Եւ կօրապետ առաքինի յարդարող կՔրիստոսի կինուորսն,
Ո՛չ գոյ առաջադէմ մարտին:

Նիրհե՛մք ի քուն թանձրութեան՝
Զբաղեալ ունայնութեամբ կենացս երկրաւոր,
Եւ հաւատարիմ քարոզ՝
Քաղցր խթանաւ ձայնին կարթուցիչ,
Ո՛չ գոչէ ի միջի մերում:

Գոսանամք տունկքս կենդանի՝
Եւ անպտուղ բարեացն լինիմք,
Եւ ո՛չ ոք տնկագործ իմաստուն խնամարկէ,
Զի պտղաբերելովն ի սպառնալեաց հրոյն թափեսցէ:

Որոմնացան սերմամբք խոպանանան
Բոյսք բարեպաշտութեան ոգւոյս մեր անդաստանին,
Եւ որ պահեն յայնմանէ կուարթուն ակամբ անվնասելի՝
Ո՛չ է ումէք փութալի:

Գողացեալ լինին գանձքս մեծագին՝
Ժողովուրդք Քրիստոսի արեամբն գնեալք,
Եւ գանձաւոր հաւատարիմ ո՛չ երբէք հանդիպի:

Քաղցք և ծարաւի եմք կենաց բանի,
Եւ լիապէս մեզ կայն ոչ ոք սեղանաւորէ:

Մերկք և ամօթալի եմք յառաքինութեան վգեստուց,
Եւ որ արկանէ վայն մեզ պատմուճան,
Եւ երկնէ մինչ վերըստին ծնցի,
Եւ վգեցմամբն ամրացեալ վգուշացուսցէ,
Ոչ ո՛ք ցաւակցաբար արուեստաւորէ:

Այլ դո՛ւ, հա՛յր.
Հայեսցիս և մեզ ի վերուստ՝
Զեռնտուութեամբ հայրական գթոյդ,
Զի կարող ես, եթէ կամեսցիս,
Եւ այնքա՛ն առաւել,
Որքան ապատ ի մարմնոյ կապակցութենէ,

Եւ այնչա՛փ առատ,
Որչափ մերձ ես համարձակութեամբ յաղբերդ բարեաց:
Ընդ քեզ առեալ վդասս երկնայնոցն՝
Ցորում դասեցար,
Զպարս սրբոցն՝ յորում ամբարձար,
Զերամս արդարոցն՝ յորս խառնեցար,
Եւ ամենեքումբք գամենեցունց տէրն աղաչեսցես,
Զի տացէ վիրաւորելոցս ցաւովք՝ ապաքինութիւն,
Գերելոցս գայթակղութեամբ՝ ձեռնտուութիւն յուսոյ,
Կապելոցս ընդ մեղօք ծառայութիւն՝ ապատութեան
արձակումն,
Խաւարելոցս անգիտութեամբ՝ լուսոյ ապավինութիւն,
Որբացելոցս որդւոց մեղուցեալ՝ վհայրական գթոյն
բարութիւն,
Ի պատերազմունս թշնամեաց՝ վամենապօր աջոյն
օգնութիւն,
Ցրուեալ և մոլորեալ ոչխարացս՝
Աստուածային և քաղցր ձայնիւ՝ վերստին դարձեալ
ժողովումն:

Ի ջուր հանգստեան և յարօտս կենաց՝
Անվնասելի գողոց և գայլոց,
Զքո բարեկարդութեամբ կարգաւորեալ եկեղեցի,
Եւ վբանի վարդապետութեամբ լուսաւորեալ,
Քոյին հայցմամբ աղօթիցդ խնդրեա՛
Անսասա՛ն մնալ յաւիտեան:

Աղաչեա՛ վբաւմագութն գլուխ եկեղեցւոյ,
Եւ վակն ամենատես՝ որ ո՛չ երբէք ննջէ,

Զի ողորմութեամբ հայեսցի՛ ի տառապանս,
Եւ ի կործանումն եկեղեցւոյ,
Զոր ամբաւութիւն չարեացն մեր և անհնապանդութիւն
հայրենի՝
Խախտեցին կհիմունս և ցրուեցին կժողովուրդ՝
Գնեալ պատուական արեամբ որդւոյն Աստուծոյ:

Քո տարածմամբ բակկացդ մաղթեա՛,
Զի ձեռն հպօր և աջն կարող,
Աշխարհի շինօղն և խնամօք պահողն,
Դարձեալ ժողովեսցէ ի ցրմանէն,
Եւ անվնասելի ամրութեամբ պահեսցէ ի փորձանաց,
Եւ արժանի արասցէ ուղիղ հաւատոյն՝
Փառատրութեամբ փառաւորել կամենասուրբ
կԵրրորդութիւնն,
Այժմ և միշտ,
Եւ յաւիտեանս յաւիտենից,
Ամէն[7]:



ՏՐԱԿՏԱՏ

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ԵՒ ԻՄԱՍՏՈՒՆ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՅՕՀԱՆՆԻՍԻ ԵՐԶՆԿԱՑԵՑԻՈՑ ԲԱՆ ՅԱՂԱԳՍ ԵՐԿՆԱՅԻՆ ԶԱՐԴՈՒՑ՝ ՀԱՓԱԲԵՐՄԱՄԲ, Ի ԽՆԴՐՈՑ ԲԱՐԵՊԱՇՏ ԻՇԽԱՆԻՆ ԱՊԼՈՅԻ, ԸՍՏ ՆԱԽԱԳԻԾ ՏԱՌԻՍ ՏԱՆՑ[1]

Յամենահրաշ գործս արարչին, որ գոյացան,
մեծ և ահեղ սքանչելիք ներգործեցան,
Ոմանք ի տես վարմանալեաց յօրինեցան,
և այլք ի պէտս վայելչութեան մարդկան տուան,
Հանրականաց արարածոց մասունք լըրման,
Ի յերկեակ թիւ տարորոշեալ բաժանեցան:
Աշխարհի սկիզբըն և հիմունք հաստատեցան,
ի յերկուս անկիւնագիծըս առկայացան:
Նախ՝ երկնային բոլորակին բանք ճառեցան,
մերձ առ նըմին հաստատութեանն երկնի եղան,
Ի Մովսիսէ մարգարէիցըն նախնական,

վի այսպիսի առձայնելով անուանեցան:
Սոքա չորից տարերց մասունք ըսկըզբնական,
յորմէ մարմինք տարրականաց հաստատեցան:
Ի չոր և ցուրտ բնութիւն հողոյ, որ ստորացան,
ցրտին և գէջ բնութիւն ջրոյ՝ որք խառնեցան,
Բաղկացութիւնք երկրիս կայից կատարեցան,
որք միշտ անշարժ կայիւք շարժին յեղյեղական:
Այլ և գիճին բնութիւն օդոյն և ջերմական,
որ ընդ հրրոյ ջերմին և չոր վերամբարձման:
Նմանապէս կամարն երկնի խորան ձգեցան,
որք մշտաշարժ շարժմամբք շրջին անյեղական,
Յոր իմաստունք ներհմտութեամբ յայս վարժեցան,
և եղական բնութեան գոյիցս եդին սահման:
Ասել զբնութիւն ծնունդ շարժման՝ որք կայանան,
որք ի շարժուն և յանշարժից տարերց ծընան,
Ղեկօք թևոց կրկին բնութեան միշտ ընթանան,
որք ի ծովու այսմ աշխարհիս կան ծըփական:
Արդ, շարժելով բոլորն երկնի անպննական,
միշտ պնդելով զկայանս երկրի անպատական,
Գեղեցկապէս մնալով սմին հաստատական,
ո՛չ ցրուելով ստորին բնութեան ըստ տարրական:
Սոյնպէս անշարժ բնութիւն երկրի, որ գոյացան,
ինքեամբ պրկեալ պարաբերէ զերկնի շըրջան,
Երկոքումք բնական կրիւքն անլուծական,
միմեանց լինին նիւթ և պատճառ յարմարական:
Որպէից տարերց մասունք՝ որք խառնեցան,
անքակտելի սիրով ի նոյն յարմարեցան:
Կատարեցան զարդք աշխարհիս՝ որք էացան,
յանմահ բանէն արարչական, որով ստեղծան:

Նույն արարիչըն հրաշագործ կարմանական,
ո՛չ թէ բանիւ միայն արար անքննական:
Ի սմին արուեստըս հանճարոյ իմաստնական,
եդ ի բնութիւն արարածոցըս դասական,
Ի ըստորին կոյս կայացեալ հող ծանրական,
մերձ առ նմին շարադասեալ ջուր գիճական:
Խորանաձև կամարացեալ օդ վերնական,
վբոլորն բնաւ շրջապատեալ հուր կիպական:
Նըման սըմին քեզ յարացոյցըս ցուցական,
յանօթ արկեալ աւազ և ջուր՝ իւղ նիւթական:
Դիր ամանոյն՝ և նիւթ իւղոյն առ վերոյ կան,
Ներքոյ աւազ և վկնի ջուր՝ վետեղական:
Ռոպէից բոլոր մասանց պարագրական,
օդ ընդ հրոյ՝ հողմոյ շնչմամբ վեր ամբարձան,
Որով երկիրս այս գնդաձև առկայացան,
ի միջոցի աստ մնալով անշարժական:
Ի սոյն և այլ քեզ օրինակ համանըման,
վձու հաւու առ գաղափարըս տեսական:
Շրջապատեալ կեղևըն կարծր և նիւթական,
որպէս հրեղէն արփւոյն կամար պարաձգեցան:
Խորանն երկրորդ վկնի սորին՝ օդոյն նըման,
որ մվնաձև ընդ խէճէպոյն ի կառուցման,
Այլ և երրորդ է՛ սպիտակուցըն ջրոյ նըման,
և դեղնագոյնն առ միջոցաւըն գնդական:
Նոյնպէս երկիրս՝ առ միջոցի յարամնական,
անսիւն, աննեց և ի վերուստ անկախական,
Ի ներքուստ հողմոյ հնչմունք՝ ընդդիմական,
և բնականն իւր ծանրութեամբն ո՛չ ամբառնան:
Հաւասար վեցակուսի են վատական,

վառ ի վեր և ի ներքուստ և կողմնական:
Արդ, ի յերկրորդ աւուրըն մեծ արարչութեան,
յորում հրաման ել յարարչէն հաստատութեան,
Յօդոյ հնչմամբ ջուրք ի ջրոց բաժանեցան,
և հրեղինի արփւոյն կիպող դիմակ արկան,
Որպէսզի մի վաշխարհ լուծցէ տոչորական,
սաստիկ հրրատրն բոցագոյն և կիպական:
Յուրտ բնութեամբն իւր ջուր լինի կերակրական,
զի մի աշխարհ ըսպառեսցի ի հրոյն լուցման:
Այսոքիկ երկին միմեանց են յատկական,
արագապէս շարժմամբ շրջին անլռական,
Պարառեալ շրջափակեն զգունդն երկրական,
և ի միմեանց են հեռագոյն նոյն չափական:
Լայնութեամբ են չորեքկուսի եկերական,
և խորութեամբ ընդ բարձրութեանըն զուգական:
Ունիս սոքօք իմաստութիւն քեզ բաւական,
որով պատմես զփառս Աստուծոյ անճառական,
Ցընծալ հոգւով ի յարարածս այս եղակ։սն,
գովել զանեղն ի յեղելոցս անմահական:
Արդ, մինչև ցայս վայր խօսեցեալ բանք նախնական,
յաղագս երկուց կիսագնդացն եռայարկեան,
Նիւթ ցանկալի ուսումնասէր մտաց մարդկան,
որով կրթին վարժմամբ բանի տեսողական:
Ուստի շարժմանց զարդուն երկնից տեղեկ։սնան,
և յարկածից ապագայիցն զգուշանան,
Ի՛հիւսեալ պսակ բանից կարգի յարմարև կ՚ան,
ի զարդ գլխոյ բանասիրիդ յոյժ ըղձական:
Նոյն և նշան անլուծ սիրոյ եղբայրական,
և մեզ յանձնիւրս ժամանակաց պատճառ յիշման:

ՆՈՐԻՆ ԴԱՐՁԵԱԼ ՅԱՂԱԳՍ ԵՐԿՆԻ

Այն, որ յառաջ քսվ ճառեցան բան նախնական,
յաղագս երկուց տրամագծիցն անկիւնական,
Եւ տարերացըն դաս կարգի միջնորդական,
և արուեստից խառնուածոյն յարմարական,
Այլ վերստին դառնամք ի նոյն բան բաղձական,
և սկսանիմք յաղագս երկնի՝ ըստ հետևման:
Եւ կի անձամբ յայս ձեռնարկել չեմք բաւական,
կհոգին Աստուած վերակարդամք մեվ օգնական:

Նախ վառաջինն վերկինն յիշեմ ըվվերնական,
և համառօտ իսկ անցանեմ անքննական,
Զոր և եթեր վսա կարդացին ավգն յունական,
և հուր թաղկեալ այնք որ լեվուաւ քաղդէական:
Իսկ է Հրատ նա բոցագոյն և պարվական,
մարմին աննիւթ և անչարչար անհատական:
Ո՛չ է ումեք՝ ոչ ոք ի նմա, այլ վատական,
կի հինգերրորդ է ի չորիցս առանձնական:
Վարագոյր աստուածութեանն անճառական
ձգեալ ընդդէմ լուսեղինացն անմարմնական:
Զբոլորըս բնաւ շրջապատեալ՝ վօրէն ձեղուան,
արագապէս առեալ շրջան անտեսական:
Արդ, ըվսորայս կամիմ թողուլ՝ ասել ըվբան,
և վերկրորդէս սկսայց ճառել յօժարական:

Սա կոչեցաւ երկին երկրորդ հաստատական,
որ ի ջրոյ և ի յօդոյ անուանեցան:
Ո՛չ պարկեալ, ո՛չ թանձրացեալ, այլ լուծական,
որպէս ըստ ջուրս այս, որ առ մեզ են հեռական:
Իսկ ի յօդոյ փըչմամբ եղեալ, որպէս խորան,
գըմբեթաձև կամարացեալ նըման ձեղուան:
Նոյնպէս և հողմ և օդ սփռեալ տարածական,
որպէս յանօթ ինչ ժողովեալ ի նիւթական,
Ըկձև առեալ վերինն երկնի միշտ շրջական,
լուսաւորացդ եղեալ սա տուն և կայարան,
Որում վկայեն գիրք գործոցըն արարչական,
թէ եդ վնոսա ի յերկնային հաստատութեան:
Բայց որոշման սոցա տեղիք են վանական,
վոր մոլորակ աստեղքն ունին ընթացական:
Եօթնաստեղեան անուանեցան սոքա խորան,
յոմանց գօտիք և պարունակք պարբերական,
Մի քան ըվմի են գերապանց վերադրական,
և ութերրորդ գունդն անմոլար և բարձրական,
Յոր կերպարանք են կենդանեաց երկոտասան,
որովք բոլոր կամարն երկնից յայս չափեցան:
Նոյն և երկրիս հաստատութեան տեղի կալան,
յոր ըստ բնականըն վօրութեան ապդեն նըշան:
Զի և աշխարհ կերպարանօք մարդոյ ցուցան,
և երկնային բոլորակին վիճակեցան:
Խոյն է գլուխ, որ է աշխարհըն պարսկական,
Յուլ պարանոցն, որ են կողմունք բաբելական:
Եկաւորին ձեռքն են և ուսքըն գամրական,
և Խեցգետնի լանջք կոչեցեալ են Հայաստան:
Առիւծն ողին իսկ և կողին՝ ասիական,

Կոյսըն ներքին որովայնին ելլադական:
Կըշիռն, որ է կըշտոցն երկուց լիբէական,
իսկ և Կարիճն է անդամոցն ապգ կրետական:
Աղեղնաւորն բարձքն և երիք իտալական,
և Այծեղջիւր՝ ծունկք երկոքին՝ Ասորեստան:
Ջրհոսըն սըրունքն է աշխարհին եգիպտական,
և Ձուկըն թաթք ոտիցն երկուց՝ է Հնդկաստան:
Երկոտասան կենդանակերպքս որ կոչեցան,
ըստ համարոյ ամսոց տարւոյն հանգունական:
Եւ աստիճանքն, որ ի նոսայ երեսնական,
աւուրց սմսոյն են վուգաթիւ և համաբան:
Իսկ բովանդակ կամարն երկնից համարական,
երեք հարիւր վաթսուն թուով են աստիճան:
Որովք ըստ նոյն թիւ համարոյ աւուրք ծընան,
յերկոտասան ամիսք տարւոյն, որ գոյանան:
Թողում ըկհինգ թիւ աւելեացն անքննական,
վի խոր ունի այն տեսութիւնըս մասնական:

Դարձայց ի նոյն կերպ կենդանեացն երկոտասան,
և ըվբնութեանցըն ճառեցից նոցա սահման:
Խոյն և Առիւծն 'ւ Աղեղնաւորն են ջերմական,
չոր և հրային բնութեամբն իւրեանց այրեցական:
Ցուլն և Կոյսըն և Այծեղջիւրն են հողական,
հով են և չոր և երկրային ցամաքական:
Եկաւորըն, Կշիռ և Ջըրհոսն են հողմական,
ջերմ և կակուղ են բնաւորեալ դալարական:
Խեցգետինըն, Կարիճն և Ձուկն են ցըրտական,
գէճ և ջրային են վօրութեամբ և վովական:
Սոքա չորից տարերց բնութեանցըն վուգեցան,

ի յարարչէն իմաստութեամբ կըշըռեցան:
Աստեղք մոլարք, որք ընդ նոսա միշտ ընթանան,
ունակացեալ բնութեանց նոցին վաղդումըն տան:
Սոքա նըման են շինուածոց, որպէս ըվտան,
որք և անշարժ կան ի տեղւոջն յաւիտեան:
Աստեղք նըման ուղևորաց են անցական,
որք ի նոսա իջևանին և ընթանան:
Յորժամ ի նոյն բնութիւն միմեանց հանդիպանան,
աճմունք բարեաց և քաղցրութեան տան մեվ նըշան:
Իսկ ի նոցունց հակառակացըն պատահման,
ցուրտն ընդ ջերմոյ, չորն ընդ գիճի խոնաւական,
Ցաւք և հարուածք ի յաշխարհի են ցուցական,
ըստ հակառակ բնութեանց նոցունց, որ վիճական:
Թողից ճառել վերկար սոցին վաղդմանց ըվբան,
վոմանց անշարժ ասել նոցա կամ շարժական:
Կամ վոր ի մարդն ասեն նըշան և կերպարան,
թէ ի նոցունց կերպ կենդանեացըն ձևանան:

Դարձայց ի թիւ մոլորակացն ի եօթնական,
որք տանուտեարք եօթանց դարուց անուանեցան:
Այլ և ըստ աւուրցըն շաբաթու համարեցան,
և ըստ պահու ժամուց աւուրց բաժանեցան:
Նախ ի ներքին գօտին սկսայց խոնարհական,
որ և երկինք լուսնին ասի և կայարան:
Սա Սիլինոս անուն կոչի՝ ըստ յունական,
այլ և Ղամար նա անուանի՝ ըստ տաճկական:
Իսկ մեք լուսին ասեմք սմա՝ ըստ հայկական,
վասն վի լոյս ունի նա յինքն իւր սեփհական:
Են աստիճանք գնացից նորա յոյժ նըրբական,

Վի նա տեղեաւ մերձ է յերկիրս և մօտական:
Ուստի յաւուրս երկուս և կէս ի յընթացման,
կկենդանակերպըն կատարէ և վաստիճան:
Ի քսան և եօթըն թիւ աւուրցըն կատարման,
դարձեալ ի նոյն գայ վերըստին տեղ ծընընդեան:
Ի քսան և ինն օր և կիսոյն աւարտական,
դարձեալ նորէ վիւր հնութիւնն մանկական:
Բայց ըվսմանէ ոմանք ասեն՝ արք գիտնական,
թէ ոչ ունի լոյս յինքենէ իւր բընական,
Այլ հայելի ընդդէմ կացեալ արեգական,
և ի նմանէ ճառագայթէ վլոյսն իւրական:
Այլ մեք ասեմք՝ ըստ սուրբ գրոց ճըշմարտական,
թէ լոյս լուսնին է յինքենէ արարչական:
Զի թէ ճըճի մի փոքրագոյն և սողնական,
ունի լուսիկ տըպաւորեալ ի յիւր տըտան,
Որով ըվգիրս իսկ ընթեռնուն ի ժամ մըթան,
ի կարգ գրոյն վնա տանելով ի տողական,
Ապա ո՛չ է վարմանք ասել վայն մեվ ըվբան,
եթէ ըվլոյս լուսինն ունի ըսկըվբնական:
Իսկ որ նըշան և գիծ ի նմայ է դրոշմական,
այն շուք երկրիս է և ծովու, որք կերպանան,
Զի հայելի է աշխարհիս նա ցուցական,
նա և երկրի չափ մեծութեամբն ասեն ըվբան:
Թէ օրինակ այսըմ խընդրես հաւանական,
ի քաղաքաց բավմաց ուսիր տիեվերական,
Զի յամենայն քաղաք փողոցք են յոգնական,
և միապէս վնա տեսանեն դէմ յանդիման:
Ի ժամանակս աւուրց տարեաց է մեվ նըշան,
և որք օդոց փոփոխութեանց տեղեկանան:

Պատարագօք և աղօթիւք առ տէր կարդան,
ի բերմանէ չար պատահմանց ըզգուշանան,
Եւ որք ի ծով նաւել կամին վաճառական,
ի նոյն տեղւոջ նաւ հանգստին վետեղանան:
Որք ճանապարհ հեռի ունին կամ լեռնական,
անդէն ի տան ըզգուշասցին անվնասական:
Եւ այս նըշան սեռըն սիրոյ արարչական,
վի ընդունայն մի կորիցեն որդիք մարդկան:
Այլև յանբանս իսկ տեսանի նըշան աճման,
և տընկական բնութեանց լինել այլայլական:
Զի ի յաճման նորին աճեն և լիանան,
և ի մաշիլըն լուծանին և թուլանան:
Զնոյն և ի ջուրըս տեսանես առ ծովական,
որք լիանան և թերանան նըմին նըման:
Բայց կարմանամ ես ընդ լուսնին եդեալ սահման,
որ միշտ աճմամբ և հընութեամբ փոփոխական,
Զի օդական նիւթ ամանոյ է երկբերան,
որպէս պատեանք գաղտակուրի ըզկարծրական:
Ցորժամ երթայ լուսինըն մերձ արեգական,
նուազութիւն լինի լուսնոյն ունակական:
Զի կբոլորակ լուսնոյն ունի վերոյ կողման,
և այն ընդդէմ արեգականն ի հայեցման:
Իսկ կատանել նըմին ի բաց հեռացական,
յայնժամ լընու լոյսըն լուսնին և մեծանան:
Բոլոր լուսնոյն իջանելով ներքնոյն կողման,
և ըստվերին հալածելով առ վերնական:
Ցորժամ ի ծնունդն իւր երևի նորոգական,
յարևմըտից կհայեց ունի արևելեան:
Իսկ յարևելս ի լըրմանէն մաշողական,

առ յարևմուտս ըվդէմսն ունի ըվհայեցման,
Զի կէս գընտին լուսով լինի այնմ կողման,
որ ի լուսոյ արեգականըն մերձենան:
Եւ որ ի միւս կողմըն լինի և վատական,
առանց լուսոյ նա երևի ըստուերական:
Իսկ ըվպատճառ սորին լինել խաւարական,
որ պատահի այնմ ինչ աւուրց հընգետասան:
Յորժամ կըշիռ միմեանց լինին հանդիպական,
որ առ վերնաւն տըրամագիծն և ներքնական,
Յորժամ վեցիւք կենդանակօքն են հեռաստան,
հարիւր ութսուն աստիճանօք են բացական:
Սովորական լուսոյն ձըգումն հիւսիսական,
որ ի ծագման լուսոյն լինի արեգական:
Այն է առիթ լուսոյ լուսնին և օգնական,
որ անպակաս միշտ երևի նըշողական:
Իսկ որ երկինսն է անուանեալ վիշապական,
մերձ յարեգակըն հանդիպի ըստ պատահման:
Ի մի և նոյն կենդանակերպ և յաստիճան,
ընդ մէջ անկեալ լուսոյ ծագմանն արեգական,
Եւ շուք երկրի ի միոջէ կողմանական,
ի հարաւոյ կամ հիւսիսոյ դիմականան:
Նովաւ ծածկի լուսնըն լուսնի ծագողական,
և մըթացեալ ճառագայթիցըն սևանան:
Եւ այս խընամք է արարչին իմաստնական,
վի մի վաշխարհ կարծեալ տեսցուք անապական:
Արարածոց տալով ըվփառս աստուածական,
հեռանալով ի յերախտեացն անսպառական:
Այլ գիտելով միշտ վսոսա ծառայական,
և մեվ տուեալ գործ ըսպասու և պաշտաման:

Սոքօք տացուք վփառս արարչին անվրաւական,
և մի լիցուք վավիր գործովք խաւարական:
Իսկ առ վերոյ լուսնին երկրորդ կոչեալ խորան,
այն որ Եռմիս ասեն լեվուաւ հոռոմական:
իսկ ի տաճկաց, որ Օտարիտ ըվնա կարդան,
և ըստ հայումըս Փայլածուն յարմարական:
Տասըն ժամուք կայ առ միում իսկ աստիճան,
և տասն ամիս վկենդանակերպսն երկոտասան,
Ջերմին և չոր, ցրտին և գէճ բնաւորական,
վի աստեղաց բնութեանց է յոյժ փոխարկական:
Ուսումնական իմաստութեանց և բանական,
գուշակ լինի տեղեկութեանց ներվարժական,
Համարողաց և հնարագործ հանճարական,
քընինիչ թուոց և բանահիւս ներտաղական:
Իսկ որ ի հետ սորին գօտին երրորդական,
Ափրոդիտէս է ըստ յունաց վերակոչման:
Զօհրայ կոչի նա ի յայգէն՝ որ տաճկական,
և ըստ հայումըս Լուսաբեր ծագողական:
Նոյն չափ և նա պատէ վգօտին կենդանական,
վոր Փայլածուն ունի վընթացս յարմարական:
Սմա բնութիւն ասեն լինիլ յոյժ խընդական,
երգեցողաց և գուսանաց գուշակական:
Քաղցր եղանակ ձայնից հմուտ յոյժ ըղձական,
և մեծ ապգի կանանց գուշակ պըճնողական:
Թողից և վայլս ասել սըմա երկայն ըվբան,
որ ի յանբոյսս և բուսականս է ապդական:
Ի չորրորդումն ելից կամարն արեգական,
վոր Ելինոս ըվնա ձայնեն ապգն յունական,
Այլ և Շամըս իսկ անուանեն ըստ արաբական,

որ ի հայումս գեղեցկապէս է ստուգաբան:
Ոմանք բնութեամբ ասեն սըմա յոյժ ցըրտական,
և ի յարփւոյն առեալ ըվլոյսն ըվջերմական:
Եւ յարացոյց սըմին բերեն նըմանական,
վակն բիւրէղ, յորժամ ունիս յարեգական:
Թէպէտ և ցուրտ է նա բնութեամբըն յատկական,
իսկ ի նմանէ շողն որ կաթէ հուր լուծական:
Բայց հաւանիմ ես սուրբ գըրոց աստուածաբան,
որ ի հոգւոյն սրբոյ խօսեալ մեվ յայտնեցան:
Զի առաջին լոյսն որ անեղ արարչական,
երկրորդ արար լոյս գեղեցիկ և եղական:
Եւ ի լուսոյն երրորդ աւուրցըն ցիր և ցան,
արկեալ անօթ լուսաւորացըդ վանական:
Եւ վհրաշատ լոյսըն պայծառ և պարվական,
արկեալ անօթըն լուսատու արևական:
Եւ ըվմնացեալ լոյսն որ յետոյ այլ թանձրական,
անտի լըցեալ վանօթ լուսնին՝ որ իգական:
Եւ վայլ աղօտ թանձրատեսակն և մրական,
խումբք աստեղաց են ընկալեալ՝ որք բավմավան:
Իսկ վընթացից լուսաւորացըդ շարժական,
դէմ յարևելըս ասեն գնալ ներհակական:
Զի յարևմուտըս բերեալ լինի երկնի շըրջան,
և դէմ նըմին մոլորակացդ անմիաբան:
Քեվ օրինակ հաւատարիմ վկայական,
մըրջիւն եդեալ առ ջրաղացին շրջող երկան:
Նա շըրջելով արագապէս անտեսական,
մըրջիւնն ընդդէմ նորին գնայ հանդարտական:
Եւ ի լուսնոյդ այս ցուցանի ժամն ընծայման,
որ ի կողմանն իսկ ծընանի արևմտական:

Եւ երևի վարևելեօք ըստ մասին աճման,
մինչ ի յաւուրըս կատարման հնգետասան:
Սոյն և ի կարգ կենդանակացըդ տողական,
որ վհետ Խոյին կան ի կարգի յարմարական:
Եւ արեգակն է ի նոսա փոփոխական,
ընդդէմ երկնի ընթանալով դիմակ բերման:
Այլ և նըշանք յոլովակի ներգործական,
ի ժամ ծագմանըն տեսանեմք վարեգական:
Զոր ի փըրկչին բանէ ուսցիս աստուածական,
յարևմըտից թէ ամպ ծագէ անձրևական:
Եւ ըվշնչումն որ ի կողմանց հարաւական,
խորշակ ջերմոյ լինիլ նըշան և տապական:
Եւ ի յամպոյ յամպ մըտանելըն ջերմական,
խոնաւութեան օդոց բնութեան է ցուցական:
Այլ և ժամուց ժամանակաց է գոյական,
և չորեցունց եղանակաց փոփոխական:
Զիւնաբերի ի ձմեռնային և սառնական,
և քաղցրաշունչ օդոյ հընչման գարնանական:
Բոցախառնի և հրատապոյն ամառնական,
և մեղմախառըն ցըրտութեան աշնանական:
Աստիճանօք արդար գնացիւք հանդարտական,
կարգ ըստ կարգի միշտ ընթանան ըստ մասին աճման:
Ի հիւսիսոյ իջեալ ի կողմն հարաւական,
երկայնութեամբ ըստուերք աճեն գիշերական:
Սառնամանիք ցըրտոյ հընչեն յոյժ խրատական,
և ձիւնաբեր բերմունք լինի ձըմեռնական:
Իսկ ի դառնալն ի հարաւոյ խոնարհական,
ի հասարակն երկնի հասեալ անդ ի խորան:
Հաւասարին ժամք գիշերոյն և տուընջեան,

գարուն լինի գեղեցկութեամբ վայելչական:
Անտի ցելեալ առ հիւսիսով՝ որ բարձրական,
երկայնութիւն ժամուցն աճեն տուրընջենական:
Ամառնային աւուրք առնեն և ջերմական,
տունկք և սերմունք պտղավէտին վայելչական:
Սառնամանիք օդոյ առնեն փախստական,
Ներքոյ երկրի արկեալ փակին անդընդական:
Ուստի աղբիւրք ցըրտին բղխեն և սառնական,
որպէս յաւուրըս ձմերայնոյն է ջերմական:
Որ ջերմութիւն օդոյն լինի արգելական,
յորժամ յերեսս երկրի շնչեն օդք ցըրտական:
Է և այլ գործքք գեղեցիկ արեգական,
որ բաժանէ վաշխարհս մասունք երկոտասան:
Զորս, որ յայն կոյս է աշխարհին հարաւական,
կոր այրեցեալ գօտի ասեն՝ անբնակ մարդկան:
Եօթըն է ի կողմըն հիւսիսոյ՝ շէն բընական,
որք վանական յինքեանս ունին ժամք աճական:
Որ առաջին բաժին աշխարհն է Հընդկաստան,
անդ միշտ ի նոյն ժամքըն լինին երկոտասան:
Որք և լրման իսկ աշխարհի մէջ կոչեցան,
և ի սաստիկ ջերմութենէն յոյժ թըխացան:
Իսկ ի յերկրորդ մասինըն ժամք երեքտասան,
տիւք և գիշերք միմեանց լինին փոխատրական:
Այս մինչ ի վեց մասն աշխարհիս փոխանցական,
մասունք ժամուց որքանդ լինին եօթն և տասան:
Իսկ առ մասին եօթնաբաժին հիւսիսական,
տիւք և գիշերքըն փոփոխին ժամուք քըսան:
Երբեմըն տիւքն այսչափ աճեալ երկարանան,
իսկ գիշերոյն ժամք մինչ ի չորսըն նուազանան:

Եւ որ ի յայն կոյս աշխարհին հիւսիսական,
այն անբընակ ի մարդկանէ և ցըրտական:
Ի յեղանակ գարնանային և ամառան,
ամիսըս վեց միշտ իր տեղի անդ տիւ մնան:
Զի ի Խոյէն մինչ ի Կըշիռըն կերպ աշնան,
արեգականն է բարձրութիւն հիւսիսական:
Ո՛չ գոյ տեղի ընդդիմակայ գերամբարձման,
առնել ընդդէմ շուք և ծածկոյթ ըստուերական:
Եւ ի յաւուրս աշնանային և ձմերան,
միշտ անդ գիշեր ամիսըս վեց երկարանան,
Զի առ հարաւ ցածանալով արեգական,
ո՛չ ժամանէ անդ առ նոսա լուսոյն ծագման:
Սա՛ է գուշակ թագաւորաց ազգի մարդկան,
և յանասունս՝ ըզձի հրկօր խըրոխտական:
Ի գալանաց՝ ինձ և առիւծ մըրընչական,
և ի թռչունս կարծիւ և կայլս որսորդական:
Այլ և ի բոյսս՝ այնք որք պատուով իշխանական,
անուշահոտ ծաղկանց՝ որք կան ի բուրաստան:
Իսկ որ ծագումն արեգականըն պատուական,
խաւարացեալ ժամանակօք նըսեմանան,
Երբ վիշապն ի մօտ մերձի ի յաստիճան,
և կամ լուսնին իսկ հասանէ ժամ ծընընդեան,
Ընդդէմ լուսոյն անկանելով ընդդիմական,
և ո՛չ տան թոյլ ի մեկ փայլել լուսոյն ծագման:
Այլ այս խնամք է բարձրելոյն հանճարական,
որով կաշխարհս այս տեսանեմք փոփոխական:
Եղեալք պատմեն զփառս Աստուծոյ անեղական,
զնա քարոզեն միշտ էապէս անեղծական:
Առ մեկ խօսին առանց լեզուի բարբառական,

ուսուցանեն առանց բանի անյօդական:
Որ և ի ժամ խաւարելոյն արեգական,
եթէ ունէր նա մարդկօրէն բարբառ և բան,
Աղաղակեալ յերկնից գոչէր առ ապգ մարդկան՝
— Դու ինձ վիա՞րդ անուն ասես աստուածական,
որ սպասաւոր եմ քեզ տուեալ անլրռական,
Եւ ո՛չ թիւրիմ ի հրամանէն արարչական:
Ըզքեզ ի գործ վարթուցանել լուսով ծագման,
և ըզգիշեր քեզ առ հանգիստ պատրաստական:
Ի ձմերայնի սառմամբ լինիմ ես ցըրտական,
և թանձրախիտ ամպով ծածկիմ գարնանական:
Ի հրակէզ տապ տոչորիմ ամառնական,
և ի լուսոյս իմ խափանիմ ըստ պատահման:
Ո՛չ թէ միայն չեմ ի պատուի աստուածական,
այլ և ոչ մա՛րդ եմ կենդանի և բանական:
Այլ դու հայեա՛ յիս գեղեցիկ լոյս եղական
և փառըս տուր արարողին միշտ յաւիտեան:—
Եւ հինգերորդ երկին Հրատին է կայարան,
վոր կէսք Արէս և այլք Մառեխ ըվնա կարդան:
Իսկ մեք Հրատ նըմին ասեմք կիվողական,
ջերմին և չոր և ույրեցօղ բոցանըման,
Որ ըվգօտին իւր պատելով պարագրական,
և աւարտէ ըվնաւ ամիսս ութ և տասան,
Օր ընդ կիսոյ կայ յաստիճանն ընթացական,
կէս ընդ ամսոյ առ կենդանեաւրն կատարման:
Զայլսըն թողից ասել ըվբանն քննողական,
յորս և ունի ինչ գուշակմունք ապդողական:
Վեց երրորդին սկսայց ասել աստեղրն բան,
որ նա կոչի Զեւս ի բարբառրն յունական,

Եւ ի տաճկացըն Մուշթարի է շնորհական,
և Լուսընթագ, որք ի յորդւոցըն հայկական:
Գիտնական և ուղղախօս ճըշմարտաբան,
եկեղեցեաց և սուրբ տեղեաց աղօթարան,
Եւ ի բուսոյ քաղցր և անուշ ճաշակական,
և յարուեստից թագ և պսակ արքայական:
Զգօտին պատէ վիւր ի տարին երկոտասան,
իսկ վաստիճանն երկոտասան աւուրբք լըրման:
Այս գեղեցիկ աստըղ բարւոյ ապդողական,
որ յիմաստնոց բնութիւն սորա յայս քընեցան.
Է ի կամարըն յեօթներորդ ի վերնական,
վոր յոյնք Կրոնոս և այլք Զոհալ կանունըն տան:
Ցըրտին և չոր՝ բնութեամբըն չար և վնասական,
գուշակ լուծից և ծերութեան և տըրտմական,
Ահ և երկիւղ և մահաբեր կասկածական,
և այլ բազում մասանց իրաց գուշակական:
Պատէ զգօտին ի թիւ տարեաց երեսնական,
և վաստիճանն ի յերեսուն օր ամսական:
Ո՛չ թէ տարտամ է սա գնացիւք կամ ծանրական,
այլ յոյժ անբաւ բարձր է երկին սորայն կայան:
Համեմատէ վերկինըս վայս ըվլուսնական,
յայն որ կամար Երևակին ընթացարան,
Որպէս և օր, քան ըվտարի՝ է՛ նուազական,
այնչափ և նուրբ երկին լուսնին՝ քան ըվնորայն:
Զնա տանուտէր ասեն դարուն առաջնական,
յորում և կեանք մարդկան լինէր երկարական,
Որպէս վերջին դարուս լուսին մաշողական,
որ և նուազ են կեանք մարդկան սակաւակեան:
Որք այսոցիկ իմաստնաբար հետևեցան,

և առ ի սոյն երկասիրել աշխատեցան,
Ո՛չ ընդունայն ինչ կամ ընդ վայր բարբառեցան,
այլ կըրթելով ներհըմտաբար տեղեկացան:
Զոր ի նոցունց աշխատութեան, որ վարժեցան,
փոքր ի շատէ նըշանակեմ սակաւ ըվբան:

Մոլորակաց թիւ և անուն, որ ասացան,
են ի վերոյ և ի ներքոյ արեգական:
Այն որ ի բարձր և գերապանց երկինքն կան,
նոքա յերկար ամք, բայց սաստիկ ապդեն կնըշան:
Եւ որք ներքոյ և նրբագոյն շըրջին խորան,
նոքա աւուրց են և ամսոց գուշակական:
Է և պատճառ մոլորական սոցա կոչման,
վասն որք յուղիղ գնացից իւրեանց յետըս դառնան,
Զի յարևելըս դէպ ուղիղ միշտ ընթանան,
և յարեգակըն մերձ եղեալ կրկնին և կան,
Որպէս փոքունք, որք արքայի հանդիպանան,
անդէն կասեն յիւրեանց գնացիցն և մեղմանան:
Նոյնպէս նոքա՝ ի լուսաւորըն մեծ հըպման,
ի մեծ լուսոյն և հրապայծառ կան յայրեցման:
Բայց ես և կայս առ ի նոցունց լուայ ըվբան,
թէ երկոքին նոքա միմեանց ներհականան,
Որ Լուսընթագ և Մուշթարին է վերնական,
կայն ճոխութեան և մեծութեան ասեն նըշան:
Իսկ Փայլածուն՝ կոր Օտարիտ խոնարհական,
կայն հնարագործ իմաստութեանց վարժողական:
Սոքա դիմակ գործովք միմեանց վիճակեցան,
և առ միում անձին սոքա ո՛չ բնականան,
կի մեծութեան ուսմունքըն չե՛ն ախորժական,

և ոչ ուսմանց հոգք աշխարհիս պատրողական:
Իսկ թէ իւրեանց տուն կոր ասեն պատահական,
մարդն երկոցունց շնորհաց լինի ասպընջական:
Եւ այս պարգևք բարերարին առատական,
որ կարժանիսն ընտրէ ի գործ մարդկան պիտան:
Բայց կի բակումք են այսըմ տէր և անարժան,
կի Աստուծոյ շնորհքն է առատ անկըղջական:
Ե՛ն և այլ՝ աստեղք երկու ընդդիմական,
Մուշթարին և Լուսաբերն, որ է Զօհրայն,
Զի Լուսընթագն, որ ի վերոյ արեգական,
կնա սրբութեան և մաքրութեան ասեն իշխան:
Եւ կԼուսաբերն, որ առ ներքոյ խոնարհական,
կայն խնդութեան և ցանկութեան՝ որ մարմնական::
Իսկ ըկպատճառն այսըմ գործոյ վկայական,
ո՛չ տարադէպ, այլ մտաւոր խորհրդական,
Զի նա ի վեր առ վերնայինսն յարմարական,
սա ի խոնարհ երկրաւորաց տարփողական:
Բայց աստեղացս այս որոշին տեղ և կայան,
ոմանց բարեաց՝ կայլըս չարեաց ասեն նըշան,
Զի որք Պըրճեր և կենդանեաց են կերպարան,
կոմանըս տուն նոցին ասեն իւր սեփհական,
Եւ ի տեղի, ուր յարարչէն ստեղծեալ եղան,
կնոյնըն փառաց և բարձրութեան ասեն կայան,.
Եւ որք բնութեամբ մոլորակին հանդիպանան,
ըկնա բարի և շնորհաւոր ասեն բնական:
Ոմանց սիրոյ տես և հայեցք խաղաղական,
կայլ սառընդէմ և անյարմար վիճողական:
Եւ ապացոյց սորին բերեն նմանական,
կոր չէ՛ արժան իսկ աղարտել ըկնա մարդկան:

Զայն որ ի տան իւրում լինի հանդիպական,
որպէս թէ ոք յիւր բուն երկրին հաճոյական:
Եւ կոր փառաց և բարձրութեան ասեն կայան,
որպէս թէ ոք յիւր հայրենիսն ըստացական:
Եւ որ բնութեան տեղւոյն կերպին հանդիպական,
որպէս քաղաք նորին և մերձ առ ակգական,
Իսկ որ սոցունց տեղեաց ընդդէմ պատահական
կնոսին տկար իսկ և անկօր անգործնական:

Այս քեզ սակաւ բան յարտաքնոց ուսումնական,
թէ ախորժես իսկ և չառնես քամահական,
Զի աստեղաց բնութիւն չասեմք ակատական,
կամաւ յինքեանց ներգործելով իշխանական,
Այլ ի մարդկան պէտըս կակմեալ ծառայական,
և յարարչին հրամանըս կան միշտ անխափան:
Զի որ ըստեղծ կաշխարհս բանիւն արարչական,
կնոսա ձեռին գործիք ունի յարմարական,
Որ արուեստիւ շարժեալ շրջէ կգունդն երկնական,
և նոյն շարժմամբ ժամանակաց թիւք գոյանան:
Իսկ ժամանակք լուսաւորօքդ որք ընթանան,
որպէս·նիւթոյ ինչ տարերացդ են գործնական:
Եւ համայնից գոյից տարերքս են ծնողական,
որք կենդանիք և բուսականք բաղկացական:

Այս համառօտ ցոյց արուեստին աստուածական,
որ կլուսաւորսդ կակմեաց գործիք իւր եղական:
Բայց չէ՛ կարմանք այս տեսանօղ մըտաց մարդկան,
թէ ի բարձունս երկնից լուսոյ ծաղկունք ծընան,
Որ կօրութիւնս ինչ բնաւորեալ ունին ակդման,

վոր արարիչն եդ ի նոսա օգուտ մարդկան,
Որպէս արմատքս այս, որ յերեսս երկրի բուսան,
ներգործութիւնս ունին յինքեանսըն բընական:
Նա և պըտուղք երկրի համովքըն կանապան,
ոմանք կապօղք են, այլ՝ կակուղք և լուծական:
Ոմանք ցըրտինք են, այլ՝ քաղցունք և ջերմական,
որք ի տարերց նոյնք՝ կանապանք որակացան:
Նոյնպէս ծաղիկք յերկրի ի յայս բնաւորեցան,
և համօրէն տունկք և արմատքըն սեռական:
Ոմանք ցաւոց հիւանդաբերք և մահական,
այլք կօրութեամբ բժշկարար առողջական:
Թողից կթռչնոց և կգապանաց ճառել ըկբան,
որք կանապան կերպ և ի բարք բնաւորեցան:
Է՛ և ի խունկս ինչ կինամոն կարմացական,
որ ըկնմանէ են սքանչելի բանք ճառական:
Եթէ ի ջուր ինչ կաթսայից եռանդնական,
արկեալ փոխէ կնա ցրտութեամբըն սառնական,
Այլ և ի քուն գոլով մարդոյ և թըմրական,
մերձ առ շըրթունսն եդեալ բղխէ բարբառ և բան:
Այլ և կարծիք ինչ կուսութեան յոք լուծական,
կնա ծխելով իսկ ճշմարիտ տեղեկանան:
Են և այլ ևս ծաղկունք յոլով կարմանապան,
որք կօրութիւնս ինչ սքանչելի ունակացան:
Արդ, թէ ի բոյսս է ինչ բնութիւն ներգործական,
որք եղծականք են, առօրեայք և անցական,
Ապա և մի՛ լիցի կարծիք երկբայական,
թէ կօրութիւն ի լուսաւորսդ են ապդական,
Որ ի լուսոյ են և ի հրոյ նիւթ պարկական,
և տարերացս որք ի սոցունց են շարժական:

Բայց թէ վասն է՞ր բնաւորեցան այս առ մարդկան,
վաշխատութիւնս այլոց առնել եպերական,
Ես այսըմ երեք պատճառ ասեմ դիպողական,
և դու ուղիղ մըտօք լըսէ յօժարական:
Մի թէ կարծիք ինչ է ուսումըն թերութեան,
և կամ անշահ իսկ աշխատանքըն տըքնութեան:
Երկրորդ՝ թէ ծոյլ իսկ և տարտամ է կրթութեան,
և ո՛չ առեալ կուսման ճաշակըն քաղցրութեան:
Երրորդ՝ մախանք քիչ նախանձու և հեռական,
որով մաշէ կհոգին հրով տոչորական:
Բայց կոր երիցըս կարգեցի վերջին ըվբան,
Նախ առաջին ըվնոյն ցուցից քեզ խրատական:
Մի՛ նախանձուն հըրով մաշիր կամ տըրտմական,
Մի՛ կընկերաւըն քամահէր որպէս կանբան,
Մի՛ ըվբարւոյն չար ասասցես ըվկերպարան,
Մի՛ ըստեղծուած վեհին տեսցես որպէս խոպան:
Որպէս ծարաւ աղբեր դիմեա յօժարական,
և ըվպասքեալ միտսդ արբուսցես բանիւք ուսման,
Որպէս լուսոյ ծագման յըստակ արեգական,
Նոյն ըվհոգւոյդ աչըս բացցես տեսողական:
Մի՛ յայլասեռ յապգաց գարշիր խնդրօղդ ուսման,
մի՛ յաղքատաց մեծամըտիր որպէս իշխան,
Այլ առ ի քեզ որպէս ի փշոյ վարդ հոտևան,
թէ կոք անօթ շնորհաց տեսցես և պատուական:
Մի՛ ծուլութեամբ դանդաղեսցիս որպէս կանբան,
մի՛ կանդաստան հոգւոյդ թողցես որպէս խոպան,
Մի՛ ապառաժ կսիրտդ արասցես բանին սերման,
և մի՛ փշաբեր անտառասցիս և հեղձական:

Մի՛ ճանապարհ ոտից լիցիս դու և կոխան,
վայս ի բանից փրկչին ուսցիս առակական:

Բայց որ վարուեստս այս նախատեն իբր անպիտան,
որ ի մերոցս ապգաց թողեալ արտաքսեցան,
Եւ այսոցիկ պատճառ ունին խորհրդական,
վի չարաչար ուսմունք յոմանց խառնակեցան:
Եւ որք յիմար մըտօք սըմին ծանօթացան,
նոյնք իմաստուն վանձն և ներհուն համարեցան:
Ըվտեսութիւն մըտաց ունին յոյժ ախտական,
և ի գրոց սրբոց լուսով ո՛չ վառեցան:
Սոքօք վանճառ խընամք սիրոյն արարչական,
որ արուեստիւ ետ ի բնութիւնս այս եղական,
Զի ի գոյիցս եղականաց և եղծական,
վգոյացուցիչն անեղ ուսցուք անապական:
Զայն աստեղաց բնութեանն ասեն յարմարական,
իշխանաբար վնոյն ներգործել անբանական:
Այլ և վմերն իսկ շարժութիւն իշխանական,
առ ի ներքոյ նոցին կարգեն բնաւորական:
Բայց որ վուռկան գործւոյն ունին որսորդական.
և յաղտաղտուկ ծովէ որսան ինչ պատուական,
Առ ի ցամաք տեղի նստին հանդարտական,
և ըվխոտանն ի բաց ընտրեն պատրաստական,
Կամ որ հըմուտք են արուեստից բըժըշկական,
ի յոգնակի ծաղկանց լինին հաւաքական,
Այլ և վեռնոց թիւնաւորաց և սողնական,
խածեալ վիրաց նոցուն կապմեն դեղ փըրկութեան:
Որով և դու իսկ իմաստուն և խոհական,
ի յամենայն ուսմունս գտցես ինչ ուղղական,

Եթէ յստակ կմիտսդ ունիցիս տեսողական,
ի յախտաւոր բանից մնալով անցանկական,
Որպէս ըվլոյս պայծառ ծագեալ արեգական,
ի գարշահոտ տեղիս մնալով անխառնական:
Մի՛ որպէս ջուր կմիտսըդ ստանար հեշտ լուծական,
այլ որպէս հուր հատուցանօղ և վերնական:
Իսկ որք թիւրեալք բանիւք խօսին սըխալական,
և կոր քննեն ո՛չ կատարի ճշմարտաբան,
Ո՛չ կի արուեստն է անկատար և թիւրական,
այլ որք կարիւք կանձինս ասեն գիտողական,
Եւ ո՛չ իսպառ ժուժկալեցին ի կէտն ուսման,
այլ կաղփաղփուն շաղախեցին իսկ անպիտան:
Կամ ի համար հաշւոյն եղեն մոլորաւան,
կամ ի գիտնոց ո՛չ վարժեցան ընտրողական:
Մանաւանդ ուսումնականք, որ այժմըս կան,
Նախքան կըսկիվբըն համարին գիտել կվախճան:
Ցաշակերտաց կարգէ լինին փախըստական
և բաբունիք անուամբ շրջին յոյժ պերճական,
Ի յերկասէր քըրտանց մընան ունայնական,
և վաստակոց պըտղոյն ցանկան առանց սերման,

Որ և յիմոց բանից դատիմ անօգտական,
և անպատճառ լեկուաւ լռեմ անձայնական.
Զի կժամանակս իմ կորուսի յոյժ անպիտան,
և վաստակոց մըշակ եղէ անշահեկան,
Զմասունս հոգւոյ ունայն թողի անպարդական,
և ըվմտացս աղբեր խցի առանց բըխման:
Զի որք արեան են մերձակայք և ապգական,
վիս ստիպէին ի հոգս ունայն աշխարհական:

Ցոր փութային նոքա՝ չեղէ ինչ օգնական,
և ոչ սրտիս իմ բաղձանաց նոքա նըման:
Զի որ մարմնոյ էր ցանկալիք՝ նոցայն էր ջան,
և ինձ թողուլ կայնպիսի փոյթ, սիրել կբան:
Նոքա սըրտիս իմ տենչանաց ոչ ըղձացան,
և ես նոցունց հետևելով եղէ անբան:
Զի ի յերկրիս՝ յորում էի տընկոյ նըման,
սոցա պըտուղք իմ վաստակոցն էր անպիտան:
Եւ որք պտղոյն քաղցրաճաշակ ո՛չ բաղձանան,
և ոչ ի տունկն իսկ գթալով տանին դարման:
Վասն այնորիկ բարձի թողի կճաշակն ուսման,
և կանձն ի գործ ետու հոգոց աշխարհական:
Թէպէտ անձուկ սրտիս նեղէր տագնապական,
և ի խորոց սրտէ հընչէր ձայն հառաչման,
Այլ որ ի դէպ հասակն ուսման և մանկական,
երբէք և ո՛չ ինձ պատահի, քանզի անցան:
Այլ առ ի նոյն սիրով դառնամ յոյժ ըղձական,
և վերկնային վարդուն ճառեմ ներբողական:
Զոր առ տեղեաւն քեզ ծանուցի բանք մարմնական,
կնոյն եղանակ առ փոխեցից քեզ հոգեկան:

Ով սքանչելի ձեղուն յարկի այս մեծի տան,
ի բարձրելոյն բանէ ձգեալ որպէս խորան,
Երրակի սեռից ապանց ժողովարան,
որք ի ծոց քո պարունակին խրախճանական:
Դու յարկ մեծին ձեռամբ շինեալ արքայական,
ջահք ի բարձանց ի քեզ կախեալք անշիջական:
Դու անթառամ ծաղկանց լուսոյ մեծ բուրաստան,
որք յանդաստան քո գեղեցիկ ծաղկագրեցան:

Ո՛չ թէ միայն քո պարանոց վարդարեցան,
այլ բովանդակ մարմին և անձն շքեղացան:
Ցոյժ մեծութիւն քո հրաշագեղ՝ անչափական,
հանդերձըս նուրբ և պատմուճան քեզ կարգեցան,
Ո՛չ թէ միայն կրկին ակունք՝ որք ճոխացան,
այլ յոգնակի ակունք լուսոյ շարագրեցան:
Եւ մարգարիտըս լուսափայլ՝ որք յեռեցան,
ընդ գիշերոյ սպիտակափայլ ջահ ճախրական,
Իսկ ի տուէ բաղմափայլիւն բոց կայծական,
յոր գիշերոյն աղօտ փայլունքըն ծածկեցան:
Դու անբարբառ և միշտ լինիս պատմողական,
վքո գեղեցիկ յօրինողէն, որ անսահման:
Զայս վկայէ մեծին Դաւթի Սաղմոսարան,
և առաքեալըն սուրբ Պօղոս վարմանական:
Դու վարդապետ մեզ՝ ուսուցիչ անխօսական,
ի քեզ ունիս տառք լուսեղէն ընթերցական:
Տառք քո խօսունք՝ մեզ խրատիչ անձայնական,
որք են մատանց գործ բարձրելոյն անհասական:
Դու օրինաց տախտակ գըրոյն, որ բընական,
վոր ընթեռնումք հասարակաց որդիք մարդկան:
Ի շարժմանէդ մըշտախաղաց անկայական,
վանշարժելին շարժօղ բնաւիցս՝ որ այժմ կան:
Ցարարածոցդ համագումար՝ որ տարրական,
վարուեստաւորն որ հրանիւթիցն անտեսական:
Դու խրատիչ մեզ յաշխարհի և վարժական,
որ իմաստուն վմեզ յօրինես և բանական:
Դու ի ծոց քո վմեզ ամփոփես ծնողանըման,
բխմունք բարեաց մեզ ընծայես փարթամական:
Դու մեզ դայեակ՝ դաստիարակ, որպէս մանկան,

Ժամանակաւ ըմմեկ խրատես սաստողական:
Հըրոյ ցոլմունք կայծակնաթաւ փայլատական,
ի ծոցս ամպոյ հողմով հոսեալ հուր կիպական:
Ի ճընշմանէն սաստիկ փայլեալ նիւթ կայծական,
և պատառմամբ, թնդմամբ որոտ ընդոստական:
Իսկ լուսաւորըն փոքր իշխան գիշերական,
խաւարային ժամուն ի լոյս մեկ սփոփական,
Սա կօրինացըն հընոյ բերէ ըմկերպարան,
որ Մովսէսիւ տուան ապգին իսրաէլեան:
Լոյս գիշերոյ ժամանակին աղօտական,
մինչդեռ ծագեալ չէր արեգակն արդարութեան:
Լուսինն որ ո՛չ կարէ ծագել պլոյս հանրական,
այլ գիշերոյ մասին նուապ փայլողական,
Նոյն և օրէնքն՝ որ տուան տոհմին աբրահամեան,
ո՛չ օգնէին, այլ յայտնէին ամեղըս մարդկան:
Այլ և աստեղք համագումար շարունական,
որք ընդ լուսնին խումբք և կաճառք են յոգնական,
Զմարգարէից դասքն երջանիկ՝ որք մաքրեցան,
ընդ օրինացըն լուսատու մարդկան տուան,
Աստեղք ճեմեն յերեկոյին ժամուն սկըսման,
կարգ ըստ կարգի խաղան ի լոյսն առաւոտեան:
Մինչ Արուսեակն՝ առաւոտուն լուսոյն նըշան,
որ արուեստիւ տայ գալըստեանն արեգական:

Այսպէս և պարք մարգարէիցն՝ որք ընտրեցան,
ի սուրբ հոգւոյն ճրագունք լուսոյ շնորհաց լուցան:
Ի Մովսիսէ մինչ ի յօծեալն Աստուածըն բան,
ի խաւարի կռապաշտութեան լոյս ծագեցան:
Տանս մեծի այսմ աշխարհի, որ վգայական,

պատգամախօսք և լուսաբերք առաքեցան:
Սոքա վխորհուրդ անպարագիծն աստուածութեան,
յոգիս մարդկան նըշուլեցին լուսոյ նըման,
Մինչ Արուսեակն արեգականն արդարութեան,
հինն օրինաց աւարտողի նորոյս սկըզբման:
Սա Յովհաննէս է ամլորդին Զաքարիեան,
որ կարապետ աստուածորդոյն էր գալըստեան:
Նոյն և ճրագ շնորհօք վառեալ, օրինական,
մըխիթարիչ խոր գիշերոյն և թախծական,
Եւ գիշերոյ հաւ քաղցրախօս և կուարճական,
վարթուցանօղ մարդկան ի քնոյ թմրողական:
Դարձեալ և այլ քեզ օրինակ յարմարական,
անմեղ մարդկան՝ որք և մեղօք խաւարանան:
Սա յարևելս գոլով բոլոր իսկ ի լըրման,
և առ սակաւ սակաւ խաւար փոխարկական:
Իսկ յարևմուտըս կոյս բոլոր լուսոյն ունայն,
առ փոքր փոքր աճմամբ ի լոյս կուարթական:
Նըմանապէս մինչդեռ է մարդն անմեղական,
արդարութեան գործովքն ի լոյսն է հոգեկան:
Իսկ թէ մեղացն ըստուերք ի նմա հպօրանան,
արդարութեան լուսոյն նըշոյլք տգեղանան:
Ի կատարել բարւոյն լինի նա լուծական,
և հեշտութեան ախտիցըն մուտք ի նըմա բանան:
Անդէն բոլոր մասունք հոգւոյն տգեղանան,
և յարևմուտըս կոյս լինի դիմեցական:
Իսկ թէ ծագէ ի նըմա շընորհքըն կըղջական,
մինչդեռ ի մէջ մեղաց նըստի վարանական,
Ըկչարաչար մեղսըն լինի նա խոստովան,
և յառաջին փառացըն գայ ի կերպարան:

Այս քեզ դպրոց ալֆավիտաց՝ որպէս մանկան,
ի յանբարբառ տառիցն երկնի նըշան ուսման,
Այլ և կպայծառ լուսոյն աղբիւր միշտ հոսական,
ըվգեղեցիկ ակն աշխարհի լոյս ցուցական:
Զնա ի կամարըդ քո բերես ջահ փայլական,
որ վկերակուրըն հրոյ բաշխէ բնաւից պիտան:
Սա մեզ խրատ օրըստօրէ քարոզական,
ըվմահ և վկեանք օրինակէ դէմ յանդիման:
Առաւօտուն ծագմամբ ըվծընունդըն մայրական,
երեկոյին թաղմամբ ըվմուտն ի գերեզման:
Սա վօրինակ բերէ լուսոյն անեղական,
որ ի ծոցոյ հօրէ ծընունդ որդի և բան:
Ցարևելից գեղով ծագէ փեսայական,
արագապէս ընթացս առեալ հրսկայական:
Զարեգականն արդարութեան պատմէ ըվբան,
վաննիւթ լուսոյն մեզ քարոզէ լոյս եղական:
Սա ծագելով յարևելից լուսոյն կողման,
որպէս ծննդեամբ բանն ի հօրէ անճառական:
Սա նիւթական օդով լինի պարագրական,
որպէս աննիւթ լոյսըն մարմնով բնութեամբ մարդկան:
Սա ստեղծական լոյս համասփիւռ անմարմնական,
որ օդային մարմնոյ եղև պարունական:
Ոչ ի բնութիւն ինչ փոխեցաւ այլանման,
այլ վոր յառաջն էր անմարմին և սկվբնական:

Նոյնպէս ծընունդըն հօր որդի, որ լոյս և բան,
ի յարգանդի կուսին մարմին առ թանձրական:
Սա է Աստուած պատճառն հօր նոյն էական,
նոյն է և մարդ՝ որդի կուսին ծնունդ մայրական:

Եւ որպէս պլոյսն արկեալ յանօթ արեգական,
ոչ թէ կրկին կնա անուանեմք բաժանական,
Այլ մի և նոյն իսկ տեսանեմք անպատական,
պլոյսն անմարմին և պիւր անօթն՝ որ օդական:
Նոյնպէս փառացըն հօր ծագումն և կերպարան,
որ ի կուսէն ցգեցաւ ըստերպ ծառայական:
Ո՛չ թէ երկուս՝ որդիս ասեմք կամ կերպարան,
այլ մի և նոյն խոստովանիմք զԱստուածըն բան:
Եւ որ ունէր զբնութիւնըն հօր հասարական,
Նոյն և ըստդէմ առանձնակի և յատկական:
Նա ինքն էառ ժամանակաւ զբնութիւն մարդկան,
այլ և ըստդէմ ճշմարտապէս առանձնական:
Այլ ոչ յերկուս իսկ բաժանի բնութեանըն բան,
և ոչ կրկին ասել ըստդէմ որոշական,
Այլ մի և նոյն է մարմնացեալ Աստուածըն բան,
բնութեամբ դիմաւ առանձնութեամբըն միական:
Ոչ անմարմին բնութիւնն եղև այլայլական,
և կամ մարմնոյ ինչ թանձրութեան փոխարկական,
Այլ կատարեալ բնութեանց երկուց նոր խառնըման,
միաւորեալ անյեղապէս անճառական:
Մարդ լինելով բոլորովիմբ Աստուածըն բան,
և ըստբնութիւնսն իւր պահելով անշփոթական,
Աստուածացեալ բոլոր բնութիւնն ադամական,
և զգոյութիւնն իւր ոչ թողեալ ըստթանձրական:

Լեր ճշմարիտ և բարեփառ ուղղադաւան,
և ի յերկոքին սիւն հաւատոյն հաստատական,
Որպէս թռչունք երկու թևօք յօդ սըլանան,
արագապէս զօդըն հերձեալ՝ բարձր ընթանան,

Եւ որպէս մարդ, որ կենդանի և բանական,
յերկուց ոտից կայ հաստատուն անսխալական:
Այսպէս և դու՝ կբան հաւատոյն տնօրինական,
այս երկոքումք բարեպաշտեա փառատրական,
Ըկմի բնութիւն խոստովանել ըստ միութեան,
ոչ ուրանալ որոց եղևն ըստ գոյութեան:
Այլ կի յերկուց կատարելոցըն միական,
ոչ բաժանել, ոչ խառնակել շըփոթական:
Էր գեղեցիկ կինուոր արի հրսկայական,
և վերկոսին վէնս ըվգեցիր անվթարական:
Ի թըշնամեաց յոր պատահիս մարտ խըմբական,
ըստ պիտոյից արկցես ի գործ դիպողական,
Ըվճանապարհ ուղիղ գնասցես արքունական,
վի յերկոսին կողմանքն են փուշք խոցոտական,
Որպէս կամուրճ վերայ գետոց յորդահոսան,
վառ ի վերայ, նոյն և ներքոյ՝ ջուր հեղձական,
Այլ դու վմիջինն ընթանալով նրբակածան,
ի յերկոցունց կողմանց մնասցես անվնասական:
Մի բաժաներ վբնութիւն բանին որոշական,
ըստ Նեստորի չարափառի վատթարն ուսման,
Ոչ ի մարմին բանին բնակել նախստեղծական,
և չարայար ասել բնութիւնք բաժանական:
Մի վկիրս և վգործս ինչ իմասցիս երկադաւան,
աստուածութեանն և մարդկութեանըն վանապան,
Այլ մի և նոյն իսկ փըրկագործ տնօրինական,
վոր իւր մարմնովըն կատարեաց Աստուածըն բան,
Որպէս և իւր է իսկ մարմինն անվատական,
նոյն է և կիրք մարմնոյ և իրք ներգործական,
Որպէս և մահ խաչին վոր կըրեաց անարգական,

ըվչարչարանաս մարմնոյն վխոցումըն գեղարդեան:
Աստուածութեանն ասա վստահ անխռովական,
վի է Աստուած մարմին առ բանըն խառնըման,
Որպէս Աստուած է ինքն և մարդ համանգամայն,
ոչ ոմն Աստուած և ոմըն մարդ բաժանական:
Նոյնպէս և կիրք նորին և գործք տնօրինական,
աստուածայինք և մարդկայինք՝ որք միացան,
Ո՛չ թէ օտար է ի բանէն գործք մարմնական,
ո՛չ առանձին և վատ են գործքն աստուածական,
Այլ վմարդկայինսն աստուածային լեր խոստովան,
և վաստուծոյսն իսկ ճըշմարիտ ներմարդական:
Մի՛ վբարձրագոյն բանք սուրբ գըրոց աստուածաբան
վայն Աստուծոյ տացես միայն իւր սեփհական:
Եւ մի ընդդէմ նորին վգրեալս խոնարհական,
վայն մարդկութեանն ասես լինել յարմարական,
Այլ մի՛ և նո՛յն լինել բանին բնութեամբ մարդկան,
բարձրացուցիչ բանք և գրեալք նուաստական:
Մի ըվբնութիւն բանին տացես սըխալական,
առ ի յեղուլ կամ շըփոթիլ խառնակական:
Ո՛չ համագոյ ասել բանին վմարմին մարդկան,
ոչ ըստ բնական վգայութեանցըն յատկական,
Այլ ընդ բանին միաւորեալ անճառական,
որ առ մարմին իւր յարգանդին ի կուսական:

Բանըն յղացեալ յարգանդ կընոջն ինն ամսական,
ըստ օրինի որդւոց մարդկան հասարական:
Իսկ ի կուսէ առանց սերման անապական,
որ յայտնապէս է վօրութիւնն աստուածական,
Ցորովայնի կուսին մարմին առ նիւթական,

բայց ի հօրէ ոչ մեկնեցաւ Աստուածընն բան:
Մարմին հոգւով մարմնաւորեալ միտք բանական,
վի բոլորովն աստուածասցին որդիք մարդկան:
Նա մայր միայն ունի յերկրի իւր ստեղծական,
վի մեք կալցուք հայր ի յերկինս անեղական:
Նա կոչեցաւ որդի մարդոյ տընտեսական,
վի մեք վԱստուած հայր կոչեսցուք մեվ շնորհական:
Թլփատեցաւ նա ութ օրեայ ըստ ուխտին եդման,
մեվ հոգևոր թլփատութիւն տալ մաքրական:
Քառասնօրեայ եկն ի տաճարն աւուրց լըրման,
ըստ օրինացընն Մովսէսի, որպէս գրեցան:
Պատարագօք ընծայեցաւ տեառն յանդիման,
հօր ի բարձունս ընծայելով վբնութիւն մարդկան:
Ի յԵգիպտոս Յովսէփ տանէր փախըստական,
վկռապաշտութիւնն առնել անտի հալածական,
Մանուկն աճէր և վօրանայր ըստ կարգի աճման,
իմաստութեամբ լի և շնորհօք աստուածական:
Զոր օրինակ նիւթ ըվգալի արեգական,
որ առ սակաւ սակաւ ծագէ վլոյսն իւրական:
Նոյնպէս և բանն ընդ հասակին իւր մարմնական,
վաստուածային փառսընն փայլէր ըվփըրկական,
Որ կերակրօք յանձն առ սընունդ տըղայական,
նոյն պարգևեաց մեվ կերակուր ըվհոգեկան:
Զամս երեսուն ծածկեաց ըվփառսն աստուածական,
գայ մկրտիլ առ Յովհաննէս ի Յորդանան:
Ինքն քաղցեաւ և ժուժկալեաց համբերական,
վանժամ ճաշակընն բըժըշկեաց վանժուժական:
Նոյն և փորձի ի փորձողէն անյաղթական,
վի վնախահայրն յաղթօղ ցուցցէ և վօրական:

Ինքն էր Աստուած համայն և մարդ ճշմարտական,
որ ի քաղցնուլն ոչ ճաշակէր անժուժական:
Եւ ճաշակէր առանց քաղցի իշխանական,
և կամաւոր ցուցցէ ըկկիրսն և փըրկական:
Թէպէտ քաղցեաւ որպէս կմարդ կերակրական,
բայց ըկքաղցուն ժամն անցուցեալ աստուածական:
Ցերևելիսըդ մի՛ կացցես գայթակղական,
այլ ամբարձցիս յիմանալիս գերունական:
Վաստակեցաւ յուղի գնալովն աշխատական,
այլ ի վերայ ծովուն քայլէր թեթևական:
Ծարաւեցաւ այն որ ծովու եդեալ սահման,
այլ ինքնակամ ետ մեզ ըվջուր կենդանական:
Գահավիժեալ լինէր ապգէն ի հրէական,
բայց ի միջոյ նոցունց գընայր յօդ վերնական:
Նընջեաց քընով ըստ օրինի որդւոց մարդկան,
այլ արթնութեամբ սաստեալ ալեացըն տայ հրաման:
Տըգիտացաւ նըման մարդոյ անգիտական,
այլ առ յապա տուօղ բնութեանս է գիտութեան:
Եւ տըրտմեցաւ կըրիւք բնութեանս ադամական,
կի կտրտմութիւն մեր դարձուսցէ յուրախական,
Այլ վերստին տալ մեզ ըվդրախտն անմահական,
որ ճոխանայր Ադամըն հին անդ փափկական:
Ի սիրելոյն արտասուելով առ գերեվման,
աստուածաբար կոչեաց վմեռեալ չորեքօրեայն:
Արտասուելովն եցոյց առ մեզ գութ սիրական,
ջնջեաց վարտօսըր յերեսաց մեր ամենայն:
Ապտակեցաւ ի ծառայէն ձեռաց ստեղծման,
ծառայ առնել ըվբանսարկուն ետ մեզ հրաման:
Թուք ընկալաւ ի բերանոյ պղծոց մարդկան,

և փչեաց ի դէմըս մեր կՀոգին աստուածական,
Բևեռեցաւ ի յանիծից փայտըն մահուան,
գնելով կմեկ ի յանիծիցն օրինական:
Մեռաւ մարմնով մահկանացու բնութեամբ մարդկան,
մեռոյց ըկմեր մահըն մահուամբն անմահական:
Թաղեցաւ յերկրի մարմնովն ի գերեկման,
իսկ միութեամբ բանին մընալով անապական:
Էջ ի դժոխս մերով հոգւովըս բանական,
որ ընդ բանին էր միացեալ անկատական:
Երեքօրեայ իսկ յարուցեալ ըստ բանին խոստման,
ըկյարութեան տալով մեկ յոյս անապական:
Համբարձաւ առ հայր ի փառսն իւր սեփհական,
ըկմեկ ընդ իւր փառաւորել անկուգական:
Նոյն հայրենի փառօք գալոց է ի վախճան,
բնաւ կենդանեաց և մեռելոց ի դատաստան:
Ոմանք ի հուրն իսկ առաքին անշիջական,
և այլք ի փառըս անպատումս անկրաւական:
Ցայնժամ կքեկ իսկ պատուեսցէ սիրողդ ըկբան,
և գըթութեամբ իսկ հայեսցի յանձնս անարժան:

Եւ որք սիրով յայսմ բանից ինչ վարժենան,
նոքա ի փառս աջակողմեանն պայծառանան:
Զի ընդ սրբոցն արժանացեալք գումար լըրման,
երրորդութեանըն տալ կփառս միշտ անվախճան:
Ընդ որս և ես փայտս անտառի և գօսական,
երգեմ ըկփառս աստուածութեանն անլըռական[2]:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայրեններ

1 Հայրենների գիտահամեմատական բնագրերը (63 տուն, 252 տող) տպագրվել են 1958 թ. (Ա. Սրապյան, Հովհաննես Երզնկացի, Երևան) Մատենադարանի ձեռագրական նյութերի հիման վրա: Տարիներ անց հայտնաբերվեցին նորերը, որ առաջին անգամ վերադարձվում են սույն գրքում, ԿԴ տնից սկսած: Հայրենների թիվն այժմ հասնում է 73-ի (300 տող): Մտածող բանաստեղծի թե հայրենները և թե չափածոն՝ ընդհանրապես ստեղծվել են նրա արձակի գաղափարական և քնարական հենքի վրա:

2 «Մէկ կայ, որ հապար աժէ» սկսվածքով հայրենի վերջին երկու տողը 1958 թ. հրատարակության մեջ չկա. լրումը կատարվել է ըստ ձեռագրական նոր տվյալների (ձեռ. № 516, 1653, 1670 թթ., էջ 70 ա):

3 «Ելայ ժողուեցի... տեղ չի ընկնի» քառատողը 1958 թ. հրատարակության մեջ գտնվում է այլ շարքում (№ ԾԶ) և ավելի ճիշտ տեղ է գրավում շղթայում: Օգտագործված նոր ձեռագրում (№ 516, էջ 71 ա) այն վերադարձված է այստեղ՝ ՀԱ համարի տակ, որպես 3—6-րդ տողեր, որ դուրս ենք թողնում:

4 «Կուլես որ ապիկ կենաս» սկսվածքով (ԿԴ) հայրենների նոր շարքի գիտահամեմատական բնագրերը կազմվել են Մատենադարանի №№ 516 (էջ 69 ա), 1989 (1647 թ., էջ 234 ա—237 ա, 313 բ—318 ա), 7707 (1611 թ., էջ 196 ա—196 բ), 7709 (1620 թ., էջ 221—222), 8605

(1652, 1655 թթ., էջ 133 ա—135 ա) ձեռագրերի հիման վրա և տպագրվում են առաջին անգամ:

5 Հայրենների վերջին երկու տողը գրչինն են, որով և նա ավարտել է շարքը:

Տաղեր

1 Առաջին անգամ ի մի են բերվել 1958 թ. Երևնկացուն նվիրված մենագրության մեջ՝ թվով 15: Ձեռագրական նոր նյութերի ուսումնասիրության շնորհիվ երևան եկան հեղինակի գրչին պատկանող մի քանի անտիպ բանաստեղծություն ևս: Դրանցից վեցի հեղինակային պատկանելությունը վիճելի չէ, իսկ երկուսինը՝ թեական: Սրանք տպագրվում են առաջին անգամ: Այս ամենի հետ մեկտեղ, մասամբ կամ լիովին ավարտուն են դարձել նախորդ հրատարակությամբ լույս ընծայված մի քանի քերթված ևս: Հակոբ Մանկտավագին նվիրված հայտնի բանաստեղծությունը (№ 3), լրացվել է ութ տողով՝ «Տէր իմ գըթած և բարերար» տողից սկսած մինչև «Զի դու միայն ես մարդասէր»: «Ցանեղական լոյսն անժամանակեայ» սկսվածքով տաղը վերականգնվել է ամբողջությամբ (նախկինում հայտնի էին միայն առաջին չորս տողերը), իսկ «Նըւագեմք հոգւոյն նըւագս վայելուչս» սկզբնավորությամբ տաղն՝ իր Ցորդորակով՝ լրացվել ու ճշտվել է վերջնականապես:

2 Գրված է տաճիկ լեզվով (արաբերեն, պարսկերեն, սելջուկ-թուրքերեն), որ բառացի նշանակում է. Ես մուսուլման՝ մոլլայի աղջիկ, Դու Հովհաննես՝ տերտերի տղա:

3 Այս երկտողը նույնպես տաճիկ բառերով է, որ նշանակում է. Գնա, գնա, անհավատի տղա, Հեռու տար մեզնից անմիտ խոսքերդ:

4 Այս տունը լրացված է ըստ նորահայտ № 10208 (ԺԷ, էջ 148 բ) ձեռագրի. կատարվել է մեկ-երկու մասնակի ուղղում:

5 ՅԱԿՈԲ ՋԱՐԹԻՐ Ի ՔՆՈՑ ՄԵՂԱՑ — սկսվածքով տաղը նվիրված է Երևնկայի «Եղբայրության» ղեկավար՝ մանկտավագ Հակոբին: Այստեղ ներկայացվում են այն կանոններից շատերը, որով ղեկավարվում էր արհեստավորների և առևտրականների այդ երիտասարդական միությունը:

6. Այստեղից սկսած ութ տուն լրացված է ըստ № 7097 ձեռագրի, էջ 154 ա:

7 ԶԱՑՐՈՍ— պետք է լինի **կայրիս.** այրի մարդու բողոք բառնալ, այսինքն՝ այնպիսի բողոք, որին անպատճառ լսում է աստված և մեղավորին պատժում:

8 ՕՐՀՆԵԱԼ Է ԱՍՏՈՒԾՈ ԱՆՈՒՆՆ տաղի տների գլխագրերն հոդում են «ՅՈՀԱՆԻՍԻ Է...». հաջորդ տների կարգը խախտված է:

9 ՆԸԻԱԳԵՄՔ ՀՈԳՈՅՆ ՆԸԻԱԳՍ ՎԱՅԵԼՈՒՉՍ տաղի գլխագրերը հոդում են «Նվագ հոգոյն սրբոյ Յոհաննիսէ անարժան ծառայէ»: Որոշ ճշտումներ են կատարվել ըստ № 5303 (1394, էջ 194 բ) ձեռագրի:

10 ԱԴԱՄ ՆՍՏԵԼ ԴՈՒՌՆ Ի ԴՐԱԽՏԻՆ. պահպանվել է տների տարբեր քանակով և տարբեր դասավորությամբ:

11 ԱՆԴ Ի ՄԷՋ ԴՐԱԽՏԻՆ ԵՐԵՔ ԱՆՁԻՆՔ ԿԱՑԻՆ տաղը բոլոր ընդօրինակություններում թերի է և աղավաղված:

12 ՅԱՆԵՂԱԿԱՆ ԼՈՅՍՆ ԱՆԺԱՄԱՆԱԿԵԱՑ տաղը տնագլխերով, ապա՝ տողընդմեջ հոդում է «Յոհանիսի Գովեստ ի սուրբ կոյսն Մարիամէ»: Մինչև Յորդորակն ընկած հատվածն, առաջին տնից հետո, լրացվել է ըստ № 5303 ձեռագրի (էջ 35 ա):

13 ԱՌԱՋՆԱՃԱՇԱԿ ՊՏՂՈՅՆ տաղի գլխագրերը հոդում են Հայոց այբուբենը:

14 ՅԱՒՈՒՐՍ ՎԵՐՋԻՆ ԺԱՄԱՆԱԿԻ քերթվածի գլխագրերը հոդում են «Յոհանիսի երգ»:

15 ԲԱՆՆ ՅԸՂԱՅԵԱԼ ՅԱՐԳԱՆԴ ԿՈՒՍԻՆ. նորահայտ է, տպագրվում է առաջին անգամ (ձեռ. № 10182, 1346, էջ 442 բ): Վերջը թերի է:

16 ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ ՀԱՒՐ ՏԷՐ ՅԻՍՈՒՍ. ունի ինքնակենսագրական բնույթ, գրվել է հեղինակի կյանքի վերջին տարիներին, երգվել է «Յիսուս որդու ձայն»: Տպագրվում է առաջին անգամ՝ եղած մեկ ձեռագրի հիման վրա: Գլխագրերը՝ յուրաքանչյուր առաջին և երրորդ տողերով (կրկնակի) հոդում են «Ի Յոհաննէս վարդապետէ ասացեալ» (ձեռ. № 10050, 1605, 1629 թթ., էջ 212 բ):

17 ԳՐԻԳՈՐԻՈՍԻ ԲԱԶՄԱՁԱՐՁԱՐ ՍՐԲՈՅՆ. մինչև այժմ անհայտ էր, մի փոքր հատված միայն բերել է Ղևոնդ Ալիշանը՝ Սիսվանում, Ճլուկի (Պլուկի) անունով (Ղ. **Ալիշան,** Սիսուան և Լևոն Մեծագործ, Վենետիկ, 1885, էջ 154): Ձեռագիրն այժմ Մաշտոցյան Մատենադարանում է, 3503 համարի տակ (1394 թ., էջ 354 ա): Գլխագրերը հոդում են «Գրիգորիոս Լուսաւորիչ Հայոց», խաչագրված է և երգվել է:

18 ՑԱՑՏՆԻՉ ԻՐԱՑ ԾԱԾՈՒԿ ԲԱՆԻՆ. ժամանակի թուղթ կամ նամակ կոչվող գրության ձև է, ուղղված նշանավոր վարդապետ-ուսուցիչներին. տպագրվում է առաջին անգամ (ձեռ. № 652, ԺԵ—ԺԶ, էջ 77 բ):

19 ՀԱՆՃԱՐԷՂ ՇՆՈՐՀԱԼԻԴ ԸՆՏՐԵԱԼ Է. տպագրված է Ներսես Շնորհալու անունով (Բանք չափաւ, Վենետիկ, 1828, էջ 515—516), սակայն տների երկրորդ տողերի սկզբնագրերը հոդում են «ՅՕՀԱՆՆԷՍ» (առաջին տողերինը Հռիփսիմե), որ վկայում է, թե քերթվածը պատկանում է այլ հեղինակի: Առաջինը Վ. Ներսիսյանն է ենթադրել, թե այն կարող է Երզնկացունը լինել (Հայ միջնադարյան գրականության ժանրերը, Երևան, 1984, էջ 212): Նկատի ունենալով ժամանակի բանաստեղծական գրեթե բոլոր ձևերի, տարբեր տիպի ծայրակապերի ստեղծման և օգտագործման արվեստում Երզնկացու մեծ վարպետությունը և իր արձակի հենքի վրա չափածո հորինելու օրինաչափությունը, հնարավոր թվաց այդ քերթվածը վերագրել նրան, մանավանդ որ նա ունի Հռիփսիմեին նվիրված արձակ գործ ևս (տե՛ս Հովհաննես Երզնկացի, էջ 293, № 43): Հարցը կարոտ է հետագա ճշգրտումների:

20 ԱՅՍԱՒՐ ՑԸՆԾԱՑ ԼԵԱՌՆ ԹԱԲԱՒՐ վարդավառին նվիրված երաժշտական քերթվածը չափապանց տարածված է ձեռագրերում առանց հեղինակի անվան հիշատակության: Իր ամբողջության մեջ, և՛ ստեղծագործական ոճով, և բովանդակությամբ, այն շատ հարազատ է Երզնկացուն: Թաբոր և ուրիշ բազում լեռների նվիրված նրա նույնատիպ տողերն ու գովքը՝ Լուսավորչի ներբողում և Ներսես Մեծի պատմության մեջ, հավանական են դարձնում այդ ենթադրությունը: Դրան է հանգեցնում հեղինակի վարդավառի մասին ունեցած արձակ գործը ևս (տե՛ս Հովհաննես Երզնկացի, էջ 294, № 47): Ինչպես այս, այնպես էլ Զրօրհնեքին ու Ծննդյանը նվիրված նրա նմանատիպ բանաստեղծությունները նույնաոճ կրկնակներ ունեն: Պակաս ուշագրավ չէ, որ տաղն ամեն անգամ հանդիպում է Երզնկացու քերթվածների շարքում: Սա ևս հետագա ճշգրտումների պետք ունի:

Շարականներ

1 Երզնկացու շարականները գրված են ապատ չափով ու հանգով: 1958 թ. տպագրվել է դրանցից միայն մեկը: Հայրենասիրական շունչ ունեցող թվով հինգ այս երկերը լույս են տեսել լոկ Շարակնոցներում:

2. ԱՅՍՕՐ ԶՈՒԱՐՃԱՑԵԱԼ ՅԸՆԾԱՑ ԵԿԵՂԵՑԻ. նվիրված է Գրիգոր Լուսավորչին. տների գլխագրերով հոդում է այբուբենը:

3. «ԼԵՐԻՆՔ ԱՄԵՆԱՅՆ» սկսվածքով շարականը որոշ բանասերներ վերագրել են Մովսես Խորենացուն, նկատի ունենալով նրա բարձր արվեստը:

Ներբողներ

1 Գրվել է 1288 թ. (ձեռ. № 3125, 1766-ից հետո, էջ 285 բ), տպագրվել է Կոստանդնուպոլսում՝ «Ցաճախապատում» ժողովածուի մեջ, 1824 թ. (էջ 294), ապա՝ 1853 թ. Վենետիկում «Սոփերքի» Ե հատորում (էջ 83): Այժմ առաջին անգամ ներկայացվում է տողատված. Գրիգորիոսով սկսվող հատվածը՝ գրված բաղաձայնություններով, յուրաքանչյուր տան երեք սկզբնատողերում կրկնելով նույն տառը, եռակի հոդում է հայոց այբուբենը, ինչպես այդ արված է Շնորհալու «Առաւոտ լուսոյ» նշանավոր քերթվածում: Ներբողը վերնագրված է. Յովհաննէս վարդապետի Երզնկացւոյ ասացուած ներբողական գովեստի ի սուրբ Լուսաւորիչն Հայոց Գրիգորիոս, ասացեալ յօր յիշատակի նորա, զոր տօնեն մեծաժողով հանդիսիւ ի լեառն Սեպուհ, որ է տեղի ճգնութեան նորին և հանգստարանի:

2 Համտ. Գիրք սաղմոսաց, ԾԷ, 4:

3 Համտ. նույն տեղում, ԾԷ, 6:

Հովհաննես Երզնկացու գործերում այս տիպի ծանոթագրությունների տեղիները շատ են, ուստի և դրանք չենք մանրամասնում և այլևս գրեթե չենք նշում:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՆՇԽԱՐԱՑ ՍՐԲՈՅՆ ՆԵՐՍԻՍԻ

1 Ներսես Մեծի նշխարների հայտնության պատմությունը Երզնկացին գրել է 1272 թ., նույն այդ տարին Երզնկայի Թիլ ավանում նրա մասունքների հայտնության առիթով: Այն տպագրվել է «Սոփերքում» (հատ. Է, էջ 31), ընդարձակ վերնագրով. «Յայտնութիւն նշխարաց սրբոյն Ներսիսի Հայոց պատրիարգի և երկրորդ Լուսաւորչի, որ օր Ա է՝ ըստ հռովմայեցւոց ամսոյն փետրուարի, և Հայոց ամսոյն, որ է Արաց Իե, յորում տաւնեն եկեղեցիք Հայաստանեայց մեծաւ հանդիսիւ, զոր

կարգեալ հաստատեաց արհիեպիսկոպոսն տէր Սարգիս, տաւնել յամենայն ամի կնոյն աւր յայտնութեան նշխարաց սրբոյն, խորհրդական երգովք շարականաց և ներբողական ճառիւ»: Ինչպես գրում են հրատարակիչները, այն գաղափարել են 1343 թ. գրչություն ունեցող ձեռագրից (տես «Սուփերք» Է, էջ 79), ավելացնելով նաև, թե Ներսես Մեծի Տեսիլը օտար որևէ լեզվով գոյություն ունենալու այլ փաստ, բացի Երվնկացու հիշատակումից, հայտնի չէ: Այս գործը ևս 1958 թ. հրատարակության մեջ չի ընդգրկվել:

2 Նկատի ունի Կիլիկյան Հայոց թագավոր Հեթում Ա-ի որդուն և հաջորդին՝ Լևոն Գ-ին (1236—1289), որ սերում էր Բագրատունյաց և Արծրունյաց տոհմերից, ինչպես այդ մասին որոշակի ասվում է քիչ հետո, տես ծնթ. №5:

3 Ողբը տես Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Գիրք 3-րդ, ԿԸ:

4 ՔԱԿԵՑԷՐ ՋՑԱՆԿ ՆՈՐԱ— տե՛ս Գիրք Սաղմոսաց, ՀԹ, 13:

5 Տե՛ս ծնթ. № 2:

6 Կարդացաք առ տէր... Եւ ոչ լուաւ... սրա տարբեր իմաստները տե՛ս Գիրք Սաղմոսաց, ԺԷ, 42, ԻԱ, 3, ՃԺԹ 1 այլուր:

7 1272—1273 թթ. Սարգիս արքեպիսկոպոսը Ներսես Մեծի մասունքը Թիլ ավանից փոխադրում է քաղաք, ոսկով և արծաթով պատումմիակցում և հատուկ մասնատուփերով պահպանության է տալիս երեք նշանավոր վանքերի: Զախ բակուկը դրվում է վեհապանծ Մնձուրի ստորոտին Տիրան թագավորի կառուցած ու նրա անունով կոչված Տիրաշեն գեղակերտ վանքում, Սա ուներ քանդակապարդ նկարներով ու արձանագրություններով էբենոսյա և կիպարիսե փայտից շինված շքեղ ու հնագույն ավագ դուռ, արվեստի թանկարժեք հնություններ ու ձեռագրեր, հարուստ թանգարան, որտեղ ամենանշանակալիցը տաճարի խորքում գտնվող Ներսես Մեծի դամբարանն էր: Նրա մեծադիր տապանաքարի վրա վերից վար արձանագրված էր մասունքի տեղափոխման ամբողջ պատմությունը: 19-րդ դարի երկրորդ կեսին Երվնկայի առաջնորդ Հմայակ եպիսկոպոս Դիմաքսյանն այդ մասին մի հոդված է ուղարկում Կ. Պոլսի թերթերին ու պատրիարքին, մի օրինակ էլ Էջմիածնի Գևորգ Դ կաթողիկոսին: Մանրամասն տե՛ս «Սուփերք» Է, էջ 62—65, **Գ. Սյուրմենյան**, «Երվնկա», Կահիրե, 1947, էջ 92:

Տրակտատ

1 Տիեզերական մարմինների մասին այս չափածո քերթվածը շարադրվել է նույնահանգ, հավարատողյան՝ Գրիգոր Մագիստրոսի «Հավարտողեան» պոեմի հանգույն: Այն հղացել է Կիլիկյան Ապլոց իշխանի հորդորներով՝ 1284 թ. և նույն տարին ընդօրինակվել Ադանայում: Ստացողն է Կիլիկիայի Հեթում թագավորի եղբայր, Կուռիկոսի տեր Օշին իշխանը, որ «յոյժ փափագանօք ետ գրել», հավանաբար Երզնկացու դեռևս Կիլիկիայում եղած ժամանակ (ձեռ. № 4207, 1284, էջ 363 բ—385 բ): Տրակտատի առաջին հատվածը, որ հեղինակի «նախնական» խոսքն է, տողընդմեջ գլխագրերով հոդում է «Յոհանիսի բան յաղագս երկնի ի խնդրո իշխանի Հայոց Ապլոց անուն»: 1284 թ. այս թեմայով Երզնկացին ճառ է կարդում Տփխիսում Կաթուղիկե եկեղեցում: Ումեկ իշխանի որդի Վախթանգի և նշանավոր Դոփին թոռ Յոհան եպիսկոպոսի խնդրանքով Երզնկացին այն գրի է առնում նաև արձակ՝ 1288 թ.: Չափածոն և արձակը տես տպագրված Տետրակ համառօտ և լի իմաստնախոհ բանիւք, Ն. Նախիջևան, 1792:

2 № 7046 (1644 թ.) ձեռագիրն ունի չափածո հիշատակարան (էջ 363 բ): Այն գրականագիտական-բանասիրական խոսք է Երզնկացու և նրա գործի մասին: Ձեռագրում պատկերված են Հովհաննես Երզնկացին և Ապլոց իշխանը, հավանաբար տրակտատը պատվիրելու պահին: Տե՛ս մանրանկարը: Գրաքննադատի գնահատմամբ, այս գործը գրված է ո՛չ միայն պատմաբանի, այլև մեկնաբանի ու իմաստասերի ներհունությամբ, որ պարզում է տիեզերքի ծածուկ խորհուրդն ու միտքը: Նա բանասիրորեն ճշտում է նաև գործի հեղինակի հարցը, հայտնում, թե այն պատկանում է ո՛չ թե Ներսես Շնորհալուն, որ նույնպես գրել է տիեզերական մարմինների մասին, այլ Հովհաննես Երզնկացուն: Ահա այդ հատվածը՝ չափածո.

Այլ և կրկին գովեստ երկրի,
Յոյժ քաղցրագոյն և նպելի,
Տարերց մասանց 'ւ եղանակի,
Կենդանակաց մոլար աստղի,

Քննէ զբոլոր մասն աշխարհի,
Հառէ ըզգալուստն Քրիստոսի:
Ո՛չ ասացեալ է Ներսէսի,
Այլ Յոհաննէս Եկեղեցի:
Ո՛չ թէ նըման պատմաբանի
Յիշատակէ 'ւ անփոյթ լինի,
Այլև քննէ զմիտըս բանի,
Տայ աւրինակ մարդկան ազգի:
Է՛ սա մեկնիչ ծածուկ բանի,
Քննող մըտաց և խորհրդոյ,
Զվարըս սըրբոց միջնորդ ունի,
Եւ մաղթանաւք առ տէր խաւսի·
Այլ և խընդրէ կողկողալի,
Պաղատանաւք հայցմամբ սըրտի,
Առ ողորմած տէրն ամենի,
Զի ողորմի անցաւորի:
Է՛ սայ գիտնոց բան իմաստի,
Եւ խրախութիւն տղաականի,
Բանասիրաց վերծանելի,
Եւ իմաստնոց՝ իմաստ յայտնի,
Որք ընթեռնուն կամաւ սըրտի,
Ոչ թէ առ յաջըս գավեստի,
Բաղում բարեաց նա հանդիպի,
Եթէ մըտաց աչաւք հայի,
Ցաւժար կամաւ հետապօտի,
Եւ ջերմեռանդ սիրով սըրտի,
Ի սակաւէն զշատըն շահի,
Միայն փափագ թէ ունիցի:
Թէ յակամա հետապօտի,
Եւ կամ մարդկան վանց գովեստի
Բաղում բարեաց նա զըրկեսցի:
Թէ աշխարհի ոչինչ աւգտի,
Տամ աւրինակ 'թ ում նըմանի.

Նըման մարմնոյ աչաց կուրի.
Կոյրն ինչ աչաւք ի լոյս հայի,
Նովին չափովն մխիթարի,
Իսկ որք սիրով սըմա հետևի,
Կամաւ մըտաւքըն յօժարի,
Հոգով, մարմնով մըխիթարի,
Եւ կաւրհնութիւն տեառն ընկալցի...

ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐ

ԱԲԴՈՒԱՀԻՄ— Մահմեդի հետևորդներից, որ մասնակցել է նրա վարած ասպատակություններին:

ԱԲՐԱՀԱՄ— Հրեական ազգի մեծ նահապետը և արաբների ու հրեաների նախահայրը, ըստ Աստվածաշնչի, սերում է Նոյ նահապետի ավագ որդուց՝ Սեմից:

ԱԹԱՆԱԳՆԵԱՑ սուրբ վկայի— Աթանաս— (296—373 թթ.) Աղեքսանդրիայի հույն պատրիարքը. Եկեղեցու մեծահռչակ ս. հայրերից, Արիոսի աղանդի գլխավոր դիմամարտը:

ԱՀԱՐՈՆ— Ղևտական ցեղից. Մովսես մարգարեի եղբայրը և աջակիցը և աստծո անունով օծված առաջին քահանայապետը:

ԱՀԵՐՄՈՆ-ՀԵՐՄՈՆ, որ և Սիոն. պերճ և բարձր լեռ Պաղեստինի հյուսիս-արևելքում: Համարվում է տեղի բարձր գագաթը՝ մշտնջենավոր ձյան սահմաններում:

ԱՄՈՎՍ-ԱՄՈՎՍԱԾԻՆ— Հուդայի երկրի փոքր մարգարեներից: Նրա ոճը պարզ, հակիրճ ու պատկերավոր է: Նրա որդին՝ Եսային կոչվում է Ամովսածին՝ իր խոսքի գեղարվեստականության շնորհիվ:

ԱՄՈՒՐՀԱՑՈՑ—ԱՄՈՐՀԱՑԻՔ—ԱՄՈՎՐԱՑԻՔ— Քանանի սերնդից, քանանացիների ցեղերից մեկը. Քանանի չորրորդ որդի Եմերից սերած. Աբրահամի ժամանակ բնակվում էր Երուսաղեմից հարավ, Մեռյալ ծովից արևմուտք՝ Քեբրոնի մոտ: Հետագայում այդ ցեղը գրավեց մովաբացիների ու ամմոնացիների ամբողջ երկիրը՝ Քանանի հարավարևելյան լեռնային մասը, որ նրանց անունով կոչվեց «Ամովրհացւոց լեռ»

(«Ցուդայի լեռ»): Որպես Իսահակի ողջակիզության վայր, ենթադրվում է Գողգոթան (Աստվածաշնչում լեռան անունը չի տրվում):

ԱՆԱԿ— Գրիգոր Լուսավորչի հայրը:

ԱՆՏԻՏԱՒՐՈՍ-ԱՆՏԻՏՈՐՈՍ— Կենտրոնական Տավրոսի հյուսիս-արևելյան մասը՝ բարձր լեռնաշղթաներով, որ միանում է Ներքին Տավրոսի արևմտյան մասը կազմող Երզնկայի լեռնահանգույցին:

ԱՆՏՈՆ ՃԳՆՈՂ— Եգիպտացի մեծանուն ճգնավոր, որ համարվում է անապատականներից առաջինը (251—256 թթ.):

ԱՊԼՈՑ— Ո՞վ է այսի իշխանը, առայժմ որոշ չէ, սակայն ժամանակի վարգացած մարդկանցից է, գիտնական, բանասեր, որին Երզնկացին ուսումնասեր է կոչում, և որի հետ անձնական մտերմություն է ունեցել:

ԱՊՕՂՈՍ— Աղեքսանդրացի հրեա, բանիբուն ուսումնական, որ ընդունում է քրիստոնեություն և դառնում Պողոս առաքյալի գործակիցը:

ԱՌԳԵՈՍ-ԱՐԳԵՈՍ— Լեռ Պատմական Հայաստանում՝ Փոքր Հայքի հյուսիսային մասում՝ Առաջին Հայքում:

ԱՐԱՄ— Հայ նահապետ՝ Հաբեթի սերնդից: Ըստ Խորենացու՝ Հայոց արքա Արա Գեղեցիկի հայրը, որն ընդարձակեց Հայոց սահմանները: Նրա անունով են հարևան ժողովուրդները մեր երկիրը կոչում Արմենիա, «Արամեան տուն», «Արամեան ազգ»:

ԱՐԵՄԱԹԵՄ-ԱՐԻՄԱԹԵՄ-ՌԱՄԱ— Քաղաք Եփրեմի լեռան վրա, ուր ծնվել և բնակվել է Սամուելը: Տե՛ս Սամուէլ և Եփրեմի լեռ:

ԱՐԾՐՈՒՆԵԱՑ— Արծրունի. հայ նախարարական տոհմ, որի ժառանգական հայրենիքը Վանա լճից արևելք՝ Տոսպ գավառն էր, հետագայում՝ Աղբակ գավառը: Արտաշեսյան և Արշակունի Հայոց թագավորների օրք Արծրունիները ռազմաքաղաքական կարևոր դեր ունեին: 450—451 թթ. ժողովրդաապատագրական պատերազմում կորավիգ էին հայրենասեր ուժերին: Ավարայրի ճակատամարտում Հայոց բանակի կենտրոնական կորախմբի հրամանատարը Ներշապուհ Արծրունին էր: Հետագա դարերում ևս նրանք առաջնակարգ դիրք ունեին:

ԱՐՇԱԿՈՒՆԵԱՑ ԹԱԳ-ԱՐՇԱԿՈՒՆԻՔ— Պարթևական թագավորության կառավարող հարստություն, մ թ ա մոտ 248—մ թ 224 թթ.: Արշակունիների հիմնադիր է համարվում Տրդատ Ա-ն, որից սկսած պարթևական բոլոր թագավորները կրել են «Արշակ» տիտղոսը:

ԲԱԲԵԼՈՎՆ— Բեբելոն, հնագույն պետություն Տիգրիս և Եփրատ գետերի ստորին ավազանում, Հատկապես ծաղկել է Նաբուգոդոնոսոր

2-րդ թագավորի ժամանակ: Քաղաքն ունեցել է կրկնակի պարիսպ, կախովի այգիներ, քարաշեն աշտարակ՝ աստղադիտարանով:

ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՑ— Բագրատունիներ. հայ նախարարական տոհմ և թագավորական հարստություն: Հայոց իշխանի պաշտոնը մեծ մասամբ վարել են Բագրատունիները, որոնց տիրույթներն է՛լ ավելի են ընդարձակվել 9-րդ դարի սկզբներին, իսկ վերջերին Վրաստանում հիմնել են թագավորական հարստություն. դարձել ամենազդեցիկ տոհմը. ապա՝ իշխանաց իշխան. 885-ից հետո՝ Հայոց թագավոր, մինչև 1045-ը: 10-րդ դարի երկրորդ կեսին անցել են նաև Բյուզանդիա, 14-րդ դարի սկզբներին անհետացել են պատմության ասպարեզից:

ԲԱՍԵՆ— Գավառ Մեծ Հայքի Այրարատ նահանգում, Կարինից արևելք, որ կոչվել է նաև Վանանդ: Տե՛ս նաև Վանանդ:

ԲԱՐԹՈՒՂԻՄԷՈՍ— Քրիստոսի 12 առաքյալներից մեկը, որ առաջինը քարոզեց Հայաստանում և նահատակվեց 52 թ., Հայոց Սանատրուկ Արշակունի արքայի հրամանով, Մակուի սահմանների մոտ, ուր նրա անունով վանք է հիմնվել Ձորամիջում: Հայտնի է նաև որպես Ծործորի վանք: Տե՛ս նաև Թադեոս առաքյալ:

ԲԵԹՂԷՀԷՄ-ԲԵԹԼԵՀԵՄ— Քաղաք Երուսաղեմի մոտ, որ նվիրական է դարձել իբրև Հուդայի և Իսրայելի թագավոր Դավթի և Քրիստոսի ծննդավայր:

ԲԵՍԷԼԻԷԼ— Ըստ ավանդության՝ արվեստագետ, որին աստված իմաստության, ճարտարապետության, արվեստների հատուկ հանճար էր շնորհել՝ կառուցելու և պարդարելու Մովսես մարգարեի նախատեսած Վկայության խորանը, աստծո պատվիրանների տապանակը, զոհարանը, զոհասեղանը և այլն:

ԳԱԲԱԻՈՆԱՑԻՔ— Գաբավոն երևելի քաղաքի քանանացի բնակիչները: Ըստ Աստվածաշնչի, Գաբավոնի լեռան վրա է գտնվում աստվածաղիր օրենքների տապանակը: Այստեղ է նաև, որ մանուկ Սողոմոնը տեսավ Աստծուն և խնդրեց ո՛չ այլ ինչ, քան միայն իմաստություն, որ և տրվեց նրան:

ԳԱԲՐԻԷԼ ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏ— ավետել է Հովհաննես Մկրտչի և Փրկչի ծնունդը: Համարվում է միջնորդ աստծո և մարդկանց միջև:

ԳԱՑԻ— Քանանացիների թագավորանիստ քաղաքը: Նշանավոր է որպես Հեսուի պարտության, ապա նաև հաղթանակի վայր: Քաղաքի տեղը ճշգրիտ որոշված չէ:

ԳԱՄՐԱՑ ԱՇԽԱՐՀ— Գամիրք— Կապադովկիա երկրի հնագույն անվանումը: Հավանաբար ծագել է մ թ ա 8-րդ դարի 2-րդ կեսին, այդտեղ բնակվող Կիմերական կամ Գիմերական ցեղերի անունից: Ըստ Աստվածաշնչի՝ Հաբեթի որդի և Ասքանազի, Ռիփաթի ու Թորգոմի հայր Գոմերի սերունդներից:

ԳՈՂԳՈԹԱ— Բարձունք Երուսաղեմում, այն վայրն ու պարտեզը, ուր, ըստ Աստվածաշնչի, խաչվել ու թաղվել է Քրիստոս: Գողգոթա բառն օգտագործվում է նաև փոխաբերական իմաստով, որպես ինքնապոհության ու տառապանքի խորհրդանիշ:

ԳՐԻԳՈՐԻՈՍ-ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ— Գրիգոր Պարթև (մոտ 239—325/326 թթ.), հայ եկեղեցաքաղաքական գործիչ, Հայոց եպիսկոպոսապետ 302 թվականից: Քրիստոնեություն է տարածել Հայաստանում, ինչպես նաև Վրաց և Աղվանից երկրներում, դասվել ավագ սրբերի կարգը: Հայոց եկեղեցին նրա պատվին սահմանել է ամենամյա հիշատակի օրեր:

ԴԱՒԻԹ— (Մ թ ա մոտ 1020, Բեթղեհեմ-950), Հուդա-Իսրայելյան պետության թագավոր, մ թ ա մոտ 990-ից: Երուսաղեմը հռչակել է Հրեաստանի մայրաքաղաք: Հայտնի է որպես քաջ, իմաստուն և բանաստեղծ թագավոր: Նրան են վերագրվում Աստվածաշնչի սաղմոսները: Միջնադարում ներկայացվել է իբրև Քրիստոսի նախատիպար, հովիվ, սաղմոսերգու, Գողիաթ հսկային հաղթող:

ԴԱՐԱՆԱՂԻ, ԴԱՐԱՆԱՂԵԱՑ ԳԱՒԱՌ— Կամախ. Մեծ Հայքի Բարձր Հայք նահանգի առաջին գավառը, տարածվում էր արևմտյան Եփրատի միջին հոսանքի շրջանում: Ունի արգավանդ հողեր: Բացի Անի նշանավոր ամրոցից, հռչակված է նաև այդ վայրերում գտնվող և Լուսավորչի գործունեության հետ կապվող Թորդան ավանով, Սեպուհ լեռով և Մանյա այրով:

ԴԻԴԻՄՈՆ—ԴԻԴԻՈՄՍ—ԴԻԴՈՆ— Լեռ Փոյուգիայում:

ԵԳԻՊՏՈՍ— Ըստ Ավետարանի, այստեղ է նաև ապաստան գտել Քրիստոս՝ փոքր հասակում, Բեթղեհեմում, մանկանց կոտորածի ժամանակ:

ԵԿԵՂԵԱՑ ԳԱՒԱՌ— Հայ ժողովրդի կազմավորման օրրաններից մեկը՝ Մեծ Հայքի Բարձր Հայք նահանգում, մայրաքաղաքը՝ Երզնկա. Սեպուհ լեռով բաժանվում է Դարանաղյաց գավառից: Հյուսիսից սահմանակից էր Փոքր Հայքին, որից բաժանվում էր Գրիգոր Լուսավորչի

լեռներով: Նախաքրիստոնեական շրջանում Հայաստանի կրոնական կենտրոններից էր. Անահիտ (Երվնկայում) և Նանե (Թիլ ավանում) դիցուհիների մեհյաններով: Անահիտի անունով գավառը կոչվում էր նաև Անահտական: Արշակունիների ժամանակ Լուսավորչի տոհմի սեփականությունն էր և կոչվում էր նաև Լուսավորչի գավառ: Այն նաև թագավորանիստ էր: Նրա Թիլ ավանում են թաղվել Արիստակես և Ներսես Մեծ կաթողիկոսները:

ԵՂԻԱ— Մարգարե: Ըստ ավանդության, իր աշակերտ Եղիշեի հետ, մ թ ա 9-րդ դարում, հիմնել են դպրոցներ, պատրաստել կրոնաբարոյական քարոզիչներ (տարբեր վայրերում):

ԵՂԻԱԶԱՐ— Ահարոնի երրորդ որդին և նրա հաջորդը, որպես քահանայապետ: Տե՛ս նաև Ահարոն:

ԵՂԻՍԷՈՍ—ԵՂԻՍԷ—ԵՂԻՇԷ— Աշակերտ և հաջորդ Եղիայի. մարգարե, որ, ըստ Աստվածաշնչի, շատ հրաշքներ է գործել:

ԵՆՈՎՍ— Ադամի թոռը: Սրա օրոք սկսվեց հրապարակով ու կանոնավոր կերպով Աստծուն պաշտոն մատուցվել, այսինքն՝ աստվածապաշտներն սկսեցին ամբարիշտներից որոշվել:

ԵՍԱՅ-ԵՍԱՅԻ— (Մ թ ա 8-րդ դար, Երուսաղեմ), Ամովս մարգարեի որդին (այստեղից էլ՝ Ամովսածին— շնորհաշատ): Հրեաների մարգարեների մեջ հռչակավորը և առաջինը հոտդայականության մեջ: Հեղինակ է Հին Կտակարանի մի քանի գլուխների. երապել է համընդհանուր խաղաղություն և սոցիալական արդարություն, դրա իրականացումը կապելով հետագա իդեալական թագավորի հետ:

ԵՐԵՄԻԱ (մ թ ա 7-րդ դար, 586-ից հետո)— Գլխավոր կամ «Մեծ մարգարեներից», գուշակել է Հուդայի ապատագրումը և ժողովրդի վերադարձը հայրենիք: Նրան են վերագրվում աստվածաշնչային երկու գործ՝ Մարգարեություն Երեմիայի և Ողբ սրբոյն Երեմիա մարգարեի: Առաջինի մեջ հիշվում են նաև «Արարատի» և «Ասքանազի» թագավորությունները, որոնց նա պատերազմի է կոչում ընդդեմ Բաբելոնի:

ԵՐԶՆԿԱ—ԵԶԸՆԿԱ—ԵՐԵԶ—ԵՐԻԶԱ— Հնագույն բնակավայր և քաղաք Արևմտյան Հայաստանում՝ Մեծ Հայքի Եկեղյաց գավառում, Եփրատ գետի աջ ափին: Առաջին անգամ հիշատակվում է մ թ ա 8-րդ դարում: Երվնկայում էր գտնվում Անահիտ աստվածուհու տաճարը՝ նրա ոսկեձույլ արձանով: Քրիստոնեության տարածումից հետո դարձավ նոր կրոնի նշանավոր կենտրոններից մեկը և եպիսկոպոսանիստ

ավան, հետագայում նաև թագավորանիստ քաղաք և Արշակ Գ թագավորի մայրաքաղաքը: 10-րդ դարում, Եկեղյաց գավառը և Երվնկան դարձան նաև Թոնդրակյան շարժման կենտրոններից մեկը:

ԵՐԻՔՈՎ— Քաղաք Երուսաղեմի մոտերքում: Քանանացիների առաջին քաղաքը, որ կործանեց Հեսուն, անիծելով ժողովրդին: Հետագայում այդ անունով շինվեց մի նոր քաղաք:

ԵՓՐԱՏԵՍ-ԵՓՐԱՏ— Գետ Հայկական լեռնաշխարհում, Սիրիայում և Իրաքում: Հին Կտակարանում համարվում է դրախտի չորս գետերից մեկը. հասնում է մինչև Երվնկայի դաշտը:

ԵՓՐԷՄԻ ԼԵՌ— Եփրեմի երկրի լեռները: Եփրեմը Հովսեփի երկրորդ որդին էր, որի ցեղը միշտ նշանավորագույն եղավ (քան ավագինը՝ Մանասեինը): Սրանց պատկանում էր Ավետյաց երկրի մեծ բաժինը: Եփրեմի երկիր էր կոչվում Իսրայելի թագավորությունը: Եփրեմի երկրով անցնող լեռնագոտին կոչվում էր «Լերինք Եփրեմայ» կամ «Եփրեմի լեառն», իսկ դեպի Հուդայի երկիրը (հարավ) գնացող հատվածը՝ «Լերինք Յուդայ»: Սամարիան (Իսրայելի տասը ցեղերի) մայրաքաղաքը Եփրեմի երկրի մեջ էր, ուստի և Եփրեմ անունը հաճախ գործածվում է Իսրայելի թագավորության փոխարեն:

ԵՓՐՈՆ— Ըստ Աստվածաշնչի բնակվում էր Աբրահամի մոտ և հայտնի էր որպես քանանացիների հնագույն քաղաք Եփրոնի իշխան, ուր բնակվում էր ինքը:

ԶԱՔԱՐԻԱՍ— Իսրայելի թագավոր՝ մ թ ա, որ գահակալել է վեց ամիս: Նրա դեմ, որպես Աստծո առաջ մեղանչողի, խռովություն է բարձրացվել ու սպանվել: (Զաքարիաս է կոչվել նաև փոքր մարգարեներից մեկը):

ԹԱԲԱԻՐ-ԹԱՓՈՐ— Առանձին կոնաձև և անտառային լեռ Պաղեստինի Գալիլիա գավառում (Քրիստոսի ծննդատեղի համարվող Նազարեթ քաղաքի մոտ), որի գագաթից մեծատարած ու անսահման գեղեցիկ տեսարան է բացվում մինչ Միջերկրական ծով: Ըստ Աստվածաշնչի, այստեղերում է Քրիստոս անցկացրել իր մանկությունը, ուստի և այդ վայրերից է ծագած համարվում քրիստոնեության լույսը: Ավանդությունը այս լեռան հետ է կապում նաև Քրիստոսի պայծառակերպությունն ու վարդավառի տոնակատարությունը:

ԹԱԴԷՈՍ— Համարվում է Քրիստոսի 72 աշակերտներից և 12 առաքյալներից մեկը, որ քրիստոնեության առաջին քարոզիչն էր Հայաստա-

նում: Բարդուղիմեոս առաքյալի հետ մեկտեղ ընդունվում է որպես հայ քրիստոնեական եկեղեցու հիմնադիր: Նա է Հայաստան բերել ս. Գեղարդը, հիմնադրել Արտապի Թադեի վանքը: Վերջինս հայտնի է նաև Արտապի կամ Ծործորի վանք անուններով:

ԹԱՄՆԱՍԱՔԱՐ-ԹԱՄՆԱԹ-ՀԱՐԷՍ-ԹԱՄՆԱԹՍԱՐԱ— Հեսուի կալվածքը, որ և նրա բնակության վայրն էր: Ենթադրվում է, թե քանանացիների հնագույն քաղաք Թամնան կամ Թամնաթան է:

ԹԻԼ— Ավան Մեծ Հայքի Եկեղյաց գավառում: Հեթանոսության շրջանում այստեղ էր գտնվում մայրության աստվածուհի Նանեի մեհյանը: Ըստ Խորենացու՝ այստեղ է թաղվել Ներսես Ա Մեծ կաթողիկոսը, ուր և հետագայում հայտնվել են նրա նշխարները:

ԻՆՆԱԿՆԵԱ ՏԵՂԻՍՆ— Հնում պաշտամունքի վայր Տարոն գավառում, որտեղ հետագայում հաստատվեց ս. Կարապետ վանքը:

ԻՆՆԱԿՆԵԱՆՍՆ— Տարոնի գավառում գտնվող Իննակնյա կոչված պաշտամունքային վայրը:

ԻՍԱՀԱԿ— Իսրայելի նախահայրերից մեկը՝ Աբրահամի և Սարայի որդին: Հայտնի էր իր հեզությամբ, խոնարհությամբ ու բարեպաշտությամբ: Եհովան Աբրահամի հավատն ու նվիրվածությունը փորձելու համար պատվիրում է զոհել իր սիրելի որդուն՝ նշված բարձր լեռան վրա, ուր հրեշտակը կանխում է զոհաբերությունը և Իսահակի փոխարեն խոյ է մատուցվում պատարագ:

ԻՍՐԱՑԵԼ— Հակոբի անունը, որ վերաբերում է նաև ժողովրդին:

ԻՏԱԼԻԱ— Գերապանցորեն լեռնային է, հյուսիսում Ալպերն են՝ Մոմբլանով, 4807 մ. բարձրությամբ, հարավում՝ Ապենինները. կան գործող և հանգած հրաբուխներ (Վեզուվ, Ամիտա, Էտնա, Ստրոմբոլի, Վուլկանո):

ԼԵԻՈՆ Ա— Ռուբինյան: Ծննդյան թիվն անհայտ, մահացել է 1139-ին: Կիլիկիայի Հայոց գահակալ իշխան (1129—1137)-ին: Հաջորդել է եղբորը՝ Թորոս Ա իշխանին, որի գահակիցն ու զորավարն էր: Ռազմական տաղանդի ու քաջության համար, ժողովուրդը նրան կոչել է Նոր Աժդահակ:

ԼԵԻՈՆ ՔԱՋՆ-ԼԵԻՈՆ Բ ՄԵԾԱԳՈՐԾ— Նաև Մեծահաղթ, Բազմահաղթ և Բարեպաշտ: Կիլիկիայի Հայկական պետության իշխան (պարոն) 1187-ից, Հայոց թագավոր 1198-ից: Մահացել է 1219-ին: Ռուբինյանների ազգատոհմից:

ԼԵՒՈՆ Գ— Հայոց թագավոր Կիլիկիայում (1236—1289), Հեթում Ա թագավորի ավագ որդին և հաջորդը,

ԼԻԲԱՆԱՆ— Երկիր Միջերկրական ծովի արևելյան ափին: Այստեղ են հիմնվել հնագույն քաղաքներ Սիդոնը, Տյուրոսը, Բերիտը (Բեյրութ) և այլն: Հարավարևմուտքից հյուսիսարևելք ձգվում են Լիբանանի լեռները՝ մինչև 3083 մ. բարձրությամբ:

ԽՈՍՐՈՎ 2-ՐԴ ԱՓԱՐՎԵՋ— Պարսից արքա 591-ից, Սասանյանների դինաստիայից, որի վերջին խոշոր ներկայացուցիչն էր: Ռազմական անհաջողություններից դժգոհ ազնվականությունը բանտարկել է նրան, ուր և սպանվել է: Ենթադրվում է նաև, թե նրան սպանել է իր ավագ որդին:

ԿԱԹՈՂԻԿԷՆ որ ի Թիլն— Եկեղյաց գավառի Թիլ ավանում՝ Երզնկայի մոտ. Նանեի մեհյանն էր, որ Գրիգոր Լուսավորիչը քանդեց 301 թ.: Հետագայում այստեղ թաղվեցին Հայոց Արիստակես (Ռստակես) Ա հայրապետը (Գրիգոր Լուսավորչի կրտսեր որդին) և Ներսես Մեծը, ուր կառուցվեց եկեղեցի: Տե՛ս նաև Թիլ:

ԿԱՊԱԴՈՎԿԻԱ— Գամիրք. պատմական երկիր Փոքր Ասիայի կենտրոնում. հարավում Տավրոսի լեռնաշղթան, արևելքում՝ Եփրատ գետը. հյուսիսում՝ Սև ծովը: Ամենաբարձր կետը Արգոս լեռն է. որի շրջակայքում՝ հնագույն ժամանակներում, ապրել են հայերը՝ Արմենները:

ԿԱՐԱՊԵՏ— Տե՛ս Հովհաննես Մկրտիչ:

ԿԱՐՄԵՂՈՍ-ԿԱՐՄԵՂԱՑ— Համարվում է Պաղեստինի լեռներից հյուսիսակողմյանը: Նրան դեմ հանդիման են արևելքից՝ Թաբոր և Հերմոն լեռները: Նշանավոր է որպես Եղիա և Եղիսե մարգարեների այցելության վայր:

ԿԵՆՏՈՒՐԱ-ՔԵՏՈՒՐԱ— Աբրահամի երկրորդ կինը (Սարայից հետո), որից ունեցավ վեց որդի: Սրանք համարվում են արաբական այլ և այլ ցեղերի նախնիները՝ նահապետները: Այսպիսի մեկն է համարվում և Գրիգոր Լուսավորիչը: Սրանից է նաև կենտուրական, կամ քետուրական բառը՝ արմատի խունկ իմաստից, այսինքն՝ խնկաբույր, անուշաբույր:

ԿԵՍԱՐԻԱ—ՄԱԺԱՔ—ԿԱՅՍՐԵՐԻ— Հնագույն բնակավայր պատմական Կապադովկիայում, Արգեոս լեռան հյուսիսային լանջին. հնագույն անունը՝ Մաժաք, որն՝ ըստ Խորենացու, կառուցել է Հայոց Արամ նահապետի կուսակալ Մշակը՝ իր անունով: Ի պատիվ հռոմեական Գայոս

Հուլիոս Կեսար Օգտավիանոս կայսեր վերանվանվել է Կեսարիա: 1022-ին Բյուզանդիայի Վասիլ Բ կայսրը Կեսարիան շնորհել է Սեբաստիայի իշխան Դավիթ Արծրունուն, իսկ 1045-ից հետո՝ վերջինիս փեսայացած Գագիկ Բ Բագրատունուն:

ԿԻՊՐՈՍ— Կղզի Միջերկրական ծովի արևելյան մասում: Հյուսիսային ափերի երկայնքով ձգվում է Կիրենիա լեռնաշղթան, կենտրոնական և հարավային մասում՝ Տրոդոս լեռնապանգվածը, որ և Օլիմպոս, բարձրությունը՝ 1951 մ.:

ԿՈՒՌԻԿՈՍ— Եպիսկոպոսանիստ և նավահանգստային բերդաքաղաք Կիլիկյան Հայաստանում, որ մասնավորապես ճոխացել էր Լևոն Բ Մեծի ժամանակ:

ԿՐՕՆԻԴԷՍ ՃԳՆՈՂ— Անապատական Կապադովկիական Կեսարիայում, որին՝ Անտոն Ճգնավորի հետ միասին, Գրիգոր Լուսավորիչը բերում է Հայաստան, որպես ուսուցիչ: Սրանց ժամանակ է հիմնվում Տարոնի ս. Կարապետ վանքը, ուր ապրում ու մահանում են նրանք:

ՀԱԲԵԼ-ԱԲԵԼ— Ըստ Աստվածաշնչի Ադամի և Եվայի երկրորդ որդին: Աբելը և Կայենը իրենց աշխատանքի առաջին պտուղները զոհաբերեցին Աստծուն: Աստված ընդունեց միայն Աբելի զոհաբերությունը: Կայենը նախանձից սպանեց եղբոր:

ՀԱԳԱՐ-ԱԳԱՐ-ՀԱԳԱՐՈՒ-ՀԱԳԱՐԱԾԻՆ-ՀԱԳԱՐԱՑԻՔ— Աբրահամի աղախինը, որի անունով և հագարացիք, հագարածին՝ Հագարից ծնվածներ, այսինքն՝ աղախնածին:

ՀԱՅԿ— Հայ ժողովրդի անվանադիր նահապետը և ռազմի գերագույն աստվածը:

ՀԱՐՔ— Գավառ Մեծ Հայքի Տուրուբերան նահանգում: Ըստ Խորենացու, այն Հայոց նախնի Հայկի բնակության սկզբնատեղին է (Հայկաշեն դաստակերտով): «Հարքը» մեկնաբանվում է որպես հայր բառի հոգնակի ձև:

ՀԵԹՈՒՄ Ա (1213—1270) — Հայոց թագավոր Կիլիկիայում՝ 1226—1269-ին: Նրա օրոք ավելի կենտրոնացվեց միապետական իշխանությունը, հաղթահարվեցին ներքին երկպառակությունները: Վարել է խաղաղասեր արտաքին քաղաքականություն, որի շնորհիվ վերելք է ապրել տնտեսական և մշակութային կյանքը: Նրա անունով հատվել են ոսկյա, արծաթյա և պղնձյա դրամներ:

ՀԵՂԻԱՍ-ՀԵՂԻ— Հրեաների քահանայապետ, որ 40 տարի նաև դատավոր էր Իսրայելում և անվանի էր իր բարեպաշտությամբ ու վաստակով, բայց մեղադրելի՝ իր որդիներին կրթելու անփութության մեջ: Նրա երկու կավակները պարտվում են փղշտացիներից, և Իսրայելը ևս պարտվում է: Հեղին, նրանց մահվան լուրն առնելով՝ մահանում է կաթվածից:

ՀԵՐԱԿԼ (575—641) — Բյուզանդական կայսր 610-ից: 621—622-ին արշավել է Պարսից Խոսրով 2-րդ արքայի դեմ և հաղթանակել: Տե՛ս նաև Խոսրով 2-րդ:

ՀԵՐՄՈՆ— Բարձր լեռ Պաղեստինի հյուսիսարևելյան սահմանում:

ՀԵՐՈՎԴԷՍ— Հերովդես Մեծ Ագրիպաս. Հրեաստանի թագավորը մինչև Քրիստոս: Ըստ Ավետարանի, սրա ժամանակ ծնվեց Քրիստոս, որին ոչնչացնելու նպատակով հրամայեց կոտորել Բեթղեհեմի մեջ ծնված բոլոր տղա երեխաներին՝ մինչև երկու տարեկանը:

ՀՈՎՐ— Կոնաձև լեռ Մեռյալ ծովի շրջանի անապատում՝ երեք ապառաժուտ կատարով: Այս լեռան վրա է մահացել Ահարոնը՝ Ղևտի ցեղից, Մովսեսի եղբայրը և աջակիցը: Տե՛ս նաև Ահարոն և Մովսես:

ՀՌԱՔԵԼ-ՌԱՔԵԼ— Յակովբի կինը:

ՀՌԻՓՍԻՄԵ— (ծնն. թ. անհայտ—301), քրիստոնյա նահատակ կույս: Հայոց Տրդատ Գ թագավորի հրամանով նահատակված Հռիփսիմե կույսի անունով Գրիգոր Լուսավորիչը Էջմիածնում կառուցում է ս. Հռիփսիմյանց վկայարանը կամ հանգստարանը: 618 թ. այդտեղ բարձրանում է Հռիփսիմեի տաճարը:

ՁԻԹԵՆԵԱՑ ԼԵՌ— Գագաթն է Երուսաղեմի արևելքում գտնվող ցածր լեռնաշղթայի: Այստեղից չափազանց գեղեցիկ տեսարան է բացվում դեպի քաղաքը, Հորդանանի հովիտը, Մեռյալ ծովը: Ըստ Ավետարանի, հաճախ էր այս լեռան վրա բարձրանում Քրիստոս՝ Երուսաղեմ գնալիս կամ վերադառնալիս: Լեռան ստորոտում էր Քրիստոսի սիրած մենարանը՝ Գեթսեմանի պարտեզը, ուր և ձերբակալվել է նա:

ՂԵՒՈՆԴԷՍ ՍՈՒՐԲ— Տե՛ս Դևոնդիէ պատրիարք:

ՂԵՒՈՆԴԻԷ ՊԱՏՐԻԱՐՔ— Կեսարիայի հայրապետը, որ Գրիգոր Լուսավորչին ձեռնադրել է Համայն Հայոց աշխարհի արքեպիսկոպոս

ՂԵՒՏԱՑԻ— Ղևտի անունով սերունդ: Տաճարի և խորանի ցածրաստիճան պաշտոնյաներ էին և պահապաններ. նաև կրթում էին ժողո-

վերդին, մասնավորապես ուսուցանում օրենքը: Այս ցեղից էին ընտրվում երկրի սովորական դատավորները:

ՄԱՀՄԵՏ— Արաբ կրոնական քարոզիչ, մահմեդականության հիմնադիրը: 622 թ. հալածվելով փախել է Մեքքայից, սակայն տևական կռիվներից հետո՝ 630 թ. գրավել է Մեքքան: Այստեղ նկատի ունի 630—632 թթ. Մահմետի և իր հետնորդների ասպատակությունները:

ՄԱՆԱՍԷ— Հովսեփի ավագ որդին, որի սերունդը մեծ ցեղ դարձավ, բնակվելով Հորդանանից մինչև Միջերկրական ծովը՝ Հորդանանի արևելյան և արևմտյան ափերին, բայց հարստությամբ ու զորությամբ Եփրեմի ցեղից ցածր էր: Տե՛ս նաև Յովսեփ:

ՄԱՆԵԱՑ ԱՅՐ— Քարայր Եկեղյաց գավառում, Սեպուհ լեռան վրա, Լուսավորչի գերեզմանատեղիի մոտ: Ըստ ավանդության, իր անունն ստացել է Հռիփսիմյան կույսերից մեկի՝ Մանիի անունով: Պահպանվել է մինչև 20-րդ դարի սկզբները: Կոչվում է նաև Մարիամքար, որովհետև նրանից մշտապես ջուր (արցունք) է կաթում:

ՄԱՆԻ— Հռիփսիմյան կույսերից, որ, ըստ ավանդության, եղել է Եկեղյաց գավառի Սեպուհ լեռան անապատներում. նրա անունով է կոչվել այն քարայրը, ուր ճգնել է Գրիգոր Լուսավորիչը (տե՛ս Մանյա այր):

ՄԱՆՈՒԷԼ/ԷՄԱՆՈՒԷԼ— Աստված, Քրիստոս:

ՄԱՏԹԷՈՍ— Առաքյալ և ավետարանիչ:

ՄԵՌԱՑ— Զրհոր Կարմիր ծովի մոտ, որի կողքով իսրայելացիք անցան Կարմիր ծովը և որի ջուրը Մովսես մարգարեն հրաշքով քաղցրացրեց:

ՄՈՎԱԲՈՒ ԼԵԱՌՆ-ՆԱԲԱԻ-ՆԵԲՈ— Ղովտի որդի Մովաբի անունով կոչված երկրի ու դաշտի լեռը, որտեղից Մովսեսը տեսավ Ավետյաց երկիրը և որտեղ մեռավ: Նաբավը Աբարհիմ լեռների մի կատարն է, Երիքով քաղաքի դիմաց: Մովաբի անունով՝ ցեղը կոչվում է մովաբացիք:

ՄՈՎՍԷՍ— Ներսես Մեծի Պատմության մեջ նկատի ունի Մովսես Խորենացուն:

ՄՈՎՍԷՍ Բ ԵՂԻՎԱՐԴԵՑԻ— Հայոց մեծանուն կաթողիկոս 574-ից, որի օրոք գործածության մեջ դրվեց Հայոց տոմարը, ընդունված դեռևս 551 թ.:

ՄՈՎՍԷՍ ՄԱՐԳԱՐԷ ՕՐԻՆԱԴԻՐ— Ըստ Աստվածաշնչի, հրեական ցեղերի առաջնորդը, մ թ ա 13-րդ դարում. մեծագույն մարգարե և հրեականության հիմնադիր. հրեաներին ազատել է եգիպտական գերությունից, Սինա լեռան վրա ստացել՝ աստծո տասը պատվիրանները և հաստատել Եհովայի պաշտամունքը: Նա համարվում է Հնգամատյանի հեղինակը, այսինքն՝ Հին Կտակարանի առաջին հինգ գրքերի՝ Ծնունդ, Ելք, Ղևտական, Թիվք, Երկրորդումն օրինաց: Նրան է վերագրվում նաև 9-րդ սաղմոսը:

ՅԱԿՈՎԲ հայրապետ Հայոց— Հակոբ Ա Կլայեցի (1200-ական— 1286) կաթողիկոս՝ 1268-ից: Կոստանդին Ա Բարձրբերդցու գործակիցը, օգնականն ու տեղապահը. հայտնի էր որպես գիտնական, հռետոր, մեկնիչ և բանաստեղծ:

ՅԱԿՈՎԲ— Իսահակ նահապետի որդին և Եսավի երկվորյակը:

ՅԱՇՏԻՑ ՎԱՆՍՆ-ՅԱՇՏԻՇԱՏ-ԱՇՏԻՇԱՏ— Գտնվում է Մեծ Հայքի Տարոն նահանգում, որ հեթանոսական Հայաստանի կրոնական գլխավոր կենտրոնն էր: Քրիստոնեության հաստատումից հետո տեղում հիմնվեց վանք:

ՅԱՐԱԲՈՎԹ ՄՈՎԱԲՈՒ— Արաբովթ, վայր Երիքովի մոտ՝ մովաբացիների տիրույթում, ուր և Նաբավ լեռն էր, որ կոչվում էր նաև Մովաբու լեռ:

ՅՈՀԱՆ— Տե՛ս Յովհաննէս ավետարանիչ:

ՅՈՀԱՆ ԴՕՓԻ ԹՈՌՆ— Այս Յոհանը մեծապգի եպիսկոպոս էր, հայտնի ապնվական իշխան Դոփի թոռը, որի խնդրանքով Երզնկացին գրել է երկնային մարմինների մասին իր գիտական ճառը՝ կարդացած Տփխիսում, նաև այլ գործեր: Հայտնի է դրանցից ևս մեկը, որ վերնագրված է այսպես. Տեառն Յոհանիսի բարձրատոհմի և մեծապարմ եպիսկոպոսի Դօփի թոռն կոչեցելոյ, Հարցումն բանից և պատասխանիք ըստ թուոյ գլխոց բանիցն հարցման (ձեռ. № 644, ԺԴ, 78 բ):

ՅՈՎՀԱՆՆԷՍ— Քրիստոսի աշակերտներից, առաքյալ և ավետարանիչ:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՄԼՈՐԴԻ ՋԱՔԱՐԻԵԱՑ— Յովհաննէս Մկրտիչ: Ծնված համարվելով Զաքարիա ծեր հորից և ամուլ Եղիսաբեթից, կոչվել է նաև Ամլորդի:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻՉ— Ամլորդին, որ կոչվեց նաև Կարապետ, Մարգարէ: Ըստ ավանդության գուշակել է Քրիստոսի գալուստը, Հոր-

դանան գետում մկրտել նրան և հրեաներին: Գլխատվել է Գալիլեայի կառավարիչ Հերովդես Անտիպասի հրամանով:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԻՇԽԱՆ— Սարգիս արքեպիսկոպոս Երզնկացու որդին, գիտնական և բանաստեղծ, որ հոր հետ մեկտեղ մեծ վարկ տվին գավառի ու քաղաքի ինչպես տնտեսական, քաղաքական կյանքին, այնպես էլ մշակույթին: Ծնն. թ. անհայտ, սպանված 1276 կամ 1279 թ.:

ՅՈՎՍԷՓ— Հակոբի և Ռաքելի որդին, որ նշանավոր էր որպես Աստծո նախախնամությունը վայելող, զգաստության և համբերության, զգոնության և ճշմարտության տիպար: Որդիական սիրո և անհողդողդ հավատի աստվածաշնչային կերպար, Աստծո սիրելին: Տե՛ս նաև Սիկիմ:

ՅՈՎՍԷՓ— Քրիստոսի մոր՝ Մարիամի ամուսինը, բնակվում էր Գալիլիայի Նազարեթ քաղաքում. բարեպաշտ մարդ, հյուսն:

ՅՈՐԴԱՆԱՆ— Գետ Արևմտյան Ասիայում, թափվում է Մեռյալ ծովը: Նրա ավազանում կան կրոնական ուխտագնացության վայրեր:

ՅՈՒՆԱՆ-ՀՈՎՆԱՆ— Մարգարեներից մեկը, որին, ըստ ավանդության, ալեկոծ ծովում կլլում է հսկա կետ ձուկը և երեք օրից հետո դուրս փսխում: Հովնանը դուրս է գալիս ցամաք և գնում Նինվե, կատարելու աստծո պատվիրանները:

ՅՈՒՍԿԱՆՆ-ՅՈՒՍԻԿ Ա ՊԱՐԹԵՎ (295—347) — Գրիգոր Լուսավորչի թոռը, հաջորդել է հորը՝ Վրթանեսին, Հայոց կաթողիկոս է դարձել 341-ից:

ՆԱԲԱԻ— Տե՛ս Մովաբու լեռն:

ՆԵՍՏՈՐ— Ծննդյան և մահվան թվականները անհայտ: Նեստորականության հիմնադիրը, ազգությամբ ասորի: Եփեսոսի 431 թ. Տիեզերական ժողովում մեղադրվել է հերձվածության մեջ, 433 թ. աքսորվել Եգիպտոս, ուր և մի քանի տարի անց մահացել է:

ՆԵՐՍԷՍ— Առաջնորդ տեղւոյն, Եկեղյաց գավառի Սարգիս արքեպիսկոպոսի թոռը և Հովհաննես իշխանի որդին, որ Ներսես հայրապետի նշխարների հայտնության ժամանակ Երզնկայի առաջնորդն էր:

ՆԵՐՍԷՍ ՀԱՅՐԱՊԵՏ— Ներսես Ա Մեծ Պարթև (մոտ 329—373), Հայոց կաթողիկոս: Պայքար է ծավալել պարսկական ազդեցության դեմ, ոչնչացրել մոգության դպրոցները, բացել նոր դպրատներ, որբանոցներ, հիվանդատներ, անկելանոցներ, աղքատանոցներ, սահմանել կանոններ, վայելել մեծ հեղինակություն:

ՆՈՅ— Ըստ ավանդության, ջրհեղեղից և «Հին աշխարհի» կործանումից հետո, «Նոր մարդկության» նախահայրը, որ իր նավով փրկվել է «ի լերինն Արարատայ»:

ՈՂԻՄՊԻՈՍ-ՈՂԻՄՊՈՍ-ՈԼԻՄՊՈՍ— Եվրոպայի և Ասիայի յոթ լեռների անուն. նշանավորագույնը հունական Օլիմպիոսն է, որ հեթանոսական աստվածների բնակավայրն էր համարվում. բարձրությունը՝ 2917 մ.: Երկնկացին նկատի ունի Կիպրոսի Օլիմպոսը, որի բարձրությունը 1951 մ. է:

ՈՍԿԻ ԼԵՌ— Լեռ Իտալիայում, որ հարուստ է ոսկով ու արծաթով:

ՊԱՀԼԱՒԱԿԱՆ— ՊԱՀԼԱՒՈՒՆԻ տոհմից: Ըստ ավանդության, Պահլավունիները սերել են Պարթևաց Արշակունիների տոհմաճյուղերից՝ Սուրենյան և Կարենյան այահլավիկներից: Կարենյան Պահլավիկներից Հայաստանում ապաստանած Կամսարի անունով 3-րդ դարում հիմնադրվում է Կամսարական տոհմաճյուղը, իսկ Սուրենյան Պահլավիկների տոհմից փրկված Անակ Պարթևի որդի Սուրենը, դաստիարակվելով ու կրթվելով Կեսարիայի քրիստոնեական համայնքում, մկրտվել է Գրիգոր անունով և դարձել Պահլավունի նոր տոհմի հիմնադիրը: Նրա սերունդը շարունակել է կրել պապենական Պարթև տոհմանունը:

ՊԱԼԱՀԱՒՈՒՆԻ-ՊԱՀԼԱՎՈՒՆԻՔ-ՊԱՐԹԵՎԱԿԱՆՔ-ՊԱՐԹԵՎՔ — Հայ իշխանական տոհմ: Գրիգոր Լուսավորչից հետո այս տոհմի մյուս հինգ ներկայացուցիչներն են՝ Արիստակես (Ռստակես) Ա Պարթև, Վրթանես Ա Պարթև, Ներսես Ա Մեծ Պարթև, Սահակ Ա Պարթև: Տե՛ս նաև Պահլաւական, Պահլաւունի:

ՊԱՐԹԵՆՈՍ— Նկատի ունի Սիցիլիայի հրաբխային լեռներից մեկը:

ՊԱՐԹԵՒԱՋԵԱՆՆ ԳՐԻԳՈՐ— Տե՛ս, Գրիգոր Լուսավորիչ:

ՊԱՐԹԵՒԱՑ կարմ— Պարթև կոչվում էր մ թ ա առաջին հազարամյակից մինչև մ թ ա առաջին դարերը Կասպից ծովի հարավարևելյան մասում ապրող ժողովուրդը, Ժամանակի ընթացքում նրանց մեջ է ձուլվել վաչկատուն սակերի Պարն կոչվող ցեղը: Մ թ ա մոտ 250-ին կազմավորվել է Պարթևական ինքնուրույն պետությունը, որի առաջին գահակալն, ըստ ավանդության, եղել է Պարն ցեղի առաջնորդ Արշակը: Այս անունով նրա դինաստիան կոչվել է Արշակունի, իսկ պարթևական բոլոր թագավորները՝ որպես տիտղոս, կրել են նաև Արշակ անունը: Պարթևների տոմարն սկսվում է Արշակի եղբայր և հաջորդ հա-

մարվող Տրդատ Ա-ի ժամանակներից՝ մ թ ա 248/247—211 թվականներից: Պարթևաց վարմ ասելով, Երվնկացին նկատի ունի այս դինաստիայից սերողներին, որոնցից էր և Գրիգոր Լուսավորիչը:

ՊԱՒՂՈՍ-ՊՕՂՈՍ— Առաքյալ, քրիստոնեության ջերմեռանդ քարոզիչ ձերբակալվել և մահապատժի է ենթարկվել Ներոն կայսեր հրամանով, Պետրոս առաքյալի հետ միասին, մոտ 65 թ.: Նրա անունով գործեր են պահպանվել ս. Գրքում, որոնց հեղինակության հարցը մնում է վիճելի:

ՊԵՏՐՈՍ— Քրիստոսի աշակերտներից, նշանավոր առաքյալ, որ ընդունակ էր ջրի վրա քայլելու: Նա երեք անգամ ուրացավ Քրիստոս և ներվեց:

ՊԻՂԱՏՈՍ— Հրեաստանի դատավոր, որ, Քրիստոսին անմեղ ճանաչելով հանդերձ, մեծ կաշառքով նրան խաչելու վճիռ կայացրեց:

ՋԱԻԱԽՍ— Ջավախք, գավառ Մեծ Հայքի Գուգարք նահանգում (այժմ՝ Ախալքալակի շրջան): Լինելով վրաց Բագրատունիների թագավորության հարավային ծայրամասում, ենթարկվել է մոնղոլական, թուրքական, պարսկական ավերիչ արշավանքների:

ՌՍՏԱԿԵՍ-ԱՐԻՍՏԱԿԵՍ Ա ՊԱՐԹԵԻ (մոտ (264—333) — Գրիգոր Լուսավորչի որդին և հաջորդը: Ջանացել է Հայաստանում ամրապնդել ապգապահպանությունը: Սպանվել է Ծոփքում, թաղվել Եկեղյաց գավառի իր հայրենի կալվածքում՝ Թիլ ավանում: Գերեզմանը գտնվում է Երվնկայի Ջոփտակ հայրապետ վանքում, որ կոչվել է նաև ս. Ներսեսի վանք, որովհետև նույն տեղում է ամփոփվել նաև վերջինիս աճյունը:

ՌՈՒԲԵՆ ՄԵԾ ԻՇԽԱՆ— Ռուբեն Ա (1025—1095), Կիլիկիայի Հայոց իշխան 1080-ից, Ռուբինյանների իշխանության հիմնադիրը. եղել է Գագիկ Բագրատունի արքայի թիկնապահ իշխանը:

ՍԱՄԱՐԻԱ-ՍԱՄԱՐԱՑԻ— Սամարիայի բնակիչ: Սամարիան սուրբ երկրի երեք բաժիններից մեկն էր, իսկ բնակիչները՝ տեղի հրեաներին իրենց մեջ ձուլած խառը ցեղ, որ մերժեց հրեական բոլոր գրքերը, բացի Հնգամատյանից: Սամարացիք հրեաներին թշնամի ցեղ էին:

ՍԱՄՈՒԷԼ— Հրեաների նշանավոր մարգարեներից, ղևտացի, որ Հեղիից հետո դառնում է դատավոր: Համարվում է Իսրայելի դատավորներից վերջինն ու լավագույնը: Նա օծեց Սավուղին Իսրայելի առաջին թագավոր: Տե՛ս նաև Սավուղ և Հեղիաս:

ՍԱՆԻՐ— Հերմոն լեռան անունը:

ՍԱՐԱ-ՍԱՌԱ— Աբրահամի կինը:

ՍԱՐԳԻՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ (եպիսկոպոս է օծվել 1249 թ.) — Եկեղեցաց գավառի նշանավոր առաջնորդն էր 13-րդ դարում, որ մեծարվում էր թե՛ Բյուզանդական կայսեր և թե՛ Ապաղա խանի կողմից: Նրան է վերագրվում Երզնկայի գեղեցկաշեն ս. Փրկիչ եկեղեցու կառուցումը, ինչպես նաև բազում այլ շինարարական ու խաղաղասիրական գործեր, որ կատարում էր իր որդու՝ Հովհաննես իշխանի հետ մեկտեղ: Սրանք սերում են դեռևս 5-րդ դարից հայտնի Երզնկայի իշխանական տոհմից: Սարգիս արքեպիսկոպոսի և որդու՝ պարոն Հովհաննեսի օրոք է, որ Երզնկայի Թիլ ավանում հայտնաբերվում են Ներսես Մեծի նշխարները: Սրանց համար Սարգիս արքեպիսկոպոսի պատրաստել տված շքեղ մասնատուփերը պահպանվում էին Երզնկայի ս Սարգիս եկեղեցում՝ մինչև Մեծ եղեռնը: Դրանց մեջ էին Ներսես Պարթև կաթողիկոսի ճկոյթը և բազուկը՝ արծաթապատ և արձանագրություններով, որ հայտնում էին նրանց կամքը՝ մասունքը միշտ պահելու այդ տաճարում «ի վայելումն Աստուածապարգև վաւակացն իւրեանց Ներսիսի և Գրիգորիսի» Տե՛ս նաև Յովհաննէս իշխան և Ներսէս առաջնորդ տեղւոյն:

ՍԱՐԵՓԹԱ—ՍԱՐԵՓԹԱՑԻ—ՍԱՐԵՓԹԱՑԻՈՅ— Փյունիկյան նավահանգիստ Միջերկրական ծովափին՝ Տյուրոսի և Սիդոնի միջև: Սովի ժամանակ Եղիա մարգարեն նստել է այստեղ մի այրու հետ և նրա կուժի մեջ ձեթ, իսկ կարասի մեջ ալյուր է աճեցրել, այրու մանկիկին հրաշքով կենդանացրել: Այդ կնոջ ավնիվ հավատն արժանի է դարձել հիշվելու և օրինակ դառնալու՝ Սարեփթացի այրի:

ՍԱՒՈՒԼ— Իսրայելի առաջին թագավորը՝ Բենիամինի ցեղից, մ թ ա 1091-ին: Իր որդիներով պատերազմի մեջ ընկավ Գեղբուա լեռան վրա, իր անհնազանդությամբ մերժվեց աստծուց և անձնասպան եղավ:

ՍԵԼՈՎՄ— Անվանի քաղաք Երուսաղեմի և Սյուքեմի մոտ, ուր Հեսուն հավաքեց Ավետյաց երկրի ժողովուրդը և ուր հաստատվեցին իսրայելացիք: Այստեղ կար և Սելովամ կոչվող աղբյուր և ջրհոր:

ՍԵՊՈՒՀ— Լեռ Մեծ Հայքի Եկեղյաց գավառում, ուր իր կյանքի վերջին տարիներն անցկացրեց Գրիգոր Լուսավորիչը (նաև Տրդատ թագավորը): Այստեղ է հիշատակվում նաև նրա գերեզմանատեղին:

ՍԻԿԻԼԻԱ-ՍԻՑԻԼԻԱ— Միջերկրական ծովի ամենամեծ կղզին՝ Իտալիայի կազմում: Հյուսիսային ափերի երկայնքով ձգվում են Ապենինյան լեռների շարունակությունը կազմող լեռնաշղթաների համակարգեր. ամենաբարձր գործող հրաբուխը Էտնան է. կան գետեր:

ՍԻԿԻՄ-ՍԻՔԻՄ— Քաղաք Երուսաղեմից հյուսիս, որտեղ արտ գնեց Հակոբ նահապետը և բաժին տվեց Հովսեփին, ուր և թաղվեց վերջինս:

ՍԻՄԷՈՆ ԾԵՐՈՒՆԻ— Այր արդար, որ գրկել է մանուկ Հիսուսին և օրհնել Հովսեփին ու Մարիամին:

ՍԻՆԱ— (լեռ և լեռնաշղթա) Եգիպտոսի տարածքում, Կարմիր ծովի թերակղզում, ուր, Մովսես մարգարեի միջոցով, իսրայելացիներին տրվեց Աստծո պատվիրանները: Այստեղ է նաև Աստված երևացել Մովսեսին՝ այրվող Մորենու մեջ և խոսել հետը, որով և լեռը դարձել է հռչակավոր:

ՍԻՐԱՔ— Որդի Հեսուի, գրել է «Իմաստութեան գիրքը», որը չի մտնում եբրայական ս. գրքի մեջ, որպես անվավեր մատյան:

ՍԻՈՎՆ-ՍԻՈՆ— Բլուր Երուսաղեմում (777 մ.), որտեղ, ըստ աստվածաշնչյան առասպելի, գտնվում էր Եհովա աստծու տաճարը և Դավիթ թագավորի ամրակուռ ապարանքը: Հուդայական կրոնում Սիոն այլաբանորեն նշանակում է «Աստծո հավատարիմ»: Քրիստոնեական աշխարհում այն հաճախ գործածվում է որպես Երուսաղեմի հոմանիշ:

ՍԻՐՈՒԱ—ՍԻՐԻԱ—ՍԻՐԻԱ— Երկիր Միջերկրական ծովի ափին. արևմուտքում՝ հյուսիսից հարավ ձգվում է լեռնաշղթան, ավելի հարավ՝ Հերմոնի լեռնաշղթան, հյուսիսային սահմանի երկայնքով՝ Տավրոսի նախալեռները:

ՍՈՂՈՄՈՆ (մ թ ա մոտ 975—928) — Հրեաստանի թագավոր, Դավթի որդին, գահակիցը և հաջորդը, որ կենտրոնացրեց պետական կառավարման մարմինները, հզորացրեց բանակը, սահմանեց կայուն կարգ ու պարտավորություններ, ծավալեց շինարարական վիթխարի աշխատանք (Երուսաղեմում կառուցել է Եհովայի (Սողոմոնի) հռչակավոր տաճարը): Հայտնի է որպես ամենաիմաստուն և արդար դատավոր, գրական, փիլիսոփայական, բարոյագիտական ու բնագիտական բազմաթիվ երկերի հեղինակ: Տե՛ս նաև Սիովն:

ՍՏԵՓԱՆՈՍ— Կիլիկիայի թագավոր՝ Ռուբինյան ազգատոհմից, Լևոն Ա-ի որդին, Լևոն Բ Բարեպաշտի հայրը, Թորոս Բ-ի և Մլեհի եղբայրը:

ՍՏԵՓԱՆՈՍ ԿՈՒՌԻԿՈՍՑԻ— Կիլիկյան իշխան, որի հետ սերտ կապերի մեջ է եղել Երզնկացին, նրա պատվերով գրել է մի շարք գիտական ու խրատական ճառեր: Եղել է Երզնկայում. նրա միջոցով Երզնկացին կապ է պահպանել կիլիկյան իշխանների հետ:

ՍՈՒՐԵՆԱԿԱՆ— Այսպես է կոչվում Արշակունի Պահլավական այն ավնվավարմ տոհմը, որ Սասանյանների ժամանակ, արքայից հետո, երկրորդ գահն ուներ: Այս տոհմից է նաև Գրիգոր Լուսավորիչը:

ՎԱՆԱՆԴ— Մեծ Հայքի Այրարատ նահանգի գավառներից մեկը: Կարսը նրա նշանավոր քաղաքն ու բերդն էր, որ 10-րդ դարում դարձավ նաև թագավորանիստ: Տե՛ս նաև Բասեն:

ՎԱՐԴԱՆ ԱՐԵՒԵԼՑԻ— Ծն. մոտ 1198 թ. Գանձակում, մահացել 1271-ին, Խոր Վիրապում, նշանավոր մատենագիր, փիլիսոփա, պատմագիր, աշխարհագրագետ, քերական, մանկավարժական գործիչ և այլն. Մխիթար Գոշի աշակերտը և Երզնկացու ուսուցիչը, որից շատ բան է սովորել ու գործադրել վերջինս, մեծ ազդեցություն կրելով նաև նրա ստեղծագործական ոճից ու մեթոդից:

ՎԻՐՔ— Վրաստան:

ՎՐԹԱՆԷՍ— Գրիգոր Լուսավորչի երեց որդին, Հայոց կաթողիկոս 340-ին. քաղաքագետ, որ հանդարտեցրեց ներքին խռովությունները, Խոսրով Բ-ին կարգեց թագավոր 344-ին, հետագայում նրա որդի Տիրանին Կ. Պոլսում հաստատել տվեց թագավոր:

ՏԱՐՍՈՆԱՑԻ ՄԵԾՆ ՊՕՂՈՍ— Տե՛ս ՊԱՒՂՈՍ:

ՏԱՒՐՈՍ— Լեռ Փոքր Հայքի և Կիլիկիայի միջև գտնվող լեռնաշղթայում: Սա մերձավոր Արևելքի ամենաերկար լեռնաշղթան է, որ ավարտվում է Միջերկրական ծովափին՝ Անեմուռի հրվանդանով: Առանձնանում է երեք անվանումներով. Արևմտյան Տավրոս, Կենտրոնական, Արևելյան: Վերջինս հայկական Տավրոսն է, որ բաժանում է Մեծ Հայքը Միջագետքից:

ՏԻՐԱՇԷՆ— Նշանավոր վանք-դպրատուն Երզնկայում, որտեղ սովորել, աշխատել և ուսուցչություն են արել մի շարք անվանի վարդապետներ: Ըստ Երզնկացու, Ներսես Մեծի մասունքներից պահպանվել են և այստեղ՝ Սարգիս արքեպիսկոպոսի միջոցով: Տե՛ս նաև Սարգիս արքեպիսկոպոս:

ՏՐԴԱՏ ՄԵԾ ԱՐՔԱՅՆ ՀԱՅՈՑ— Որի օրոք քրիստոնեությունը Հայաստանում դարձավ պետական կրոն: Թեև բազում չարչարանքների ենթարկեց Լուսավորչին և նահատակեց Հռիփսիմյան կույսերին, սակայն, ի վերջո, ինքը նույնպես ընդունեց քրիստոնեություն և դարձի բերեց իր ժողովրդին ևս: Տե՛ս նաև Հռիփսիմե:

ՓԵԳՈՎՐԱՑ-ՓԵԳՈՎՐ— Մովսբու լեռան կատարը, Երիքովի դիմաց, ուր թաղվել է Մովսեսը: Այստեղից Բաաղամը տեսավ իսրայելացիների բանակը: Տեղն այժմ հայտնի չէ. ենթադրվում է Մեռյալ ծովից ոչ շատ հեռու՝ նրա հյուսիսարևելյան մասում:

ՓՌԻԻԳԻԱ— Հնում Փոքրասիական երկիր, ուր, ասում են թե, շինվել է Նոյի տապանը:

ՔԱՂԴԵԱԿԱՆ— Քաղդեցիների պես. փիլիսոփա, բնագետ, սուտ մարգարե: Քաղդեացիք սկզբում բնակվում էին Ասորեստանի և Միջագետքի հյուսիսում, Կորդվաց լեռների սկզբնամասում: Սրանք ի բնե պատերազմող ժողովուրդ էին, հետագայում դարձան քաղաքակիրթ, եկան Բաբելոն: Քաղդեաբաբելական հարստությունը տևեց մոտ հարյուր տարի:

ՔԱՆԱՆԱՅԻ—ՔԱՆԱՆԻ սերնդից: Քանանը թոռն էր Նոյի և Քամի որդին: Ենթադրվում է, թե նա ևս համամիտ էր հոր հետ Նոյին ծաղրելու, ուստի թե՛ ինքը և թե՛ իր սերունդը, ըստ Աստվածաշնչի, կրում են աստծո անեծքը:

ՔՈՐԷԲ— Սինա լեռնաշղթան կոչվում էր նաև Քորեբ, իսկ նրա նվիրական գագաթը՝ Սինա:

ՈՒՌԿԱՆՈՍ-ԲԱՌԿԱՆՈՍ-ՎՈՒԼԿԱՆՈՍ (հունական՝ ՀԵՓԵՍՏՈՍ)— Հրաբխային լեռ (կիկլոպների դարբնոցը), որից միշտ հուր, կրակ ու շանթ է առաքում Արամազդը, Նկատի ունի ԷՏՆԱ (ԵՏՆԱ) հռչակավոր հրաբխային լեռը Սիցիլիայում, որ համարվում էր Հեփեստոսի կայանը, ուր դարբնում էին Արամազդի շանթերը: Տե՛ս նաև Սիկիլիա և Պարթենոս:

ՍՏԵՓԱՆՈՍ ԿՈՒՌԻԿՈՍՑԻ— Կիլիկյան իշխան, որի հետ սերտ կապերի մեջ է եղել Երզնկացին, նրա պատվերով գրել է մի շարք գիտական ու խրատական ճառեր: Եղել է Երզնկայում. նրա միջոցով Երզնկացին կապ է պահպանել կիլիկյան իշխանների հետ:

ՍՈՒՐԵՆԱԿԱՆ— Այսպես է կոչվում Արշակունի Պահլավական այն ավնվավարմ տոհմը, որ Սասանյանների ժամանակ, արքայից հետո, երկրորդ գահն ուներ: Այս տոհմից է նաև Գրիգոր Լուսավորիչը:

ՎԱՆԱՆԴ— Մեծ Հայքի Այրարատ նահանգի գավառներից մեկը: Կարսը նրա նշանավոր քաղաքն ու բերդն էր, որ 10-րդ դարում դարձավ նաև թագավորանիստ: Տե՛ս նաև Բասեն:

ՎԱՐԴԱՆ ԱՐԵՒԵԼՑԻ— Ծն. մոտ 1198 թ. Գանձակում, մահացել 1271-ին, Խոր Վիրապում, նշանավոր մատենագիր, փիլիսոփա, պատմագիր, աշխարհագրագետ, քերական, մանկավարժական գործիչ և այլն. Մխիթար Գոշի աշակերտը և Երզնկացու ուսուցիչը, որից շատ բան է սովորել ու գործադրել վերջինս, մեծ ազդեցություն կրելով նաև նրա ստեղծագործական ոճից ու մեթոդից:

ՎԻՐՔ— Վրաստան:

ՎՐԹԱՆԷՍ— Գրիգոր Լուսավորչի երեց որդին, Հայոց կաթողիկոս 340-ին. քաղաքագետ, որ հանդարտեցրեց ներքին խռովությունները, Խոսրով Բ-ին կարգեց թագավոր 344-ին, հետագայում նրա որդի Տիրանին Կ. Պոլսում հաստատել տվեց թագավոր:

ՏԱՐՍՈՆԱՑԻ ՄԵԾՆ ՊՕՂՈՍ— Տե՛ս ՊԱՒՂՈՍ:

ՏԱՒՐՈՍ— Լեռ Փոքր Հայքի և Կիլիկիայի միջև գտնվող լեռնաշղթայում: Սա մերձավոր Արևելքի ամենաերկար լեռնաշղթան է, որ ավարտվում է Միջերկրական ծովափին՝ Անեմուռի հրվանդանով: Առանձնանում է երեք անվանումներով. Արևմտյան Տավրոս, Կենտրոնական, Արևելյան: Վերջինս հայկական Տավրոսն է, որ բաժանում է Մեծ Հայքը Միջագետքից:

ՏԻՐԱՇԷՆ— Նշանավոր վանք-դպրատուն Երզնկայում, որտեղ սովորել, աշխատել և ուսուցչություն են արել մի շարք անվանի վարդապետներ: Ըստ Երզնկացու, Ներսես Մեծի մասունքներից պահպանվել են և այստեղ՝ Սարգիս արքեպիսկոպոսի միջոցով: Տե՛ս նաև Սարգիս արքեպիսկոպոս:

ՏՐԴԱՏ ՄԵԾ ԱՐՔԱՅՆ ՀԱՅՈՑ— Որի օրոք քրիստոնեությունը Հայաստանում դարձավ պետական կրոն: Թեև բպում չարչարանքների ենթարկեց Լուսավորչին և նահատակեց Հռիփսիմյան կույսերին, սակայն, ի վերջո, ինքը նույնպես ընդունեց քրիստոնեություն և դարձի բերեց իր ժողովրդին ևս: Տե՛ս նաև Հռիփսիմե:

ՓԵԳՈՎՐԱՑ-ՓԵԳՈՎՐ— Մովսբու լեռան կատարը, Երիքովի դիմաց, ուր թաղվել է Մովսեսը: Այստեղից Բաաղամը տեսավ իսրայելացիների բանակը: Տեղն այժմ հայտնի չէ. ենթադրվում է Մեռյալ ծովից ոչ շատ հեռու՝ նրա հյուսիսարևելյան մասում:

ՓՌԻԻԳԻԱ— Հնում Փոքրասիական երկիր, ուր, ասում են թե, շինվել է Նոյի տապանը:

ՔԱՂԴԵԱԿԱՆ— Քաղդեցիների պես. փիլիսոփա, բնագետ, սուտ մարգարե: Քաղդեացիք սկզբում բնակվում էին Ասորեստանի և Միջագետքի հյուսիսում, Կորդվաց լեռների սկզբնամասում: Սրանք ի բնե պատերազմող ժողովուրդ էին, հետագայում դարձան քաղաքակիրթ, եկան Բաբելոն: Քաղդեաբաբելական հարստությունը տևեց մոտ հարյուր տարի:

ՔԱՆԱՆԱՅԻ—ՔԱՆԱՆԻ սերնդից: Քանանը թոռն էր Նոյի և Քամի որդին: Ենթադրվում է, թե նա ևս համամիտ էր հոր հետ Նոյին ծաղրելու, ուստի թե՛ ինքը և թե՛ իր սերունդը, ըստ Աստվածաշնչի, կրում են աստծո անեծքը:

ՔՈՐԷԲ— Սինա լեռնաշղթան կոչվում էր նաև Քորեբ, իսկ նրա նվիրական գագաթը՝ Սինա:

ՈՒՌԿԱՆՈՍ-ԲԱՌԿԱՆՈՍ-ՎՈՒԼԿԱՆՈՍ (հունական՝ ՀԵՓԵՍՏՈՍ)— Հրաբխային լեռ (կիկլոպների դարբնոցը), որից միշտ հուր, կրակ ու շանթ է առաքում Արամազդը, Նկատի ունի ԷՏՆԱ (ԵՏՆԱ) հռչակավոր հրաբխային լեռը Սիցիլիայում, որ համարվում էր Հեփեստոսի կայանը, ուր դարբնում էին Արամազդի շանթերը: Տե՛ս նաև Սիկիլիա և Պարթենոս:

ԱՂԵՂՆԱԻՈՐ— Կենդանաշրջանի համաստեղություն:

ԱՅԾԵՂՋԻԻՐ— Կենդանաշրջանի համաստեղություն:

ԱՌԻԻԾ— Կենդանաշրջանի համաստեղություն:

ԱՐԵՍ— Հրատ. տե՛ս Հրատ:

ԱՐՈՒՍԵԱԿ— Տե՛ս Լուսաբեր:

ԱՓՐՈԴԻՏԷՍ— Այստեղ՝ Լուսաբեր, Լուսաստղ, Առավոտյան աստղ, Արուսյակ:

ԵԿԱԻՈՐ-Երկվորյակ-Երկավոր— Կենդանաշրջանի համաստեղություն:

ԵԼԻՆՈՍ— Արեգակ:

ԵՌՄԻՍ— Փայլածու, արեգակին ամենամոտ մոլորակը, Մերկուրի:

ՋԵԻՍ— Այստեղ Յուպիտեր, Լուսնթագ:

ՋՕՀԱԼ— Երևակ: Տե՛ս Կռոնոս:

ՋՕՀՐԱ— Լուսաստղ:

ԼՈՒՍԱԲԵՐ— Արուսյակ: Վեներա մոլորակի հայկական անվանումները:

ԼՈՒՍՆԹԱԳ— Յուպիտեր մոլորակի հայկական անվանումը:

ԽԵՅԳԵՏԻՆ— Կենդանաշրջանի համաստեղություն:

ԽՈՅ— Կենդանաշրջանի համաստեղություն:

ԿԱՐԻՃ— Կենդանաշրջանի համաստեղություն:

ԿՌՈՆՈՍ-ԵՐԵՎԱԿ,Սատուռն— Արեգակի մոլորակներից մեկը, որ ունի ինն արբանյակ և լուսեղեն բակ:

ԿՇԻՌ-ԿՇԵՌՔ— Կենդանաշրջանի համաստեղություն:

ԿՈՅՍՆ— Կենդանաշրջանի համաստեղություն:

ՀՐԱՏ— Մարս մոլորակի հայկական անվանումը. կոչվում է նաև Արես, Կարմիր աստղ, Մառեխ և այլն:

ՉՈՒԿՆ-Չկներ— Կենդանաշրջանի համաստեղություն:

ՂԱՄԱՐ— Լուսին:

ՄԱՌԵԽ— Հրատ:

ՄՈՒՇԹԱՐԻ— Լուսնթագ:

ՇԱՄՍ— Արեգակ:

ՋՐՀՈՍ— Կենդանաշրջանի համաստեղություն:

ՍԵԼԻՆՈՍ— Լուսին:

ՎԻՇԱՊԱԿԱՆ— Վիշապ, Վիշապի համաստեղություն:

ՊՈՒՐՃ-ՊԻՒՐՃ (Պըրճեր— սեռականը) — համաստեղություն և կենդանակերպ:

ՑՈՒԼ— Կենդանաշրջանի համաստեղություն:

ՓԱՑԼԱԾՈՒ— Տե՛ս Եռմիս, Օտարիտ:

ՕՏԱՐԻՏ— Փայլածու. տե՛ս Եռմիս:

ԲԱՌԱՐԱՆ

Ակնատ— թակարդ, որոգայթ
Աղարկէ— ուղարկե
Ամալ, էմել, ամէլ— գործ, վաստակ. հույս
Ամովսածնին, Ամովսածին— Եսայի մարգարեն, շնորհաշատ:
Այպն— պակասություն, արատ
Անագան, յանագան— ուշ, ուշացած, վերջի
Անդէճ, անդէճք, անդաճումն— մտմտուք. մտահոգություն, հոգս, մտածություն
Անդէն— այնտեղ, այն աշխարհում
Անժուժական— անժուժկալ, անհամբեր
Ադինաբուխ— դրախտից բխած
Անծախաբար— անհատնում
Անկելոյս, անկեալ— հիվանդ ընկած (ընկածիս)
Անճառ— անպատմելի, անասելի
Անպատկառ— այստեղ՝ սպիտակերես
Անրակ— օղակ, փական, կղպակ
Անրօք— տե՛ս անրակ
Աշխարել— լալ, ողբալ
Առ յապա— ապա
Առոգեալ— ոռոգված
Աաբլ— կարմ, տոհմ, սերունդ, արմատ. սկիզբ, բարեկրթություն, ազնվություն

Ապապ, էապապ— ստացվածք, ունեցվածք, հանդերձանք
Ապնջական— հյուրընկալ
Ատէն— այստեղ, այս աշխարհում
Ատենուոր, աստանօր— այստեղի, այսաշխարհային, հիմիկվա
Ատոք— լիքը, լեցունիկ
Ատալ— հավատալ
Բալայ— բակե
Բառնալ— վերացնել, տանել, վերցնել
Բարեգործակ— բարեգործ
Բարձք, բարձ— վիստ, ճիվ
Բարունակն— պտղատու ճյուղ, ճյուղ, ընձյուղ, ոտ, շառավիղ
Բարուց, բարք— վարք ու բարք, սովորություն, կյանք
Բաւանդակ— բովանդակ
Բնաւից, բնաւ— բոլոր, ամեն, ամբողջ
Բոէ, բուռ— կիր, գաջ, գաջե, կրե
Գաղտակուր— խեցեմորթ, պատյան ունեցող
Գայլ— բերանի կապ, կապանք, փակ
Գան— ծեծ, հարված
Գելարան— պրկող, ճնշող գործիք, պրկանոց
Գեհեն— անշեջ հնոց, դժոխք
Գերունակ— գերապանց, գերագույն
Գթել— գայթել
Գրգալ— գուրգուրել, փայփայել
Գուշ— թաս
Դանդանաւանդ— սանձ, պախուրց
Դեկան, դահեկան— ոսկե կամ արծաթե դրամի մեկ տասներորդը
Դշխոյ— իշխող կին, տիկնաց տիկին, թագուհի
Դուպնաքայ— չնչին, աննշան
Դուրս— Դուռ, դուռս
Եկեղեցի— ժողով, ժողովուրդ, ժողովարան, տաճար, եկեղեցի
Եղ— յուղ
Երիք— կենդանու առաջին ոտքերի բուղը
Եօրու— արի, շարժվիր
Զադինաբուխ— տե՛ս ադինաբուխ
Զահլա— ձանձրույթ, համբերություն

Զանգել— շաղվել, շաղախել, միացնել
Զանժուժական— տե՛ս անժուժական
ՀասնաւորԱ-- տե՛ս ասնաւորս
ՀասպապՀ— տե՛ս ասպապ
Զենլի— կոհելու, մորթելու անասուն
Զենուլ, զենել— կոհել, մորթել
Զէլմ— տե՛ս էլմ
Զիստակ— տե՛ս իստակ
Զկիրսըն— տե՛ս կիրք
Զհեծան— տե՛ս հեծան
Զմեղկունք— տե՛ս մեղկունք
Զմեղուս, մեղուս— մեղր՝ հոգնակի հայցական հոլովով
Զմուռ, զմուռս— խունկ և անուշահոտ յուղ, կնքամոմ
Զնճիլ— շղթա
Զուարթունք— հրեշտակներ
Զունար— շղթա
Է— Աստված
Էլմ— ելք, ճանապարհ, հնարք
Ընցգուն— այնքան
Թաթաւ— թաթով, ափով, թաթաված, թաթախված
Թանալ— թրջել, թաթախել
Թապուք, թապուտ— դագաղ
Թաւրէպտանի— այստեղ՝ գեղեցիկ
Թափել— ապատել
Թիւրակէ— օձից և վեռուններից պատրաստված հակաթույն, դեղ. նաև՝ նման դեղ պատրաստող
Թուման— տասհազար
Ժողովետղն— ժողովատեղի
Ժուռ գալ— շուրջ գալ
Ապերասան— ռներասան, անսանձ, սանձապերծ
Իշոցք— հայհոյանք
Իսկի— բոլորովին
Իստակ— մաքուր, կուտ
Իուր— յուր
Լատին— հռոմեական, հռոմեացի

Լարան— ուղիղ, գծված
Լըկամ— պախուրց, սանձ
Լիակոխ— լեցուն
Խալաս— պուտ, անխառն, մաքուր, ակնիվ
Խամաճիք— տիկնիկ
Խառնելի— ըմպելիք
Խէճէպ— խըպեճ, կպեճ, կճեպ
Խապար— լուր
Խըլսայ, խլսել— ապատվել
Խնանջիւն— խխունջ
Խոռ— ծուռ, պակաս-պռատ
Խոսրովայ՝ին— Խոսրով թագավորին հատուկ, թագավորական, երաժըշ-տական, խապավոր
Խոտաճայրակ— ճգնավոր
Խոցտուկ— մրմուռ, ցավ, կսկիծ
Խօշ— հաճելի, քաղցր, ախորժելի
Կապան— կապանք
Կաֆա— չափածո՝ արձակի մեջ, հիմնականում քառատող
Կարկեհան— նոնաքար, հրակն
Կեաւուր, քեաֆիր— անհավատ
Կեղար, կիդար, կինդար— խույր, գլխարկ, թագ, փաթթոց
Կենդուրական, կենտար, կենդինար— քանքար, հարյուրակ
Կեօթուր— տար, հեռացրու
Կինամոն— դարչին
Կիրք— վարք, բնական ցանկություններ, բնական հատկություններ
Կիւնահ, կիւնէհ— մեղք, հանցանք
Կրամած— կրով, գաջով ծածկած, կպցրած
Կրսեր, կրսերագոյն— կրտսեր, կրտսերագույն
Հալալ— արդար, օրինավոր, անխարդախ
Համբոյր— սեր, միություն, հանդարտություն
Հանչաք— այնքան, այնչափ
Հարամ— օրենքով արգելված, ապօրինի
Հաքիմ— բժիշկ
Հեծան— գերան, ծառի բուն, հաստ գավազան
Հեռական— քեն, կռիվ, քինոտ

Հիւսիւսական— (հիւսիւս, հիւսիս) — հյուսիսային
Հոլոնեալ— հավաքված, մերկացված
Հողվրդով— հողվարքով, հողվարք, գերեկմանոց
Հոսիչ— հոսեցնող, ցրվող
Հունար, հիւնէր— արվեստ, ճարտարություն
Ղալաթ, ղալատ— թերություն, վրիպում, պակասություն, սխալ
Ղալտեցաւ— վրիպել, սխալվել (սխալվեց)
Ղամար— լուսին
Ղամբար, ղամպար— լամպար, լապտեր
Ղամչի— մտրակ
Ղատի— դատաւոր, իշխան, կառավարիչ
Ղատր— հարգ, պատիվ, արժեք
Ղըվի, ղըվ— աղջիկ, դուստր
Ղորդ, ղորդութիւն— ուղիղ, ճշմարիտ, ճշմարտություն
Ղումրի— տատրակ
Ճար— հնար, դեղ
Ճոհար, ճուհար— գոհար
Ճորայ, ճորալ— հայհոյել
Ճուղապ— պատասխան
Ճուպայ, ճիւպպէ(թ) — վերարկու, պատմուճան, կգեստ
Մախանք— նախանձ
Մասխարայ— ծաղր, ծիծաղելի
Մարտիրոս— նահատակ հավատի կամ ճշմարտության համար
Մաքսաւոր— մաքս պահանջող, գող և քսակահատ, ատելի պաշտոն, ապօրինի գործող, հասարակությունից մերժված
Մեղկունք— մեղք, թուլություն
Մթղալ, մթխալ, մտղալ, մխալ— ծանրության չափ՝ մեկ ու կես գրամ
Միւսիւրման— մուսուլման
Մոտիկոն— հակառակություն, թշնամանք, ներհակություն, ոսոխություն, ապստամբություն, ընդդիմություն
Մսխել— ծախսել
Մուհալ— անհեթեթ, անհավանական, անհնարին
Մուհալի— բարձր, վեհ (մուհալլա— կարդարված)
Ցադին, աղին— դրախտ
Ցակնատ— տե՛ս ակնատ

Յանագան— անագան, ուշ
Յանձնիւրս, յանձնիւր, անցնիւր— յուրաքանչյուր, ամեն մեկը
Յանցեայ (հանցանք, մեղք) — մեղք գործեցի, մեղանչեցի
Յաշտեա— հաշտեցրու, հաշտեցնել
Ցեռել— շարել, միացնել, կպցնել
Յորդորակ— խրատ, սահուն երգ
Նատար, նադար— հայացք, նայել, դիտել, ուրախ, անցավ
Նըսէֆ, նըսֆ, էնսաֆ— խաս, արդար ընտրող
Նկան, նկանակ— հաց, խմորեղեն
Շահին— բակե
Շահնա, շահնէ— ոստիկան, քաղաքի կառավարիչ, քաղաքապետ
Շառաշիղ, շառաւեղս— աղի մեծ կտոր
Շէյտուլլա— Աստված վկա
Ողն, ողմամբ— պառկած, ոլորած
Ողջակէզ— ամբողջովին աստծուն մատուցված զոհ
Չաւուշ, չաուշ— հասարակ զինվոր, հրամանակատար
Չոպան— հովիվ
Պակուցեալ— վախեցած
Պաշտօն— ծառայություն, մարդահաճություն, պաշտել
Պատմուճան— զգեստ
Պատուեալ— այստեղ ունի արժանավայել կերպով պատել— կարդարելու առում
Պարպատմամբ, պարպատել— լեփ լեցուն, պայթելու չափ լցված
Պևեակ— բառը կա միայն Երզնկացու մոտ. Պևկէ?, մարխ?, ճյուղ վառված?, սոճի?
Պէն— ես
Պէտաւի— արոտական, վաչկատուն, արաբական ձի
Պիւլպիւլ— սոխակ
Պօզ— գորշ, շեկ, պիսակ, բաց կանաչ
Զօհար— տե՛ս ճոհար
Ռահ— ճանապարհ, ուղի, շավիղ
Ռահահորդ— ճամփորդ, ճամփա բացող
Ռամեալ— տե՛ս րամեալ
Սերովբէ, սրովբէ— վերին՝ առաջին կամ երկրորդ դասի հրեշտակ
Ստաշխ— ավնիվ խունկ, զմռնենու խեժ

Ստունգանել— ականջ չդնել, չլսելու տալ, թոթվել, չսեպել
Սուրաթ— դեմք, երես
Սօպի, սօպ— խոսք, վրույց
Վաթել— թափել
Վալայ— բրդյա կամ մետաքսյա ակնիվ գործվածքից պատրաստված (գույնզգույն, պատվական) զգեստ, քող, ծածկոց
Վարատեալ— ցիր ու ցան արած, ցրված
Վարդապետ— ուսուցիչ
Վարըմով, վարմ— որս բռնելու գործիք, ցանց, թակարդ, ծուղակ (ցանցով)
Վիմարդեան— քարեղեն, քարաշեն, անհողդողդ
Վկա— կյանքի գնով հավատն ու ճշմարտությունը հաստատող
Տածող— հոգացող
Տաճիկ— արաբացի, հագարացի
Տամահութիւն, թամահ, դամա— ագահություն
Տապանակ— տուփ, սնդուկ
Տէրման, դարման— ճար, դեղ
Տըկուկ— տակ-տակ?, ծալ-ծալ?
Տոլապ— անիվ
Տոռամք- տոռ— պարան (պարաններով)
Տպապիոն— տոպաս, թանկարժեք քար
Ռաբունի— վարդապետ, ուսուցիչ, տեր
Ռամեալ— ժողովված, հավաքված
Ռենական— աստվածային
Ցանցանելոց, ցակն— խեղճություն (խեղճացածներին, անճարակներին)
Ուռոց, ուռ— ճյուղ (ճյուղերի)
Իւծեալ— հյուծված
Իւսեալ— հյուսված
Իւր— յուր
Փահրէկ, փարհիկ— ծոմ, պահեցողություն
Փապ— փապար, ճեղք, ծակ, ավերակ
Փարիսեցի— կեղծավոր, երկերեսանի, քծնող
Փլնճէրէ— լուսամուտ, պատուհան
Օեսաւէր— փեսայի բարեկամ, հարսանյաց գլխավոր
Փերթ— մասն, բաժին, կտոր

Փոխան— փոխանակ
Փոշիման— վղջումն, վղջալ
Քամահական— քամահրական
Քատակեալ— նմանեցված, հարմարեցված
Քարվան— կարավան, քարավան
Քարվանատաւայ— կարավանատուն
Քերովբէ, քերովբեներ— վերին դասի հրեշտակներ՝ սերովբեներից հետո, քառաթև, բպմաչյա
Քէշիշ— տերտեր, քահանա
Օթարան— օթևան, կայարանատեղի, իջևան, պանդոկ
Օղլի— տղա, որդի, կավակ
Ֆռանկի— եվրոպացի, եվրոպացու նման

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան .

ՀԱՅՐԵՆՆԵՐ 24

ՏԱՂԵՐ (ըստ սկզբնատողերի) . . 43

Երկուան ի մեկ տեղ բերած 43
Այս ինչ կրակ էր վիս այրեց 44
Ցակոբ վարթիր ի քնոյ մեղաց 50
Օրհնեալ է Աստուծոյ անունն 59
Ցամենայն մեղաց ի վատ 70
Ադամայ որդիք ամէն 73
Այսօր ձայնն հայրական 79
Նըլագեմք հոգոյն նըլագա վայելուչս 80
Մեր տէրն ի դրախտն երեկ 82
Ադամ նստել դուռըն ի դրախտին 84
Անդ, ի մէջ դրախտին 88
Ցանեղական լոյսն անժամանակեայ 89
Գովեստ բերկրանաց հըրճուղական հընչմամբ 90
Աստուածածին սրբուհին 93
Առաջնաճաշակ պտղոյն 97
Ցաւուրս վերջին ժամանակի 103
Բանն յղացեալ յարգանդ կուսին 107
Իմաստութիւն հաւր տէր Յիսուս 110
Գրիգորիոս բազմաչարչար սրբոյն 115
Հայտնիչ իրաց ծածուկ բանին 117
Հանճարեղ շնորհալիդ ընտրեալ է 117
Այսօր ցընծայ լեառըն Թաբաւր 119

ՇԱՐԱԿԱՆՆԵՐ (ըստ սկզբնատողերի)

Այսօր կուարճացեալ ցընծայ եկեղեցի 123
Լերինք ամենայն այսօր ցընծացէք 130
Այսօր կուարճացեալ տօնեն երկնայինքն 133
Որ կլոյս անճառ շնորհաց 134
Որ ընտրեցար յԱստուծոյ 135

ՆԵՐԲՈՂՆԵՐ

Ներբողական գովեստի ի սուրբ Լուսաւորիչն Հայոց Գրիգորիոս 136
Պատմութիւն յայտնութեան նշխարաց սրբոյն Ներսիսի . . 200

ՏՐԱԿՏԱՏ

Նորին սուրբ եւ իմաստուն վարդապետին Յոհաննիսի Երզնկա-
յեցւոյ բան յաղագս երկնային վարդուց 234

Ծանոթագրություններ 270
Բառարան 300

«Հայ քնարերգություն» մատենաշար

Յովհաննէս Երզնկացի

ԲԱՆՔ ՉԱՓԱՒ

Ованес Ерзнкаци

СТИХОТВОРЕНИЯ

(На армянском языке)

Издательство «Советакан грох»
Ереван, 1986

Խմբագիր՝ Ռ. Գ. Սարգսյան
Նկարիչ՝ Ն. Հ. Հակոբյան
Գեղ. խմբագիր՝ Գ. Խ. Գյուլամիրյան
Տեխն. խմբագիր՝ Մ. Է. Ճանապարյան
Վերստուգող սրբագրիչ Կ. Ե. Մամիկոնյան

ИБ 5387

Հանձնված է շարվածքի 05. 08 86: Ստորագրված է տպագրության 12. 12. 86 թ.: Ֆորմատ 70×108 1/32: Թուղթ՝ տպագր. № 1: Տառատեսակ՝ «Դպրոցական»: Տպագրություն՝ բարձր: 13,65 պայմ. տպ. մամ., 24,21 պայմ. ներկ. թերթ., 11,12 հրատ. մամ.+1 ներդիր: Տպաքանակ՝ 20000: Պատվեր՝ 2159: Գինը՝ 1 ռ. 60 կոպ.:

«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91:

Издательство «Советакан грох», Ереван-9, ул. Теряна, 91.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան—9, Տերյան 91:

Полиграфкомбинат им. Акопа Мегапарта Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР, Ереван-9, ул. Теряна, 91.